

ԷԶՄԻԱԾԻՆ



Ա

2004



Կ ՏԱՐԻ

ԷԶՄԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ
Է Զ Մ Ի Ա Ծ Ն Ի



Յ ռ Ն ռ ռ ռ

2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդեան եւ Աստուածայարմարեան փոխին	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամանորյա պատգամը . 7	
Փրկչի Հրաշափառ եւ Սուրբ Ծննդյան փոխի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի եւ քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի եւ բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	9
ՇԵՒՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ - Սուրբ Ծնունդը Մայր Աթոռում	13

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳՐԵԳՐ Բ ՄՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Օննիկ Մեհրաբյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	15
Հայրապետական գնահատություն	17
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է արվել Իրաքի հայոց թեմի հոգևոր սպասավոր Տ. Արարատ քահանա Հովսեփյանը	17

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

Տ. Արշակ վարդապետ հաջադրյալի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ծննդյան ճրագալույցի Ս. Պատարագին . .	18
Տ. Տիրան աբեղա Պետրոսյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Վաղարշապատի Ս. Գայանե եկեղեցում մատուցված Ս. Պատարագին . .	21
Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցում	24
Տ. Հակոբ քահանա Հակոբյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	26
Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	28

ՏՈՆԱԽՈՍԱԿԱՆ

Հայոց Կաթողիկոս Տեր Զաքարիայի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մկրտության մասին առած քարոզը	30
--	----

1700-ԱՄՅԱԿԻ ԽՈՐՀՐԴՈՎ

ԱԿԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ - Տեսանողն ու քեսիլքը 40

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՂԱՄ ԶԱՆԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ - «Զի ուր գեշն իցէ,
անդր ժողովեսցին արծուիք» 42

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍՐԳԱՅԱՆ ԴՄԻՏՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ - Խայաշա-Ազգի պեպության
գրաված փարածքը, հայկական ծագումը և քաղաքական կյանքը 52

Նվիրվում է հայոց գրերի արարման փառավոր 1600-ամյակին

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ - Հայկական փառանունների
քառակազմական արժևքը 59

ԿՍՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - Հազարամյա Կեչառիսի
հիմնադրման պատմությունից 77

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ - 1848-1849 թթ. եվրոպական հեղափոխական և
ազգային շարժումների կրոնական հարցերի լուսաբանումը
«Եվրոպա» շաբաթաթերթում 92

ՎԻԿՏՈՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ - Վահան Տերյանի «Լռությունը» 102

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Խաչակրաց արշավանքներին և Կիլիկյան
Հայաստանին նվիրված պատմական կարևոր մի սկզբնաղբյուր 109

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ամերիկայի Արևելյան թեմն ներս
Հանդիպում ԱՄՆ-ի դեսպան Ճան Օրփուելի հետ 114

Ամերիկայի Արևմտյան թեմն ներս
Արևմտյան թեմի կողմն օգնություն իրաքահայության 116

Առաջնորդարանէն ներս հաստատում
հոգեւորականաց պատրաստութեան ֆոնտին 116

Իրաքահայ Միութեան նուիրաբուրքիւնները	
Արեւմտեան թեմի Առաջնորդարանին	117
Նակոր արքեպս. Գըլընճեանի նոր գիրքը	118
Ռուսաստանի Գերագույն դատարանը մերժել է	
Ղազարոս Կյուրեղյանի բողոքը	119
ՊՐՈՖ. ՆՆՐՄԱՆ ԳՈՒՅ - Յոռաննես Լեւիսիոսի	
լրու-թանգարանի բացումը Պոլսոյում	120

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Նայրապետն ընդունեց	
Նէյկի Թալվերթիի գլխավորած պարմիրակութեանը	124
Նանգիստ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանի	125
Նանգիստ Տ. Զավեն արքեպիսկոպոս Զինչինյանի	126
Եկեղեցական բնմ. լուրեր	128
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата	130
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	133

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԷՋՄԻԱՏԻՆ
«ԷՋՄԻԱՏԻՆ» ԽՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
"Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՄԻՉ՝ 77764

ՀԱՄԱՐԱՄ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆՓԱՄ ԵՎ ՍՐԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴՄԻԱ

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ

(Սուրբ Էջմիածին, 2004 թ. Յունուարի 6)

«Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»:

(Ղուկ. Բ. 11)

Միրելի հաւատացեալ եւ բարեպաշտ ժողովուրդ.

Սուրբ Ծննդեան այս բարի առաօտը հայոց եկեղեցիների խորաններից հնչում է մեր հոգիներին երկնային մեծ անտիպը. «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»: Հրեշտակաձայն այս անտիպով է ներշնչալիս հաւատի մեր կեանքը: Մենք, իբրեւ քրիստոնեաներ, հաւատում ենք, որ Աստուած, Ով արարեց աշխարհը, նաեւ փրկեց աշխարհը: Բեթղեմեմի այրում մանկացաւ Աստուածորդին՝ ազատելու մարդուն մեղքերի բանտից, վերականգնելու նրա աստուածային պարկերը, ազատ հոգին, որպէսզի եւր դառնայ մաքուր ճանապարհներից դէպի իր Արարիչը՝ դէպի կեանքի աղբիւրը: Յիսուսի Յայտնութեամբ վկայուեց Աստուծոյ Մէրը մարդո՛ւ հանդէպ, եւ Բեթղեմեմի այրը դարձաւ մարդկութեան օրհնութեան ակունքը, որտեղից փրկութեան աստուածաբանութեան շնորհը եւ Յոյսը ծագեց աշխարհին:

«Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»: Փրկութեան այս մեծ անտիպն է քրիստոնեական Եկեղեցու բարոգութեան առանցքն ու բովանդակութիւնը, որ ծագեցնում է մարդկային հոգիներում հաւատի լոյսը: Անստուծոյ այդ լոյսի մէջ փայլում է սիրող ու ներող հայեացքը Աստուծոյ եւ պարզորոշութեամբ անկումից դէպի վեր մեր ճանապարհը, որ հարթել է Փրկիչ մեր Տէրը:

Այսօր Փրկիչ է մեզ ծնուել՝ Տէր եւ Առաջնորդ հոգիների, Նորոգող կեանքի: Ծնուել է Փրկիչ Ազատարար՝ հաշտութիւն Աստուծոյ հետ եւ հաճութիւն՝ մարդկանց մէջ, սքանչելի ու անպարփակելի խորհուրդ սիրոյ, որ առաջնորդում է մարդկութեանը եղբայրսիրութեան, կարեկցութեան ու ներման ճանապարհներով, արդարութեան ու խաղաղութեան արահետներով:

Սուրբ Ծննդեան այս հոգեւորոգ օրը դասակից հրեշտակներին՝ փառաբանենք Աստուծոյ բարձունքներում եւ առաջին մեր աղօթքով հայցենք, որ աշխարհում ամեն տեղ ամուր լինի խաղաղութիւնը, եւ ժողովուրդների ու պետութիւնների հասարակական կեանքը զարգանայ ու գորանայ մարդասիրութեան արժէքներով, որոնք բխում են բոլոր մարդկանց՝ Աստուծոյ որդիները լինելու ճշմարտութեան ճանաչողութիւնից:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ, բոլոր ժամանակներն ունեն իրենց հրամայականները: Մեր նիւթապաշտ եւ աշխարհականացող դարի արագափոփոխ ընթացքների մէջ մարդը իբրեւ անհատ եւ մարդկութիւն իբրեւ ամբողջութիւն առաւել քան կարիքն ունեն հոգեւորի ճանաչողութեան: Դարաւոր անողորմութիւնը կարող են փոփոխուել, արժէքները կարող են վերաիմաստաւորուել, բայց միշտ անփոփոխ է այն ճշմարտութիւնը, որ աշխարհը իմաստագործ է առանց Աստուծոյ, եւ մարդը իրականում միայնակ է ու անյոյս՝ առանց կենդանի

յարաբերության իր Արարչի հետ: Ընդհանուրի մեկ մասնիկը լինելու զգացողությամբ ու ապրումով է. որ մարդկային հոգին ունակ է փխրել ուրիշի փխրությամբ և ուրախանալ ուրիշի ուրախությամբ. սիրել ընկերոջը ինչպես սեփական անձը և բարին գործել: Մերձատրի հանդեպ սիրոյ այս պատկերամով աշխարհ եկաւ Փրկիչ: Մերձատրի հանդեպ սիրով պիտի լինէ թշնամութեան ու պաշտօնագրի ծայնները. պիտի դադարեն ահաբեկչութիւնն ու բռնութիւնը. պիտի վերականգնուեն ուրանաւորած իրաւունքն ու արդարութիւնը: Այս սիրով է, որ մարդկային ամեն միւսածում ու ջանք պիտի ուղղուած լինի համընդհանուր բարիքի բազմապատկմանը և յաղթանաւորմանը աղքատութեան ու կարիքի. յաղթանաւորմանը միջավայրի ապականութեան. փարածուղ մոլուցքների ու սապականող բարբերի. որոնք նոյնպէս մեր ժամանակների իրողութիւններ են: Ի լրումն ժամանակի աշխարհ եկաւ Փրկարար և բնակութիւն հաստատեց իսաւստով բացում մարդկային հոգիներում: Արդեօք լրանա՞լ ժամանակի. որ մարդկային հոգին նորոգուի հաւաստով. կենդանանալ սիրով: Արդեօք լրանա՞լ ժամանակի ներում հայցելու, ներում գրելու. դառնալու Աստուածամեծ ճանապարհներից, գործերից ու ընթացքներից, որպէսզի Մարդասէր ու Ողորմած Աստուծոյ շնորհի ներքոյ միշտ օրհնութեան, սիրոյ ու խաղաղութեան մէջ պահպանուի աշխարհը համայն:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պարգևով արժանացել ենք Փրկչական սիրոյ փիղեգեղասիւյ լոյսին: Ընտրեն ենք գրել հոգեւոր ազատութեան, որը բազում օրհնութիւններ է բերել մեր ժողովրդի կեանքում: Զաղաքական ինչպիսի իրավիճակներում էլ յայտնուեցինք. միշտ յաղթանակող մնացինք, յաղթանակող՝ հայ մշակոյթով, որը արտայայտութիւնն է Փրկչին ապաւինած մեր ազատ հոգոյ: Կանգուն էր հայկական պետականութիւնը, թէ բարձրած՝ Հայ Եկեղեցին միշտ եղաւ հայոց ազատ հոգեւոր Հայրենիքը՝ բարձր ու աննուաճ, ուր խնամուեց ազատութեան սէրը՝ որպէս Աստուծոյ շնորհած հրաշալի ու թանկագին անկողնալիւծի պարգեւ: Հաւատացինք Փրկչի յայտնութեանը և պատմութեան դժուարին քառուղիներում ուժ գրանց փորձութիւններին դիմակայելու, ապրելու ու սպեղնագործելու և ազատութեան մեր իրաւունքը պաշտպանելու:

Աստուածայայտութեան խորհրդի առջև փառք ենք տալիս Փրկչին. որ ազատ ու խաղաղ են մեր Հայրենիքի եզերքները և զարթնայ է այսօր մեր ժողովրդի հոգին աշխարհի բոլոր կողմերում, զարթնայ է մեր ազգային իղձերի իրականացման. հանուր հայութեան միասնական ու ներշնչալի կեանքի տեսիլքով: Այսօր Սուրբ Ծննդեան աւերիտով ազատութեան փառաբանությամբ Հայաստանում ու Արցախում փոսական դողանքում են զանգերը նորոգում ու նորակառոյց մեր եկեղեցիների, որոնք առկա ու առելի բազմամարդ են դառնում: Յիսուս Փրկչի անունը այսօր ճանաչելի ու սիրելի է դառնում մեր մանուկներին ու երիտասարդներին: Վերադարձացող մեր հաւաքի հետ վերափոխուում է մեր կեանքը, զօրանում է յոյսը զալիքի հանդէպ՝ հակառակ բոլոր դժուարութիւնների: Յիրաւի, Աստուածասէր ազատ հոգու անձնուէր ջանքերով ու քաջ գործերով, ժողովուրդ հայոց, Հայրենիք և Սփիւռք միասնութեամբ, ձեռք ձեռքի պիտի կառուցենք վաղուայ նոր օրը հայոց կեանքի, պիտի բացենք դարձի դռները դէպ Հայրենիք, և Արարարի փնջերից պիտի պարգունեն, շողան նոր յոյսերի հորիզոնները Հայրենեաց:

Գոհութիւն Բարձրնային, Սփիւռքը եղել ու շարունակում է մնալ փարածնալ թեւերը Մայր Հայրենիքի: Թեեւ վերջին տարիներին վերաբնակութեան տեղաշարժերի հետ կապ-



ՎԵՆԱՔԱՆՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ Ս. ԽՆԴՐԱՅԱՆ ՊԱՏԳԱՄԵՆ ՍՈՒՐՈՒ ԽՆԴՐԱՅԱՆ ՊԱՏԳԱՐԱԳԻՆ





ՋՐՈՒՀՆՑԱՅ ԸՆԹԱՅՑՈՒՄ. ԽԱՇԻ ՔԱՂՈՐ Է ՀՀ ՍՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ՕՄԿԱՆՑԱՆԸ

ուած նոր իրավիճակներ են սրեղծուել Սփիւռքի գաղթօջախներում, սակայն մեր գաւակները Հայ Եկեղեցու շուրջ, մշակութային կազմակերպութիւնների ու կրթական հաստատութիւնների գործունէութեամբ պահպանում եւ ստաց են փանում հայ կեանքը, շարունակում հայրենական աստիճանները, այլեւ նոյն նախանձախնդրութեամբ աջակցում Մայր Հայրենիքին: Ազատ մեր երկրի իրականութեան ընձեռած հնարաւորութիւններով այսօր արդէն իսկ ականաւորես ենք, որ առաջագմաց Հայրենիքով ամուր ու կենսունակ է հայոց Ափիւղը, եւ համախառմը ու կազմակերպութեամբ Սփիւռքով՝ զօրաւոր Հայրենիքը:

Պատասխանաւոր ենք մեր ժամանակի համար, եւ մեր գործերով է, որ այն պիտի արձանագրուի իբրեւ վերականգնումի ժամանակաշրջան՝ ազատ կեանքի վերականգնումի, ազատ հոգու եւ մտածողութեան, քրիստոնէական մեր նկարագրի վերականգնումի: Մեր նոր ձեռքբերումներով ու յաղթանակներով է, որ պիտի առաջ ընթանայ ժամանակը Հայրենիքի վերաշինութեան, ժամանակը՝ մեր գաղթօջախներում ազգային կեանքի վերազարթոնքի, մեր մշակոյթի, գիտութեան ու կրթութեան զարգացման ու ծաղկունքի: Քրիստոս է մեր ճանապարհը, Քրիստոս է մեր զօրութիւնը եւ ապաւինութիւնը: Այսօր մեզ Փրկիչ է ծնուել, ծնուել է մեզ յոյս եւ սէր: Այս է մեր հաւաքը: Այս է ճշմարտութիւնը՝ մնայուն ու յաւիտեական:

Փրկիչ Սուրբ Ծննդեան բարի անփոխով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում սիրեցեալ հաւաքաւոր համայն մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Ափիւղս աշխարհի՝ աղօթքով ու հայցով առ Աստուած, որ անբիժ պահենք Հայրենիք ու Սփիւռք միաբանութեան ու սիրոյ ոգին, հաւաքարմութիւնը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու Հայրենիքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից նղբայրական սիրոյ Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր Եկեղեցու Նուիրապետութեան Աթոռների շնորհազարդ գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Ամենապատրի Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսոյ հայոց Ամենապատրի Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, Մեր սէրն ու օրհնութիւնը՝ մեր Եկեղեցու ուխտապահ ու նուիրեալ ողջ հոգեւոր դասին:

Ողջունում ենք հայոց պետական առաջնուն՝ գլխաւորութեամբ այսօրեղ ներկայ ՀՀ Նախագահ Տիար Ռոբերտ Բոչայրեանի, եւ Մեր ողջոյնն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին ու Հանրապետութեան իշխանութեան բոլոր ներկայացուցիչներին: Հայցում ենք Փրկիչ առաքաբաշխ պարգեւները նրանց կեանքին ու հայրենաշէն գործերին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք Հայաստանում հաւաքարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով Տիրոջ հանապազ զօրակցութիւնը իրենց առաքելութեան մէջ, որը սիրոյ առաքելութիւն է՝ կոչուած ժողովուրդների կեանքում բարեկամութեան ու համագործակցութեան սուրապնդմանը:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ՝ Հայ հոգու Բեթղեհէմում աղօթք ենք բարձրացնում երկինք, որ Սուրբ Ծննդեան լոյսն ու շնորհները իջնեն մարդկանց հոգիներին ու համայն աշխարհին: Այլեւ հայցում ենք Աստուծոյ ամենաառաք խնամքը եւ խաղաղարար ներկայութիւնը այնպեղ, ուր այսօր պատերազմ է, աւեր, ցաւ ու փազնապ: Կենարար յոյս եւ փոկու-

նախնիներն ենք մաղթում այդ երկրների քաղաքացիներին, որոնց դժուարություններն ենք բաժնեկից են մեր ազգի զաւակները: Թող յայսը թաքին ու երջանկությունը ուղեկից լինեն աշխարհասփիտ մեր ողջ ժողովրդին: Թող Փրկչի Յայտնության մեր հաւատի մաքուր ակունքներից թեւ առնեն մեր մտածումներն ու նպատակները եւ մաքմին առնեն մեր գործերը՝ ի փառս Աստուծոյ, ի սէր Հայրենեաց եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Այսօր մեզ Փրկիչ է ծնունդ: Այս է մեր հաւատը: Այս է ճշմարտությունը՝ մնայուն ու թափփունական: Ողջունենք միմեանց Սուրբ Ծննդեան աւերիտով:

**Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,
Ծնեզ, ձեզ մեծ աւերիս:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՄՆՈՐՅԱ ՂԱՏԳԱՄԸ (31 դեկտեմբերի 2003 թ.)

Միքելի ժողովուրդ հայոց.

Տարեմուտ է: Դիմավորում եմք նոր՝ 2004 թվականը: Տոնական այս պահին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում ամենքիդ ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս:

Տարեմուտը միշտ խորհրդաշատ է, միշտ հուսատալ: Տարեմուտը՝ քրիստոնյաներիս համար նաև հոգեշաղախ է ու հոգեկորոզ, քանզի ամեն նոր տարի սկիզբ է առնում Քրիստոսի Սուրբ Մենդյան ու Աստվածհայրության խորհրդով, որ պարզում է մեր հոգիներին Աստծո Սերը մեր հանդեպ և անընդմիջելի մերձավորությունը մեզ:

Ժամանակի առանձնահատուկ հանգրվան դարձած տարեմուտի այս փոքրիկ պաեղ մեր հայացքները ուղղում է միաժամանակ ղեպի անցնող տարին և ղեպի հույսերով եկող նոր տարին:

Գոհաբանական աղոթք բարձրացնենք երկինք, որ Աստված խաղաղ պահեց մեր Հայրենիքի սահմանները, և մեր ժողովուրդը Հայաստանում ու Արցախում ձեռնամուխ եղավ իր սրբեղծագործ կյանքի առաջընթացին: Այսօր բոլորս հատկապես ուրախ ենք, որ վերաշինվում են աղեկայալ մեր շենքերը, և բազմաթիվ ընտանիքներ նոր հարկի ենքքո են դիմավորում տարեմուտը, որ իրենց դռներն են բացել մեր մշակույթի նորոգված հաստատությունները: Արդարև, հակառակ առկա տնտեսական ու ընկերային բազմաթիվ հիմնախնդիրների ու դժվարությունների, հուսադրող զարգացումները իրական են հայրենական մեր կյանքում ու պիտի բազմապատկվեն Աստծո օգնականությամբ, մեր հոգում և մեր կյանքում առ Հայրենին սիրո հաղթանակներով:

Անցնող տարին հատկանշվեց նաև Հայրենիքի և Սփյուռքի ներշաղախ կյանքի դրսևորումներով, հայրենաշեն իրագործումներով, հանդիպումներով ու հավաքներով, որոնք նոր ծրագրերի ու ձեռնարկների ելակետ ու խրախույս պիտի դառնան՝ գորացնելով լավատեսության ոգին աշխարհավյուտ մեր ժողովրդի:

2003 թվականը նշանակալից եղավ և ազգային-եկեղեցական մեր կյանքում: Օրհնաբեր և աղոթախոս օրեր ապրեցինք երկու մեծ հոբելյաններով: Տոնախմբեցինք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի 1700-ամյակը և Ատրբ Գրիգոր Նարեկացու «Մաղթյան ողբերգության» աղոթագրքի 1000-ամյան: Մեր հավատի նորոգության նոր առիթներ դարձան գիտաժողովները, հրապարակությունները, բազմաթիվ միջոցառումներն ու հանդիսությունները, Հայաստանի և Սփյուռքի թեմերից մեր ժողովրդի հազարավոր զավակների ուխտավորաբար այցելությունները Սուրբ Էջմիածին: Այսօր առանձնակի կարևորում ենք «Հայ Եկեղեցու պարմություն» առարկայի դատավանդությունը հանրակրթական մեր դպրոցներում, իրադարձություն, որով նաև հիշվելու է 2003 թվականը մեր պատմության մեջ: Հիրավի, բացվել են Աստծո ողորմության դռները: Լավատես հոգով շրջենք 2003 թվականի էջը մեր

սլացման: Նոր տարին դիմավորենք բարեշրջությունների, բոլոր ասպարեզներում որոշիչ տեղաշարժերի բարի ակնկալությամբ և այն համոզմամբ, որ պիտի ընթանանք միասնաբար. հաստատական ու աներկբա՝ յուրաքանչյուրս մեր տեղում կրելով պատասխանատվության մեր բաժինը:

Այս պարզամտ ու մաղթանքով վերադին Մեր ողջ ույնն ու օրհնությունն ենք բերում հայաստանաբնակ մեր ժողովրդին, ազատաշունչ Արցախի հայությանը. Սփյուռքի մեր գավակներին: Թող Ամենակարողն Աստված ասաջնորդի մեր ժողովրդի վերազարթոնքի ճանապարհները և անասան պահի մեր Հայրենիքը՝ ազատ ու անկախ պետականությամբ: Թող Տերը խաղաղություն պարգևի համայն աշխարհին, և թող նոր՝ 2004 թվականը հաջողություններ բերի պետությունների ու ժողովուրդների համադրեղ. ընդհանուր կյանքին. երջանկություն ու բարիք՝ բոլոր մարդկանց:

Տարեմուտի այս գիշեր և գալիք նոր տարում, մեր կյանքի բոլոր օրերում բոլոր նվերներից ավելի հույս ու սեր պարգևենք միմյանց:

Շնորհավոր 2004 նոր տարի

**ՓՐԿՉԻ ՆՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ՆԱՅՐԱՊԵՏԻ**

**ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ**

**ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՒՆԵՐԻ ԳԱՆԱԿԱՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՆԵՌԱԳՐԵՐԸ**

Հոռոմնական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՎՈՎՆԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հոռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐԴՈՒԴԻՄՆՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Խաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղապրի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԲԶԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԻԼՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մայանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,
 Նորին Գերաշնորհություն
ՊԵՏՐՈՍ Է (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
 Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Ջենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
 Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՌՈՈԻՄՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն
ԻՐԵՆԻՈՍ (Երուսաղեմ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱԲՄԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՂՈԻԼՈՍ (Աթենք)

Վարչապալայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՄԱՎՎԱ (Վարշավա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարք,
 Նորին Սրբություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ՋՈՒԿԿԱ ՊԱՍՐՄԱ (Նիսիենկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Խորհուրդների Միության Նախագահ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՂԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հայոց Կաթողիկոս-Պատրիարք

ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*
* * *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅԹ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱԴԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻՅ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն

ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Սփամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ՌՈՔՐԵՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍՏԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ստանանդարտական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅԱՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱՂԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծարգո

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և ինստիտուցիոնալ հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և սրբեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարազյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների Խորհրդից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և ինստիտուցիոնալ կազմակերպությունները:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

2004 թ. Հունվարի 6:

Միաձնալեռն ու Միաձնահիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կրկին հնչեց Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ծննդյան ավերիսն ու փարաձվեց հնամենի փառարի խնկարույր կամարների ներքո:

- Քրիստոս Ծնաւ և Յայրենեցաւ,

- Մեզ, ձեզ մեծ աւերիս:

Դեռ նախորդ օրը, հունվարի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ճրագալույցի արարողությամբ բազմաթիվ հավաքագյալներ հաղորդակից դարձան Ս. Ծննդյան ավերիսին: Ու ինչպես այդ օրվա խորհուրդն է մեկնում Ս. Գրիգոր Տաթևացին՝ «... այսօր նախօրեն և նախափորձակն է վաղվա՝ մեծ Լուսիի ծագման: Եվ ինչպես որ թագավորի գալստյանը նրան սիրողները նախ այդ ավերիսից են ուրախանում, պարարասություն փնտնում ու ջանքերով ընդառաջ գնում, այնպես էլ մենք նախապես այս երեկո կատարում ենք Քրիստոսի Ծննդյան և Հայրենության նախափորձակ ճրագալույցը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսանիստ Մայր Տաճարում ճրագալույցի Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Երեկոյան Ս. Պատարագից հետո Մայր Տաճարի փոնականորեն զարդարված բակը ողողվեց նորանոր լույսերով. հարյուրավոր հավաքագյալներ վերադարձան սեփական հարկեր՝ իրենց հետ փանելով Մայր Տաճարի մշտավատ կանթեղից վառված մոմեր:

Հունվարի 6-ի առավոտյան 1700-ամյա Տաճարի զանգերն ազդարարեցին Հիսուս Քրիստոսի ծննդյան 2004 թ. Ս. Պատարագի սկիզբը: Հայրապետական հանդիսավոր թափուրը Վեհարանից առաջնորդվեց դեպի Մայր Տաճար: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես ընտանիքի ղեկավար «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» ավերարանական խոսքը, հայրապետական իր պարգամը, հավաքի ու սիրո մաղթանքն ուղղեց համայն հայ ժողովրդին: Ամենայն Հայոց Հայրապետը փառք և գոհություն առաքեց առ Աստված՝ Հայրենիքի խաղաղության, վերադարձագող հավաքի, Հայրենիք-Սփյուռք միասնության համար, միաժամանակ հայացելով Աստծո «ամենաառաջին խնամքը և խաղաղարար ներկայությունն այնտեղ, ուր այսօր պարսկազմ է, ավեր, ցավ ու փառնապ»:

«Պատարասխանարու ենք մեր ժամանակի համար, և մեր գործերով է, որ այն պիտի արձանագրվի իբրև վերականգնումի ժամանակաշրջան՝ ազալ կյանքի վերականգնումի, ազալ հոգու և մարածողության, քրիստոնեական մեր նկարագրի վերականգնումի: Մեր նոր ձեռքբերումներով ու հաղթանակներով է, որ պիտի առաջ ընթանա ժամանակը Հայրենիքի վերաշինության, ժամանակը՝ մեր գաղթօջախներում ազգային կյանքի վերազարթոնքի, մեր մշակույթի, գիտության ու կրթության զարգացման ու ծաղկունքի: Քրիստոս է մեր ճանապարհը, Քրիստոս է մեր գործությունը և ապավինությունը: Այսօր մեզ Փրկիչ է ծնվել, ծնվել է մեզ հույս և սեր: Այս է մեր հավաքը: Այս է ճշմարտությունը՝ մնայուն ու հավիտե-

Հայրապետական իր օրհնությունը բերելով հավանական մեղադրանք
Համարող Ս. Պատարագի. ըստ պահանջության. իբրև խորհրդանշ Հորդանան գետում

Ա. Պապարազյան և Ջորժինների արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, պետական պաշտոնավար անձինք, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, բազմաթիվ հավատացյալներ:

Այս փարի ևս Ս. Պապարագի և Զրօրենեքի ողջ արարողությունը ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության Ազգային հեռուստատեսությամբ, որի ընթացքում հեռուստադիտող հավաքացյալը հնարավորություն ունեցավ նաև ունկնդրելու Տ. Վահրամ քանանա Մելիքյանի մեկնաբանություն-բացատրությունները Շենդյան Ս. Պապարագի ե օրվա խոբերդի մասին:

ՆԵՂԻՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՕՆՆԻԿ ՄԵՆՐԱՔՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ԱԻՐԵՑԵԱՒ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՄԱԿԱ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՕՆՆԻԿ ՄԵՆՐԱՊԵԱՆ,
ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տեր-
պէրեանից գոհունակութեամբ տեղեկացանք Միացեալ Նահանգների հասարակական
կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւնների եւ եկեղեցեանուէր Ձեր երկարամեայ գործու-
նէութեան մասին:

Յարգարժան այրն Մկրտապեան, մեծապէս գովելի է, որ Դուք Ձեր ազնիւ Տիկնոջ ու զա-
ւակների հետ միասին բազմարդիւն ծառայութիւններ էք մատուցում ԱՄՆ հայոց Արեւ-
մտեան Տիրախնամ թեմի կեանքում՝ մեծապէս նպաստելով հայ համայնքի համախըմբ-
մանն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը:

Հայրապետիս համար գոհունակութեան առիթ է յարկապէս, որ Սուրբ Ծննդեան տօնա-
կան այս օրերին, շնորհիւ Ձեր իշխանական ազնիւ նուիրատւութեան, նոր եկեղեցի օծուեց
Միացեալ Նահանգներում, հայաշատ Դղէնտելլ քաղաքում՝ դառնալով շրջակայքի հայու-
թեան հոգեւոր եւ ազգային կեանքի կենտրոն: Այսօր արդեն սրբավայրի լուսաւոր կամար-
ների ներքոյ հաւաքաւոր հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում՝ ե-
րախտագիտութեամբ Տիրոջ օրհնութիւնը հայցելով նաեւ Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամնե-
րին:

Ձեր գործերը վկայություն են առ Աստուած Ձեր հաւատքի եւ առ Մայր Եկեղեցին ու հաւաքաւոր ժողովուրդը Ձեր յղիական նուիրումի: Դուք, արդարեւ, արժանի գաւազն եք իրանահայ անդաշտաւ գաղութի, որի բազմադարեայ պարամութիւնը վառ օրինակ է մեր ժողովրդի գոհողութեան ոգոյ, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցոյ եւ լուսոյ խորսոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտապէս դրսեւորած աներկբայ սիրոյ:

Բարձր գնահատելով Ձեր եւ Մեքրապեան ընտանիքի ծառայութիւնները մեր Եկեղեցոյն ու հաւաքաւոր ժողովրդին, սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գեորգեանի Տ. Զովնան արքեպիսկոպոս Տէրութեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այստէս Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցոյ

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ռ Ր Ի Չ

պարտոյ բարձրագոյն շքանշանը:

Առ Աստուած Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ գորակցութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ՝ շարունակելու Ձեր արդիւնատու ծառայութիւնները մեր Մայր Եկեղեցոյն ու բարեպաշտ ժողովրդին:

Թող Տէրը բաջատողը նրկար կեանք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պահպանելով Իր խնամքի եւ օրհնութեան մէջ:

Ողջ լնիրոք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենջ առէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 8-ն Յունաւորի

յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ԱՆՆԳ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 216

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. հունվարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատկերով

Օրհնության գիր է տրվել.

Հերման Խեղիլյան (Կանադահայոց թեմ)

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Պրոտահայ մշակութային միությանը

Ավագության պատիվ է տրվել.

Գարեգին քահանա Հովսեփյան (Իրաքի հայոց թեմ)

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՐ

ԿԱՐԳԱՆՈՒՅԾ Է ԱՐՎԵԼ ԻՐԱԶԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐ Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հունվարի 9-ի Հայրապետական փնտրիչությամբ կարգալույծ է հռչակվել Իրաքի հայոց թեմի հոգևոր սպասավոր Տ. Արարատ քեն. Հովսեփյանը՝ հոգևորականին անվայել վարքի և կեցվածքի համար: Այս որոշման համար հիմք են ծառայել Նորին Սրբությանն ուղղված Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի և Իրաքի Ազգային Կենտրոնական Վարչության դիմումները:

Կարգալույծ արված հոգևորականը դատվում է աշխարհականների շարքը և այսուհետ կկոչվի ավագանի անունով՝ Նորայր Հովսեփյան:



Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ Ս. ՂԱՏԱՐԱԳԻՆ (5 հունվարի 2004 թ.)

«Ցանաւոյ Նոր եւ Որդայ եւ Նոգայն Սրբոյ. ամեն»:

Այսօր ամենքս մասնակիցն ենք Սուրբ Ծննդյան հանդիսության. մենք, իբրեւ եկեղեցականներ՝ կոչված սպասարկելու այս Սուրբ Սեղանը, և դուք, իբրեւ հավատացյալ ժողովուրդ՝ կոչված մասնակիցը լինելու և ճաշակելու մեզ հետ այս Ս. Սեղանից մատակարարվող և բաշխվող Տիրոջ Սուրբ Մարմինը և Արյունը: Ամենքս լցված ենք ծննդյան ուրախությամբ և ցընծայությամբ: Ուրախ ենք և մխիթարված անչափ. քանզի այսօրվա ծնունդը առանձնահատուկ է, առանձնահատուկ է նրանով նաև, որ մենք, իբրեւ հրավիրյալներ՝ նվեր մատուցելու փոխարեն նվեր ենք ստանում: Եվ այդ նվերը ամենից թանկն ու ամենից անփոխարինելին է: Մեր Տեր Հիսուս Քրիստոս է այսօրվա Նվերը, որ Հայր Աստծո կողմից ընծայվեց Իր ժողովրդին: Եվ որպես Ծնունդի մասնակից՝ առաջին հարցը, որ ուղղում է մեզանից յուրաքանչյուրն ինքն իրեն, այն է, թե ինչ ծնունդ է արդյոք այս, որ այսպես համախմբել է մեզ այս Սուրբ Տաճարում:

Առաջին պատկերը, որ արտացոլվում է մեր հայացքի առջև, Փրկիչ՝ մանուկ Հիսուսի ծննդյան դրվագն է, պատկեր, որը տակավին 2000 տարի առաջ շարք քցեցին պիտի վստահեցներ, թե ծնվողը իրապես Աստված է, թե ծնվողը իրապես Ամենագոր Փրկիչն է, որ փրկելու է Տիրոջը հուսացող հոգիներին: Քանզի Փրկիչը ծնվեց մի անշուք, մարդկանցից անտեսված, քաղաքակրթությունից հեռու մի օրբանում մտորի մեջ, անբան կենդանիների հարևանությամբ, Որի ծննդյանը ներկա էին միմիայն հովիվները և Իր ծնողները: Ահա Հիսուսի Ծննդյան արտաքին նշանները և հանգամանքները, որոնք պաճուճանքի վաղժված մարդկանց ոչնչով չէին կարող հուշել, թե ծնվողը իրապես Թագավոր է, Աստված և Տեր ողջերի ու մեռածների:

Երկրորդ հարցը, որ ծագում է մեր մտքում, այն է, թե ինչով է առանձնանում այս Ծնունդը մյուս բոլոր ծնունդներից, որոնք, ճիշտ է, փոխակապարտում ենք, բայց ոչ այն գիտակցությամբ, որ այդ ծնունդը էական ներգործություն կարող էր ունենալ մեր կյանքի մեջ:

Մենք այս Ծնունդը՝ Քրիստոսի Ծնունդը, կոչում ենք խորհուրդ: Սրբազան մեր հայրերը, եկարագրելու համար Քրիստոսի Ծնունդը, օգտագործում են հետևյալ բառերը. «Անպարագրելի պարագրեցավ, Անսահմանելի սահմանների մեջ եկավ»: Այսինքն՝ անսահմանն Աստված եկավ սահմանների մեջ: Եվ իրապես, եթե մեր այսօրվա լեզվամտածողությամբ արտահայտելու լինենք այս իրողությունը՝ Աստծո համար մարդաստալը նույնն էր, ինչ որ այսօր մեզանից յուրաքանչյուրի համար կամավոր ազատագրկումը: Աստված, որ անսահման էր, անսահմանների Թագավոր, ազատության Իշխան, եկավ սահմանավոր մարմնի

մեջ, կաղապարի մեջ, որպեսզի այդ մարմնի մեջ իր ձեռքը հալի մարդկանց ձեռքերին. քայլի այն ավագների վրա, որպեղով քայլում էին մարդիկ, որպեսզի մարդկանց ցույց տա այն ճանապարհը, որով նրանք կոչված են քայլելու: Եթե այլ բառով որակել փորձենք Ջրիստոսի Մնունդը, այն իրապես նվեր էր մարդկությանը, մարդկային տրամաբանությունից, մարդկային վերածնունդ մտքից վեր մի նվեր:

Մարդիկ սովորաբար նվերներ մատուցում են անձերին, որոնց նկատմամբ մեծ համարում ունեն. ունեն սեր և հարգանք: Սակայն Ջրիստոսի Մնունդը գալիս է հավաստելու, որ Ջրիստոս ծնվեց այն ժամանակ, երբ մարդիկ այլևս լցրել էին ժամանակն իրենց անօրենությամբ, այսինքն՝ մարդկանց կողմից չէր վաստակվել այդ սերը, պարզապես Աստված Ինքն արժանի փեսավ այդ բոլոր անօրենությունները փոխհատուցել սիրով: Եվ հատկանշական է, որ Աստված իր բոլորը՝ մարդկության գործած անօրենությունների դեմ, արտահայտեց բացառիկ կերպով. Նա նվիրեց մարդկանց ամենանվիրականը և ամենաթանկագինը՝ իր Միածին Որդուն:

Հաջորդ հարցումը, որ մենք, որպես հավատացյալ ժողովուրդ, որպես մասնակիցներ Մննդյան այս խրախճանքի և ուրախության, պետք է ուղղենք մեզ, այն էր, թե ինչ արդյունք տվեց Աստծո Միածին Որդու ընծայաբերումը մարդկանց: Երբ Ջրիստոս աշխարհ եկավ, հրեշտակի ավետիսը մարդկանց հետևյալն էր «Յերկիր խաղաղություն և ի մարդիկ հաճութիւն» (աշխարհում խաղաղություն և մարդկանց միջև համերաշխություն):

Ջրիստոս, սակայն, ակնարկելով Երկրորդ Գալուստը, իր երկրային կյանքի ընթացքին իսկ հարց է տալիս. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի?» (Նույ. ԺԹ: 8): Ինչն էր, արդյոք, Փրկչի մոտ նման տարակույս առաջացրել: Շատ բնական կերպով հասկանալի է. Ջրիստոս ինչպես իր ամբողջ առաքելության ընթացքին, այժմ ևս ներքին ողբերգություն, ներքին ցավ է ապրում, երբ տեսնում է, որ իր ծնունդ առնելուց հետո կարծես թե ոչինչ չի փոխվել մարդկանց մեջ: Թագավորները շարունակում են կառավարել նույն ձևով, հպատակները շարունակում են ենթարկվել նախկինի պես, վաճառականները շարունակում են վաճառականությամբ զբաղվել նույն ձևով, իշխանները շարունակում են իշխանաբար ճնշել: Կարծես թե ամեն ինչ նույնն է, Մարդու Որդին վերստին տարակուսում է՝ արդյոք կգտնվի՞ հավատք, արդյոք կհաստատվի՞ խաղաղություն երկրում և համերաշխություն՝ մարդկանց միջև:

Եվ այսօր, Ջրիստոսի Մննդից 2000 տարիներ անց, նույն տարակուսանքով ու այժմեականությամբ է հնչում նույն հարցը. «գտանիցե՞ արդյոք Որդի Մարդդ հաւարս յերկրի»: Մեզանից շատերը կպատասխանեն՝ անշուշտ կգտնի: Եվ իրապես՝ այդ հավատքի վկայություն է այսօրվա մեր համախմբումն այս Տաճարում: Սակայն ի՞նչ ենք հասկանում մենք «հավատք» ասելով: Գիտակցաբար մենք ամենքս ընդունում ենք Աստծո գոյությունը, սակայն այն կամքը, որ պիտի արտահայտենք մեր հնազանդությունը Աստծո պարզամտերին և պատվիրաններին երբեմն թուլանում և տկարանում է մեր մեջ, և այն գիտակցությունը, որը մեզ շնորհված է աստվածաճանաչողության համար, նսեմանում է այդ կամքի թուլության հետ: Եվ շատ բնական մի հարց էլ այսօր կարող է առաջանալ. եթե Ջրիստոս եկավ, և մենք այսօր խաղաղություն չունենք աշխարհում, մարդկանց միջև համերաշխությունը տակավին կաղում է, մարդկանց միջև հարաբերությունները կառուցվում են շահախնդրության հիմքի

վրա, արդյոք աննպատակ չէ՞ր Զրիստոսի գալուստը: Առաջին հայացքից այս հարցը շարժման և փրամաբանական կարող է թվալ:

Ես չեմ կարող ասել, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ առաջին անգամ հայելու գյուղը մարդկանց համար, բայց վստահ եմ, որ Զրիստոսի ընթացումը մարդկանց այն մեծ ազդեցությունն ունեցավ, որ մարդիկ կարողացան Զրիստոսի Անձի մեջ տեսնել իրենց, Զրիստոսի մեծության մեջ մարդիկ կարողացան տեսնել իրենց փոքրությունը, Զրիստոսի անսահմանության մեջ՝ իրենց սահմանավորությունը, Զրիստոսի անհունության մեջ՝ իրենց հունավորությունը, և Զրիստոսի մարդկության մեջ կարողացան տեսնել իրենց մարդկության չափը, և Զրիստոսի Աստվածության մեջ կարողացան տեսնել այն հնարավորությունը, որ իրենց ևս կարող են դեպի Աստվածության գնալ: Զրիստոսի մեջ մենք տեսնում ենք ինքներս մեզ, Իր լույսի մեջ՝ մեր խավարը, Իր անբծության մեջ՝ մեր բծերը: Եվ մի՞թե սա փոխ չէ, մի՞թե փոխ չէ, որ կարող ենք ճանաչել մեզ, տեսնել ճանապարհը, որ պիտի կտրենք, ճանաչել նպատակը, որին պիտի ձգտենք:

Միտելի քույրեր և եղբայրներ, մենք լավ գիտենք մեզ, մենք գիտենք, որ արագ ենք փոխվում և ամեն անգամ առաջին անգամվա պես ինքներս մեզ համոզում, որ շարժվելու ենք, փոխվելու առ Բարին, բայց ապարդյուն: Դրա համար է, որ հույսներս կտրած ինքներս մեզնից Կարալոյալին ենք փարվում, Փրկչին ապավինում և այդ ապավինությամբ փառաբանում:

Ո՛վ Զրիստոս Փրկիչ, օրհնյալ է Շնունդը Զո, օրհնյալ և փառավորյալ հայրնությունը Զո, անպակաս արա մեր սրտերից ու մտքերից ներկայությունը Զո, որպեսզի ավելի խորը զգանք Կամքը Զո և ընդառաջ ելնենք երկրում խաղաղության և մարդկանց միջև համերաշխության Զո երավերին:

Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԶԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(4 հունվարի 2004 թ.)

*«Զաղօթս իմ Տեսուն տուց տուացի ամենույն
ժողովրդեան նորա, ի գաւիթս տան Տեսուն,
և ի մէջ քո, Երուսաղէմ»:
(Սաղմ. ճԺԵ 18-19)*

*«Աղոթքս Տիրոջը պիտի նվիրեմ իր ամբողջ
ժողովրդի առջև, Տիրոջ տուն սրահներում և
քո մէջ, Երուսաղէմ»:*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Խոսքերս շաղախելով սաղմոսերգու Դավթի այս խոսքերին՝ Տե՛ր Աստված Ամենակալ, հոգոս մըմունջն եմ վերառաքում Զեզ՝ Զո ողջ ժողովրդի առաջ, հենց Զո՛ տան մէջ: Ո՛վ Հայր, Զեզ եմ վերընծայում հոգոս դրախտում աճեցրած ու հասունացրած պտուղները: Ուրիշ կերպ չեմ կարող...

Հոգու անասելի հուզումով եմ հիշում քառասուն օրեր առաջ տեղի ունեցած այն մեծ իրադարձությունը, երբ Միաձնաէջ Սուրբ Տաճարի սրբազնասուրբ Ավագ Խորանին հինգ միարան եղբայրներով ուխտի երդում փոխեցինք՝ քահանայագործելու և բաշխելու Տիրոջ անմահ Մարմինն ու Արյունը, կոչվեցինք կրելու Հավիտենական Զահանայի ծանր, բայց միևնույն ժամանակ քաղցր լուծը: Պեպք չէ խաբված լինել կարծելու, թե այդ ճանապարհի ղյուրին է, ընդհակառակը՝ այն չափազանց դժվար է, իսկական Գողգոթայի ճանապարհ: Սուկայն այն մտածումը, որ ուխտ եմք կնքել Կենդանի Աստծո և ոչ այս կամ այն մարդու և կամ հասարակության հետ, փարափում է հուսահատության մինչև իսկ վերջին նշույլը և Տիրոջը ծառայելու առավելագույն քաղցրություն պարգևում:

Օգտվելով բարեպարտի առիթից՝ ցանկանում եմ երախտագիտությունս ու հնազանդությունս հայրենի ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Թող Աստված անխառն գահակալության նրկար օրեր պարգևի և ծաղկեցնի գավազանը մեր Հոր՝ առաջնորդելու համար մեր ժողովրդին դեպի խաղաղ նավահանգիստ:

Շնորհակալանքի ու դրվատանքի խոսքերս եմ ուղղում նաև մեր հոգևոր ծնողին՝ Գերաշնորհ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Մահակյանին: Թող Հարուցյալ Տիրոջ ամենախնամ Աջն ու Խաչի գոթությունը միշտ հովանավոր լինեն մեր շար սիրելի Սրբազան Հորն ու արևշաղկյանք պարգևեն:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում նաև Ս. Գայանե վանքի վանահորը՝ Հոգևորի S. Ներսես արքեպիսկոպոսին, որը մեծ սիրով հնարավորություն ընձեռեց իմ անդրանիկ Պարարագն այս Սուրբ Մեղանից մատուցելու:

Որոշական խոնարհությամբ և ակնածանք արժանին ու պարզաճն եմ ցանկանում մատուցել «հույսի կաճառ և լույսի տաճար» (Վազգենյան Հոգևոր Դպրանոցի հիմնի խոսքերից) դարձած, մեզ սնող ու հասակ փվող մայր հասարակություններին՝ Գեղասա գողտրիկ լեռներում ծվարած Մեսնի Վազգենյան Հոգևոր Դպրանոցին և Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանին:

Միջելի՝ հավատացյալ ժողովուրդ, այս օրերին բովանդակ քրիստոնյա աշխարհը տոնախմբում է Փրկչական Նոր՝ 2004-րդ թվականը: Ժամանակակից քրիստոնյա հեղինակներից մեկը նվիրական այս պահը՝ Նոր տարին, փութառիկ այս աշխարհում դիպում է որպես գրքերից հանգստանալու և հավասարակշռություն ստեղծելու միջոց: Իրոք, ինչպես որ այսօր, թողած խնջույքի ու վայելքի սեղանները, հավաքվել ենք Աստուծո փան մեջ ու մտաբերում ենք Տիրոջ պարգամբ, որ պարսկիտում է լավ փութաներ լինել Տնտեսի առակի օրինակով, այդպես էլ Նոր տարվա օրերին պիտի փորձենք, այսպես ասած, ստեղծել մեր կյանքի հավասարակշռությունը: Հենց այս պահին մի խաղաղ ու հեղափոխական հայացք նեղենք մեր ապրած տարիների վրա, ներկա ժամանակն զգուշացնում է մեր օրերի արագընթացության ու նրանց կարևորության մասին:

Մեր երկրավոր պանդխտության հանգրվաններում մենք զգում ենք, որ կարծես մեր ձեռքում «դեռ» կենսապտու ուժ կա, այնպես, ինչպես զգում ենք, որ ցերեկը գեղեցիկ է, որովհետև դեռևս երեկո չէ՝ չնայած որ ցերեկը թաքնված կերպով արդեն իսկ պարունակում է երեկոն՝ իր ձևի մեջ:

Սակայն արդյո՞ք մենք մեր կյանքը լցնում ենք «ներքին մարդու» խորհրդով, ինչպես կասեր Պողոս ամառյալը, թե՛ «Թեպետև մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե» (Բ Կորնթ. Դ 16): Կյանք, որի ընթացքում ճաշակել ենք և՛ վերելքի քաղցրությունը, և՛ վայրէջքի դաժնությունն ու նրա հարվածները:

Ներքին մարդ-արտաքին մարդ հակադրության մասին շատ դիպուկ է արտահայտվել մեր Եկեղեցու վարդապետներից Վարդան Արևելցին՝ ասելով, թե որքան մեր արտաքին մարդը ապականվում և չարարվում է, այնքան մեր ներքին մարդն է նորոգվում և պայծառանալով գեղեցկանում, քանզի սրանք հակառակ են իրար. մեկը ցանկանում է սրբությամբ վեր բարձրանալ՝ Աստուծո մոտ, մինչդեռ մյուսը նյութապաշտությամբ՝ վար, ախրի ու ապականության մեջ:

Անավասիկ, սիրելի հավատացյալ ժողովուրդ, իմ այս մտորումները, որ ցանկացա կիսել ձեզ հետ:

Այս օրերին տոնում ենք թերևս ամենամեծ ժողովրդականություն վայելող և ամենասիրելի տոներից մեկը՝ Նոր տարին: Հին տարին հանձնեցինք պարմությանը և բացում ենք այդ պարմության մի նոր՝ սպիտակ էջ: Գալիք երեք հարյուր վաթսուհինգ օրերի ընթացքում պիտի լցվի այս նոր էջն էլ, սակայն ինքնամփոփումի և ինքնահաշվարկության զգա-

ցումով պիտի մեր ներանձնական կյանքում դրսևորենք «օրըստօրե նորոգված ներքին մարդուն»: Ներքին մարդ, որին թույլ չվերաբերեն Վարպետի խոսքերը.

«Ես ձեզ ասում եմ, կգա ոգու սով
Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի շուրջ»:

(Ա. Իսախանյան)

Ուրեմն և պարզ է դառնում, որ Նոր տարվա տոնի պատգամն ու բովանդակությունն ավելի շատ կապվում է մարդկային հոգու, քան նյութի, այս պարագայում սեղանի առապության և կամ ուրեստի բազմազանության հետ: Անտարակույս, բոլորիս կյանքում էլ եկել և կամ գալու է ոգու սով. սակայն պիտի կարողանանք հազեցած դուրս գալ ոգու այդօրինակ պաշարումից՝ փնտրելով իսկական *Կենսաբար հացը*: Ահա այն մտածումը, որ պիտի լինի բոլորիս ուշադրության կենտրոնում:

Այլապես գեղեցկագույն այս տոնը պիտի ամուլ գտնվի իր իմաստից և լոկ դառնության պարուզ հասցնի մարդկային հոգու քարքարոտ անդաստանին:

Միրելիներ, եկե՛ք, ուրեմն, մեր հոգու ընդերքից պեղենք ներքին մարդուն, նորոգվենք Տիրոջ անթաքցելի լույսով՝ արժանապես մերձենալու Նրա արքայական Մեղանին:

Ամենախնամ Աստված, դարձյալ *Ջո Սուրբ* տան մեջ, *Ջո ժողովրդի առաջ խնկանվեր մաղթանքներով* *Ջեզ* եմ մատուցում սրտիս աղերս-մաղթանքն իմ *Հոր Տան* և իմ *Հոր ժողովրդի* համար: Հաճությամբ ընդունիր մեր Մայր Եկեղեցու փոքրիկ գոհաբերությունը, որպես ընդունեցիր Աբելինը, Նոյինը և Աբրահամինը: Տո՛ր, Տե՛ր, «ներքին մարդու» համարձակությամբ բանալու մեր բերանն ու ասելու:

«Նորոգող հնությանց, նորոգեա՛ր եւ գիս, նորոգ զարդարեա՛ր ի փառաբանութիւն Անուանդ *Ջում Սրբոյ*, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

**Տ. ԿՅՈՒՐԵՂ ԱԲԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՒՄ**
(4 հունվարի 2004 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Մրրի և հոգու անեան բերկրալից խնդությամբ առկեցուն զգացումներով ու ասլրումներով՝ իբրև երախայրիքի քահանայագործության և Նոր տարվա հուսալի արշալույսին երախտագիտական հայցս եմ առաքում Բարձրլայն Աստծուն՝ աստվածահաղորդ նարեկացիաշունչ տոգներով:

*Ինձ, որ սրտկեղդ եմ, մեղքով հեռացած,
Քուրանեղիդ մեջ ձուլի՜ր վերստին խոսքիդ հրայրքով:
Քո հանգստարան – խորանի՜ մարմնիս
Շինվածքը խախտված, պահապան հոգուս հեղ,*
պաղապրում եմ,

*Մաքրագործի՜ր քեզ ի քնակություն:
(Գրիգոր Նարեկացի, Բան ԺԹ, Ա)*

Եվ իմաստուն սաղմոսերգուի նման ասում եմ. «Տա Աստված, որ խոսեմ իրավախոհությամբ և ունենամ Նրա տված շնորհներին արժանի մարածումներ» (Իմաստ. Սող. Է 15):

Ահա աստվածապարզ և ու բարի ակնկալիքներով մի Նոր տարի ևս, Ամանոր, որը կարծես նորաբաց տարեկալի նման դեռ ճերմակ կրավ և մաքուր մի էջ է տրված յուրաքանչյուրին: Արդյո՞ք այն ծրարելու և այդպես դատարկ պահելու ենթակա է, ինչպես որ հմուտ արվեստագետ-նկարիչն է իր եամար թանկ կրավի վրա ջանում պարկերել նորը, լավագույնը՝ անմահանալու հորինաստեղծ գործերով, այնպես էլ մենք մեր կյանքի նորաբաց այս էջին դրոշմենք, պսակագարդենք նորանոր բարի, առաքինի ու մշտամնա բյուր արժեքներով ու արարքներով՝ հավիտենական կյանքի համար գանձեր դիզելով երկնքում, քանի որ ուր մեր գանձերն են, այնպեղ և մեր սրտերը կլինեն:

Նորոգության պարգամն է, որ հնչում է այսօր մեր ականջներին և թակում մեր հոգիներին ու սրտերի դռները: Ականջալուր լինենք և անսանց առաքելապարգամ հորդորին, որ եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ և հիմա ամեն ինչ նոր եղավ: Հնի հեղ հեռու վանենք հին մարդուն իր գործերով, ամեն տեսակ հռիկ և տեղանք արքերն ու սովորությունները, և ընդունենք նորի՞մ նորոգված աստվածախոսական շքեղաշուք առաքինությամբ, բարի գործերով: Եվ լիովին մաքրագործված հոգով ու վերանորոգված մարդով սրբագրենք, ինքնաեստակեցնենք մեր կյանքի ուղին՝ իբրև մշտարթուն ու անմար փառոս ունենալով քրիստոսապսակ աստվածահաճո իրագործումները: Նորոգությունը մեր մեջ, մեր կյանքում, մեր ներաշխարհում իրագործենք: Ինչպես օրեր առաջ ժրաջանո-

րեն պատրաստվում էինք պատշաճորեն դիմավորել Ամանորը՝ պերճաշուք զգեստներով, կահավորված բեակարաններով, շրջապատված ցանկալի անձնավորություններով, զեղնցկազարդ կահ-կարասիով ու մաքուցմամբ, բազմապեսակ խորտիկների ճաշակմամբ, ապա ստափել սև վայելույ է մեր իսկափայ ինքնությամբ, մաքրամաքուր վեհանձնությամբ ու կննցադով բարեգարդենք մեր սրտերը, մրաժումները և լինենք պատվավոր ու րնպիր ա-նոթներ՝ սրբագործված և պիտանի մեր Տիրոջը՝ պատրաստված ամեն բարի գործերի հա-մար:

Մոտենանք և հաղորդ դառնանք Փրկչի քավչարար մարմինն ու աղյանը՝ հոգնդեն հա-ցին, իմացության հացին, որ մարդու սնուցիչ աղբյուրն է, և վաղն անսպառ ուրախությամբ ընդունենք և ողջունենք Աստվածհայտության հրաշախորհուրդ սուրբ ավետար: Ինչպես որ բարեկամ ընդունելիս հյուրասիրաբար բացում ենք մեր բնակարանահարկերի դռները և անպարենություն ենք զգում կեղծավոր կամ նենգ այցելուի ներկայությունից, այնպես էլ հրաժարվենք չարի խաբեպարիդ աշխարհային հրապույրներից և խնդասիրտ ցնծությամբ փարվենք ու մեր սրտի աներևույթ դռները բացենք՝ ընդունելու մանուկ Հիսուսին, բնակութ-յան համար մեր հոգիները վերածենք մի փոքրիկ մսուրի, ահա հավիտենական կյանքի առ-հավաքչյան:

Նոր փարին նոր ողորմանքի, նոր զաղափարների, նոր հույսերի և նվիրական փափագ-ների սկիզբ է: Եվ հիմա գոհունակ սրտով է, որ փառք եմ փալիս Քեզ՝ Հայր Ամենակալ, որ իմ երեխուն քայլերը հաստատուն դարձրիր, երբ առաջին անգամ, իբրև ուխտի մանուկ, մուտք գործեցի ինձ համար նվիրական ուխտավայր ու հոգևոր ծննդավայր դարձած այս հնաբույր Տաճարը, ու այսօր հոգեծնյալ պարանոս ուխտը կյանքի կոչեցիր՝ պարարա-զելու Քեզ, բաշխելու կենարար մարմինդ և սրբարար արյունդ:

Որպես Վեհափառ Հայրապետի հոգեկիր զավակ, իմ որդիական ամենաազնիվ շնոր-հապարդ զգացումներն եմ հայտնում Ձեր հայրախնամ հոգաժողության ու հոգադարձության համար:

Մեր՝ հոգեծնյալ զավակներիս սերն ու հարգանքը մեզ Ս. Հոգու աստվածաեղ շնորհնե-րով պսակազարդողիդ՝ Դավիթ Սրբազանիս:

Մեր մրքերում անմահորեն հավերժագրված և հուշագրված ապրելու են մեր հոգևոր նախակրթարան Շիրակի Ընծայարանը մեր հոգևոր դարբնոց Գևորգյան Հոգևոր Ընծարա-նը:

Եվ այժմ, Նոր փարվա նախասեմին, աղոթում եմ փիեզերքի Նորոգողին, որպեսզի կրք-կին նորոգի մեր հոգիները պառնայանող այս մարմինները՝ իբրև հանգստարան և փաճար Աստուծո՝ Իր իսկ բնակության համար.

Նորոգող հնությանց

Նորոգեա եւ զմեզ,

Նորոգ զարդարեա:

Տ. ՆԱԿՈՒԲ ՔԱՇԱՆԱ ՆԱԿՈՒԲԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 հունվարի 2004 թ.)

*«Եթե Զրիստոս հարություն չի առել,
իզուր է ձեր հավատը»:
(Ա Կորնթ. ԺԵ 17)*

«Յանուն Տոր եւ Որդոյ եւ Տոգոյն Սրբոյ. ամեն»:

Սիրելի հավաքացյալներ,

Դեռ երկկ րվեցինք մեր Տիրոջ՝ Նիսուս Զրիստոսի Սուրբ Ծննդյան ավերիսը: Յուրաքանչյուրիս շուրթերից հնչեցին «Զրիստոս ծնվեց և հայրնվեց, օրհնյալ է մեր Տիրոջ ծնունդը» և հոգեպես ուրախ ու զվարթ վերադարձանք մեր տները՝ ավերիս րալով նաև մեր հաղապարներին: Իսկ այսօր հավաքվել ենք Տիրոջ րանը՝ միասին աղոթելու և ոգեկոչելու մեր այն հաղապարների հիշատակը, որոնք հեռացել են այս աշխարհից:

Չարաբաստիկ մաեը խլելով մեր հաղապարների կյանքը, այնքան է րարմեցնում մեր հոգիները, որ մենք, փորձելով հասկանալ այդ մեծ կորստի պարճառը, հաճախ այն մրածում ենք ունենում, թե Աստված անարդար գտնվեց, և կամ թե Աստված չկա, իսկ եթե կա էլ, ապա ինչո՞ւ անժամանակ խլեց նրանց կյանքը: Բայց այստեղ մենք մաեը շփոթում ենք Աստծո՝ Արարչի և կենդանություն պարգևողի եեք: Ջանգի եթե Աստված լիներ մաեկան պարճառը, ապա ինչպե՞ն է, որ Նիսուս, լսելով Ղազարոսի մաեկան լուրը, արտասվեց: Ուրեմն մարդկության հանդեպ ունեցած մեծագույն սիրուց էր, որ մեր Տերն արտասվեց ու հարություն րվեց Ղազարոսին, ըստ իր այն խոստման, թե՝ «Ես իսկ եմ հարություն և կյանք, ով հավատում է ինձ, թեպեք և մեռնի, կապրի» (Ղով. ԺԱ 25): Բայց՝ այս ամենն իմաեալով հանդերձ, երկմրում ենք և նմանվում այն մարդկանց, որոնց Տերը Եսայի մարգարեի բերանով նախատում է՝ ասելով. «Այս ժողովուրդն ինձ շուրթերով է մեծարում, բայց նրանց սրտերն ինձանից հեռու են...»:

Ս. Օգոստինոս Երանելին այսպես է նկարագրում մաեը. «Կյանքը ոչ այլ ինչ է, քան հարաքս մաե. մարդը սկսում է մեռնել իր ծննդյան պաեից... ավելի ճիշտ նա ապրում և մեռնում է միաժամանակ» (Ս. Օգոստինոս, Խոստովանություններ, գլ. VII, էջ 7): Եվ իրապես, եթե լրջորեն խորենք, ապա կրեանենք, որ այս աշխարհում մարդուն հարկացված էյանքի ժամանակաշրջանը բաժանվում է եեքնյալ փուլերի. մինչև լույս աշխարհ գալը, ապա՝ ծնվելուց եեքտ մինչև չափաաաս րարիքին հասնելը, երիտասարդության րարիները, ապա՝ ծերության, և յուրաքանչյուր անգամ մի րարիքից մյուսին անցնելիս նախկին մարդը կորչում է և, եթե կարելի է ասել, մեռնում է:

Աշխարհի սկզբից մահվան գաղափարը զբաղեցրել է մարդկային միտքը: Մարդիկ երբեմն չեն գիտակցում, որ միաժամանակ ապրում են և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր կյանքեր՝ մի ամբողջության ներքո: Մահն այս երկուսն իրարից բաժանողն է:

Թեև մեր նախահայր Ադամի անհնազանդության պատճառով մահն աշխարհ եկավ և անբաժանելի մասը դարձավ աղամորդու, բայց Աստված, լինելով անսկիզբ և գերազույն Էակ, նաև Արարիչն էր իսկ արարածի, նրանց համար ողորկեց Իր Միածին Որդուն: Հիսուս Քրիստոս հայտնվեց աշխարհին որպես Փրկիչ և բարոզեց մեր հոգու առաջնայնությունը մարմնի հանդեպ՝ կենտրոնացնելով Իր խոսքերը հավիտենական ճշմարտության վրա: Մեր Տերն Ինքը խոնարհեց Իր անձը, կրեց մարդկային չարչարանքներ, բռնեց Գողգոթայի ճամփան, խաչվեց և հարություն առավ, որպեսզի հարություն տա մեզ և որպես նավապետ՝ առաջնորդի մեր հոգիները դեպի խաղաղության նավահանգիստը, ուր հարություն առած հոգիները, արդար հոգիները կապարելապես նորոգված պիտի կազմեն Հայր Աստծո թագավորության եղբայրությունը՝ վայելելով Իր ներկայությունը:

Ապրելով երկրի վրա, յուրաքանչյուրս պետք է գիտակցի, որ մենք այս աշխարհում պանդուխտ ենք, և մեր աշխարհը ոչ թե այս անցողիկն է, այլ այն մնայունը, ուր պիտի հանգրվանեն մեր հոգիները:

Ուստի, սիրելի հավատացյալներ, նկեք այսօր համաքեղ աղոթք բարձրացնենք առ Աստված մեր հանգուցյալ հարազատների համար, որպեսզի Տերը լուսավորի նրանց հոգիները և ընդունի նրանց Իր հավիտենական լույսի խորաններից ներս և ամենի Իր անմահության գոգը:

**Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԲԵՂԱ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(25 հունվարի 2004 թ.)**

*«Այդ հաւատայի Նա՛նջ դարապարտեացի,
և որ ոչ հաւատայի Նա՛ւրդէն իսկ դարապարտիայ է,
զի ոչ հաւատաց յսևուն ճիւղին Որդոյն Աստուծոյ»:
(Հովհ. Գ 18)*

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի՛ հավաքացալ քույրեր և եղբայրներ,

Որպես մեր խոսքի բնաբան՝ ընտրված այս հատվածում Հովհաննես ուվիդաբանիցը ներկայացնում է այն դրվագը, երբ զրույցի են բռնվում հրեա ազգի հմուտ կրոնագետ ուսուցիչ Նիկողեմոսը և եամայն մարդկության Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս:

Նիկողեմոս փարիսեցին պարզ հեղափոխությամբ չէ, որ գաղտնի եկել էր Հիսուսի մոտ: Նա հստակ գիտեր ու Կրիստոսը էր Նրա բազում վերերկրային հրաշագործությունները և լսել էր Տիրոջ կենդանաբար խոսքն ու քարոզը: Թեպետ նա իմաստուն էր համարվում, բայց ճանաչակի կեղծ ու սխալ համոզումները պաշարել էին իր հոգին, ուստի և հասկանալի էր իր զարմանքը և հասկանալի էր իր հարցումների պարզաբան: Քրիստոս ընդհանրապես որևէ մեկին փոխելով և խոսելով փոխում էր նաև Նրա ներքին հուզումները: Այստեղ Փրկիչը խոսքը սկսում է հեղափոխական բառերով. «Եզմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը փոխել» (Հովհ. Գ 3):

Քրիստոս, Իր խոսքը շարունակելով, խոսում է համամարդկային փրկագործության մասին. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ որպեսզի աշխարհը նրանով փրկվի» (Հովհ. Գ 16-17):

Անշուշտ, սիրելի բարեպաշտ հայորդիք, Քրիստոս գիտեր, որ այս ամենը դյուրին չէ հասկանալի ու ընկալելի, և այսօր էլ շատերս տարակուսանքի մեջ ենք ընկնում: Ուստի պատահական չէ, որ Քրիստոս փրկագործության վարդապետությունը ներկայացնելիս շեշտում է մկրտության կարևորությունը, թե ոչ չի կարող Աստծո արքայությունը փոխել առանց վերստին ծնվելու՝ մկրտվելու: Նույնպես առանց այս սրբազան խորհրդի ղեկավար կլինի ընկալել և ընդունել փրկագործության խորհուրդը: Հենց այս համոզմամբ է, որ մեր Եկեղեցին առավելաբար ընդունում է մանկամկրտությունը:

Այսպիսով, մկրտության անճառելի խորհրդով զրահավորվում ենք՝ պատերազմելու ընդդեմ բանասարկուի, և երկնային շնորհ ստանալու և ընդունելու աստվածային խորհուրդները:

Մի բանի օր է անցել մեր Փրկչի հրաշափառ ծնունդից ու մկրտությունից: Այդ օրը մենք էլ վերստին ծնունդ առանք և մկրտվեցինք՝ ի բարենորոգություն անձանց մերոց: Այսօր երկրորդ կիրակին է «գկնի ծննդեան», և այսօր մեր Եկեղեցու երանաշնորհ հայրերը, որպես ճաշու ավերարանական ընթերցվածք, ներկայացնում են այս հարվածը: Այսինքն՝ Քրիստոսի Աստվածհայրնության մենք կրկին մաքրելով մեր հոգիների փիղմը՝ վերստին հնարավորություն ենք ստանում նոր հոգով, նոր գիտակցությամբ և նոր կենցաղավարությամբ ըմբռնվելու: Աստծո սերը, ողորմությունը, ապավինել կարեկցող Աջին, որոնցով ի լրտման ամենայնի կարժանանանք Աստծո սիրտ մեծագույն արտահայտությանը՝ հավիտենական կյանքի և հոգևոր ու նյութական փրկության և խաղաղության:

Միրելիննի, փարին նոր է սկսվել, նոր հույսեր ու նոր նպատակներ ունենք: Նոր ենք նշել մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Աստվածհայրնության մեծագույն տաղավար տոներ, աղոթքով ու բաղձանքով լցվենք անսպառ ու անմաքույց հավատքով, որն Ինքը՝ Քրիստոս լույսի է նմանեցնում, ինչպես որ լույսին մոտեցողը լուսավորվում է, իսկ լույսից հեռացողը՝ խավարի մեջ մնում, նույնպես և Քրիստոսին հավատացողը կփրկվի, իսկ Քրիստոսի հավատքից հեռու մնացողը կդադարապարվի: Քրիստոս լույս է, և նրա ծննդյամբ լույս ծագեց աշխարհի վրա, բայց, ավա՜ղ, մարդիկ խավարը սիրելով՝ փախչում են կենսաբույ Առաքելից: Ով բարություն է գործում, չի վախենում լույսից, իսկ ով հակառակը՝ վախենում է լույսից՝ սիրում է խավարը, որպեսզի չհայտնվեն իր գործերը (տե՛ս Հովհ. Գ. 19-21):

Միրելի՛ հավատացյալներ ի Քրիստոս, հայցելով Տիրոջ ամենառապր ողորմությունը, լցվենք անսպառ սիրով ու հավատով առ Քրիստոս, քանզի գիտենք. «Ով նրան հավատում է, չափի դադարապարվի, և ով նրան չի հավատում, արդեն իսկ դադարապարված է, քանի որ Աստծո միածին Որդու անվանը չհավատաց» (Հովհ. Գ. 18):

Թող Տերն օրհնի ձեզ ամենքիդ, որ երբեք ու երբեք չայակասի ձեր մեջ եղած հավատքը, և չլրացնենք դադարապարվածների շարքերը:

«Ընորհք, սէր և անհատկում հաւատք եղիցին ընդ ձեզ և ընդ ամենևսեսանդ Ամեն»:

ՏՈՆԱԽՈՍԱԿԱՆ

ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԶԱԶԱՐԻԱՅԻ՝ ՄԵՐ ՏԵՐ ՆԻՍՈՒՄ ԲԵՐԱՏՈՒՄ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳՄԱԾ ԲԱՐՈՋԸ¹

1. Մեծն Ղուկասը գրում է. «Հոռմի Տիբերիոս կայսեր տերության տասնհինգերորդ տարում, Հրեաստանի Պիղատոս Պոնտացու դատավորության և Գալիլիայում Հերովդեսի չորրորդապետության ժամանակ Տիրոջ խոսքը Զաքարիայի որդի Հովհաննեսին անապատում լսելի եղավ» (Հմմտ. Ղուկ. Գ 1-2):

Եվ արդ, այս Ղուկաս ավետարանիչը նաև Տիրոջ մկրտության մասին է ժամանակագրում, որպեսզի խոսքը և քարոզությունը հավատարիմ ու ճշմարիտ դարձնի: Որովհետև այսպես է գրում. «Հիսուս մկրտվելիս շուրջ երեսուն տարեկան էր» (Ղուկ. Գ 23): Աշխարհագրի ժամանակներն է ցույց տալիս, որ Օգոստոս կայսեր քառասուններկուերորդ տարում է եղել, իսկ Օգոստոսն իշխանությունն ընդամենը հիսունվեց տարի է վարել: Եվ արդ, քառասուններկուսից հիսունվեց տասնհինգ տարի է լինում, նաև (գումարած) Տիբերիոսի տասնհինգ տարիները, որ երեսուն է լինում, երբ անժամանակ Լուկաը մկրտության է գալիս՝ այս աշխարհը մեղքերի աղտից մաքրելով: Ըստ հրեա Հովսեփոս ժամանակագրի՝ Տիրոջ մկրտությունը Հերովդես չորրորդապետի տասնյոթերորդ տարում է եղել: Եվ արդ, Տիրոջ ծնունդը եղովմայեցի Ամտիպատրոսի որդու՝ Հերովդես Առաջինի երեսունեքեքերորդ տարում էս գտնում: Որովհետև երբ (Հիսուս) Բեթղեմեմում ծնվում է, քառասուն օր հետո ըստ օրենքի տաճար է բերվում, [այնտեղից] էլ Նազարեթ տարվում: Իսկ այն տարվա վերջում ծնողները նրան Երուսաղեմ են բերում, ինչպես և Ղուկասն է պատմում. «Ամեն տարի նրա ծնողները նրան Երուսաղեմ են տանում» (Ղուկ. Բ 41), Երուսաղեմից էլ Բեթղեմեմ են անցնում:

2. Եվ ահա մոգերը Երուսաղեմ են մտնում և աստղով առաջնորդվելով՝ Բեթղեմեմ են գալիս: Դրա համար Հերովդեսն աստղի երևալու ժամանակն ստուգելով, [իր մարդկանց] ուղարկում է և կոտորել տալիս Բեթղեմեմի մանուկներին: Իսկ Հովսեփն Աստծո հրեշտակի հրամանով մանկանն ու նրա մորը վերցնում է և Հերովդեսի երեսունհինգերորդ տարում Եգիպտոս իջնում: Փրկիչն էլ Եգիպտոսում երկու տարի է մնում, [մինչև] երեսունյոթերորդ տարում Հերովդեսը վախճանվում է: Մահունը Եգիպտոսից Հրեաստան է գալիս, և անժամանակ Որդին ըստ մարմնի չորս տարեկան էր:

Իսկ երբ Հովսեփը լսում է, թե Արքեղայոսն է թագավորել իր հոր՝ Հերովդեսի փոխարեն, Նազարեթ է անցնում և իճը տարի թագավորում, իսկ Տերն ըստ մարմնի տասներեք տարեկան էր: Հերովդես չորրորդապետի տասնհինգերորդ տարում էլ Աստծո մարմնացած Բանն ըստ մարմնի երեսուն տարեկան էր:

¹ Աշխարհագրի վերաձուլման ըստ հետևյալ հրատարակության. Զաքարիա Կաթողիկոս Զազեցի, Ժառք, աշխատանքի լայնքը Հ. Պողոս Ամանյանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1995, էջ 33-66:

3. Ինչո՞ւ է կայսրը Հրեաստանում չորրորդապետներ կարգում: Որովհետև [երբ] Հերովդեսը իր որդի Արքեպայոսի համար որպես առաջին կին մարդաց թագավորի դստերն է բերում, կայսեր մեջ կասկած է առաջանում, որ [չլինի թե] իրենց քոռջ համար արշավեն և ապստամբությունը բարձրացնեն: Իշխանությունը չորս մասի է բաժանում, որ միշտ իրար հանդեպ հակառակ մնան: Իսկ Պիղատոս Պոնտացուն Երուսաղեմում բոլորի վրա ոստիկան է նշանակում:

Իսկ այն մասին, որ գրված է, թե Աննայի և Կայիափայի քառանյութային ժամանակ [է եղել]. օրենքը մեկ քառանյութապետ է հրամայում կարգել բոլոր այն օրերի համար, քանի դեռ [վերջինս] կենդանի է լինում: Քանի որ Հերովդեսը քառանյութապետներից էր իշխանությունում ստացել, ինքն էլ այլազգի էր և չէր համարձակվում որևէ մեկին քառանյութապետությունը երկար ժամանակով տալ, որպեսզի գործառնալով այն չգրավեն, - այլ ամեն տարի [ճրագ] փոխում էր, որպեսզի ամզոր և իրենց գործերում տկար մնային:

«Այն ժամանակ Տիրոջ խոսքն ուղղվեց Հովհաննեսին անապատից Հորդանանի կողմերը գալ և Իսրայելին ապաշխարության մկրտության կանչել» (Ռմտ. Ղուկ. Գ. 2-3): Մկրտության քարոզությունում Իսրայելում մոր էր, որովհետև մարգարեներից ոչ ոք այդպիսի մկրտություն չէր քարոզել: Բայց այն մարդու սքանչելիքների համար, որ տեսան, և նրա ծննդյան վրա [եղած] հրաշքերը [սեցին, թե ինչպե՞ս ամլորդի հորն անձայն պապանձեցրեց անձայնությամբ, և [Հովհաննեսը] Իսահակի և Սամուելի նման աղոթքների պատու էր և բազում ճգնություններով էր իր ժամանակն անապատում անցկացնում, - դրա համար նրա քարոզությանը հեշտությամբ հավատացին: Նաև ոմանք նրան Քրիստոս էլ կարծում էին, որովհետև փարիսեցիները նրա մոտ [մարդ] ուղարկեցին և ասացին. «Ղո՞ւ են Քրիստոսը» (Ռմտ. Հովհ. Ա. 15):

4. Մեր Տիրոջ գալուստը կրկնակի է. առաջինն անլսելի և ծածուկ է եղել, ինչպես անձրևը՝ գեղմի վրա: Երկրորդ անգամ երկնքի ամպերի միջով արփափալլ փառքով և հրաշափառ ճառագայթներով է գալու՝ արարածներին հրակիզելու: Ինչպես Եղիամ է պատրաստ պահվում՝ երկրորդ գալստյան կարապետը լինելու, այնպես էլ Հովհաննեսն առաջին գալստյան կարապետն է եղել: Որովհետև նրա ծնունդը վեց ամիս առաջ քարոզվեց, քան Տիրոջ՝ երկնքից իջնելու ավետիսը, որովհետև նրա նկատմամբ սքանչելիքները հրաշափառորեն կատարվեցին, քան այլ մարգարեների նկատմամբ. սրանք ծնվելուց և կատարյալ հասակի գալուց հետո մարգարեացան, իսկ նա որովայնից սկսած մարգարեացավ, որովհետև իր մոր որովայնում վեց ամսական էր, երբ անապատիակելի Աստծուն Սուրբ Կույսի որովայնում տեսավ. իր մոր որովայնում էլ իր Տիրոջը երկրպագեց: Ինչպես մեծն Եղիամ, նույնպես էլ սա խիստ և անվայելուչ² կյանքով էր անապատում ապրում, ճգնավորի կյանքով, անպաճույճ զգեստներով և տաժանելի չարչարանքներով իր կյանքի տարիներն անցկացնում:

[Հովհաննեսը] Տիրոջ խոսքով Հորդանան է՝ գալիս, ազդու ձայնով Իսրայելին Բանն Աստծո երկիր գալուստն ազդարարում: Հովհաննեսը որպես «թանդեզես» է հայտնի, ինչպես Բանն Աստծո մասին է հռչակել. «Ահա Աստծո Գառը, որ աշխարհի մեղքերը վերցնելու եկավ» (Հովհ. Ա. 29): Ինչպես Ջաքարիան է ազդարարել. «Ղո՛ւ, մանո՛ւկ, Բարձրյալի

² Ըզնակեցության իմաստով:

հետև հնում, երբ Աստված փառքով պատրաստվում էր Իսրայելի որդիներին երևալու, նախ Մովսեսը ժողովրդին անպիսի և ծովի մեջ էր մկրտում և այդպես Աստծուն մոտեցնում, իսկ երբ մեզի և մորիկի մեջ լեռն էր կամենում ելնել ու աստվածային ձայնից արժանանալ, - Տերը դիմեց Մովսեսին ու ասաց. *«Թող մարդն իր մարմինը լվանա և իր հագուստները ողողի, Աստված էլ երրորդ օրը ձեզ կհայտնվի»* (հմմտ. Ղևտ. ԺԴ 9): Երբ պարզեցնեի երկիրն էին մտնում, նախ Հորդանանով անցան, իսկ հետո մտան պարզեցների երկիրը ժառանգեցին: Եղիան էլ նախ Հորդանանով անցավ և կառքով երկինք բարձրացավ: Այսպես էլ Հովհաննեսը, ամապատից գալով, Իսրայելին քրով մաքրում էր, որպեսզի Իսրայելի Աստծուն ընդառաջ ելնելու արժանացնեի, որ մարմնով եկավ՝ մարդու որդիների ցեղը փրկելու:

7. *«Ժողովրդին մկրտելու ժամանակ Հիսուս Գալիլիայի կողմերից Հորդանան գետն է գալիս՝ Հովհաննեսից մկրտվելու»* (հմմտ. Մատթ. Գ 13, Մարկ. Ա 9), որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. *«Զաբուղոնի՝ երկիր (որովհետև Պետրոսն ու նրա եղբայր Անդրեասը Զաբուղոնի ցեղից կանչվեցին) և Նեփթաղիմի՝ երկիր (որովհետև Հակոբոսն ու նրա եղբայր Հովհաննեսը Նեփթաղիմի ցեղից էին), ժողովուրդ, որ խավարի մեջ էիր մտնած, մեծ գիտության լույսը տեսար»* (Մատթ. Դ 16, Ես. Թ 1-2), որովհետև այնտեղ բնակվեց և մեծացավ ըստ մարմնի Տերը, ում ամբավելի և ամպարագրելի բնությունը երկինքն ու երկիրը չէին կարող ընդունել:

Եվ արդ, բոլորի Թագավորը Հորդանան է գալիս-իջնում, այն տեղը, ուր Հակոբը գալով, Հորդանան ընկավ, երբ իսառանից Քանանի երկիրն էր անցնում, այն գիշեր, երբ հրեշտակների բանակները տեսավ, Աստված էլ այն գիշեր նրա հետ գոտեմարտում էր: Այստեղ հեթանոսներն ավազանի վերածնությամբ Քրիստոսով զգեստավորվեցին, այս Հորդանանում ձեռք մեկնելով մարմնացած Աստծուն գոտեմարտեցին. *«Ով ձեռքն Աբրահամի գավակին երկարեց և ոչ հրեշտակներին»* (հմմտ. Եբր. Բ 16), ով Հեսսեի արմատից հեթանոսներին որպես ծաղիկ ընծայվեց:

8. Այնտեղ Հակոբը մամուկներին չորս բանակների էր բաժանում՝ Եսավի չար նախաձեռնից փրկելու համար, ով չորս հարյուր մարդով Եդովմից սրտմտությամբ վրա էր հասել: Այստեղ Քրիստոս տասներկու առաքյալներին ամբողջ աշխարհով մեկ ավետարանական քարոզության համար ուղարկեց, [նրանց] կաթողիկոսներ կարգեց, որոնց ձեռքով Կաթողիկե Առաքելական Սուրբ Եկեղեցին առաջնորդվելով՝ ամօրեն իշխանից փրկվում է: Այնտեղ՝ Հորդանանի եզրերին, Աստված ձեռքը մեկնեց և Հակոբի ամուլաջին ընդարմացրեց: Իսկ այսօր հեթանոսներին ձեռք մեկնեց և բոլորի սիրտն ու միտքն ազատելով աշխարհիկ վայելքներից ձերբազատեց ու թևապարելով երկինք բարձրացրեց: Հակոբն էլ կաղալով էր գնում, որովհետև ովքեր Քրիստոսով պիտի փրկվեն, այստեղ՝ աշխարհում հալածանքների մեջ պիտի մնան: Քանի որ ասում է. *«Արձակի՛ր ինձ»*: Հակոբն էլ ասում է. *«Քեզ չեմ արձակի, մինչև որ ինձ օրհնես»* (ՄՇՈՂ. ԼԲ 26): Այս է որ եկեղեցին աղաղակում է. *«Ո՛վ պիտի մեզ Քրիստոսի սիրուց բաժանի»* (Հոռմ. Ը 25), մինչ Տիրոջից լսի. *«Եկե՛ք, իմ Հո՛ր օրհնյալներ, պատրաստված բարիքները ժառանգեցե՛ք»* (հմմտ. Մատթ. ԻԵ 34), *«Եվ թող քեզ Հակոբ չանվանեն, այլ Իսրայել, որովհետև դիմացար Աստծո հետ մաքառելիս»* (ՄՇՈՂ. ԼԲ 28): Ինչպես հեթանոսների մեջ Իսրայել չանվանվեց, այսինքն՝ «աստվածա-

տես», այլ մոր և հրաշալի ամուսն դրեց, այսինքն՝ քրիստոնյաներ. «Դուք, որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսով եք զգեստավորվել» (Գաղ. Գ 27):

9. Տերն ու արարածների Արարիչն այսօր ծառայական կերպով Հորդանան է գալիս. այն տեղը, ուր դևտացիները Տեր Աստծո ուխտի տապանակը բարձրացրին. որ քերուխեաների վրա է մատույն: «Եվ երբ դևտացիների՝ տապանակը կրողների ոտքերը գետի այն մասը հասան, գետի ջուրը դարձավ և ընկրկեց. գետն էլ ցամաքեց, մինչև որ ժողովուրդն անցնելն ավարտեց» (Ռմմտ. Հեառ. Գ 13, 15-16): Իսկ այդ օրը դևտացի Հովհաննեսն անժամանակ Լուսինի՝ մարմնացյալ Բանին հետ ջուրն է իջնում, իսկ Հորդանանը դառնում է վեր. որտեղից իջել էր. այսինքն՝ մեր մարդկային բնությունը վերստին իր տեղն է դառնում, որտեղից տարագրվել էր՝ վայելչական դրախտից: «Մինչև որ ժողովուրդն անցնելն ավարտեց» (Հեառ. Գ 17). մկրտության ավագանն էլ անշարժ կա և կմնա մինչև մեր հավիտենական վախճանը⁴:

Իսկ տապանակը գերսից և դրսից մաքուր ոսկով էր պատված: Աստվածությանն և մարդեղությանն անճառ միությունը մի անձի և մի տեսակի մեջ է միավորված: Ինչպես որ տապանակը ոսկուց և փայտից տապանակի մի տեսակ է], այնպես էլ Քրիստոս աստվածությունից և մարդեղությունից մեկ Որդի է]: Իսկ այն, որ տառնելու քարեր վերցրին և Հորդանանի եզրին [որպես] հավիտյան հավիտենից հիշատակության քարեր դրեցին, մշակակում է, թե ովքեր սուրբ ավագանով են լուսավորվում՝ տվչությամբ և ավանդությամբ երջանիկ առաքյալների ճշմարիտ դավանությանը հետևելով.՝ մահ առաքելական վեմի վրա շինվածքներ կլինեն⁵:

10. Հովհաննեսն Աստծո Գառի մասին այստեղ վկայեց. և աշակերտները նրանից լսեցին և հավատալով՝ մարմնացյալ Բանին հետևեցին: Այս վայրում Եղիան մաշկեա՝ թիկնոցով Հորդանանի ջուրը բաժանեց, հրեղեն կառքը վարելով՝ երկինք բարձրացավ, իսկ թիկնոցը Եղիսեին տվեց, մույն հրաշքներն էլ [Հովհաննեսը] Հորդանանի վրա էր կատարում: Իսկ այդ օրը Քրիստոս մեր այս հողանյութ բնությամբ Հորդանանը պատռեց-բաժանեց՝ Սուրբ Ավագանի արգանդը բացելու համար: Հեթանոսներին մեղ և անձուկ ճանապարհներ ցույց տվեց, Հոր մոտ՝ երկինք թևապարելով բարձրանալու համար, իսկ օծումն ու քահանայությունը սուրբ առաքյալներին տվեց, ինչպես այն ժամանակ Եղիան մաշկեա թիկնոցը՝ Եղիսեին: Ինչպես Մովսեսն էր եղեգմյա տապանակով եգիպտացիների՝ գետի հորձանքը մետվում, Փարավոնի դուստրն էլ անգիտությամբ նրան սնուցանում էր եգիպտացիների կորստյան և իսրայելի փրկության համար,՝ այնպես էլ պարագրեղի մարմնով Հորդանան է իջնում անպարագրելի Բանն Աստված, ում կամակոր իշխանը չճանաչելով, ինչպես բոլոր մարդկանց, Տիրոջը ևս աշխատում է իր մեծ գործերի մեջ բռնել, սակայն իր գործերի բազմությամբ սաստակելով կործանվում է տարտարոսի մեջ: Իսկ իսրայելը մորոզվում է ավագանի վերածնությանը՝ պարզևների երկիրը կառքով թևածելով: Մի ժամանակ եբրայեցիների բանակի ջուրը Մեռայից էր քաղցրանում, իսկ այսօր Հորդանանն է

⁴ Հմմտ. Եղիշէ, Մեկնություն Յեսուայ եւ Դատաւորաց, տե՛ս «Սրբոյ Բօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենադրութիւնը», Վննսիկ, 1859, էջ 168:

⁵ Նույն տեղում:

⁶ Կաշյա:

ամբողջ աշխարհին պարզելով: Մի ժամանակ Հակոբը երեք գավազան էր դնում, Լաբանից հափշտակված ոչխարների վրա նշաններ դրոշմում: Նույնպես էլ Հովհաննեսի միջոցով սուրբ և համագոյակամ, միասնական, անբաժանելի Սուրբ Երրորդությունը մարդկային ցեղին Հորդանանում ծանուցվեց, քանզի Որդին մկրտվում էր, Հայրը՝ վերևից վկայում, և Սուրբ Հոգին էլ՝ աղավանակերպ իջնում, հայտնված Երրորդության հավատի փրկության դրոշմն էլ հեթանոսների վրա էր դրվում, անմարմին Լաբանից ազատվում էին. բոլորի անունները երկնքում գրվում: Մի ժամանակ արձակված աղավանհ Նոյին ձիթենու շյուղի միջոցով քրի ցածր լիճելն էր ավետում, իսկ այսօր Սուրբ Հոգին Հորդանանի վրա աղավանակերպ իջնելով, այն վերին ազատության, որդեգրության շնորհների կտակը մատուցեց՝ ցույց տալով Բանն Աստծո աստվածախառն⁷ մարմինը, որ մեր այս հողանյութ բնությունից մաս վերցնելով՝ ձիթենու շյուղի մեջն իր արարչական ողորմությունը մեր մեջ վար հոսեցնելով ծավալեց:

11. Այսօր եկած Բանն Աստված աստվածախառն մարմնով Հորդանանի հոսանքների մեջ է գալիս-իջնում, Հովհաննեսից մկրտվել խնդրում: Կարապետը զարհուրելով՝ փառքի Տիրոջը ետ էր պահում՝ ասելով. «Ես՝ ծառաս և ստեղծվածս, ինչպե՞ս տերերի Տիրոջը և արարածների Արարչիդ, ծովն ու ցամաքն Ստեղծողիդ մկրտեմ»: «*Դու, որ երկինքը վրանի պես փոքեցիր, որ նրա վերնահարկերը ջրերի վրա հաստատեցիր, որ հողմերի թևերի վրա ես գնում*» (Սաղմ. ԸԳ. 2-3), որ Հոր և Սուրբ Հոգու հետ քերովքների մեջ ես նստում, [դու], որ բոլոր արարածներից անվայրափակ էս, որից սերովքները սարսում են, իսկ քերովքները՝ զարհուրում-դողում, հոգեղեն և հրեղեն անհուն բանակների բյուրավոր զորքերը խոճապահար սոսկում, [դու], որ փառքի աթոռին ես նստած և անդունդներին ես նայում: [Դու], որին Մովսեսը քարածերպերի մեջ մտնելով, տեսնել չկարողացավ, Եղիան էլ Քորեբ լեռան վրա, քո անկրելի փառքից խոճապահար, թիկնոցով իր դեմքն էր քողարկում-ծածկում: Երկինքն ու երկիրը քո անպարագրելի փառքով են լի: Ես արժանի չեմ քո կոչիկների կապերն էլ արձակելու, մտքից վեր քո անճառելի տնօրինությանը հասու լինելու: Որովհետև եթե տերունական զլխիդ եմ հանդգնում մոտենալ, հոգեղենների բանակներն ինձ վրա զայրանում են, իսկ սերովքները, քերովքները և երկնքի բոլոր պետությունները խեթ են նայում ինձ»:

12. Կենարարը պատասխանեց. «Այսպես արժան է բոլոր առաքինությունները լրացնել՝ բազմասաց մարգարեների խոսքը կատարելով: Որովհետև այն ծածկված խորհուրդը, որ հավիտյան լռել-դադարել էր, այսօր մարդկային բնությանը պիտի հայտնի դառնա: Իմ արարածներին ու իմ ձեռքով ստեղծվածներին պիտի գթամ, [նրանց] առաջին անկումից պիտի կենդանացնեմ: Եվային նորից պիտի տաժանելի և ախտաբեր երկունքներից, որդեծնության կործանման վտանգից ազատեմ, մարդկանց պիտի ընկած հրեշտակների տեղը հրավիրեմ: Սերովքեափակ դրախտի դուռը բացելով՝ մարդկային ցեղի համար դեպի կենաց փայտը ճանապարհ պիտի ստեղծեմ: Կամակոր գազանին սպանելու համար եմ իջել:

⁷ Տիրոջ մարմնի «աստուածախառն» որակումն առկա է իմչպես Ընդհանրական, այնպես էլ մեր եկեղեցու հայրերի գրվածքներում, տե՛ս Նոր բառգիրք հայկազան լեզուի, երկասիրութիւն երկի վարդապետաց յաշակերտութենն մեծին Մխիթարայ արքաթոր Է. Գաբրիելի Արևիսեբան, Հ. Խաչատուրյ Սիւրմելեբան, Հ. Մկրտչի Արևիսեբան, Բ. Ա., Վենետիկ, 1836, էջ 323:

օր Աստվածորդու՝ Հորդանան իջմամբ Մեռայից ջուրը քաղցրացնում է և հեթանոսները մոռցվելով զվարճանում են. Իսրայելից են ընծայվում տասներկու աղբյուրներն ու արմավենիների ճյուղերը, որոնք տասներկու առաքյալների առաջից խմքի օրինակն են, մահ յոթանասուհի. որոնց Տերը ցույց տվեց. ուրիշ յոթանասուներկու աշակերտների էլ, որոնց բոլոր հեթանոսներին կանչելու ուղարկեց: Իսկ այն, որ Եղիամ ողջակեզների սեղանը ջրով ծածկեց, ու հետո երկնքից հուր իջավ և ողջակեզներն այրելով լափեց,- կլինեն նրանց մահն, ովքեր մկրտության ավագանում են ծածկվում, ջրի մեջ մխրճվում. աստվածության հուրն իջնում է, հին մարդու գործերը ճարակում և Աստծո պատկերով, փառքով մորոգում:

Եվ այն, որ Եղիսեն ջրերի ակունքը գնաց, օրհնեց ու երկրի բնակիչներից մահն ու անգավակությունը վերացրեց,- [Ոջանակում է, որ] երբ քահանան ավագան օրհնում է, հալածվում, դուրս են ելնում չարի բոլոր մեքենայությունները, որ են՝ չարչարանքները, հոգևոր և մարմնավոր կրքերը: Սուրբ Հոգու շնորհները ցած են իջնում և հովանի դառնալով մորածին մարդու վրա հանգչում: Եվ որ մարգարեն Նեեման Ասորուն Հորդանանում յոթ անգամ մկրտվել հրամայեց. ապականությունն ու մարմնի բորոտությունը նրանից հեռացան, որովհետև ովքեր հավատով են մկրտության ավագան իջնում, վերստին [Սուրբ] Հոգու յոթնարփյան շնորհներով են զգեստավորվում, հին Ադամին մի կողմ դնելով՝ այս մորով են մորոգվում: Նաև Մովսեսին այն ժամանակ հրամայվեց բորոտի մաքրության համար կենդանի ջուրը կարմիրի և եղևնու փայտի հետ մանելով վերցնել, որ Քրիստոսի կողմից բխած արյունն ու ջուրն են խորհրդանշում Ավագանի մաքրության և փրկությունը ճաշակելու համար: Բժիշկները զորավոր և օգտակար դեղերը ոչ միայն մարմնի արտաքին մասերն օծելիս են օգտագործում, այլև նրանցով ըմպելիքները շաղախելով, որովայնի մեջ են առնում մշտապես:

16. Այսօր մեզ Եղեմից աղբյուր բխեց, բոլոր հեթանոսներին վերցնում-մորոգում է, իսկ այս մեծ և ծարավ անապատը՝ հեթանոսների եկեղեցին, զվարճացել է, Հորդանանն էլ ավտաբեռ ծավալմամբ պատրաստվելով բաժանվել չորս գետերի, որոնք են՝ Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը, Հովհաննեսը, որպեսզի ամբողջ աշխարհին Քրիստոսի աստվածությունը ճանաչեցնեն: Ի դեմս Քրիստոսի աղաղակեց Նսային. *«Ահա իմ Տեր Աստվածն ու իմ Փրկիչը, իմ փառքը, իմ օգնությունը, ինձ համար է փրկություն եղել. հույսս նրա վրա դրեցի: Ուրախության ջուր վերցրեք փրկության աղբյուրից»* (Ես. ԺԲ 2-3), այսինքն՝ Հորդանանի հորձանքներից, առաքելական քարոզությամբ: Եզեկիելը հուչակում է. *«Ձեզ վրա մաքուր ջուր եմ ցանելու, և ձեր բոլոր մեղքերից մաքրվելու եք: Ձեզ մոր սիրտ եմ տալու, ձեր մեջ մոր հոգի եմ դնելու, իմ Հոգին ձեզ եմ տալու»* (Եզեկ. ԺԶ 25-26): Որովհետև երկաթը սև ու սառն է, իսկ երբ քուրա է մտնում, առկայծող ճառագայթներով բոցափայլում է՝ ջերմային նյութով արտաշնկացած: Իսկ մոմի և կապարի նյութը շատ էժան է, բայց երբ թագավորական մատանի է [դրանց] վրա դրոշմվում, թանկանում է և աշխարհներ է շարժում ու զարհուրեցնում: Նույնպես մենք էլ մի ժամանակ տիաս և տկար էինք, այսօր ավագանով լուսավորվելով՝ Քրիստոսի հետ բոցափայլում-պայծառանում ենք, աստվածային և արքունական պատկերով զծագրվում, վերին կայարաններն ենք հրավիրվել և վերին գործերին ձայնակեցելով աղաղակում ենք՝ ասելով. *«Այսօր սուրբ, պայծառ և աստվածային այս տոնը, հրանուտ և աստվածպետական Սուրբ Հոգին մեր աշխարհում բխեց՝ մաքրելով ջրերը և վերստին ծնելով հեթանոսներին»* որդեգրության ժառանգությամբ:

17. Այսօր այս երկիրը մոր երկինք եղավ, որովհետև ամճառելի Բանն Աստված և ամ-
ժամանակ Աստծո Որդին այս կյանքում երևաց և մարդկանց հետ կենցաղավարելով, շնոր-
քեց, Հորդանանի ջրերը եկավ՝ մաքրելով դրանք, և մարդկանց՝ մորածիններին հոգևոր
ջրով, հրաշափառ լույսով լուսավորելով: Այսօր եռամեջյա աստվածային Նորոգություն
ջրով լցվեց-ծավալվեց. Հայրն էլ վերսից վկայում է վերածնունդը: Ասում է. *«Դա՛ է իմ սիրե-
լի Որդին, որին հավանեցի»* (Մատթ. 9. 17): Իսկ Սուրբ Հոգին Նրան աղավանակեալ իջ-
մամբ հայտնեց և մարդկանց որդիների մեջ իջավ-տարածվեց: Այսօր ամենամիհնդների զին-
վորությունները հիանում-գարմանում էին, մարմնացյալ Բանին երկրի վրա սպասավո-
րում, երկնքում էլ, փառքի աթոռին, Հոր և Սուրբ Հոգու հետ փառավորում: Այսօր եկե՛ք,
վերածնված մո՛ր ժողովուրդներ, ցմծությամբ և ուրախությամբ հրեշտակների հետ երկն-
քում տոն անենք, որովհետև փրկության օրը, որդեգրության ժամանակը եկավ-հասավ
և անցավ. հրեշտակների բազմություններն էլ, երկնքից իջնելով, տոնակից են լինում մեզ՝ եր-
կնքից Հորդանան իջած վերածգողին տեսնելով, որ վերամաքել է մարդկանց:

18. Այսօր երկինքն արդարությունը ցողել-թխեցրել է, որովհետև մեր մեջ վերստին ար-
դարության Արեգակն է ծագել, և այս աշխարհն անշիջանելի ճառագայթներով Սուրբ Հո-
գու իջմամբ համագոյակիան, անկարգնական մարմնացյալ Բանի վրա պայծառացրել-լու-
սավորել է: Այսօր Ընդհանրական Կաթողիկե Սուրբ Եկեղեցին լուսագարդվել է, պայծա-
ռացել, որովհետև հավիտյաններից առաջ Հորից ծնված Որդին երկրի վրա է երևացել և
եկեղեցու մարմնի փեսա և գլուխ դարձել: Այսօր աստվածային ամպից վար թխած արդա-
րությունը և ամսահոսության երկնաբերձ ցողը երկրի վրա ծավալվեցին:

Այսօր համատարած ծովն ու Հորդանանը Տիրոջ աստվածային գարշապարների առաջ
ճանապարհ է բացել, ինչպես գրված էլ է. *«Քո ճանապարհները ծովում են, շափողներդ էլ՝
հորդառատ ջրերում»* (Սաղմ. 42 20): Այսօր անհասը հասնում է, անտեսը՝ տեսնում, անծա-
մանակն էլ՝ սկսվում, ժամանակի մեջ մարդ լինում: Այսօր աստվածների Աստվածն ու բո-
լորի Թագավորը մարդկային ցեղի փրկության համար եկել, իր ստեղծածի ձեռքով
մկրտվում է:

19. Այսօր բոլորի Թագավորն իր աստվածային գլուխը յուր ստեղծածի առաջ է խոնար-
հեցնում, որպեսզի մեզ երկինք՝ անեղծ ուրախությունների կանչի: Այսօր բլուրները ճառա-
գայթներով են փայլում, լեռները՝ պայծառանում-լուսավորվում, բարձրաբերձ կոհակները՝
արդարություն թխեցնում: Որովհետև ով երկինքների բարձունքներում էր քնակվում, Հեր-
մոնի լեռը գալով՝ աստվածախառն մարմնով Հորդանանի հոսանքներն է մաքրում, որը մե-
զանից է վերցրել՝ ջրի մեջ թաղվելով: Այսօր աղբյուրները մարդկային ցեղի մաքրության
համար ավելի հստակ են թխում, որովհետև սերովքների Թագավորը, արագապես և ճշ-
մարտապես երջանիկ Կույսից մարմին առնելով, մարդկանց մորոգեց: Այսօր ծովն ու գե-
տերը բոլոր ձկների հետ խայտալույ՜ ձեռքով ծափ կտան, Քրիստոս արքային կօրհնեն, որ
հի՛ն Ադամին ջրի մեջ թաղեն և մորերին ճարտարապետեց՝ մախկին փառքին դարձնելով:

20. Այսօր մախըթյան Կարապետը դողալով կանգնած էր Նրա՝ առաջ, ով աշխարհի
մեղքերը վերցնելու եկավ: Այսօր հավիտյաններից առաջ [ծնված] անկիզբ Աստված, որ
Հոր ամճառելի ծոցից [է], հողանյութ և մահկանացու ծառային է խոնարհվում-իջնում՝ աշ-
խարհի կյանքի համար: Այսօր կանանց ծնունդների մեջ մեծը սարսափած, դողալով կանգ-

նա՞ծ է՝ իր առաջ մարդկանց մոտ եկած Աստծուն տեսնելով: Այսօր անսպասից Հորդանան եկած գերագանգ, երջանիկ և աստվածային մարգարեն աստվածային զվեսի՞ն է հավույմ-մերձեցնում, որպեսզի այս ջրի լվացմամբ Եվայի աղտեղությունը մաքրի: Այսօր երկընթից եկած հայրական ծայրը աշխարհը Հոր փառքի որդեգրության կանչեց: Այսօր աստվածպետական Սուրբ Հոգին աղավմակերպ իջմամբ Հորդանանի Ռոսաքները մաքրեց, երկինքն էլ բացելով՝ աշխարհը որդեգրության կանչեց: Այսօր անպարագրելի, մըշտընջենական Աստված մարմնի մեջ պարագրվեց-ամփոփվեց, ամճառապես մարմնի մեջ որպես ճշմարիտ մարդ էացավ-գոյացավ: Այսօր մկրտությանը Քրիստոսի հետ ջրի մեջ թաղվեցինք, նրա մահով նրա հետ վերստին ծնվելով՝ նրա հետ կենդանացանք, նրա հետ էլ կթագավորենք (հավիտենական) կյանքում: Այսօր կռապաշտ մոլորության ստվերը մաքրեց, մարդիկ մեղքերից ազատվեցին և հրեշտակների հետ թևածելով՝ պայծառացան և լուսազարդվում են: Այսօր մեղսաճաշակ պատրողների մեզն ու մառախուղը, որոնց Ադամի ամենձեռների պատճառով (էին), հալածվեցին, քանզի Քրիստոս զալով մեզ համար անձք եղավ նրանց և նրանով օրհնվեցին բոլոր երկրածին ազգերը:

21. Այսօր Հորդանանի ջրերը մեզ որպես փրկություն տրվեցին և ինչպես խումկ փայլում են՝ անմահական դեղը, անկողողպտելի ուրախությունն ամեղծությանը այս անսպառ կյանքում մատուցելով: Այսօր բոլոր արարածները Քրիստոսի ճշմարիտ մարդեղությանը լուսազարդվեցին-պայծառացան. «Որովհետև մեզ համար աղքատացավ նա, ով մեծատուն էր, որպեսզի մենք նրա աղքատությամբ հարստանանք» (Բ Կորնթ. Ը 9): Հորդանան իջավ, որպեսզի (մենք) բարձրանանք: Այսօր կորստյան շավիղները կորացան, պատրանքների ճանապարհները փակվեցին, և մարդկային ցեղի համար ճշմարտության ճանապարհն ու պողոտան հորինվեցին՝ ջրով և հոգով անվախճան կյանքում վերածնվելով: Այսօր սուրբ սերովբեի հրեղեն սուրը կենաց ծառից վերցվեց, որովհետև արքունական զգեստով պճնվեցինք՝ ջրով վերածնվելով, որի առաջ սերովբեն տեղի տալով՝ կենաց ծառի շավիղներն է բացում:

Այսօր տրտմությունից ազատվեցինք՝ հագնելու համար այս նոր՝ «քրիստոնյաներ» անունը, Ավագանի վերածնությանը Քրիստոսով զգեստավորվելով, Քրիստոսի հետ ժառանգորդներ դառնալով: Այսօր անսպառ և անվախճան ուրախությունների հրավիրվելով՝ Քրիստոսի հետ լուսավորված ժառանգեցինք, և մեր Տեր Հիսուս Քրիստոսով անսպառ և անվախճան ուրախությունների հասնելով կվերափոխվենք, ընդ որում միաժամանակ Հորն ու Սուրբ Հոգուն վայել են փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

*Աշխարհաբարի վերածնեց
ՏԻՔԸՄԸՆ ՍՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆԸ*

1700-ԱՄՅԱԿԻ ԽՈՐՀՐԴՈՎ

ԱՄԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՂՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Առաջնորդ Իրաքի Հայոց թեմի

ՏԵՍԸՆՈՂՆ ՈՒ ՏԵՍԻԼ-ԸՐ

Ի եպիս ամեն եկեղեցանուէր աշխատանքի, ազգաշէն գործունէութեան կամ հանրագուր ծառայութեան կայ ու կը մնայ վճիպ ու անխառն տեսիլք մը երկնածոր: Եւ տեսիլքը մերթ կ'արտայայտուի միւր կեանքներուն մէջ իբրեւ ստեղծագործական բռնուն խանդավառութիւն եւ մերթ կը դառնայ ալիւն դէպի ապագան փանդ, հորիզոնէ հորիզոն անցնելու վճռակա-
մութեամբ փոքորուն:

Իսկ հաւաքացեալներու համար տեսիլքը Աստուածային ներշնչում է «գի ամենայն փութը բարիք եւ ամենայն պարգեւը կատարեալք ի վերուստ են իջեալ ամ ի Տօրէն Լուսոյ...» (Յակ. Ա. 17): Այո, Աստուած իր նախախնամական իմաստութիւնը կը ծորէ հոգիներուն մէջ մարդոց, որուն ամ ի հետեւանք անոնք կը դառնան յստակաբեւ դէպի ապագայի իրենց ծառայելիք գործունէութեան: Ահա թէ ինչու երբ կը բացակայի տեսիլքը, գործը կը կաղայ կամ կը ծախտոյ, մինչ երբ այն ըլլայ պարզորոշ ու ջիւղ յաջողութեան արգասիքը, այժմէն իսկ կ'երեւի յետագային ծնանելիք դէպքերու պատրաստին վրայ:

Այսպէս հրաշագործուեցաւ Հայոց լուսաւորչին՝ Գրիգորի տեսիլքը: Չորրորդ դարու առաջնեկ տարին տեսաւ Հայ ժողովուրդի դարձը դէպի քրիստոնէութիւն, որն արդէն իր ծիւր փութը էր երկու եւ կէս դարեր առաջ տեսլական աշխատանքով Յիսուսի երկու հաւաքարիւմ աշակերտներուն՝ Թադէոսի եւ Բարդողիմէոսի քարոզութեամբ եւ իրենց ու գործակիցներու մարտիրոսութեամբ:

Հոգիին խորունկը մեղապարտ գեղէն սերած Պարթեւ Հայրապետին Գրիգորի հաւատքը ամ Լազովրեցի վարդապետը Յիսուս կենսունակ էր ու մշտաբարբոք, որ ան իր աղօթքներու ընդմէջէն երաւէր կարգացած էր Աստուծոյ Արդիին այցի գալու Հայոց աշխարհը:

Մեծ դարձի ժամանակներէն երեք դարերու հասնող հեռաւորութեամբ մարդացեալ Արդին Աստուծոյ մարմնացած էր աշխարհի մէկ աննշան անկիւնը իրականացնելու Աստուծոյ փոփոխութիւնը մարդկային գեղի փրկութեան Գողգոթայի բարձունքին վրայ: Այդ օրերուն փակ էին մարդոց հոգիներուն դռները եւ տիեզերաց նորոգողը կամեցաւ ծնելու խղճուկ մտորի մը մէջ ի պարզունակ բաղաքին Բեթղեհեմի:

Յեք այնու երկու ու կէս դարերու քարոզութիւնն ու նաեւափակութիւնը ի խնդիր քրիստոնէական վարդապետութեան փոխած էր հոգեպարկերը Հայոց աշխարհին: Տեսանդոյին սիրտը, որպէս խորհրդանշիչ Հայ ժողովուրդի հոգեմորոգութեան, ջերմ էր ու հաւատով լի: Նման Սիմէոն Ծերունույն Նոր Կտակարանի, Գրիգոր եւս կ'սպասէր Օծեալ Մեսիայի տեսութեան իր երթեան ընդերքին մէջ:

Ու մեծ տեսանդոյին սպասումները արգասատրուեցան: Իր տեսիլքին մէջ յաղթական քրիստոս իջաւ Արարարի դաշտերուն վրայ, իջաւ նուէրով երկնաշնորհ՝ լուսեղէն փաճարի մը ձեւը սիւներով եւ կամարակապ տրուեցաւ հաւատքի հօրն մերոյ, իջաւ պատգամով լու-

սագարդության, իջաւ հրաւիրելու Հայ ժողովուրդը իր լինելութիւնը պայմանաւորելու «լուսալ խորաններ» կառուցանելու Աստուածահաճոյ աշխատանքով, որպէսզի լոյսը իմանալի ծագի ընդմիջար սրտերուն մէջ Հայերուն: Տասն եւ եօթ դարեր շարունակաբար Ս. Էջմիածինը խորհրդով մը խորին եղաւ ու մնաց Հայ ժողովուրդի առողջ ընագոյններու միջոց ուժը, սրբեղծագործական հանճարի ապաւէնը, ոգեկան քոկոնութեան հենարանը, հոգեւոր ու հաւատարմական կեանքի խիզախ դրսեւորումը եւ բարոյական հարուստ նկարագրի չափանիշը:

Երանաւէտ այդ քրեւիքի սուրբ պահէն ասդին Հայ ժողովուրդը եղաւ լուսաբաղձ ժողովուրդ, նդաւ շինարար ազգութիւն: Եւ ինչքանով իր հոգին կրցաւ բանալ Էջմիածնի խորհուրդին վրայ, այնքանով ան պարզաբերեցաւ անձնուպէս, բայց մանաւանդ իր հաւաքական կեանքին մէջ «... Եւ բերէր ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր» (Մարկ. Դ. 8):

Ահա այսպէս Միածնի Էջըը մեր մէջ եղաւ ու կը շարունակէ մնալ Էջմիածին՝ Սրբութիւն Սրբոց Լուսաւորչաւէն տաճար ամենայն Հայոց: Ս. Էջմիածինը մեզի համար Աստուծոյ տաճար է, աղօթքի ու ազգի տուն է ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ընդհանրական Հայրապետութեան Աթոռ: Իսկ Հայրապետը Ամենայն Հայոց, որպէս իր օրերու Նոր տեսանողը, ինքն է պահապանը քրեւիքի յարաբերութեան իրեն սահմանուած սպասաւորութեան ժամանակի տեսողութեան:

Աստուած երկու անգամ իջաւ աշխարհ: Մին որպէս մարդացեալ Յիսուս ի Պաղեստին եւ միւսը որպէս յաղթական Քրիստոս ի Հայրենի երկիրը մեր:

Թող 1700-ամեակը Ա. Էջմիածնի կառուցման ըլլայ ու մնայ Հայ ազգին համար գրաւականը գալիք յաղթական երթերու եւ երաշխիքը նոր խղանքներու, նոր արշալոյսերու: Տայ Աստուած:

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱՂԱՍՏ ԶԱՄԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԶԻ ՈՒՐ ԳԷՇՆ ԻՑԷ, ԱՆԴՐ ԺՈՂՈՎԵՍՑԻՆ ԱՐԾՈՒԻՔ»

(Աստվածաշնչի թարգմանությունների մասին)

Անգղի և արծվի՝ այս երկու թռչունների կենսաձևի մասին տեղեկություններ իմանալն օգնում է հին և նորկտակարանյան որոշ համարների լուսաբանմանը՝ բացահայտելով մի քանի խոսքերում անփոփոխ իմաստային տարբեր մեկնաբանությունները: Այս իմաստով ուշադրության արժանի է Մատթեոսի Ավետարանի ԻԴ գլխի 28-րդ տողը, որի համապատասխան հատվածը կա Ղուկասի Ավետարանում (ԺԷ 37), որի հետ հարաբերվող նախադասություններ կան նաև Հոբի գրքում (Հոբ ԼԹ 27-30):

Ավետարանի հիշյալ համարը ներկայացնում է հետևյալ խորհրդավոր նախադասությունը. «Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք» (ուր որ դիակն է, այնտեղ կհավաքվեն արծիվները): Հետաքրքիր ճանապարհ է սակայն անցել այս նախադասությունը տարբեր թարգմանությունների միջով, որի ընթացքում թռչունների արքա արծիվն աստիճանաբար անես կորցրել է իր գործությունը և վերածվել է մի գիշակեր անգղի:

Զարմանալի է՝ բոլոր հին հրատարակություններում այս նախադասության մեջ *արծիվ* բառն է իշխում, սակայն որքան առաջանում ենք դեպի մեր ժամանակների նորագույն հրատարակությունները, տեսնում ենք, որ դրանցում մեզ հետաքրքրող նախադասության մեջ *արծվի* փոխարեն ներկայանում է *անգղ* բառը: Այսպիսին է պատկերը ոչ միայն վերջերս հրատարակված հայալեզու Ավետարաններում, այլև Աստվածաշնչի և Ավետարանների օտար լեզուներով նորագույն հրատարակություններում:

Վերջիններս թեև *անգղ* բառն են նախընտրել (անգլերենում՝ vulture, ֆրանսերենում՝ vautour), Ավետարանի այս հատվածում, սակայն, *արծիվը* պահպանել են ոուսերեն նորագույն հրատարակությունները: Այսպես է թարգմանված նաև ուկրաիներեն Աստվածաշնչում:

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԾՎԻ ՎԵՐԱԲԵՐԹԱԼ

Հասնելու դարասկզբի՝ Աստվածաշնչի մի քանի մեկնաբանություններ պարզ տրամաբանական բացատրություններ են տալիս մեզ հետաքրքրող նախադասությանը: Համաձայն մի մեկնաբանության¹՝ սա մի առակ է կամ ասացվածք, որի միջոցով Քրիստոս խոսեց Երկրորդ Գալստյան մասին: Դիակի առկայության դեպքում նրա շուրջն են հավաք-

¹ A Commentary on the Holy Bible by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 704:

վում արծիվները կամ անգղները²: Այստեղ դիակը չար մարդիկ են, իսկ արծիվները՝ Քրիստոս և Նրա հրեշտակները: Ըստ այս կարծիքի հեղինակների՝ այստեղ կարելի է մահ, կարծես թե նախասիրությունից ելնելով, մեկ այլ իմաստով էլ հասկանալ. ովքեր այս ավետարանական հատվածում ակնարկ են տեսնում Երուսաղեմի անկման վերաբերյալ, ըստ մրանց դիակը խորհրդանշում է հրեաներին, իսկ արծիվները՝ հռոմեական բանակը³: Հավանաբար այդ բացատրությունը հիմնված է այն իրողության վրա, որ մահվանից առաջ մեծանուն պատկերված էր պարսկական և հռոմեական դրոշմերին:

Համամասն մեկ այլ բացատրությամբ արծիվները խորհրդանշում են հուդայիզմի մեխող դիակի վրա հարձակվող հռոմեացիներին⁴: Մեկ այլ աշխատությունում էլ այն միտքն է հայտնվում, որ Քրիստոս ժամանակի այս ասացվածքին տալիս է նոր իմաստ, ըստ որի Դատաստանը տեղի կունենա իր ժամանակին: Այստեղ ասվում է, որ ավելի մախընտրելի է դիակի մոտ հավաքվող թռչուններին անգղներ անվանելը, որովհետև անգղներն ավելի շատ են դիակների մոտ հավաքվում, քան արծիվները: Այս բացատրության մեջ ճշվում է, որ Ավետարանի տվյալ նախադասությունը չի կարելի փոխաբերական իմաստով հասկանալ, քանզի երբեմն տեսություններ են առաջ քաշվել, ըստ որոնց մարմինը Քրիստոսն է խաչի վրա, իսկ անգղները՝ սրբերը, որոնք հավաքվում են Նրա շուրջը⁵: Թե ինչի վրա է հիմնված մյան զգուշացումը, պարզ չէ, սակայն եթե, ինչպես ճշվում է մյան աշխատություններում, անգղները խորհրդանշում են մահ Քրիստոսին և Նրա հրեշտակներին, ապա հենց միայն սա խոսում է *անգղ* բառի գործածության դեմ, ինչը ցույց կտրվի ստորև: Այս կարծիքի հիմնավորմանը մեծապես նպաստում է մահ Հորի գրքի համապատասխան հատվածը:

ԱՆԳՐԸ ԵՎ ԱՐԾԻՎԸ ՀՈՐԻ ԳՐԶՈՒՄ

Հորի գրքի 1, Թ՝ գլխի 27-30 համարները կարծես թե նախատիպ են Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների համապատասխան հատվածի: Ահա ճշյալ համարների նախադասությունները. «Կամ թե քո՝ հրամանա վերանայ արձուի. եւ անկղ ի վերայ բուծոյ իւրոյ մտնեսլ դադարիցէ ի քարանձաւս վիմաց եւ ի ծածուկս. Անղ կայ եւ խնդրէ զկերակուր: Ի

² *Անգղ* բառի հոգնակին ավելի ճիշտ է կազմել *նր* և ոչ թե *նոր* վերջավորությամբ, սակայն այստեղ օգտագործել ենք ավելի տարածված *անգղներ* ձևը:

³ Այս մասին տես մահ՝ A New Commentary on Holy Scripture, including the apocrypha, edited by Charles Gore, Henry Leighton Goudge, Alfred Guillaume, London, Society for promoting christian knowledge, Northumberland avenue, W.C.2, p. 192.

⁴ The New Bible Commentary Revised, edited by D. Guthrie BD, MTH. PHD lecturer in New Testament, London, Bible College, J. A. Motyer MA, BD principal of Trinity College, Bristol, consulting editors A.M. Stubbs MA formerly Vice-Principal, Oak Hill Theological College, London, D. J. Wiseman OBE, MA, DLIT, FBA, FSA professor of Assyriology, University of London, Inter-Varsity Press, p. 845.

⁵ The Interpreter's Bible, The Holy Scriptures in the King James and revised standard versions with general articles and introduction, exegesis, exposition for each book of the Bible, in twelve volumes. volume VIII, New York Abingdon Press Nashville, p. 305.

The Interpreter's Bible, volume VII, p. 549.

հիմք չի տալիս հաջորդող նախադասություններն ամբողջությամբ վերագրել անգղից: Գիտեմք, որ գրաբարում հաճախ նախադասության մեջ ենթական չի նշվում կամ էլ միայն մի դերանուն է դրվում և հաջորդող նախադասություններում արդեն պետք է ըստ մտքի եզրակացնել, թե այն ում է վերաբերում, իսկ աշխարհաբար թարգմանելու դեպքում էլ կարելի է նույնիսկ ըստ մտքի ավելացնել տվյալ ենթական: Հոբի գրքի այս հատվածում՝ 27-րդ համարում, խոսվում է արծվի մասին, իսկ 28-ում՝ անգղի: Գրաբար Աստվածաշնչում հաջորդող նախադասություններում, ենթական բացակայում է, և պետք է կոահել, թե ստորոգյալն ում է վերաբերում՝ անգղի՞ն, թե՞ արծվի՞ն:

Հայերեն Աստվածաշնչի տարբեր հրատարակությունների տիտղոսաթերթերը նշում են, որ թարգմանությունները կատարված են հունարեն և եբրայերեն բնագրերից: Հունարեն նոր հրատարակությամբ Աստվածաշնչում այս հատվածում, գործածված է միայն *ὁ αἰετός* - արծիվ բառը¹¹: Հին Կտակարանից որևէ տող և բառ ստուգելու համար առավել հուսալի է, իհարկե, եբրայական բնագիրը, քանի որ հենց այդ լեզվով էլ գրվել է Հին Կտակարանը: Հրեա ուսուցիչները, որոնք ծայրահեղ նախանձախնդիր են Սուրբ Գրքի հանդեպ, Հին Կտակարանը բնագրից թարգմանել են ֆրանսերեն, և այստեղ՝ մեզ հետաքրքրող հատվածում, գործածված է միայն *արծիվ* բառը: Եվ շեշտելու նպատակով, որ 30-րդ համարում հիշվող ձագերը պատկանում են արծվին, նրանք օգտագործել են *արծվի ձագեր* - *aigles* բառը, որը ծագում է *արծիվ* - *aigle* բառից¹²: Ի տարբերություն մեր աշխարհաբար Աստվածաշնչի, որտեղ 30-րդ համարում միայն *ձագեր* բառն է, անգլերեն Աստվածաշնչում շեշտված է *արծվի ձագեր* կապակցությունը (the young eagles drink the blood)¹³: Սա հիմնավորում է նաև այն դիպուկ դիտարկումը, ըստ որի, Հոբի գրքում կենդանական աշխարհի երևույթներն սկսվում են կենդանիների թագավորի (ԼԹ 39) և ավարտվում թռչունների արքայի նկարագրությամբ¹⁴: Հետևաբար Հոբի գրքում ևս շեշտվում է դիակի շուրջը հավաքվող արծիվների և ոչ թե անգղերի մասին:

ԱՐԾՎԻ ԵՎ ԱՆԳՂԻ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»¹⁵ արծվի հատկություններից թվարկվում է՝ սրատես, ուժեղ մազիկներով, «որ ոյժի և քաջութեան պատճառով կոչվում է թռչունների թագաւոր (Aquila)»: Այստեղ նշվում է նաև, որ արծիվը սրատես է, հափը շտակում է մանր կենդանիներ, նրբեմն նաև՝ նրեխաներ: Սրան հակառակ՝ անգղի ճան-

¹¹ ΤΑ ΙΕΡΑ ΓΡΑΜΜΑΤΑ ΜΕΤΑΦΡΑΣΘΕΝΤΑ ΕΚ ΤΩΝΘΕΙΩΝ ΑΡΧΕΤΥΠΩΝ, ΒΙΒΛΙΚΗ ΕΤΑΙΡΙΑ ΟΔΟΣ ΕΜΜ. ΜΠΕΝΑΚΗ 50, ΑΘΗΝΑ, էջ 511:

¹² La Bible, traduite du textes original par les membres du Rabbinate français sous la direction de Zadoc Kahn Grand Rabbin, Paris, Librairie Colobo, 3 rue Richer, 5733. MCMLXXIII.

¹³ Good News Bible. the Bible in today's english version, American Bible Society, New York.

Holy Bible, Good News Colour reference edition.

¹⁴ Толковая Библия или комментарий ко все книги Св. Писания Ветхаго и Новаго Завета, томъ I, Сл. пископствамъ, Издание преемника А. П. Лопухина. Томъ четвертый. Книги: Иова, Псалтирь и книга притчей соломониновыхъ, Петербургъ. Безплатное приложение къ журналу "Странникъ" за 1907 годъ, 1907, стр. 113.

¹⁵ Հատոր Ա, Ա - Ե, Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, Երևան, 1944, էջ 270:

կերը մեծ են, թույլ և կարճ ճիրամներով, որոնք պիտանի չեն որսը բռնելու և պահելու համար¹⁶։ Բացի դրանից, անգղը երկչոտ է, ուստի մախընտրում է դիակներով կերակրվել, քան թե կենդանիների վրա հարձակվել, և չափազանց որկրամոլ է¹⁷, միմյնեռ արծիվները շատ հազվադեպ են լեշերով սնվում¹⁸։

Արծիվի և անգղի միսը մյուս բոլոր հափշտակիչ թռչունների պես պիղծ էր հրեաների համար (Ղևտ. ԺԱ 13-14), սակայն արծիվը գուցե տարբերվում էր արանց միջից, որովհետև «ոչ ոք երբեք կուտեր զայն [արծիվի միսը], քայց եթե ի դիպուածի հարկատրութեան»¹⁹։ Եվ եթե, լլստ վերոնշյալ մի մեկնության, արծիվները խորհրդաբեշում են Քրիստոսին և Նոր հրեշտակներին²⁰, ապա այս դեպքում պատշաճ է միմիայն *արծիվ* բառի գործածումը՝ իբրև ապացույց Քրիստոսին վայելող արքայական պաշտվի և համարձակությանը։

ՄԱՐՄԻՆ ԵՎ ԴԻՄԿ

Ավետարանական հատվածում փոփոխությունների է ենթարկվել նաև Ղուկասի Ավետարանի համապատասխան մախադասությունը։ Խոսքը վերաբերում է *Մարմին* բառին, որի փոխարեն Մատթեոսի Ավետարանում ունի *գեշ-դիակ* բառը։ 989 թվականի ձեռագիր Ավետարանում մախադասությունում այս տեսքով է. «Ուր *Մարմին* է, անդ արծուիք ժողովեսցին»²¹։ Մի չնչին տարբերությամբ այն նույն ձևով է նաև 1666 թ. հրատարակված առաջին տպագիր հայալեզու Աստվածաշնչում (*անդ-ի փոխարեն անդր*)։ Որոշ մոդ թարգմանություններ արծիվներից անգղ դարձնելու հետ մեկտեղ, *Մարմին* էլ դիակ են դարձրել (ֆրանսերենում *cadavre*)²² կամ *Մարմին* բառի կողքին ավելացրել են *մեռած* բառը (անգլերենում *dead body*)²³։

Սակայն, ինչպես կտեսնենք, Ղուկասի Ավետարանում ճիշտ և մախմական ձևով պահպանված է *Մարմին* բառը։

¹⁶ Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր Ա, Երևան, 1974, էջ 384։

¹⁷ Ստ. Մախաթյանց, Օշվ. աշխ., էջ 101։

¹⁸ Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր Բ, Երևան, 1976, էջ 70։

¹⁹ Աստվածաշնչի թարգման., էջ 70։

²⁰ A Commentary on the Holy Bible, p. 704.

²¹ L'Évangile Arménien, édition phototypique du manuscrit N° 229 de la bibliothèque d'Richmond, publiée sous les auspices de M. Léon Maniacheff par Frédéric Macier, professeur à l'école nationale des langues orientales vivantes, Paris, librairie Paul Geuthner, 13, rue Jacob (VI^e), 1920.

²² Աստվածաշունչ Նոր կտակարան Հիսուս Քրիստոսի, աշխարհաբար մոդ թարգմանություն, Հայաստանի Աստվածաշունչային ընկերություն, Երևան, 2001։

Ավետարան, Հայաստանի Աստվածաշունչային ընկերություն, Երևան, 2001։

La Bible, Ancien et Nouveau Testament, avec les Livres Deutérocanoniques, traduite de l' hébreu et du grec en français courant, Alliance Biblique Universelle, Société biblique française, 1990.

²³ Good News Bible, the Bible in today's english version, American Bible Society, New York.

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿՈՒՐ ՆԵՐԱՆԱԿԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԾՎԻ ՎԵՐԱԲԵՐՅՈՒ**

Սուրբ Եփրեմ Ասորու մեկնության ճամնայն՝ ավետարանական այս ճանաչման (Մատթ. ԻԱ 28) Քրիստոս արծիվներ կոչեց թշնամիներին, ովքեր ճարձակվելու են Երուսաղեմի վրա, որն անվանվում է դիակ: Այսպես է ասվում նաև մարգարեության մեջ. «Նրա երիվարներն ավելի արագընթաց են, քան արծիվները» (Երեմ. Դ 13): Եկեղեցական հեղինակը նշում է նաև, որ ոմանք սա ճանաչում են մարմնի և հոգու, ինչպես նաև աշխարհի վախճանի վերաբերյալ²⁴: Եփրեմ Ասորու մեկնությունը, բացի մարմնի և հոգու մասին ակնարկից, նման է վերոնշյալ մեկնություններին: Այստեղ ևս ակնհայտորեն երևում է, որ եկեղեցական Հայրը Ավետարանի այս մասում ճիշտ է ճանաչել *արծիվ* բառի գործածությունը, մանավանդ որ այն ճանաչատեղ է Երեմիայի մարգարեության մեջ հիշվող արծիվների հետ:

Օտտ գեղեցիկ և խորհրդաբանական մեկնություն է տալիս Սուրբ Ստեփանոս Սյունեցին: Քրիստոս այստեղ «դիակ» և «ընկած» անվանեց իր մարմինը, քանի որ չարչարվեց և մեռավ, իսկ արծիվներ անվանեց իրեն ճավատացողներին, ովքեր արքայավայել և արծաճավորապես կերակրվում են Նրանից²⁵: Սյունեցին ևս, ուշադրություն հրավիրելով երկու թույլումների՝ արծիվ և անզղի յուրաճատությունների վրա, շեշտում է, որ Քրիստոս հենց արծիվների անվանեց իրեն ճավատացողներին և ոչ թե ազոպներ կամ անզղներ, քանի որ արծիվը պատրաստ որս և մեռած մարմին ուտելը արժանի չի համարում, այլ ինքն է վաստակում և կերակրվում²⁶: Իսկ *դիակ* բառին անդրադառնալով՝ Սյունեցին նշում է. «Նաև այս պետք է գիտեմալ, որ հումարենում չի ասում *դիակ*, այլ *ընկած*»²⁷:

Եթե Ստեփանոս Սյունեցու մեկնությամբ դիակը և մարմինը խորհրդանշում են Քրիստոսին, ապա առավել ևս ճանաչմանի է դառնում խորհրդաբանական իմաստով արծիվ գործածությունն այս ճամնայն: Քրիստոս խաչի վրա, ինչպես նաև Սրբազան Պատարագի խորհրդավոր արարողության ընթացքում մեռնում է, բայց և միննույն ժամանակ կենդանի է իր աստվածությամբ, որը և ցույց են տալիս միմյանց լրացնող *դիակ* և *մարմին* բառերը: Ահա այս իմաստով ընդունելի չէ Ղուկասի Ավետարանում *մարմին* բառի կողքին տրամաբանությամբ ավելացնել *մեռած* բառը: Եվ այս դեպքում առավել քան տեղին է *արծիվ* բառի գործածությունը, որովհետև արծիվը կենդանի արարած է նախընտրում ուտելու ճամնար, բայց և միննույն ժամանակ կարող է կերակրվել նաև դիակով:

²⁴ Святѣмъ Ефремъ Сирійскъ. Творения, томъ 8, издаване Свѣто-Троицкой Лавры, издательство «Огюи дом», 1995, ст. 275.

²⁵ Ստեփանոս Սյունեցի. Չորս Ավետարանների ճամնայն մեկնությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 106:

²⁶ Ստեփանոս Սյունեցի, նշվ. աշխ., էջ 106:

²⁷ Նշենք, որ հումարեն Աստվածաշնչում (ΤΑ ΙΕΡΑ ΓΡΑΜΜΑΤΑ ΜΕΤΑΦΡΑΣΘΕΝΤΑ ΕΚ ΤΩΝΘΕΙΩΝ ΑΡΧΕΤΥΠΩΝ, ΒΙΒΛΙΚΗ ΕΤΑΙΡΙΑ ΟΔΟΣ ΕΜΜ, ΜΠΕΝΑΚΗ 50, ΑΘΗΝΑ) և Նեսքլե-Այանդի մոր ճարտարակությամբ հումարեն Ավետարաններում Մատթեոսի Ավետարանի ԻԱ 28-ում գործածված է *παρμα-դիակ* բառը, իսկ Ղուկասի Ավետարանի ճամնայնայն ճանաչման թույլում *παρμα-մարմին* բառը (Nesle – Aland, Novum Testamentum Graece, Deutsche Bibelgesellschaft Stuttgart):

³⁰ Ժամակարգություն Հայաստանայց Սուրբ Եկեղեցւոյ յորում պարունակին Աստուծոյ Դատքի, Ժամագիրքն Առնելի եւ Տօնացոյց, Զ տպագրութիւն (Նամանակագրութիւն 1915 թ. Դ տպագրութիւնից), ի վաղարշապատ, ի տպարանի Արթուր Կարողիկէ Էջմիածնի, ՌՆՆԸ-1448, 1999, էջ 178:

Նրանք, ովքեր համաձայն չեն մեր Եկեղեցու տեսակետին, ասում են, թե Աստված Բանը ամհաղորդ էր չարչարանքներին և «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» խոսքերը Քրիստոսի մարդկությունն ասաց իր աստվածությունը³¹: Սրան նման է նաև Նեստորի ուսմունքը, ըստ որի, Քրիստոսի մարդկությունն է չարչարվել, մինչդեռ Բակառակ ծայրահեղության է հասել Եվտիքեսի կարծիքը, որի համաձայն Աստված է չարչարվել: Այսինքն՝ այս բոլոր դեպքերում էլ տարբեր բաժանումներ ենք տեսնում, մի երևույթ, որը մերժելի է եղել Հայ Եկեղեցու կողմից բոլոր դարերում: Մի շարք մեկնությունների համաձայն՝ Քրիստոս խաչի վրա արտասանեց 21-րդ սաղմոսի խոսքերը (1), բայց ոչ ոք վարդապետական վստահությամբ չի կարող ասել, թե Նա ինչ նկատի ուներ այս խոսքերն ասելիս³²: Մեկ այլ մեկնություն, սակայն, այս նույնն ասելով՝ ակնարկ է ածում, որ այդ բաները Հիսուսի մարդկային բնության ճիշդ են³³: Այս պարագային տեղի է գցել, որ Ս. Գրիգոր Սքանչեղագործը, անդրադառնալով Եկեղեցու հավատամքին, ասում է. «Եթե ոք ասից է մարդ կատարեալ զՔրիստոս, բաժանելով զԱստուած Բան և ո՛չ խոստովանի մի Տէր զՅիսուս Քրիստոս, որպէս և գրեալ է, եղիցի՝ մզովեալ»³⁴: Նույնպես և Սուրբ Կյուրեղը ներկայացնում է Ուղղափառ Եկեղեցու Հավատամքը, որտեղ մշվում է. «...վասն մերոյ փրկութեան ... մարդացաւ, մեռաւ և յարեաւ»³⁵:

ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆՑԱՆ ՄԵՋՔԵՐՈՒՄՆԵՐ - Ղազար Զառկեցին իր աստվածաբանական աշխատության մեջ քերում է մի շարք մոլորակարանյան համարներ, որոնք հակառակ են վերը հիշված կարծիքին: Մատթեոսի Ավետարանում (ԻԸ 5) հրեշտակն ասում է. «... զիտեմ, որ փնտրում եք Հիսուսին, որ խաչվեց, այստեղ չէ Նա, քանի որ հարություն առավ»: Զառկեցին մշում է, որ եթե հարություն առնողն Աստված է, ուրեմն նաև խաչեցյալն է Աստված: Ահա մոլորակարանյան մեկ այլ հիմնավորում. Կորնթացիներին ուղղված առաջին թղթում (Բ 8) Պողոս առաքյալը մշում է, որ փառքի Տիրոջը խաչը հանցեցին: Այս խոսքերը լրացնում է Հակոբոս առաքյալը՝ ասելով. «...աչառությամբ մի՛ պահեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ փառքի Տիրոջ հավատը» (Հակ. Բ 1): «Առանց աստվածության սոսկ մարդը չի կարող փառքի տեր լինել», - եզրակացնում է Զառկեցին³⁶:

Նույնկերպ նաև Գրիգոր Սքանչեղագործն է մշում, որ Տերը ոչ թե մարդուն մատնեց չարչարանքների ու մահվան՝ մեզ համար, այլ իրեն մատնեց համուն մեզ, ինչպես և Քրիստոս ինքն է ասում. «Բանդեցե՛ք այդ տաճարը և երեք օրվա ընթացքում այն կվերականգնեմ» (Հովհ. Բ 8)՝ նկատի ունենալով իր մարմինը³⁷: Քրիստոս ինքն ասաց, որ մարդու Որդին պետք է մատնվի խաչի (Մատթ. ԻԶ 45): Ավելի խոսուն են Ղուկասի Ավետա-

³¹ Ղազար Զառկեցի, Աստուածաբանական Դրախտ Ցանկալի, վերադասվել է տպարանի Սրբոց Թակոքեանց, Երրուսդէմ, 2002, էջ 239:

³² The Interpreter's Bible, volume VII, p. 607.

³³ A Commentary on the Holy Bible, p. 718.

³⁴ ԿՈՒՅ Բաւատոյ Ընդհանոր Սուրբ Եկեղեցոյ յուղղափառ և հոգեկիր Հարցն մերոց դաւանողաց, յաւորս Կոմիտասի Կաթողիկոսի համաժողովեալ, հրատարակութիւն Կարապետ Եպիսկոպոսի, Ճախիջ Ծովհաննու Ծապոշեիկեանց Նոր-Նախիջեանցեոյ, Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ, 1914, էջ 73:

³⁵ Սահակ-Մեսրոպյան մատենադարան, Ե, Գիտք թղթոց, մատենադարանին նախնեաց, (Թուղթ Կիրիլի առ Նեստոր, Թիֆլիս, տպարան Տ. Ռոտմեանց եւ Մ. Ծարամէ, 1901, էջ 398:

³⁶ Ղազար Զառկեցի, մշվ. աշխ., էջ 246:

³⁷ ԿՈՒՅ Բաւատոյ, էջ 75-76:

բանի հետևյալ համարները, որոնցում հարություն առած Քրիստոս բացատրում է իր աշակերտներին. «Զե՛» որ Քրիստոս պետք է մույն այդ չարչարանքները կրեք և այնպես մտնեք փառքի մեջ» (Ի Գ. 26)³⁸:

Բոլոր այս հատվածներում առավել քան ակնհայտ է. որ մի փոքր ակնարկ անգամ չկա բաժանումների: Ղազար Ջահկեցի իրավամբ ասում է, որ Հայ Եկեղեցին չի ասում սոսկ Աստված մեռյալ կամ սոսկ մարմինը խաչյալ, այլ Քրիստոսին ըմբռնում է կատարյալ կերպով և բաժանումներ չի անում³⁹: Այս մույն կարծիքը հաստատում է մահ Պետրոս առաքյալը՝ ասելով. «Բանի որ Քրիստոս մարմնով չարչարվեց մեզ համար» (Ա. Պետ. Դ. 1):

Ի հերքումն քաղկեդոնական բաժանման, ըստ որի Աստված Բանը անհաղորդ էր «կրից չարչարանաց», բերենք մահ համարներ Հայտնության Գրքից՝ «Ես եմ, որ մեռա» (Ա. 18), «Անսկիզբը և Անվախճանը, որ մեռավ և կենդանացավ» (Բ. 8), «...մորթվեցիր և զմեցիր մեզ Քո արյունով» (Ե. 9), իսկ Պողոս առաքյալը դարձյալ ասում է. «...հաշտվեցինք Աստծու հետ Նրա Որդու մահվամբ» (Հռոմ. Ե. 10)⁴⁰:

Բռնված կույրը հարցնում է Քրիստոսին, թե՛ ո՞վ է Աստծո Որդին, որ հավատամք հրամ, որին Քրիստոս պատասխանում է՝ ասելով, թե տեսար մրաց և խոսում է քեզ հետ, իսկ սրանք մարմնին են վերաբերում (Հովհ. Թ. 35): Նույն կերպ և Թովմաս առաքյալը Քրիստոսի մարմինը տեսնելով և շոշափելով Նրան Տեր և Աստված դավանեց (Հովհ. Ի. 24): Մինչ ոմանք ասում են, թե այլ է տեսանելի և շոշափելի բնությունը և այլ է աստվածայինը⁴¹, Ս. Հովհաննես առաքյալը երկուսն էլ միասին է ասում. «Մեր ձեռքերը շոշափեցին կենաց Բանը» (Ա. Հովհ. Ա. 18):

ՆՋՈՎՔՆԵՐ - Գրիգոր Սքանչեղագործի մզովքներում մշվում է, որ եթե մեկն ասի, թե այլ էր, որ չարչարվեց, և այլ էր, որ՝ ոչ, թող մզվյալ լինի⁴²: Նույնպես և Սուրբ Կյուրեղի մզովքներում է մշվում, որ եթե մեկը Հոր հետ մույն բնությունն ունեցող Բանին իր մարմնով հանդերձ մույն Աստվածը չի դավանում, ապա թող մզվյալ լինի⁴³:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ոսկեբերանն ասում է, որ Քրիստոս մեռավ մարդկային բնությամբ, սակայն անմահ մնաց հրամ միացած աստվածությանը⁴⁴: Մեր Եկեղեցու սուրբ հեղինակներից Հովհան Օձնեցին ևս ասում է, որ Քրիստոս է «չարչարելի մարմնով և անչարչարելի աստվածությամբ»⁴⁵: Այսպիսին է մահ Նեքսես Շնորհալու կարծիքը. «Եկա կամատրաբար չարչարանքներու եւ չարչարուեցաւ անչարչարելի» մեր չարչարելի բնութեամբ խաչին վրայ:

³⁸ Ղազար Ջահկեցի, մշվ. աշխ., էջ 250:

³⁹ Նույն տեղում, էջ 254:

⁴⁰ Նույն տեղում, էջ 254, 256:

⁴¹ Նույն տեղում, էջ 182:

⁴² Կմիջ հաւատոյ, էջ 73

⁴³ Գիրք Թղթոց էջ 404:

⁴⁴ Ղազար Ջահկեցի, մշվ. աշխ., էջ 148:

⁴⁵ Եզնիկ Ե. Վարդապետ Պետրոսյան, դոկտոր աստվածաբանության, Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը, Ա. Էջմիածին, 1995, էջ 68:

մեռաւ նա, որ մահուան պարտական չէր, մեր մահկանացու մարմինով»⁴⁶։ Ըստ Սուրբ Եփրեմ Ասորոյ՝ չարչարանքների ժամանակ Քրիստոսի աստվածությունը նախանշեց Քրիստոսի մարդկությունից, բայց ոչ այն աստիճան, որ բաժանվի, այլ այդ նախանշելը դրսևորվում էր նրանով, որ այդ ժամանակ աստվածային իզոտությունը չէր արտահայտվում⁴⁷։

Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին ևս ասում է, որ անչարչարելի և չարչարելիով չարչարվեց, անմահը մահկանացուով մեռավ⁴⁸։ Բայց նման պնդումներով արդյո՞ք պատշաճ է ասել, թե Աստված չարչարվեց կամ Աստված մեռավ, և արդյո՞ք այսպիսով չենք դառնում աստվածաչարչարներ։ Սակայն Հայ Առաքելական Եկեղեցին չի ասում, թե խաչվեց աստվածային բնությունը, այլ մեր քրիստոսաբանությամբ՝ խաչվեց Հիսուս Քրիստոս, այսինքն՝ Քրիստոս ամբողջությամբ, առանց բաժանումների։ Հայաստանյայց Եկեղեցին կարծես թե միշտ զգուշացել և զգուշացող է բաժանումներ անելուց՝ նշելով, որ դա վտանգավոր է, և կա մի սահման, որից այն կողմ անցնելը կարող է մոլորության տանել։ Բայց ինչպե՞ս հասկանալ «Աստված չարչարեալ» արտահայտությունը։ «Անչարչարելի աստվածությամբ» ասվում է ըստ բնության, իսկ *Աստված չարչարալ*՝ ըստ միավորության⁴⁹։ Միավորությունը Զառկեցին բացատրում է հետևյալ համեմատությամբ։ Ինչպես հուրը երկաթի հետ միավորվելով վերացնում է նրանից ցրտությունը և սևությունը, այսպես էլ Քրիստոսի մարմինը, միավորված Աստված Բանի հետ, ունի Բանի կարողությունը և աստվածությունը⁵⁰։ Հետևաբար ոչ թե ըստ բնության, այլ ըստ միավորության, *Աստված չարչարեալ* արտահայտությունը ճիշտ է։

Անդրադառնալով ավետարանական վերոնշյալ հատվածների *արծիվ*, *մարմին* և *դիակ* բառերին՝ նշենք, որ դրանք հիմ հրատարակություններին կամ վաղ ձեռագրերին հետևելով ճիշտ կերպով անփոփոխ թողնելու դեպքում ևս մեկ հատված ենք պահպանում, որն իր մեջ ամփոփում է նաև համուժ մարդկության Քրիստոսի չարչարանքների և մահվան գեղեցիկ և խորհրդական ակնարկը։ Երբ Պետրոս առաքյալը անպատշաճ համարեց Քրիստոսի չարչարվելն ու մեռնելը, Քրիստոս ասաց նրան. «Ետև՛ս գնա, սատանա, որովհետև քո խորհուրդը Աստծուն չէ, այլ մարդկանցը» (Մատթ. ԺԶ 22-23)։ Եվ մինչ ոմանք ամոթ են համարում պարծանքների պարծանքը՝ տերունական խաչը, մենք համարձակությամբ քառոցենք և երգենք մեր Աստված Քրիստոսի չարչարանքները⁵¹։

⁴⁶ Ընդհանրական թուղթ Ներսէս Սմոռնայի կաթողիկոսիմ Հայոց ուղղուած համայն հալ ժողովուրդին, որուն վերադասելութիւնը Տիրոջմէ իրեն վստահուեցաւ, այրմտեան հայերէնի վերածնց մտորիք Սրբ. Գալուստեան, Պատրիարք Հայոց Թիւրքիոյ, Մարմարա տպարան, 1973, էջ 19:

⁴⁷ *Святосъ Ефремъ Сирецъ*, մշվ. աշխ., էջ 316-317:

⁴⁸ Ղազար Զառկեցի, մշվ. աշխ., էջ 259:

⁴⁹ Եղգիկ Ե. Վարդապետ Պետրոսյան, մշվ. աշխ., էջ 68:

⁵⁰ Ղազար Զառկեցի, մշվ. աշխ., էջ 168:

⁵¹ Նույն տեղում, էջ 251-252:

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՂՄԻՏՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ
Պատմական գիտությունների թեկնածու

ԽԱՅԱՀԱ-ԱԶԶԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԾ ՏԱՐԱԾ-ԲԸ, ՆԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԱԲԱԿԱՆ ԿՅԱՆ-ԲԸ

Խայաշա-Ազգի պետությունը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. XV դարի վերջին՝ խեթական պետության թագավոր Թուրխալիաս III-ի (1410-1380) ժամանակից։ Հաշվի առնելով, որ Նաիրի գեղամիությունը, որը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. XIII դարից¹, երբ դեռ իր գոյությունն էր շարունակում Խայաշա-Ազգիի պետությունը, տարածված էր վերին Եփրատից անմիջապես արևելք, ուստի Խայաշա-Ազգին, որն իր տարածքով դարձյալ առնչվում էր վերին Եփրատի հետ, բնականաբար գտնվել է այդ գետից արևմուտք։ Նրան արևմուտքից սահմանակից է եղել խեթական պետությունը, իսկ հյուսիս-արևմուտքից՝ կասկերի երկիրը։ Փաստորեն Խայաշա-Ազգիի արևելյան և արևմտյան սահմանները որոշակի են։ Ինչ վերաբերում է Երա հյուսիսային և հարավային սահմաններին, ապա դրանցից առաջինը ձգվել է մինչև Աև ծովի հարավային ափերը, որտեղ գտնվել է Խայաշա-Ազգիի Արիպաս քաղաքը², իսկ երկրորդը հասել է մինչև վերին Եփրատի ոլորանի հյուսիսային կողմերը³, այսինքն՝ Նաիրի գեղամիությունից դեպի հյուսիս-արևմուտք և աքքադական արձանագրությունների խաթե կամ Հայ պետության հյուսիս-արևելյան, ինչպես նաև Երա արևելյան շարունակությունը մերկայացնող ուրարտական արձանագրությունների խաթե կամ Հայ գեղամիության հյուսիսային կողմերը։ Երկրին տրվող Խայաշա անվան հիմքում ակներևաբար ընկած է այդ երկրից հարավ ձգվող տարածքում գտնվող շումերա-աքքադական ժամանակաշրջանի խաթե մայր գեղի հայերեն հնչարտաբերված «խայ» կամ «Հայ» արմատը («շա»-ն կամ «աշա»-ն տեղաձանց է, որին համագոր է «սա»-ն կամ «ասա»-ն)։ Նկատի ունենալով, որ Խայաշա երկրանվան «խայ» կամ «Հայ» արմատը թխում է հնդեվրոպական ծագում ունեցող խաթե կամ Հայ էթնոնիմից, որի տակ հիշատակվող բնակիչներն ունեցել են հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում, կարելի է ասել, որ ինչպես Խայաշա կամ Հայասա երկրանունը, այնպես էլ այդ անունով կոչված երկրի բնակիչները մույնպես ունեցել են հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում։ Փաստորեն շումերա-աքքադական դարաշրջանի խաթեն եղել է մայր գեղ ինչպես Խայաշայի կամ Հայասայի անվան, այնպես էլ Երա բնակչության էթնիկական ծագման հետ կապված։ Խայաշա-Ազգիի բնակչությունը, լինելով շումերա-աքքադական դարաշրջանի խաթե պետության բնակչության արևելյան հատվածի մի մասը, բնակվել է վերին Եփրատից մինչև Աև ծովը ձգվող տարածությունում՝ ապավինելով Պոն-

¹ Г. А. Калашников. Хайаса коллибель армян, Ереван, 1947, стр. 80-83.

² J. Garstang and O. R. Gurney. The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 82.

³ И. М. Дьяков. Предистория армянского народа, стр. 82-83, прим. 16.

տական լեոնների (Այսուհետև շարադրանքում խայաշալի փոխարեն կօգտագործենք Հայասա ձևը):

Ենթադրվում է, որ սկզբնական շրջանում Հայասա-Ազգի մեջ մտնող Հայասա և Ազգի ցեղային երկրները կազմել են մի ցեղամիություն, ինչպես Նաիրի ցեղամիության մեջ մտնող երկրները, իսկ հետագայում, հավանաբար Թութխալիաս III-ի ժամանակից, նրանց միացել են և ստեղծել կենտրոնական պետություն՝ իր արքայական դինաստիայով, իր զորքով, հավանաբար նաև իր արքայական քաղաքով (թեև վերջիցիս մասին տեղեկություն չի պահպանվել սեպագիր արձանագրություններում): Փաստորեն Հայասան և Ազգին հասարակական զարգացման ավելի բարձր մակարդակի վրա էին գտնվում, քան Նաիրի ցեղամիության մեջ մտնող երկրները, որոնցից ամեն մեկը թեև հասել էր թագավորության աստիճանի, բայց դեռ շարունակում էին ապրել իրարից բաժան-բաժան վիճակում և չէին հասել կենտրոնական պետություն ստեղծելու աստիճանի:

Զնայած Հայասա երկիրը և Ազգի երկիրը ստեղծել էին միացյալ կենտրոնական պետություն, բայց այդ երկրների միջև լրիվ կոնսոլիդացումը չէր ավարտվել: Դա էր պատճառը, որ այդ պետությունը խեղական նվաճողների կողմից կոչվում էր ինչպես Հայասա երկիր, այնպես էլ Ազգի երկիր աճուններով՝ կախված նրանից, թե խեղերն այդ երկրներից ո՞ր մեկի տարածքում էին նվաճումներ կատարում: Նրանցից Ազգին գտնվել է պետության հյուսիսում, այսինքն՝ Սև ծովից դեպի հարավ ընկած տարածությունում⁴: Դա հաստատվում է այն փաստով, որ Արիպաս քաղաքը, որը գտնվել է Ազգի երկրի կազմում, տարածված էր Սև ծովի հարավային ափին: Բնականաբար Հայասա երկիրը տարածված է եղել պետության հարավում, այսինքն՝ վերին եփրատի ոլորանի հյուսիս-արևմտյան կողմերից մինչև Ազգի երկրի սահմանը⁵:

Խեղական պետությունը ձգտել է իրեն ենթարկել իր շրջակայքում գտնվող երկրները, նրանցից ստանալ ռազմական աջակցություն, պահպանել իր առաջնությունը ոչ միայն Փոքր Ասիայի, այլև Առաջավոր Ասիայի նկատմամբ, հատկապես տապալել Միթաննի պետությունը, որն իր գլխավոր թշմամի էր: Այս նպատակով նա աշխատել է իր հատկության տակ պահել նաև Հայասա-Ազգի պետությունը:

Սակայն Հայասա-Ազգին, սկսած իր քաղաքական ասպարեզ գալու արշալույսից, պայքարել է խեղական հզոր պետության դեմ հանուն իր անկախության: Իսկ դա էլ ստիպել է խեղական պետությանը զանազան միջոցներ գործադրել Հայասա-Ազգիին իրեն ենթարկելու համար: Այդ միջոցներից են եղել ռազմական արշավանքները, դաշնագրերը, նամակագրությունները կամ բանագնացությունները և, վերջապես, խնամիական կապերը: Գործադրվող այդ միջոցներից գլխավորը եղել է ռազմական արշավանքը: Նման երկու արշավանքներ է կազմակերպել խեղական պետության թագավոր Թութխալիաս III-ը (1410-1380) իր որդի Սուպիլուլիումաս I-ի հետ, երկու արշավանքներ էլ կազմակերպել է Սուպիլուլիումաս I-ի (1380-1340) որդի Մուրսիլիս II-ը (1340-1320): Առաջին երկու արշավանքների մասին տեղեկություններ են պահպանվել Սուպիլուլիումաս I-ի տարեգրությո-

⁴ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, стр. 82-83, прим. 16.

⁵ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, стр. 82-83, прим. 16.

Դա, իհարկե, լավ էր հասկանում խուկկանաւը: Ուստի թեև նա առերես համաձայնվում է դաշնագրի պահանջների հետ, բայց հետո չի կատարում դրանք:

Ուշագրավ տեղեկություններ են պահպանել նաև Մուրսիլիս II-ի երեք ճամակները՝ ուղղված Հայաստան-Ազգի թագավոր Աճնիասին¹⁰: Դրանցից առաջինում և երկրորդում Մուրսիլիս II-ը գրում է Աճնիասին, որ իր հոր, այսինքն՝ Սուպպիլուիումաս I-ի ժամանակ, երբ վերջինս գտնվելիս է եղել հեռավոր Միթաննի երկրում (այդ երկրի վրա կատարած արշավանքի պատճառով), օգտագործելով առիթը Աճնիասը հարձակվել է խեթական պետության Դանկուվա քաղաքի վրա, այնտեղից տարել գերիներ և կողոպտել խոշոր ու մանր եղջերավոր անասուններ: Մուրսիլիս II-ը առաջարկում է Աճնիասին այդ գերիներն ու կողոպտուղը ետ վերադարձնել, հակառակ դեպքում ինքը կմտնի Հայաստան-Ազգի երկիր և կավերի նրա բնակավայրերը, նրա տները, դաշտերը, խաղողի այգիները, մարգագետինները, կտանի խոշոր ու մանր եղջերավոր անասունները: Սակայն Աճնիասը մերժում է նրա պահանջները, քանի որ նա ուզում էր խեթերից տարած գերիներն ու կողոպտուղը փոխանակել Մուրսիլիս II-ի մոտ գտնվող հայաստական գերիներով, որին դեռ էր խեթական թագավորը: Խեթական զորքը, զորահրամանատար Նուվանգայի գլխավորությամբ, որը Մուրսիլիս II-ի եղբայրն էր, մտնում է Հայաստան-Ազգի, նախ պաշարում, ապա, հավանաբար, գրավում նրա Ուրա ամրոցը, որի անունը հետագա միաճումների շարքում չի հիշատակվում: Երրորդ ճամակը գրվել է ավելի ուշ՝ Մուրսիլիս II-ի կողմից Միթաննի երկրի վրա կատարված արշավանքից հետո: Այդ ճամակում Մուրսիլիս II-ը գրում է Աճնիասին, որ երբ ինքը մեկնել էր հեռավոր Միթաննի երկիր արշավանքի, Աճնիասը, օգտագործելով առիթը, գրավել է խեթական պետության Իստիտինա ամրոցն ու նրա մարզը և պաշարել Կանուվարամ, տարել գերիներ ու կողոպտուղ: Մուրսիլիս II-ը առաջարկում է Աճնիասին՝ վերադարձնել գերիներն ու կողոպտուղը և վերականգնել խեթական պետության սահմանները: Աճնիասը չի լսում նրան: Մուրսիլիս II-ը անձամբ զորքով մտնում է Հայաստան-Ազգի, գրավում նրա Արիպսա, Դուկկամմա և Խալիմանա քաղաքները: Աճնիասը, ինչպես ընդգծվեց վերևում, վախենալով խեթական հզոր թանակից, ճակատամարտի չի դիմում և իր զորքի հետ լքում է երկիրը, իսկ Մուրսիլիս II-ի հետ բանակցություններ են վարում այդ քաղաքների ավազների խորհրդի անդամները (դրանցից էր Խալիմանա քաղաքի ավազների խորհրդի ներկայացուցիչ Մուրթի(ս)ը): Այդ քաղաքների ավազների խորհրդի անդամները ընդունում են Մուրսիլիս II-ի պահանջները, համաձայնություն են տալիս ենթարկվել նրան, միայն թե նա չավերի իրենց բնակավայրերը, չգերի բնակչությանը, չկողոպտի երկիրը: Մուրսիլիս II-ը կատարում է նրանց խնդրանքը: Նա այդ քաղաքներից գերում է միայն 3000 մարդ և մտնում իր զորքի մեջ, իսկ Հայաստան-Ազգիում տարագրվածներից ետ է բերում 1000 հոգու: Հայաստան-Ազգի երկիրը մտցվում է խեթական պետության կազմի մեջ՝ որպես նրա կցորդի:

Հետագայում՝ խեթական պետության թագավորներից Թութխալիաս IV-ի օրով (1260-1230), երբ վաղուց խեթական պետության հարվածների հետևանքով կործանվել էր Մի-

¹⁰ A. Goetze, Die Annalen des Mursilis (Mittelungen der Vorderasialisch-Aegyptischen Gesellschaft, Band 38), Leipzig, 1932, S. 95-97; F. Hrozni, Die ersten zehn Regierungsjahre des Königs Mursilis II (Hethitische Keilschrift-Texte aus Boghazkö), Leipzig 1919, S. 156-223.

մը), որից հետո այն տրոհվել է: Մ.թ.ա. XII դարի սկզբից, երբ կործանվում է խեթական պետությունը մոր թափանցող ցեղերից փոյուզիացիների հարվածների տակ, ընդմիջտ անկում են ապրում Հայասա-Ազգի պետության կանգուն մնացած Դուկկամա, Պաթթեյարիկկա, Կուսմախա քաղաքները, և պատմության թատերաբեմից ընդմիջտ ամհետանում են նրանց անունները: Պատմության թատերաբեմից ընդմիջտ ամհետանում է նաև երկրի Հայասա-Ազգի անունը:

Պաթթեյարիկ եւ Հայասա-Ազգիի թագավորներից Կարաննիսի (Լաննիս), Խուկկանասի, Աննիասի անունները: Ենթադրվում է, որ նրա թագավորներից է եղել նաև ոմն Մա-րիասը, որը քաղաքական ասպարեզում հանդես է եկել Խուկկանասից առաջ: Հայասա-Ազգիի անձնանուններից հիշատակվել է նաև մեկ ուրիշ Մարիասի անունը, որը քաղաքական ասպարեզում հանդես է եկել Աննիասի ժամանակ: Այդ երկրի անձնանուններից են նաև Խալիմանայի ավագների խորհրդի անդամ Մուրթի(ս)ի, ինչպես նաև Պաթթեյարիկկայի կառավարիչ Արիխայցցիի, Դուկկամայի կառավարիչ Ախսիասի անունները: Մեզ են հասել Հայասա-Ազգիի Կամախա (տարբերակ՝ Կամուխա), Ուրա, Ինգալավա, Արիպասա, Դուկկամա (Տուկկամա), Խալիմանա, Փաղթեու, Լախիիրսիլա, Արնիյա, Պախու-թեա, Թամադտա, Գազու, Արիխթա, Բարրայա, Գաշմիխա քաղաքների, ամրոցների և այլ բնակավայրերի անունները: Հայասա-Ազգին ունեցել է սեփական կրոն: Այն եղել է բազմաստվածային, ինչպիսին էր խեթական կրոնը: Պաթթեյարիկ եւ նրա պանթեոնի (դիցարանի) մեջ մտնող Ուգուր, Իշթար, Ջազգա, Թեշտուր, Թարտուուր, Թերիդթիթուցի, Ունա-գաշթաշ, Գազշաննաշ, Բալթաիկ, Ունազաշթուր, Խուխուր, Սիլլի աստվածների անունները¹³:

Հայասա-Ազգին ունեցել է նաև զարգացած տնտեսություն, որի զլխավոր ճյուղերից են եղել դաշտավարությունը, խաղողագործությունը, անասնապահությունը, մարտականքերի պատրաստումը և դրա հետ կապված ձիաբուծությունը: Հայասա-Ազգիում իշխել են հինարևելյան տիպի ռազմա-դեմոկրատական կարգեր, որի պատճառով էլ այնտեղ ապաստան են գտել խեթական փախստականները:

Հայասա-Ազգիի բնակչության էթնիկական պատկանելության վերոհիշյալ մեր ենթադրությունը, թե այն ծագում է շումերա-աքքադական դարաշրջանի խաթե կամ Հայ մայր ցեղից և ունի հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում, հիմնավորվում է նաև այդ պետության տեղանունների, անձնանունների և դիցանունների ստուգաբանության միջոցով: Հետազոտողներից Գ. Ա. Ղափանցյանի¹⁴ կարծիքով այդ անունների հիմքում ընկած են ինչպես խեթական, խուրիական, անգամ սեմական, այնպես էլ հայկական արմատներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համեմատաբար ավելի շատ տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ ունեն հայկական ծագում: Այսպես, օրինակ՝ Ազգի ցեղատեղանվան հիմքում ընկած է հայերենի «ազի» (մայր, մայրիկ) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Ազիար, Ազիրան), Արիպաս տեղանվան հիմքում՝ հայերենի «արի» կամ «արիի» (արև, արևածագ, լուսաշող, արևաշող) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Արի, Արիա, Արիագետի, Արիակ, Արիաշեն, Արիավետ,

¹³ Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 46-47:

¹⁴ Գ. Ա. Կաթանյան, *Хитяса-халибель армян* (Историко-лингвистические Работы, Ереван, 1956), стр. 11-122.

Այսպիսով, Խայաշա-Ազգիի պետությունը քաղաքական ասպարեզ է եկել մ.թ.ա. XV դ. վերջին և անկում է ապրել մ.թ.ա. XII դ. սկզբին: Նրան արևմտափքից սահմանակից են եղել խեթական պետությունը և կասկերի երկիրը, արևելքից՝ Վերին Եփրատի ձախ ափին տարածված Նաիրի ցեղամիությունը, հյուսիսից՝ Սև ծովը, հարավից՝ Փոքր Հայքը, ուր ենտագայում հիշատակվել է ուրարտական արձանագրությունների Խաթե ցեղամիությունը: Էթնիկապես այն կապված է եղել շումերա-աքքադական դարաշրջանի Խաթե կամ Հայ մայր ցեղի հետ և իր հայ բնակչությամբ եամարվել է նրա հյուսիս-արևելյան շարունակությունը: Իր քաղաքական ասպարեզ գալու սկզբի 80 տարիներին (մ.թ.ա. 1410-1331 թթ.) այն եղել է անկախ պետություն, իսկ դրանից հետո, երբ կորցրել է իր պետականությունը, ենթարկվել է խեթական պետությանն ու նրա հետ էլ անկում է ապրել նոր թափանցող ցեղերի հարվածների տակ:

*Նվիրվում է հայոց գրերի արարման
փառավոր 1600-ամյակին*

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հայերեն մի շարք բառեր առանձնացում են բառակազմական ընդհանուր հատկացի-
շով. դրանց կազմում հայկական Այբուբենի որևէ տառածուց բաղադրիչ կա¹, մի երևույթ,
որը մինչև այսօր հետազոտողների կողմից հատուկ ուշադրության չի արժանացել: Սա, ի-
հարկե, մասնակի, բայց հետաքրքրական իրողությունն է:

Ի՞նչ բառեր են դրանք, հայկական ո՞ր տառաճուճներն են բաղադրելի, իմաստային-
բառակազմական ի՞նչ ընդհանրություններ ունեն տառաճուճ բաղադրիչով բառերը, ժա-
մանակագրական ի՞նչ պատկեր են ներկայացնում, ինչպե՞ս են արտացոլված բառարան-
ներում, բառապաշարի ո՞ր շերտերին են պատկանում, այլ լեզուների համեմատան իրո-
ղությունների հետ ինչպիսի՞ առնչություններ կան,- այս և հարակից այլ հարցերի պա-
տասխանը պիտի փորձենք տալ ստորև:

Բառերը ներկայացնենք ըստ տառաճուճների:

Այբ, բեն

Ժամանակագրական տեսակետից առաջինը *Այբուբեն* բառն է, որ կազմվել է հայերե-
նի Այբուբենի առաջին երկու տառերի անուններից: Տարբերակներն են՝ *այբբեն*, *այբե-
բեն/այբ և բեն*: Հմմտ. *Մեկնեաց զԱյբուբենն զամենայն: Կոմիտաս արար գերգս շարա-
կանաց հայերէն Այբբենիւք: Ուսաւ զայբ և բենս* (ՆՀԲ, հ. 1, էջ 79): Տարբերակային ձևերը
հայերենի արդի փուլում չեն գործածվում. հանդիպում են միայն անցյալ (և նախանցյալ)
դարի գրական և գիտական երկերի լեզվում: Օր.² *Այբբենի տեղ մեզ ալիֆ բեյ են սովորեց-
նում: Էլ չուզեց վերադառնալ դեպի այբ-բենը* (ՂԱԵ, էջը 211, 96):

Հայտնի փաստ է, որ *այբուբեն*-ը կազմվել է հունարեն *ἀλφάβητος* բառի հետևողույթ-
յամբ (հմմտ. նույն սկզբունքով կազմված այլալեզու բառերի հետ՝ ռուս. *азбука*, վրաց. *ან-
բანი* և այլն): Այբուբենի համար մեզանում նախապես գործածվում էր հունարեն բառի
փոխառյալ ձևը (մատենագրության մեջ հանդիպում է *ալփաբետ/ը*, *աղփաբետք*, *ալփա-
փետ/ը*, *աղփափետք* գրություններով), որը հավանաբար գալիս է Հայաստանում եղած
հունական դպրոցներից, իսկ *այբուբեն* բառը գործածության մեջ մտավ ավելի ուշ՝ հայ

¹ Հայերենում բառակազմական որոշակի արժեքով հանդես են գալիս նաև հունական, լատինական, ռուսա-
կան (սլավոնական) տառաճուճները, բայց դա այլ քննության մյուսն է:

գրերի գյուտից հետո²։ Նոր հայկազյան քառարամի, համարաբարանների և առհասարակ մատենագրության տվյալները հաստատում են այս տեսակետը։

Սակայն ենթադրություն է եղել նաև, որ քառասյատենումը կատարվել է գրերի գյուտից էլ առաջ³։ Այս տեսակետին դժվար է համաձայնվել, եթե չկային հայերեն տառերը, բնականաբար, չկային նաև նրանց անվանումները (թեկուզև դրանք ձևավորվել են օտար՝ հունական և սեմական անմիջական ազդեցությամբ⁴։

Տառանուն բաղադրիչ ունեցող քառերը սովորաբար մեմիմաստ են և գործածվում են միևնույն տերմինային համակարգում։

Այբուբեն քառը, ի տարբերություն մյուսների, բազմիմաստ է։ Ժամանակի ընթացքում իր հիմնական նշանակությունից («որևէ լեզվի բոլոր տառերի ամբողջությունը՝ ընդունված դասավորությամբ») զատ ձեռք է բերել «գրաճանաչություն, գրագիտություն», «որևէ գիտության, ասպարեզի տարրական գիտելիքներն ու սկզբունքները» իմաստները ևս։ Իմաստային մասն ճյուղավորումը միանգամայն հասկանալի է, այս նույն իմաստները կան նաև եվրոպական հայտնի լեզուների «այբուբեն» նշանակող քառերում։

Ի դեպ, *այբուբեն* / *այբբեն*-ը տառանուն պարունակող այն քիչ քառերից է, որը բաղադրությունների հիմք է դարձել, ինչպես՝ *այբբենաբան*, *այբբենական* (սրանից էլ՝ *նախա-այբբենական*, *հետայբբենական* և այլն), *այբբենաթուր* -այբուբենն իբրև թուր ունեցող- (Ռեդինականին նորակազմություն է. *Օտքով շողա երկնաշնորհ, Օշականում շուշանա-քույր, Պատյան չունի՝ թուր-կայծակի հայոց լեզուն այբբենաթուր* – ՀԾ, էջ 166), *այբբենաշար* «արևելյան, առավելապես արաբական բանաստեղծության կառուցվածքային տեսակներից» (*Վերլուծելով երգչի ... այբբենաշար-դարահեջա խաղը...* – ՊՍ, էջ 401)։

Այբ-ը հանդիպում է նաև *այբաթարց* քառի մեջ, որը համարվում է *ապաթարց*-ի սխալ տարբերակը (ուշագրավ է, որ ապաթարցը սովորաբար գործածվում է *այբ*-ի կրճատման դեպքում, - այստեղից էլ սխալ ընկալումը)⁵։

Միակ քառը, որտեղ տառանունը վերջնաբաղադրիչ է, եզակի վկայություն ունեցող *եգիպտայբ*-ն է (նշանակում է «եգիպտական գիր և դպրություն»)՝⁶։ Հայտնի է, որ *այբ*-ն առանձնաբար գործածվում է իբրև առաջին տառի անվանում (օրինակ՝ Մեսրոպյան այբուբենն սկսվում է *այբ*-ով), իսկ դարձվածքների կազմում ձեռք է բերել բառ-խորհրդանշի արժեք՝ մատնանշելով գիրը, գրագիտությունն ընդհանրապես (օրինակ՝ Գլխում *այբ*-ի կտոր չկա)։ *եգիպտայբ* քառի իմաստն առնչվում է *այբ*-ի այս վերջին՝ դարձվածային նշանակության հետ։ Այստեղ կարելի է քառիմաստի ընդլայնում արձանագրել։

² Գ. Զահրայան, Գերականական և ուղղագրական աշխատությունները հիմ և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1955, էջ 34։

³ Տե՛ս Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական քառարան, Երևան, 1987, էջ 25։

⁴ Տե՛ս Հ. Զ. Մանուկյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 560-566։

⁵ Տե՛ս Հ. Զ. Մանուկյան, Հայերեն արմատական քառարան, Բ. Ա., Երևան, 1979, էջ 96։

⁶ Նույն տեղում։

Հայերեն Այբուբենի լուրագրացյուր շարքի առաջին միավորի անունով կազմվել և մանկավարժության մեջ գործածվել է *գրոտուցման այբ-ժե-ճե-ռա-ի* (կամ *գրկապության*) *մեթոդ* բաղադրյալ անվանումը, որն այժմ հնացած է⁷:

Առաջին տառանունը կա մաս *այբուբեն* բառի բարբառային մի տարբերակում՝ *այիբ-բիմ* (հանդիպում է մաս *այբբբիմ* ձևով): Հմմտ. *Այիբբիմըն կարթացիլ իմ դասեդաս* (ԱՆ, էջ 64): Բառի առաջին բաղադրիչը՝ *այիբ*⁸, *այբ-ի* հնչյունական տարբերակն է, իսկ երկրորդը կարելի է բաղադրության արդյունք համարել (*բեն+գիմ=բիմ*):

Այբ տառանվան փոխաբերական «սկիզբ»՝ մշակականությունը, որը հունական *ալֆա*-ից է գալիս (հմմտ. *Ես եմ այբ և ես եմ քէ* - Յալտ., Ա 8, մաս դարձվածքի կազմում *այբ-ից մինչև քէ* «սկզբից մինչև վերջ»), բաղադրությունների մեջ սովորաբար չի հանդիպում: Կարելի է մշել միայն մեկ-երկու բաղադրյալ անվանումներ՝ *«Այբ-Քե» հրատարակչություն*, *«Այբ-Ճե» շաբաթաթերթ*:

Բեն

Այբուբեն / *այբբեն* / *այբերեն* կազմություններից բացի հայնական Այբուբենի երկրորդ տառի անունը կա մաս *բենկործ* խազանվան մեջ: Հայկազյան բառարանը բացատրում է. «Անուն խազի ի հայնական երաժշտության, որ ունի զձև կործ կամ կոր բենի» (ՆՀԲ, Բ. 1, էջ 481):

Կործ արմատը մշակակում է «ծուռ, թյուր, անհարթ»⁹ կամ «կոր, կեռ, ծուռ»¹⁰, առանձին չի գործածվում և հանդիպում է հիմնականում միջնադարյան հայնական երաժշտական մշակումների՝ խազերի անունների մեջ: Այդ խազանունները կազմվել են *«տառանուն + կործ(այ)»* բառակազմական կաղապարով. ստեղծված բառերը հիշում են, որ խազի գծանշանը տվյալ տառի ծովոված, խեղաթյուրված ձևն է ներկայացնում. հմմտ. *էկործ*, *ձակործ* և այլն:

Բենկործ խազանունն իր հերթին մոր բառերի հիմք է դարձել, որոնք, սակայն, բառարաններում չեն գրանցվել: Դրանք գործածվում են հիմնականում խազագիտական աշխատություններում: Օր.՝ *Փշաբենկործ* - բենկործի այլագրությունն է, *երբեմն բենկործի միացումը փուշի հետ: Մեշտաբենկործ* - տպագիր գրքերում բենկործի այլագրությունն է, *ձեռագրերում այդպիսի մշան չկա: Նաև՝ փոքրաբենկործ, խնճաբենկործ, մեծաբենկործ* (ՌԱ, էջ 177):

1813-1815 թթ. Համբարձում Լիմոնճյանը ստեղծեց հայնական ձայնագրության մոր համակարգ, որտեղ ներառվեց մաս *բենկործ*-ը՝ «հայնական ձայնագրության չորրորդ աստիճանը, որը համապատասխանում է եվրոպական ֆա-ին» մշակականությամբ: Օր.՝ *Յոթ ձայ-*

⁷ Հմմտ. *Այս արվեստի մեջ չկար մեր հեգարանի այբ, ժե, ճե, ռա* ... կարողալը սկսում են այսպես. *քբ-ա-րբ-բար, և ոչ՝ քե, այբ, թե-բար* (ՂԱ, Բ. 3, էջ 257):

⁸ Հմմտ. *Մըտա էջիի ցորեն խալիս դառնալու, Սիրտըս էլավ քե ու այիբ, էրկու բեն* (ԱՆ, էջ 63):

⁹ Տե՛ս Հո. *Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, Բ. Բ, Երևան, 1973, էջ 652:

¹⁰ Տե՛ս Ստ. *Մալխասեանց*, Հայերեն բացատրական բառարան, Բ. 2, Երևան, 1944, էջ 478 (*Կործայ* բառահոլվածում):

մանիշներից փուշը ընդունված է համարել առաջին օկտավայի դո, էկորճը՝ առաջին օկտավայի բե, վերմախաղը՝ մի, բենկորճը՝ ֆա (ՌԱԶ, էջ 12):

Այլալեզու տեքստերում հայկական տառանդաներով բաղադրված խազերի անունները չեն թարգմանվում: Օր.՝ Некоторые основные музыкальные знаки прямо заимствованы из збн թարգմանվում: Օր.՝ Некоторые основные музыкальные знаки прямо заимствованы из алфавита и носят наименования, составленные из названий соответствующих букв, как, например, бенкорч, дзакорч и менкорч (бен, дза и мен – названия второй, семнадцатой и двадцатой букв армянского алфавита) (ՌԱԹ., էջ 182):

Գհի

«Այբուբեն» հատկացությունը հայերենում անվանվում է մաս *այբ(բ)ենգհիս* բառով, որը կազմվել է ավելի վաղ կազմված *այբբեն*-ին հայկական այբուբենի երրորդ տառանդանը՝ *գհիս*-ը հավելելով:

Այբ(բ)ենգհիս բառը գործածական է ինչպես գրական, այնպես էլ ժողովրդական արևմտահայերենում:

Արևելահայերենում *այբբենգհիս*-ը բառային արժեք ձեռք չի բերել: Հմմտ. *Այդ դժվար չթվաց Արությունին՝ առաջուց սովորած լինելով յուր մորից, և ոչ այբ, բեն, գհիս ասելը դժվարացավ* (ՂԱԵ, էջ 96):

Համեմատելի է ֆրանս. ABC, abc, անգլ. ABC, գերմ. Abc, A-B-C կազմությունների հետ: Արևմտահայերենն ամենայն հավանականությամբ հետևել է ֆրանսերենի օրինակին, քանի որ մինչև 20-րդ դարի կեսերն այդ լեզվի ամմիջական ազդեցության ներքո էր գտնվում:

Բառի բարբառային տարբերակ է դիտվել *այբենգհիս*-ը (Պոլսո բարբառ)¹¹, որտեղ *բ*-ից մեկն ամփոփման հետևանքով ընկել է: Հանդիպում է նաև գրական լեզվում: Օր.՝ *Են-րացեր եմ, մորեն այբենգհիսեն սկսելու, մոր կենանքի յարմարելու* (ՎԹ, էջ 388): *Կարօտը դեմքերուն վրայ՝ այբենգհիսի պես պարզ կը կարդացուի* (ԳՐ, էջ 147):

Դա

Մաշտոցյան Այբուբենի 4-րդ տառի անունը բառակազմության մեջ հանդես է գալիս թվային արժեքով, մի բան, որ հազվադեպ է ուսումնասիրվող բառերի մեջ: Մալաթիայի բարբառի *տասնըճիճգ* «պսակից 15 օր հետո հարսին բաղճիք տանելու հանդեսը» բառի համարժեքները Պոլսո բարբառում տառանվանական կազմություններ են՝ *դա-բեն-թո* (4+2+9=15), *դա-նչ-զա* (4+5+6=15), նաև *իննուվեց* (9+6=15)¹²: Սրանք նաև ծածկաբառեր են:

Եչ

Այբուբենի 5-րդ տառի անունով է կազմվել *եչագրություն* բառը, որը գործածվում է մասնավորաբար Մ. Արեղյանի առաջարկած ուղղագրական փոփոխությունների կապակցությամբ:

¹¹ ՅԵՆ ՀՐ. *Ամառյան*, Հայերեն զատական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 90:

¹² Լույս տեղում, էջ 1016:

Գրություն վերջնաբաղադրիչով շատ բառեր ունենք, ինչպես՝ *բևեռագրություն, ծածկագրություն, կապգրություն, կցագրություն, հնչյունագրություն, նշանագրություն, վանկագրություն, վիմագրություն, ուղղագրություն, փակագրություն* և այլն, նաև տառանվանական կազմություններ՝ *հյունագրություն, վեփագրություն* և այլն: Տերմինակազմիչ կադապար է ձևավորվել, սպասելի են այլ կազմություններ:

Բառարանային գրանցում չունի:

Ջա

Այբուբենի 6-րդ տառի անունը հանդիպում է բարբառային *դա-եշ-զա* կազմության մեջ (տե՛ս *դա* տառանվան մասը):

Է

Այբուբենի 7-րդ տառի անունով ունենք *էկործ / էկործայ* խազանումը, խազանիշն է տառի ձև ունի: Առձեռն բառարանը նշում է. «Օտարականի խազ մը» (ԱԲ, էջ 185):

Հայկական ծայնագրության մեջ *էկործ*-ը նշում է ութնյակի երկրորդ աստիճանը, որը համապատասխանում է եվրոպական ռե-ին: Օր.՝ *Հայկական ծայնագրության հիմնական ծայնամիշենրի անուններն են՝ փուշ, էկործ, վերնախաղ, բենկործ, խոսրովային, ներքնախաղ և պարույկ* (ԵԲԲ, էջ 89):

Հարկ է նշել, որ *կործ* վերջնաբաղադրիչով կազմություններից արդի հայերենի բացատրական բառարաններում արձանագրված է միայն *էկործ*-ը: Հանդիպում է միայն երաժշտագիտական աշխատություններում և հանրագիտարաններում:

Է տառանունով մեր արձանագրած բառային մյուս միավորն անսովոր ձևավորում ունի՝ *է-ագրություն*, այսինքն՝ բառը կազմվել է տառի զուտ անվանողական արժեքի հիման վրա: Հմտ. *Այս պատճառով բառամիջի է-ագրությունը սովորելու համար պետք է բառամիջում այդ տառն ունեցող բառերի ցուցակն ունենալ ձեռքի տակ* (ՌԻ, էջ 12): Սա եզակի կիրառություն է: Բառարանային գրանցում չունի:

Գծիկով է գրվել թերևս այն պատճառով, որ չշփոթվի համանուն *է*-ով («էակ, էություն») կազմությունների հետ, ինչպես՝ *էաքանություն* կամ *էախոսություն* «ուսմունք էացության» գոյացության մասին», *էականություն* և այլն:

Այդպես հանդիպում են նաև *ու-ագրություն / հյունագրություն, ու-ագրություն / ուագրություն* երկգրությունները: Ուշագրավ է, որ նշված կազմություններում տառ կամ տառանուն բաղադրիչը ծայնավոր (կամ ծայնորդ) հնչյունի նշանն է: Որեմն այսպես գրելու նպատակներից մեկն էլ բառային միավորի արտաքին ձևավորման ճիշտ ընկալումն ու անհրաժեշտ արտասանությունն ապահովելն է:

Բովանդակային կողմով հակադրվում է *եշագրություն* բառին:

Թռ, ժե

Հայկական այբուբենի 9-րդ տառի անունը հանդիպում է բարբառային *դա-բեն-թո* տառանվանական կազմության մեջ (տե՛ս *դա* տառանվան մասը), իսկ հաջորդ՝ 10-րդ

տառանվան հետ՝ մանկական մի խաղի մեջ՝ թո՛ժե: Հմմտ. «Թոյ-ժէ - թաժայ հաց է» (ՀԱՐ, Բ. 2, էջ 117):

[ԻճԻ]

Գրաբարյան *Իճի* տառանունը բառակազմությանը չի մասնակցում: Բառեր են կազմվել 11-րդ տառի ոչ ավանդական անվանման հիման վրա. *Ի*-ն փաստորեն ինքնանվանողական դերով է հանդես գալիս: Այդ պատճառով էլ այս տառանունը ներկայացնում ենք որոշակի վերապահումով:

Տառանուններով բաղադրված *ցոյական* և *րեական* քերականական տերմինների մասնակցությամբ կազմվել է *իական* տերմինը՝ գրաբարի *ի* բաղադրիչ ունեցող անցյալ կատարյալի հիմքն անվանելու համար (*թաքչիմ* – *թաքի*, *մարտնչիմ* – *մարտի* և այլն): Օր.՝ *կատարեալի իական-բաղադրեալ հիմքերու խոնարհումը միայն կրաւորաձեւ է* (ՄՄ, էջ 176):

ի բառակազմական տարրով է կազմվել *իասություն* լեզվաբանական տերմինը¹³ (հմմտ. ռուս. *актасе*): Առաջացել է *ի ասել* կապակցությունից՝ *-ություն* վերջածանցի հավելումով: Այս տերմինով են անվանում ռուսերենի բարբառային արտասանության անոճման հատկություններից մեկը, երբ առաջին նախաշեշտ վանկում փափուկ բաղաձայններից հետո շտաբերակված *к*՝ է հնչվում, ինչպես՝ *тѣтъ < тѣтъ, ѡсѣсъ < осѣсъ* և այլն:

Դիպվածային է *ի-ահանգ* կազմությունը. *ի-ահանգ որոշ հիմքերում կատարվում է իա> ե հնչյունափոխություն* (ՍԳԼ, էջ 79): Հմմտ. *Յորժամ առաջին բառն բազմավանկ չանգի ի ի* (ընդգծումը մերն է - Դ. Գ.), *երբեմն այն ի փոխի 'ի ե կամ է* (ԱԲագ., էջ 662):

Նկատենք, որ վերոհիշյալ բառերում փաստորեն միանգամայն տարբեր *ի*-եր են հանդես գալիս:

ԽԵ

Այբուբենի 13-րդ տառի անունով ունենք *խեկորճ* խազանունը (հմմտ. *բեկկորճ* և այլն): Օր.՝ «... հին երաժշտական խազերի *բեկկորճ, էկորճ, խէկկորճ, ձակկորճ* և *մեկկորճ* անունները, քանի որ այս խազերը ծուռ՝ խնդաթյուրված *բ, է, խ, ձ, մ* գրերն են» (ՀԱՐ, Բ. 2, էջ 478)¹⁴:

Առհասարակ հազվադեպ է:

Ծա, կեն

Այբուբենի 15-րդ տառի անունից (*կեն*) և 14-րդի անունից (*ծա*) է բաղադրվել *կեն(ու)ծա* «կեղծավոր» ծածկաբառը նախանցյալ դարի Երևանի խոսվածքում (այժմ մոռացված է): Կազմվել է *կեղծավոր* բառի *կ* և *ծ* գրերի անուններից¹⁵: Օր.՝ *Նա մի քիչ կեն ու ծայ է, զգոյք կաց* (ՀԱՐ, Բ. 2, էջ 425): Հմմտ. խոսակցական *խճք* (*խնամի-ծանոթ-բարեկամ*) հապավումը:

¹³ Տե՛ս Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարազյուրյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 116 (այսուհետև՝ *Լեզվաբանական բառարան*):

¹⁴ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն քաջատրական դառարան, Բ. 2, Երևան, 1944, էջ 478:

¹⁵ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն զանազանական բառարան, էջ 563

Զա

Այբուբենի 17-րդ տառի անունով և *կորճ / կորճայ* արմատի կցումով կազմվել է *ձակորճ* (նաև *ձակորճայ*) խազանունը: Հայկազյան բառարանը բացատրում է. «խազ շարականի, իբր-ձ, կորճ, կոր և կրճատ» (ՆՀԲ, հ.2, էջ 145): Բառը հավանաբար 10-րդ դարի կազմություն է¹⁶:

Այս տառանունով է կազմվել նաև *ձայասություն* (*ձա* տառանուն+յ ձայնակապ + *աւել / + ություն*) լեզվաբանական տերմինը (հմտ. ուս. дзаяние): Սրա միջոցով են անվանում բելոռուսերենի, լեհերենի, ինչպես նաև ռուսերենի որոշ բարբառների արտաբերական այն առանձնահատկությունը, երբ *ձ* բաղաձայնը հնչվում են որպես *ձ*, ինչպես՝ լեհերեն *dzieci*, ռուսերեն *ММ* և այլն: Հազվադեպ է գործածվում. օր.՝ *Հնչյունական համակարգին* (բելոռուսերենի - Դ.Գ.) *բնորոշ են այասությունը, ձայասությունը, ցոյասությունը, առաջնային շարքի ձայնավորների մոտ բաղաձայնների քմայնացումը ...* (ՀՍՀ, հ.2, էջ 377): Սկզբնապես կազմվել և վկայվել է *ձ-ասություն* ձևով¹⁷:

Ղատ

Հայկական Այբուբենի 18-րդ տառի անունով՝ *ղատ*, ունենք *ղատասություն* լեզվաբանական տերմինը՝ «*ր, ռ* (ինչպես նաև *լ*) հնչյունների փոխարեն *ղ* արտասանելը» նշանակությամբ: Որոշ լեզուներում (օր.՝ հայերենում, ռուսերենում) *ր* հնչյունի *ղ* արտասանությունը թերություն է համարվում, իսկ այլ լեզուներում (օր.՝ ֆրանսերենում) հասարակայնորեն ճանաչված երևույթ է:

Ղատ տառանվան բառակազմական փնջի մեջ են մտնում նաև *ղատասական* (բաղաձայններ), *ղատասաց*, *ղատասել* բառերը, այս վերջինի բայանուն գոյականը՝ *ղատասում*, և *ղատահունչ*¹⁸: Նկատելի է, որ տառանունը բաղադրվել է արտաբերության հետ կապված - *աս* և - *հունչ* արմատների հետ: Դա օրինաչափական է մյուս տառանունների պարագայում ևս (երբեմն հանդես է գալիս նաև - *խոսք*-ը՝ կազմելով տարբերակային ձևեր):

Կարծում ենք, որ *ղատասությունը*, ինչպես և լեզվաբանական այլ եզրույթներ, ժամանակի ընթացքում կընդգրկվեն լոգոպեդիայի հայերեն տերմինաբանի մեջ՝ փոխարինելով այսպես կոչված միջազգային տերմիններից (*ռոտացիզմ* և այլն):

Ղատ տառանունով գրանցել ենք *ղատանման* դիպվածային կազմությունը. *Յետ ժամանակաց տեսնալ թէ գիրն դ է կամ դատանման սկսան գրել ՚լ դնելով ՚ի վերայ գիշիկն նշանակ լերկութեանն* (Ա. Բագ., էջ 657):

¹⁶ Տե՛ս Բ. Աթայան, Հայկական խազային մոտագրությունը, Երևան, 1959, էջ 52-54:

¹⁷ Տե՛ս *Լեզվաբանական բառարան*, էջ 201:

¹⁸ Նշված բոլոր բառերը կան ակադեմիական «Ռուս-հայերեն բառարանում» (Բ.Բ. 1-4, Երևան, 1954-1958 տնի արտատու, արտատու, տպագրատու, քոթադրա. սխալմամբ տրվել են նաև *ղաղասություն, ղաղասել* ձևերը): Տե՛ս նաև Հ.Գ. Աթայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 930 (*ղատասական*-ից բացի, մյուսներն արձանագրված են):

ի դեպ, *ղատ* տառանունով որևէ բառ չկա Ստ. Մալխասյանցի և ակադեմիայի կազմած քառահատոր բացատրական և Հովհ. Բարսեղյանի ուղղագրական, տերմինաբանական բառարաններում:

Չենք բացառում, որ կարող են հանդիպել, օրինակ, *լյուծաձև*, *լյուծաձև* և նման այլ կազմություններ:

Մեն

Այբուբենի 20-րդ տառի անունով ստեղծվել է *մենկործ* խազլ: անունը: Այն, ինչպես *քենկործ*-ը, *էկործ*-ը և *ձակործ*-ը, շարակնոցներում գործածվող երաժշտական գրության հիսնական նշաններից է:

Մենկործ բառը մոր կազմությունների հիմք է դարձել: Հմմտ. *խազերի ցանկում այժմ գոյություն ունեն մենկործ, կիսամենկործ, փոքրամենկործ և մեծամենկործ անունները* (ՌԱ, էջ 174):

Մենկործ խազանունը հայերեն բառարաններում գլխաբառ չի դարձել: Այն և նրանից բաղադրվածները հանդիպում են միայն երաժշտագիտական աշխատություններում:

Նու

Մաշտոցյան այբուբենի 22-րդ տառի անունով միայն մեկ բառ է կազմվել՝ *նուասեր*, այսինքն՝ «*ն հողը գործածել սիրող*»: Այսպես. *Եթե այդպես խոսող էլ լինի, ինչպես կան մի քանի նուասեր մարդիկ, դարձյալ բառի կազմության մեջ վանկի տնտեսություն չի լինի* (ՄՆ, էջ 264): Սա, ամշուշտ, դիպվածային կազմություն է. *-սեր* վերջնաբաղադրիչով այդպիսիք շատ կարելի է կազմել (հմմտ. *հյունամոլ*, *վեժասիրություն* և այլն):

Օա

Այբուբենի 23-րդ տառի անունով մոր ժամանակներում *քենկործ*, *էկործ*, *ձակործ*, *մենկործ* բառերի նմանակությամբ կազմվել է *շակործ* խազանունը: Օր. *Նրա մեջ տեղ են գտել նորագույն ժամանակներում հորինված մի շարք անուններ (ինչպես օրինակ, Գ. Գապասակալյանի՝ շակործ, պենկործ, բեյրե...անունները)* (ՌԱ, էջ 147): Եզակի կիրառություններ ունի մույնիսկ խազագիտական աշխատություններում:

Ո

Այբուբենի 24-րդ տառի անունով ընդամենը մեկ բառ ենք արձանագրել՝ *ոյասիրություն*: Հին լեզվի կեղևին ստրկամալ համարում ենք, երբ մի հեղինակ փոխանակ ժողովրդի հանրական ձևին հետևելով, կենդանացնելու, գրելու ասելու տեղ, գրում է կենդանացնելու, գրելու *ինչ է այս ոյասիրության խորհուրդը* (ՄՆ, էջ 255): Կրկին դիպվածային է. կազմվել է *նուասեր*-ի սկզբունքով, ավելացնելով *-ոյություն* գոյականակերտ վերջածանցը (հմմտ. *վեժասիրություն, հյունամոլություն* և այլն):

Չա

Հայկական Այբուբենի 25-րդ տառի անվանումը տեսնում ենք *չակերտ* բառի մեջ, որի համար նԼԲ-ն գրում է. «Այս բառ ի յիշատակարանս գրչաց լետին դարուց և եթ գտանի»

(ՆՀԲ, Բ. 2, էջ 562), և բացատրում, որ կետադրական այս նշանը կերտվել է չա տառի գլխիկի ձևով¹⁹:

Հակերտ բառն իրականում մոր շրջանի (19-րդ դարի) գրաբարում կիրառված բառ է, որի երբեմնի ունեցած բաղադրական հիմքերն այնևս չեն գիտակցվում²⁰։ Այդ պատճառով էլ այն իբրև գլխաբառ ներկայացված է Արմատական բառարանում:

Բառակազմական փնջի մեջ են մտնում *չակերտավոր* «չակերտների մեջ առնված, չակերտ ունեցող», «այսպես կոչված, կեղծ, ոչ իսկական», *չակերտել*, *չակերտում* բառերը: Հետաքրքրական է, որ *չակերտավոր* բառի երկրորդ իմաստը կա *չակերտներում* քերականական ձևի մեջ, օրինակ՝ բանավոր խոսքում ասվում է՝ *չակերտներում* (կամ *չակերտավոր*) *բարի*, այսինքն՝ *չար* (զրավոր խոսքում բառը չակերտների մեջ է առնվում՝ «բարի»):

Ղատաստություն, *ձայաստություն* և նման բառերի համաբանությամբ է ստեղծվել *չայաստություն*²¹ լեզվաբանական տերմինը (չա տառացուց + ձայնակապ + առնել/ + ություն): Հմտ. ոռու. ԳՕԿՑԻԵ: Այս խիստ հազվադեպ տերմինով են անվանում ռուսական սակավաթիվ խոսվածքներից բնորոշ այն իրողությունը, երբ *ց* հոգյունի փոխարեն *չ* են արտասանում, օրինակ՝ Կе́псэ́ (փոխանակ ուռնաձ):

Նախապես վկայվել է *չքաստություն* ձևով²², այսինքն՝ բառի հիմքում ընկել է տառի ոչ ավանդական անվանումը:

ՊԵ

Այբուբենի 26-րդ տառի անունով կազմվել է *պեկոր* խազանումը: Սա ևս «տառանուն+կործ» բառակազմական կաղապարի իրացումն է համաբանության հետևանքով, մոր ժամանակներում: Հմտ. ...*նաև բենկոր, էկոր, պեկոր և ձակոր խազերի անունները, որոնք բ, է, պ, ծ գրերի տնն մի պատկեր են ներկայացնում* (ՀԱԲ, էջ 652):

ՎԵՎ

Հայկական այբուբենի 30-րդ տառի անվանումով կազմված բառերը կապվում են հայ իրականության մեջ 19-րդ դարի հատկապես 80-90-ական թվականների ծավալված և մինչև հաջորդ դարի առաջին տասնամյակները տևած ուղղագրական բանավեճի հետ:

Վեվ տառանունով ունեցե *վեվագրություն* տերմինը²³, որը գործածվում է ուղղագրական այն իրողությունն անվանելու համար, երբ *ու* և *ւ* գրերը փոխարինվում են *վ*-ով, օրինակ՝

¹⁹ Հր. Աճառյանն այս մեկնությունը ճիշտ է համարում և ներկայացնում իբրև *չա+կերտ* (տես *Արմատական բառարան*, Բ. 3, Երևան, 1977, էջ 622):

²⁰ Հմտ. *Լեզվաբանական բառարան*, էջ 248, Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990, էջ 131:

²¹ Տե՛ս *Լեզվաբանական բառարան*, էջ 297:

²² Տե՛ս *Ա. Ղարիբյան*, Ռուս-Հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 1366:

²³ Հանդիպում է նաև *վենագրություն* ձևով (ափամրդական ուղղագրությամբ՝ *վենագրություն*). հմտ. *Այս վերջին օրերս էլ գրում եք ընդդեմ Ստ. Մախատյանցի վենագրության* (ՂԱ, Բ. 3, էջ 487), հազվադեպ՝ *վագրություն*, օր.՝ *վագրության հեղինակին ուղղագրության մասնաժողովի մեջ մտքնելը մնամ է ամբարի մեջ պանիրը կատվի հսկողությանը հանձնել* (ՆԳ, էջ 322):

նակ՝ *Քառ - Քառ, ճուշտ - ճշգրիտ* և այլն: Կազմվել է *Ռյոնազորություն* բառին զուգահեռ: Բանավեճի տարիներին այս բառերը հաճախադեպ էին հատկապես պարբերական մամուլի բանավեճային հոդվածներում: Այսօր գրեթե մոռացվել են:

Վեպագրություն բառն այժմ մոլորիկ մասնագիտական գրականության մեջ հազվադեպ է: Հմմտ. *Ս.Մ.-ն էլ երբ փորձեց մեր վ հնչյունի ... ուղղագրությունը բժշկել իր «Վեպագրությամբ»* (ՄԱ, էջ 455): *Վեպագրությունը մերժելով մերժում են Միխայիլայանները* (ՍԳ, էջ 292):

Այդուհանդերձ կարծում եմք, որ սխալ է *վեպագրություն* և *ռյոնազորություն* բառերը դիպվածային համարել²⁴: Ամերկյա է, որ սրանք կազմվել են հասարակական պահանջի թելադրանքով, ըստ անհրաժեշտության գործածվել, գրանցվել բառարաններում և այսօր էլ շարունակում են որոշ չափով կիրառվել (արդեն միայն գիտական աշխատություններում): Աճուշտ, գործածության մասնական ջրհանում դրանք կարող էին դրպես դիպվածային կազմություններ ընկալվել, ինչպես լինում է այլ բառերի պարագայում:

Վեպագրության կողմնակիցներին կոչում են *վեպագիր(ներ)*: Հմմտ. *Վեպագիրները նշում են այդ տառի ի-ի -Դ.Գ.Վ. ձայնավորական հնչյունը (հարիր, ջուր), լուր մրա բաղաձայնական հնչյուն մասին* (ՍԳ, էջ 290): Բառն ստեղծվել է մասնակության օրենքով. ունենք կառուցվածքային և իմաստային ընդհանրություններ ունեցող *մատենագիր, սաղմոսագիր, արագագիր, գլխագիր* և մնան այլ բազմաթիվ բառեր, մյուս կողմից էլ կարելի է ասել, որ *վեպագրություն* բառի վերջածանցն է կրճատվել: *Վեպագիր*-ը բառարաններում չի վկայված:

Վեպագրություն-ից զատ բառարաններում գրանցված են նաև *վեպասիրություն* (օր.՝ *Ապօրինի է այդ աշատու վեպասիրությունը* – ՍԳ, էջ 361) և *վեպամոություն* բառերը, որոնք դիպվածային կազմություններ կարելի է համարել:

ԲԵ

Բ տառով (հայերենի այբուբենում այն 34-րդն է) առհասարակ մի քանի բառ ունենք, ինչպես՝ *բոպե, բարուն, բոտին, Բաֆֆի* և այլն (դրանք էլ, որպես կամոն, ծագումով հայկական չեն): *Բ*-ով կազմությունների մեջ սովորաբար չեն հիշում *բեական* լեզվաբանական տեղմիքը (*բեական* են կոչում պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքը՝ *բ* (*բե*) նշույթի միջոցով ձևավորվելու պատճառով, ինչպես՝ *հագցնել – հագցր-ի*), որը քանիցս գործածվել է հայերենագիտական աշխատություններում և հայոց լեզվի բուհական դասագրքերում: Հմմտ. *Այն բայահիմքերը, որոնք կազմվում են -աց, -եց վերջավորություններով, կոչվում են ցոյական. համապատասխանաբար –բ-ով կազմվող հիմքերն էլ կկոչենք բեական* (ԷԱ, էջ 335): *Պատճառական բայերի անցյալ կատարյալի մասնակությամբ բ-ով կամ բեական հիմք ունեն մաս հարցնել, լցնել բայերը* (ՆՊ, էջ 277): *Կատարյալի հիմքը բեական է* (ՄԱս., էջ 89): Չնայած ընդունված լինելուն՝ իբրև գլխաբառ որևէ բառարանում չի հանդիպում:

Ընդունված է ասել, որ այն ստեղծվել է *ցոյական* բառի մասնակությամբ:

²⁴ Հմմտ. Թ. Չարադյուրյան, Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի քառաստեղծման համակարգում / Լեզվի և ոճի հարցեր, պրակ 7, Երևան, 1983, էջ 209:

Ասկայն Բարկ է Եջել, որ մինչ այդ արդեն կազմված է եղել մեկ այլ Եջանակությամբ *րեական* տերմին: Հմմտ. *Հայաստանի այս երկու լեզուներից յուրաքանչյուրը ... պատկանում է առանձին սիստեմի, մեկը՝ քեականը՝ թեքականին, մյուսը՝ րեականը՝ կցականին*²⁵: Հայագետ Ն. Մառի կարծիքով գոյություն ունի երկու հայերեն՝ *քեական* և *րեական* (ըստ - ք և - եր հոգնակերտների), ըստ այդմ էլ *քեականը* գրաբարն է, *րեականը*՝ մոր գրականը: Հետաքրքրական է, որ հայկական տառանուցով տերմինային հասկացությունը մախ ոռուսերեն է դրսևորվել, ապա թարգմանվել հայերեն: Օր.²⁶ *Одс баскские разновидности сохранились у армян, на их рефском армянском языке или на армянском* (ՆՄ, էջ 145):

Երկու դեպքում էլ *րեական* Եջանակում է «*ր*-ով բնութագրվող՝ տարբերակվող՝ հատկանշվող»:

Ցո

Այբուբենի 35-րդ տառի անվանումով է կազմվել *ցոյական* ածանցավոր բառը, որը գործածվում է *ց* (*ցո*) Եջույթ ունեցող անցյալ կատարյալի հիմքը (կամ ցրա ձևերը) անվանելու համար, օրինակ՝ *գրեց-, կարդաց-, գրեց-ի, գրեց-իր*:

Տառանուն բաղադրիչ ունեցող բառերը մոր բաղադրությունների հիմք սովորաբար չեն դառնում: Օրինակ՝ ընդամենը 1-2 մախածանցավոր կազմություն կա, որոնցից մեկը *անցոյական* տերմինն է (գործածական է մաև *ոչ ցոյական* բաղադրությունը): Հմմտ. *Գրական լեզվի և գրաբարի անցյալ կատարյալն ունի ցոյական հիմք (խոսքը կանոնավոր բայերի մասին է): Գրաբարում միայն «ո» խոնարհման բայերը անցյալ կատարյալը կազմում են անցոյական հիմքով* (ԱՂ, էջ 149-150): Բառարանային գրանցում է ստացել մաև *ցոյականություն* վերջածանցավոր բառը²⁶:

Ցոյական հիմք²⁷ ունեցող բայերը կոչվում են *ցոյական* բայեր:

Ցոյական տերմինի ոռուսերեն համարժեքն է *подлежащие* կիսապատճենը, որը գործածվում է մասնավորապես գրաբարին վերաբերող ոռուսերեն լեզվաբանական աշխատություններում: Օր.²⁸ *Также основы, по названию букв -с^с (г) в армянском называются подлежащими* (ԳԶ, էջ 162). *Подлежащие основы являются образованиями, возникшими на армянской почве* (ԷԹ, էջ 339): Այդպես էլ՝ *անցոյական* - *неподлежащие*: Օր.²⁹ *Неподлежащие аористы без аутмента имеют три разновидности* (ԳԶ, էջ 187):

²⁵ Հմմտ. Ն. Յա. Մառ, Ըմտիր երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1949, էջ 197, էջ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 122:

²⁶ Տե՛ս Բ. Կ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախակիության բառարան, Երևան, 1982, էջ 729: Հայերենի մեծ բառարաններն այն չունեն:

²⁷ *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը* (հ. 4, Երևան, 1980, էջ 563) Գշում է, թե *ցոյական* բառը գործածվում է միայն *ցոյական հիմք* կապակցությամբ մեջ: Այժմից քննարարյին օրինակներն այլ բան են առում: Հմմտ. Ե խոնարհման պարզ բայերի հիմքը *բաղադրյալ-ցոյական* է (ԱԱ, էջ 132): Հ. Հուրշմանը Եջում է, որ *ցոյական անցյալ կատարյալի ց-ն չի կարելի բացատրել հնդեվրոպական s-ով: Ցոյական աորիստի առաջացման վերաբերյալ յուրովի տեսակետ է հաջողել Ա. Թոմսոնը: Հենց այս ձևերից էլ Մյուլլերը հավանական է համարում, որ առաջացել է ցոյական երկրորդ ապառնին* (ԹՂ, էջ 81, 82, 125): *Լեզվաբանական բառարանն* ունի մաև *ցոյական բայություն* (էջ 297):

Յո տառանդունով լեզվաբանական մյուս տերմինը՝ *ցոյասություն / ցոյախոսություն*, կազմվել է ռուսական հյուսիսային և որոշ հարավային խոսվածքներին բնորոշ արտասանության եղանակն անվանելու համար, երբ *ց* և *չ* հնչյունները չեն տարբերակվում, և *չ*-ն *ց* մոտայանում (հմտ. *չայասություն*): Հմտ. ռուս. покаме: Բառակազմական փնջի մեջ է արտատառվում (հմտ. *չայասություն*): Հմտ. ռուս. покаме: Բառակազմական փնջի մեջ են մտնում նաև *ցոյասել* բայը և *ցոյասում* բայանուն գոյականը:

Հյուն / վյուն

Մաշտոցյան այբուբենի 36-րդ տառի՝ *ւ*-ի անվանումով ունենք *հյունագրություն* բառը, որը նշանակում է *վ* արտասանվող *ու*-ն (*հյուն* կամ *վյուն*) տառով գրելը, օրինակ՝ *Աստուած, մէր, կատի* և այլն, գրության ձև, որ առաջարկել և կիրառել է գրող, մանկավարժ լեզվագետ Ղ. Աղայանը: Այս բառը *վեվագության* հետ համեմատած փոքր-ինչ ավելի զոդածական է, բայց կրկին համեմատել է հիմնականում հայերենագիտական աշխատություններում: Օր.՝ Թեմ 1909 թ. «Նոր դարոց»-ը ժամանակավորապես ընդունեց *հյունագրություն*ը, բայց ուսուցիչները զանգատվում էին, որ աշակերտները շփոթում են *ւ*-ն և *վ*-ն (ՍԳ, էջ 291):

Հյուն տառանդունով կազմված բառերի ծագումը ևս կապվում է հայերենի ուղղագրության պատմության մեջ հայտնի բանավեճի հետ: Այսպես, տառանվան և *-ական* վերջածանցի միջոցով է կազմվել *հյունական/վյունական* ածականը, որով բնորոշել են մորամուտ ուղղագրությունը: Օր.՝ Պարոն Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը, որ քսան տարի շարունակ հայածում էր *յունական* (ավանդական ուղղագրությամբ՝ *իւնական, իւնագրութիւն* - Ղ.Գ.) ուղղագրությունը, այս տարի այս ուղղագրությունով է հրապարակ հանել իր դասագրքերը (ՂԱ, հ. 3, էջ 483): Այդպես էլ *հյունագիր* բառը (հմտ. *վեվագիր*):

Հյունական, հյունագիր բառերը փոխանվանաբար գործածվում են հյունագրության կողմնակիցներին անվանելու համար: Հմտ. Այս բանը գիտակցելուց հետո *հյունականները* դադարեցին *ու*-ն երկհնչյուն համարել: Հյունագիրները նշում են *հյունը* այն դիրքում, որ նա բաղաձայնական հնչյուն ունի (ՍԳ, էջք 250, 290): Նշված բառերը, ի դեպ, բառարանային գրանցում չունեն:

Կա նաև *հյունական* բառի հակահնչյուն՝ *հակահյունական*: Հմտ. Նրա դասագրքերն ընդունում են ավելի հակադրականները (ՂԱ, հ. 3, էջ 484):

Բառարաններում հանդիպում է *հյունամոլ* դիպվածային բառը, որի միջոցով կոչել են հյունագրության ջերմեռանդ, մոլի պաշտպաններին: Սրանից էլ կազմվել է *հյունամոլություն*: Վերոհիշյալ *վեվասիրություն*, ինչպես և *հյունամոլություն* բառերը հուշում են, որ միանգամայն սպասելի է *հյունասիրություն*ը:

Հյունագրության ջատագով Ղ. Աղայանի տարբեր գրություններից գրանցել ենք հիշյալ տառանդունով մի շարք բառեր, որոնք գերազանցապես դիպվածային կազմություններ են և բառարաններում, բնականաբար, չեն հանդիպում: Այսպես, *ժողովում կարող է ճշմարտության ձայնը խելովել, մանավանդ հիմա, երբ մեր մեջ դեռևս մի տեսակ լիմափախություն կա*: Երբ որ սկսեց *վյունով* գրել, մի տեսակ *վյունացավ ստացավ*: Ոչ ոք չի հերքում, որ մեր բառագրության (և ոչ լեզվի) մեջ կա *լիմահնչյուն* ու: Հնում այդ տեսակ ուն իր վրա կրում էր *լիմաձև* մի նշան, որ ասվում էր թա: «Տարագ»-ի մեջ տեսնում եմ տպագրած իմ

ծաղրական պատկերը ձեռիս բռնած մի երկայնակոթ վրունագլուխ «Մուրճ» (ՂԱ, Բ. 3, էջ 360, 442, 445, 446)²⁸։ Դրանք կազմվել են հայերենի բառակազմական օրինաչափություններիով՝ համաբանության հիման վրա։ Հմտ, օրինակ, *վրունաձև* և օտար տառաճումներով ավելի ուշ կազմված և բառարաններում գրանցված *դելտայաձև*, *սիգմայաձև*, *էսաձև*։ Նաև՝ *վրունահնչյուն* / *հյունահնչյուն* «-ի հնչյուն ունեցող» և *օհնչյուն* «օ հնչող», *վահնչյուն* «վ հնչող»։ Իսկ *-ցալ* վերջնաբաղադրիչը կապակցելիական անսահմանափակ հնարավորություններ ունի, ընդ որում իմաստային տարբեր դրսևորումներով, ինչպես՝ *գլխացալ*, *հողացալ*, *ատամնացալ*, *խոսելացալ*, *գրելացալ*, *սրտացալ* և այլն։

Նկատելի է, որ *ւ* տառի համար ընդունված երկու անուններից բառակազմության մեջ առավելաբար հանդես է գալիս *հյուն*-ը։ Ավելի քիչ պատահում է *վրուն*-ը։ Օրինակ՝ *Առանձնապես մեծ վեճերի տեղիք էր տալիս ի-ի և վ-ի (վրունագրության և վեճագրության) օգտագործման շրջանակների հարցը* (ԳԶՀ, էջ 35)։

Բառարանները սովորաբար հիշատակում են *հյուն*-ով բաղադրված բառերը²⁹։

Անցյալում (հազվադեպ նաև մեր օրերում) գործածվել է բառի մեկ այլ տարբերակը՝ *ւագրություն*։ Հմտ. *Նոր սերունդը վարժվեցավ ռագրությանը* (ՄԱ, 333)։ *Ղ. Աղայանի դասագրքի շնորհիվ 90-ական թվականներից տարածվեց ռագրությունը* (ԱԳ, էջ 311)

Նկատելի է, որ *հյուն* և *վեճ* տառաճումների պարագայում բառակազմական գրեթե նույն իրողությունների հետ զործ ունենք, մի բան, որ լիովին հասկանալի է. ուղղագրական բանավեճը հենց սրանց հակադրության վրա էր հիմնված։

Քն

Մաշտոցյան այբուբենի վերջին տառի *ք* նվաճումն առաջինի՝ *այբ*-ի հակադրությանը փոխաբերաբար նշանակում է «վերջ», (ինչպես հունական *օմեգա*-ն, ուշ շրջանի հայկական *ֆե*-ն)։ հմտ. *այբ-ից սինչ և ք*։ Տառաճումը հիշյալ նշանակությանը հանդիպում է միայն բաղադրյալ հատուկ անունների կազմում, ինչպես՝ «*Այբ-Քն հրատարակություն*»։

Այս տառաճումը կա *քեական* բառի կազմում։ Ինչպես արդեն նշել ենք *քեական*-ի առիթով, Ն. Մառը տարբերակում էր *քեական* և *րեական* հայերեն, ընդ որում *քեական* էր համարում գրաբարը, որի ընդհանրական հոգնակերտը *-ք*-ն է (*ք* ն տառաճում+*ական* վերջածանց)։ Հմտ. Ն. Յա. *Մառը գտնում էր, որ գրաբարը և հայերենի բարբառները առաջացել են երկու միանգամայն տարբեր հիմքից, որոնցից առաջինը պայմանական կերպով անվանել է «հայկական» (կամ քեական), իսկ երկրորդը՝ «արմենական» (կամ րեական)* (ԱԳ, էջ 55)։ *Մառի կարծիքով պետք է տարբերակել երկու հայերեն՝ քեական և րեական (ըստ -ք և -ր հոգնակերտների արտահայտությունների)* (ՀՊ, էջ 455)։

Պատճենվել է ռուսերենից։ Հմտ. Слово уе-каун, исключительно древнелитературное, принадлежит языку байкскому или формально по образованию мн. числа кейскому. Как одия типичный пример укажем усноеие кейским языком окончаяя рейского языка в названиях ряда предметов из крестьянского быта (ՆՄ, էջ 159, 125)։

²⁸ Ուղղագրական խախտաբեկությունը՝ *իւնաձև* և *վրունացալ*, զրոյից է։

²⁹ *Էդ. Աղայանի* բառարանում (էջ 876, 1396) վկայված են թե՛ *հյունագրություն*, թե՛ *վեճագրություն* բառերը՝ առանց փոխադարձ հղումների կամ հիշատակումների։

«Քեական»-ը և «Եական»-ը խիստ վասնավոր բնույթ ունեցող հնացած տերմիններ են, բառարաններում գլխաբառ չեն դարձել:

Ք - ճառագայթ(ներ) «ոննտգեմյան ճառագայթ(ներ)» տերմինը (տառաճանոցը դրսևորվում է արտասանության մեջ՝ «Քե ճառագայթ(ներ)»³⁰) անգլերեն *x-ray(s)*-ի համարանություն կազմվել և գործածվում է արևմտաֆայերենում:

ՈՒ

Այս տառը գրաբարի այբուբենում չկար, այն հետագայում է ավելացվել՝ ռ-ի փոխարեն: ՈՒ տառաճանոց կազմվել է ու-ազդրությունը բաղադրությունը, որը կարծես լրացնում է համանման բառերի շարքը (Բմտ. Ի-ազդրություն, Է-ազդրություն): Օրինակներ՝ 1890-ական թվականներին մեր դպրոցներից ելնողներն ևս մեծ մասամբ թողել են դպրոցում սովորած ու-ազդրությունը (ՄԱ, 333): Այժմ (1913 թ.) ու-ազդրությունը պահում են միայն հին սերնդի մարդիկ (ՄԳ, էջ 311):

Բառը տեսնում ենք մաս առանց գծիկի, բայց, համեմայնդեալս, չակերտներով, որն այս պարագայում պայմանականությանն ցուցիչ է: Այսպես: 19-րդ դ. վերջին մեզանում բոլորք-ված վեճը վեճագրություն, թե՞ հյուճագրություն, կարծում ենք, պիտի հանգեցնել ոչ թե մեկի կամ մյուսի նախընտրությանը, այլ միայն ու-ի («ուազդրության») նախասպառնությունը (ՎՀ, էջ 46):

Հյուճական բառի համարանությանը կազմվել է ու-ական / ուական ածանցավոր բառը՝ հազվադեպ, հնացած: Սա ևս, ինչպես ու-ազդրություն / ուազդրություն-ը, բառարանային գրանցում չուճի: Հմտ. Մենք մեր դպրոցում ընդունել ենք ու-ական ուղղագրությունը (ՂԱ, Բ. 4, էջ 269): Էջմիածնից ուական ուղղագրության հրահանգ պիտի դուրս գա (ՂԱ, Բ. 3, էջ 483-484):

Բառը գործածվել է մաս փոխանվանաբար՝ նշանակելով «ու գրության կողմնակից»: Հմտ. ՈՒ վերջավորված բառերի ում փոխում են մույնիսկ թունդ ուականները (ՂԱ, Բ. 3, էջ 484): Համեմատելի է հակադիր հյուճական բառին:

Սրանցից ոչ մեկն էլ բառարանային գրանցում չուճի:

Օ

Միջին դարերում հայերենի Այբուբենն ներմուծված օ-ի անվանումն ու հնչույթը նույնական են, ուստի կարելի է ասել, որ բառի կազմում թե՛ մեկն է, թե՛ մյուսը:

Լեզվաբանական գրականության մեջ ընդունվել և բառարանային գրանցում է ստացել օյախոսություն տերմինը (տարբերակը՝ օյասություն³¹, Բմտ. Խուս. օкаже): Սրա միջոցով անվանում են ռուսական բարբառախմբերից մեկին բնորոշ արտասանական այն առանձ-

³⁰ Արևմտաֆայերենում տառաճանոցներով են կարգում մաս բաղաձայններից կազմված տառային հապավումները, օրինակ՝ ՀԹԳ - ՀոՀիԿա: Դրանցից մի ըամիսը մույնիսկ բառային արժեք են ձեռք բերել, ինչպես՝ կենկեն < ԿԿ, Հոմենըթեն < ՀՄԸԸ, Հոմենմեն < ՀՄԸԸ: Բայց դա տառաճանոցների բառակազմական արժեքի դրսևորումը չէ, այլ բառակազմական ուրիշ եղանակի՝ հապավման հետ կապվող երևույթ:

³¹ Ա. Ղարիբյանի բառարանում (էջ 644) վկայված են օյասություն և օյախոսություն ձևերը (Բմտ. Զասություն):

նախատվությունը, երբ անշեշտ վանկում, ի տարբերություն գրական ոտներեմի, օ են արտասանում, օրինակ՝ малоко, копова:

Անաժառանգ *օյախոս* անվանի միջոցով անվանում են ոտներեմի բարբառախմբերից մեկը, որից հատուկ է վերոհիշյալ արտասանությունը: Օր.՝ *Նոր ոտներեմի բարբառային տարբերակումները խստորեն չեն ընդգծված. առկա են, ըստ էության, երկու բարբառային զոտիներ՝ հյուսիս-վելիկոռուսական (օյախոս) և հարավ-վելիկոռուսական (այախոս)* (ՀՍՀ, հ. 10, էջ 90):

Հայերենում կազմվել են տարբերակային այս տերմինների թայերը ևս՝ *օյախոսել և օյասել* (հմմտ. *դատասել, ցոյասել, այասել*):

Ռուսական բարբառներից բնորոշ այս երևույթի համար գործածվում է նաև *օյահունչ բարբառ* բաղադրյալ տերմինը: Օր.՝ *Ռուսերենի բարբառները բաժանում են երկու խմբի՝ օյահունչ - օ հնչող (окаюущий) և այահունչ - а հնչող (акаюущий)* (ԱԳ, էջ 67): Առաջին բաղադրիչը նույնպես կաղապարային կազմություն է. հմմտ. *այահունչ, դատահունչ*:

Բառակազմական այս տարրով է կազմվել *օհնչյուն - օ հնչող*՝ դիպվածային բաղադրությունը: Օր.՝ *Բազրատումին ... ուզում է վերականգնել արդեն վաղուց գործածությունից դուրս ընկած օհնչյուն և տառակապակցությունը* (ԱԳ, էջ 203): Համեմատելի է *իւնահնչիւն և վահնչյուն - վ հնչող*՝ բառերի հետ:

Օ-ով կազմություններից համահունչ են *այախոսություն, այասություն, այահունչ* լեզվաբանական տերմինները: Սրանց միջոցով էլ անվանում են ոտնաց գրական լեզվին և հարավային խոսվածքներից բնորոշ արտասանությունը, երբ անշեշտ վանկում օ-ի փոխարեն ա կամ ա-ին մոտ հնչյուն է արտասանվում: Այնհայտ է, որ ունենք մնամակությանը կազմված երկանդամ հակադրություններ, այսպես՝ *օյահունչ-այահունչ, օյախոս-այախոս, օյախոսություն-այախոսություն, օյասել- այասել, օյասություն-այասություն*:

Այնհայտ է, որ սլավոնական լեզուների, մասնավորապես ոտներեմի և նրա խոսվածքների արտասանական իրողություններն անվանելու համար հայերենում բառակազմական կաղապար է ձևավորվել. հմմտ. ոռու. акање, окање, покање, чокање, джекање, якање, екање և հայ. *այասություն / այախոսություն, օյասություն / օյախոսություն, ցոյասություն / ցոյախոսություն, չայասություն, ձայասություն, իասություն, յասություն, յոասություն* տերմինները: Կաղապարային է *դատասություն* տերմինը, սակայն նրա օտար համարժեքները (ռուս. картавость, грассированность, նաև ротажем) շարքից դուրս են:

Նախքան վերոհիշյալ կաղապարի ձևավորվելը ոռու-հայերեն բառարանները նկարագրական եղանակի բացատրություններ էին տալիս, ինչպես՝ «*չ ասելը*», «*չ արտասանել*», «*ա-յով խոսել*», մշտն էին տառադրուկ կազմված թայի որոշյալի ձևը, ինչպես՝ «*այասելը*», «*ցոյասելը*» կամ էլ «*ոմ վերջածանցով թայանում գոյականը, ինչպես՝ ցոյասում*»:

Վերոհիշյալ բառարանները, ինչպես նաև Լեզվաբանական բառարանը (այն թարգմանական-բացատրական բնույթ ունի) մեծ դեր ունեցան ոտներեմի իրողություններն արտացոլող լեզվաբանական տերմինների ստեղծման գործում:

Ֆե

Հայերենի Արեփագրով ալֆաբետիկական եզրակացություններում ֆ տառով և միանգամայն բնական է, որ քե տառանվան (ինչպես և հունական *ομφαλ*-ի) «վերջ» իմաստը անցել է սրան: Միակ կազմությունը հետադարձաբանական լրատվական ծրագրի և շաբաթաթերթի «Այր-Ֆե» բաղադրյալ անվանումն է. այսինքն՝ «լրատվությունը սկզբից մինչև վերջ, ամբողջությամբ» (հմտ. «Այր-Քե» հրատարակչություն):

Այսպիսով, կարելի է հետևյալ եզրակացություններն անել:

Հայերենի քառակազմությանը մասնակցել են հետևյալ տառանունները՝ *այր, բեն, գիմ, դա, եչ, զա, է, թո, ժե, խե, ծա, կեն, ձա, դատ, մեն, նու, շա, ո, չա, պե, վեվ, րե, ցո, հյուն/վյուն, քե, ինչպես նաև ի, ու, օ, ֆե*:

Ամենահին կազմությունները *այբուբեն, այբբեն, այբբենք* բառերն են, ապա խազանություններ՝ *բենկորճ, էկորճ, ձակորճ*:

Տառանունները, 1-2 բացառությամբ, բաղադրությունների սկզբնաբաղադիրներն են:

Տառանուններով կազմված բառերի մեջ շատ են լեզվաբանական տերմինները: Դրանք արտահայտում են ուղղագրության, հնչյունախոսության (ուղղախոսության) և ձևաբանության տարբեր հասկացություններ, որոնք առնչվում են հայերենագիտությանը (*ցոյական, րեական, վեվագրություն, հյունագրություն*), զգալի չափով՝ ուսերենագիտությանը (*ձայասություն, օյահունչ, ցոյախոսություն*), մասամբ էլ ընդհանուր լեզվաբանական են (*դատասություն, դատասել*):

Առանձին խումբ են կազմում հայ միջնադարյան խազերի անունների հին և համեմատաբար ուշ ստեղծված անունները:

Այլ ոլորտների են առնչվում եզակի բաղադրություններ, որոնք հիմնականում բառակապակցության արժեք ունեն, ինչպես՝ *Ք- ճառագայթ, «Այր - Քե», «Այր - Ֆե*:

Կարելի է առանձնացնել բառակազմական հետևյալ կաղապարները՝

ա) «տառանուն+(և/ու)+տառանուն». *այբբեն, այբուբեն, այբբենգիմ, դա-եչ-զա, կենուն-ծա*,

բ) «տառանուն+կորճ». *բենկորճ, մենկորճ, ձակորճ, էկորճ, պենկորճ, շենկորճ*,

գ) «տառանուն+ական». *ցոյական, րեական, քեական, ուական, հյունական*,

դ) «տառանուն+ա+խոս». *ցոյախոս, օյախոս*,

ե) «տառանուն+ա+խոս+ություն». *ցոյախոսություն, օյախոսություն*,

զ) «տառանուն+գիր». *վեվագիր, հյունագիր*,

է) «տառանուն+ա+գ(ի)ր+ություն». *հյունագրություն, վեվագրություն, եչագրություն, ոչագրություն, է-ագրություն*,

ը) «տառանուն+ասել». *դատասել, ցոյասել, օյասել*,

թ) «տառանուն+աս+ություն». *դատասություն, ձայասություն, ցոյասություն, չայասություն, օյասություն*,

ժ) «տառանուն+սեր/մոլ». *նուասեր, հյունամոլ*,

ժա) «տառանուն+սեր/մոլ+ություն». *վեվասիրություն, ոյասիրություն*,

ժբ) «տառանուն+ա+հունչ». *դատահունչ, օյահունչ*:

Հնչյունախոսական հասկացությունները արտահայտելիս տառամուկները բաղադրվում են *-աւ - , -խոս - , -հունչ* արմատներից, ուղղագրական իրողությունների պարագայում - *դիր - սեր , -մու* բաղադրիչներից, խազերի անունների դեպքում՝ *կորճ* արմատին:

-Ական վերջածանցով բառերը հատկանշում են՝

ա) ձևաբանական իրողություններ (*ցոյական, հական, ինական, քնական*),

բ) ուղղագրական այս կամ այն կողմնորոշումը և դրան հետևող կամ հարող մարդկանց (*ուական, հյունական*):

Տառամուկներով որոշ բառեր հանդես են գալիս բառակազմական տարբերակներով. ինչպես՝ *այբերեն // այբուբեն // այբբեն, էկորճ // էկորճայ, հյունագրություն // վյունագրություն // ւ-ագրություն, ցոյասություն// ցոյախոսություն*:

Հայկական տառամուկներով բառերն ինչպես ինքնուրույն կազմություններ են (*քեն-կորճ, ծակորճ, չակերտ, հյունագրություն, դատահունչ, ուական*), այնպես էլ պատճենում-ներ կամ միանակությամբ ստեղծվածներ (*այբուբեն, Ք-ճառագայթ, չայասություն, օյա-խոս*):

Հայկական տառամուկներով կան մի շարք դիպվածային կազմություններ (*դատա-ման, նուասեր, հյունացավ, ոյասիրություն, ուական*):

Տառանուն բաղադրիչով բառերից մի քանիսն են ընդհանուր հայերենյան (*այբուբեն, քենկորճ, էկորճ, ծակորճ, մենկորճ, չակերտ, ցոյական*), մեկ-երկուսը բնորոշ են արևմտա-հայերենին (*այբենգիմ, Ք-ճառագայթ*), մնացածը գործածական է արևելահայերենում: Բարբառային կազմությունները հատուկենտ են / *այիբբիմ, թո-ժն, դա-քեն-թո, դա-եչ-զա, կենունճա*:

Եզակի դեպքերում հայկական տառամուկը հանդես է գալիս օտար լեզվի բառային միավորների կազմում (*уодѣнѣ - ցոյական, кейскѣн - քնական, реѣскѣн - թնական*): Իսկ խազանունները սովորաբար չեն թարգմանվում (*бевкороп, меткороп* և այլն): Երկու խմբերի բառերն էլ ընկալվում են իբրև հայկաբանություններ:

Տառանուններով բառերը հիմնականում մեմինաստ են, միայն հատուկենտ բառեր են բազմիմաստություն դրսևորում (*այբուբեն, էկորճ, ծակորճ, թնական, հյունական*):

Գործածության մեծ հաճախականություն ունեն *այբուբեն* և *չակերտ* բառերը. մնացած կազմությունները մեծ մասամբ հազվադեպ են, երբեմն միայն եզակի վկայություններ կան կամ էլ ուղղակի արձանագրված են բառարաններում:

ՆՄՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ - Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Երևան, 1976:

ԱԲ - Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Բ տպագրութիւն, Վենետիկ, 1865:

ԱԲագ. - Հ. Արսեն Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

ԱԳ - Ա. Վ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957:

ԱՂ - Ար. Ղարիբյան, Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941:

ԷԱ - Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի Ռոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:

- ԳՐ - Գարեգին Բ Կաթողիկոս, Հոդ. մարդ և գիր, Ամթիլիաս, 1991:
- ԳՋ - Գ. Ե. Джаужян. Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982:
- ԳՋՀԼ - Գ. Բ. Զահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Ջոսյան, Հայոց լեզու, Ա պրակ, Երևան, 1980:
- ԵԲԲ - Կ. Ե. Մելիք-Վրթանեսյան, Մ. Ա. Տոնյան, Երաժշտական բացատրական բառարան, Երևան, 1989:
- ԷԹ - Զ. Դ. Туманян. Древнеармянский язык, Москва, 1971:
- ԹՂ - Թ. Ղարազյուրյան. Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Երևան, 1961:
- ՀԱԲ - Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1973:
- ՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944:
- ՀԸ - Հովհ. Ծիրազ, Երկեր, հ. 2, Երևան, 1982:
- ՀՊ - Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
- ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, հ. 10, Երևան, 1984:
- ՂԱ - Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ.հ. 3,4, Երևան, 1963:
- ՂԱԵ - Ղ. Աղայան, Երկեր, Երևան, 1979:
- ՄԱ - Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, Երևան, 1985:
- ՄԱս - Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Երևան, 1977:
- ՄՄ - Մ. Մինասեան, Գրաբարի գործնական դասընթաց, Ամթիլիաս, 1976:
- ՄՆ - Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1983:
- ՆՀԲ - Գ. Աւետիքեան, Խ. Սիրումէեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ.հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
- ՆՄ - Н. Я. Марр. Избранные работы, т. 2, Москва-Ленинград, 1936:
- ՆՊ - Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնապյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
- ՊՍ - Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1969:
- ՌԱ - Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959:
- ՌԱԲ - Р. Атаян. Армянская средневековая нотация / Музыка народов Азии и Африки, вып. 2, Москва, 1973:
- ՌԱԶ - Ռ. Աթայան, Ձեռնարկ հայկական ձայնագրության, Երևան, 1950:
- ՌԻ - Ռ. Իշխանեան, Դասական ուղղագրության կանոններ, Երևան, 1991:
- ՍԳ - Ս. Վ. Գյուլբուդաղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973:
- ՍԳԼ - Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
- ՍՆ - Սայաթ-Նովա, Խաղեր, Երևան, 1987:
- ՎԹ - Վ. Թեքեան, Նամականի, Լոս Անջելես, 1983:
- ՎՀ - Վ. Համբարձումյան, Հայոց լեզվի դասական ուղղագրության հիմունքները, Երևան, 1993:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈԱՅԱՆ*Պարմուկան գիտությունների թեկնածու***ՀԱԶԱՐԱՄՅԱ ԿԵԶԱՌԻՍԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Հայ Առաքելական եկեղեցու Կոտայքի թեմի Մաղկաձորում գտնվող առաջնորդա-
 փոխ Կեչառիսի վանքը միջնադարյան Հայաստանի ամենաճշմարտեղ եկեղեցական, Ռո-
 գերոն և մշակութային կենտրոններից էր: Վանքի Ռեզնանյան և գլխավոր Սուրբ Գրիգոր եկե-
 ղեցին կառուցել է Բագրատունյաց պետության մեծ իշխան Գրիգոր Ապիրատը 1003
 թվականին: Այդ 11-րդ դարի արշալույսին էր, երբ 1001 թ.՝ Քրիստոսի ծննդյան 1000-ամ-
 յակին, Աճի մայրաքաղաքում Գագիկ Ա թագավորը կառուցեց զվարթնոցատիպ Ա. Գրի-
 գոր եկեղեցին (Գագկաշեն), Կատրամիղե թագուհին ավարտին հասցրեց Սմբատ Բ-ի հիմ-
 նադրած Մայր Տաճարը: Նույն շրջանում մեծ իշխան Գրիգոր Ապիրատը հիմնեց Կեչառի-
 սի Ա. Գրիգոր եկեղեցին, սպարապետ Վահրամ Պաթլավունին՝ Մարմաշենի վանքը, և
 այլն:

1050-ական թվականներին Կեչառիսի վանքի հովանավոր է դարձել Գրիգոր Մագիստ-
 րոս Պաթլավունին: 13-րդ դարում վանքը հովանավորել են Վաչուտյան, ապա Պողոսյան
 եկեղեցաշինարար իշխանները:

Ա. Գրիգոր եկեղեցու արևմտյան մասում 12-րդ դարում կառուցվել է մեծ գավիթ: Գլխա-
 վոր եկեղեցուց հարավ գտնվում է Ս. Նշան փոքր եկեղեցին (11-րդ դար), իսկ նրա հա-
 ռեանությունը՝ Կաթողիկե եկեղեցին է, որը 1203-1214 թթ. կառուցել է իշխան Վասակ
 խաղբակյանը: Հիմնական վանական համալիրից դեպի արևմուտք գտնվում է Ս. Հարութ-
 յուն փոքրիկ եկեղեցին (13-րդ դար):

Վանքի տարածքում և շրջակայքում կան գեղակերտ խաչքարեր: Դրանցից մեկը
 կանգնեցվել է Վեցիկ ճարտարապետի հիշատակին: Եղել են նաև մի քանի մատուռներ՝
 Ս. Սիոնը, ուր թաղած է եղել Պողոս իշխանը, Ս. Հովսիսիմեն և այլն, որոնք հիշատակվում
 են գրավոր աղբյուրներում, բայց այժմ ավերվել են:

Կեչառիսը եղել է ուսումնական, մշակութային, գրչության կենտրոն, ունեցել Ռոչակա-
 վոր վանահայրեր, ինչպես, օրինակ՝ Պետրոսը (12-րդ դար), Գրիգոր վարդապետ Մանո-
 ճիկը, Ներսես վարդապետը՝ 13-րդ դարի սկզբներին, իսկ նույն դարի վերջերին այստեղ
 ստեղծագործել է հայ միջնադարյան շնորհալի գիտնական և բանաստեղծ խաչատուր
 վարդապետ Կեչառեցին: Մատենադարանում և այլ ձեռագրական հավաքածուներում
 պահվում են Կեչառիսում ընդօրինակված մեկ տասնյակից ավելի մատյաններ:

Կեչառիսի Սուրբ Գրիգոր եկեղեցու քարձրադիր զմբեթը քանդվել էր 1828 թ. երկրա-
 ջարժից, բայց վերջին տարիներին այն հիմնավորապես նորոգվեց ավստրիական Վլադի-
 միր Հարությունյանի քարեգործությամբ՝ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպիսկոպոս
 Քարաբյանի վերահսկողությամբ: Եկեղեցու համդիսավոր օժումը կատարվեց 2000 թ.
 հուլիսին՝ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզիմ երկրորդի:

³ Գ. Սարգսյան, Գրիգոր Ասիրյան Հասանյան, Հիմնադիր Կաշախոխ վաճառի Վիճագրական մոդ վկայություն, «Հիմ Հայաստանի մշակույթ», Ժողովման 12, Երևան, 2002, էջ 111:

Գազիկ Սարգսյանը նույնպես գտնում է, որ Կեչառիսում գործ ունեցող գրչական սխալի հետ. «գրիչը ՆԹԲ-ի փոխարեն, սխալմամբ փորագրել է ՆԶԲ»⁴:

Սակայն այս մասին եղել են նաև այլ կարծիքներ: Մասնավորապես Ն. Ադոցը Գ. Հովսեփյանի աշխատության գրախոսության մեջ Կեչառիսի երկու արձանագրությունն էլ (1003 կամ 1033 և 1051 թ.) համարում է ուշ շրջանի՝ 13-րդ դարի գրություններ՝ միաժամանակ կարծելով, որ Հասանի որդին միայն Ապիրատ անուհով պիտի հիշատակվեր (ինչպես պատմիչների մոտ է) և ոչ՝ Գրիգոր⁵:

Ա. Մանուչարյանը սխալ է համարում «ոչ միայն 1033, այլև 1003 թվականները», Գրիգոր Ապիրատին նույնացնում է Գրիգոր Մազիստրոս Պառլավունու հետ և եկեղեցու կառուցումը վերագրում 1051 թվականին⁶:

Կեչառիսի հիմնադրության վերաբերյալ հայտնի է նաև Սիմեոն Երևանցու «Ջամբուռում» տեղ գտած հետևյալ վկայությունը՝ «Ակզբնապես հիմնվել է 444 (995) թվին Ապիրատ իշխանի կողմից»⁷: Երևանցին թվական ճշելու համար որևէ աղբյուր պիտի ունեցած լիներ, որը, ցավոք, առայժմ հայտնի չէ: Կարելի է ենթադրել, որ 995-ը եկեղեցու հիմնարկների թվականն է:

ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՄՊԻՐԱՏԻ ՄԱՍԻՆ

Ինչպես տեսանք, եկեղեցաշինարար իշխանի անունը Կեչառիսի և Արզականի արձանագրություններում Գրիգոր է (այդպես է հիշվում նաև նրա դստեր արձանագրության մեջ): Նույն կերպ է վարվել նաև նրա թոռնորդին՝ Ներսես Շնորհալին, որը «Վիպասանություն» անուհով հայտնի («Սակա Հայկազանց սեռի և Արշակունեացն զարմի») երկում իր հոր՝ Ծովքի իշխան Ապիրատի անունը տալուց հետո, վերջինիս պապին հիշատակելով՝ հենց Գրիգոր Ապիրատին է ճշում:

«Ջնախնական անուն առեալ

Որ Ապիրատն էր յորջորջեալ,

Թոռս մեծին Գրիգորի լեալ,

Որ Մազիստրոս մականուանեալ»⁸:

Գրիգոր Մազիստրոս էր կոչվում նաև Ապիրատ իշխանի մորական պապը (Գրիգոր Մազիստրոս Պառլավունին), սակայն Շնորհալին գրում է իր հոր տոհմական ծագման մասին, որը, որպես կանոն, արական գծով էր ճշվում, ուստի չպետք է կասկածել, որ այստեղ ճշված իշխան Ապիրատի պապ անվանված «Մազիստրոս մականուանեալ» մեծն Գրիգորը, հենց Գրիգոր Ապիրատն է: Ինչպես ստորև կտեսնենք, Մատթեոս Ռոհայեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին նրան կոչում են «Հայոց մեծ իշխան», և քնական է, որ Շնորհալին իր հորը համարում է «թոռս մեծին Գրիգորի»:

⁴ Գ. Սարգսյան, ճշվ. աշխ., էջ 112:

⁵ Գ. Հովսեփյան, ճշվ. աշխ., էջ 464:

⁶ Ա. Մանուչարյան, «Զննություն Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977,

էջ 170-171:

⁷ Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբու, Երևան, 2003, էջ 395:

⁸ Հայ դասական քնարերգություն, հ. Ա., Երևան, 1986, էջ 239:

Հետաքրքիրական է, որ հայ պատմիչները Գրիգոր Ապիրատին հիշատակում են միայն Ապիրատ անունով։ Այս մասին ունենք 13-րդ դարի պատմիչ Վարդան Արևելցու տեղեկությունը (որը մահացել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անցոյ պատմության այժմ կուլությունը) (որը մահացել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անցոյ պատմության այժմ կուլությունը) (որը մահացել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անցոյ պատմության այժմ կուլությունը) (որը մահացել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անցոյ պատմության այժմ կուլությունը) (որը մահացել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անցոյ պատմության այժմ կուլությունը) (որը մահացել է 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անցոյ պատմության այժմ կուլությունը)

(13-րդ դ.) հաղորդումները և ամանուն հեղինակի ծածկանկարների մեջ տեղ գտած մի վկայություն։ Դրանք, իրար լրացնելով, ներկայացնում են Հռոմեական գործի կյանքի պատմությունը:

[illegible]

Վարդան Արևելեցին Գրիգոր Ապիրատի մասին հիշատակություն է թողել հենց այս դեպքերի ամօշությամբ: Ստորև բերվող հատվածը Արևելեցին շարադրել է Մխիթար Ամենայնի երկից օգտվելով: Նա գրում է. «պատվական երեք Մխիթար Ամենին... այսպես է ասում»⁹ և սելջուկների պատմությանը վերաբերող մի ընդարձակ մեջբերում կատարում Ամենցունց: Հատվածն ավարտելուց հետո գրում է. «Նույն մարդը (այսինքն Մխիթար Ամենին, Կ. Մ.) պատմում է նաև Հովհաննես թագավորի մասին...»¹⁰: Ակնհերև է, որ Արևելեցին օգտվել է Մխիթար Ամենցունց:

Այժմ ծանոթանա՞նք քուն պատմությանը: «Նույն մարդը պատմում է նաև Հովհաննես թագավորի մասին, թե նրա եղբայր Աշոտը Թալինի ստորոտում մահամեծք հիվանդ ձևա-
նալով, թագավորին կանչում է իր մոտ, զխալվերևի կողմում որոգայթ փորելով և դրա մի-
ջոցով բռնելով նրան, տալիս է Ապիրատ կոչվող մեծ իշխանի ձեռքը, որպեսզի սպանի:
Իսկ Ապիրատը հոժար կամքով նրան տաճում-դնում է իր աթոռին Անիում ասելով. «Ին-
չո՞ւ ձեռք բարձրացնե՞մ Տիրոջ օծյալի վրա ու նրա տեղը մի խելագարի նշանակեմ»:

Նրա (Ապիրատի) մասին ասում են, որ խելացի ու առատամեղ լինելու շնորհիվ ոչ մշտնապետորեն ղեկավարվելով և մինչև անգամ տեղ դարձավ տասներկու հազար հեծյալի։ Նա շինեց Կեչառիսի սուրբ վանքը, ինչպես որ վահրամ իշխանը՝ Մարմաշենը։¹¹

Թշնամացած արքայազուն եղբայրների միջև հայտնված մեծ իշխան Ապիրատի ազնիվ արարքը, սակայն, թանկ է մտուում նրա վրա: Վերջինիս կալվածքները հավանաբար գտնվում էին Աշոտի տիրույթներում (մասնավորապես Կոտայքում), ուր նա այլևս չէր կարող վերադառնալ, սակայն չէր կարող նաև Անիում հաստատվել, քանի որ դրանից քիչ առաջ Աշոտի հետ միասին դաժան պարտության էր մատնել անցյալների զորքին¹²:

⁹ Վարդան Արևելյանի Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը՝ Գ. Ա. Թոստմյանի, Երևան, 2001, էջ 135:

¹⁰ Նույն տեղում, էջ 139:

¹¹ Նույն տեղում, էջ 139-40, գրաբարձ՝ 102-103, Կ. Մարտոսյան, Վարդան Արևելցիի Ազնի պատմության մասին, «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 93:

¹² Ընտրվելով Ուսումնական, Ժամանակագրություն (աշխարհայա թարգմ. և ծանոթագր. Հ. Բարթիկյանի), Երևան, 1991, էջ 15:

Մատթեոս Ուոհայեցիմ ասես շարունակում է այս պատմությունը և ներկայացնում, թե ինչ եղավ հետո:

«Այդ օրերին Հայոց մեծ իշխան Ապիրատը՝ Հասանի որդին, ամցյալում Աշոտի կողմն ամցած լինելու համար երկյուղելով Հովհաննես թագավորից, ապստամբելով փախչում է նրանից և տասներկու հազար ձիավորներով գնում է Դվին քաղաքը՝ պարսից Ապուստար գորավարի մոտ, որը բազում օրեր մեծարում է նրան: Սակայն Ապուստարի մոտ եմ գալիս չարախոս մարդիկ և ասում, թե «այսպիսի քաջ և հզոր մի մարդ, որ մեծ զորքով քեզ մոտ է եկել, քեզ էլ, տաճկաց ողջ երկիրն էլ կկործանի»: Դրա վրա ամիրան, սրտում ոխ կապելով, մյուս գորակազմներից գաղտնի Ապիրատին բարեկամական զորույցի է հրավիրում ու ծածուկ սպանում այդ քաջ, հզոր և բովանդակ Հայաստանում հռչակված մարդուն:

Իսկ Սարի անունով մի իշխան, որ Ապիրատ մեծ իշխանի գորավարն էր, վերցնելով նրա կնոջն ու որդիներին և հեծյալ զորքը, գնում է Անի քաղաք: Հովհաննես թագավորն անչափ սգում է Հայոց Ապիրատ իշխանի անարդար մահը, իսկ նրա Ապլահապ, վասակ որդիներին, Սարիին և բոլոր գորակազմներին, Հայոց թագավորը զավառներ ու պաշտոններ է տալիս»¹³:

Ուոհայեցիմ և Արևելցիմ դեպքերի թվականը չեն նշում: Բայց հայտնի է, որ Հովհաննես Սմբատի և Աշոտի բախումներն ավարտվել են 1021 թ.: «Թագաւորը վերջինք Բագրատունիք» բնագրի վերջում ավելացված անանուն հեղինակի փոքր ժամանակագրության մեջ (սխալմամբ վերագրվել է Ստեփանոս Օրբելյանցի) արձանագրված է Ապիրատի մահվան թվականը. «Եւ Հ (1021) Թուրքն եհար զԱպիրատն»¹⁴:

Ուոհայեցիմ Ապիրատի անունը տալիս է ևս երկու անգամ, երբ հիշատակում է նրա թոռներին՝ Բարսեղ Ա Անցի Կաթողիկոսին և նրա եղբայր, պատերազմում զոհված և Կեչառիսում թաղված Գրիգոր իշխանին¹⁵:

Գրիգոր Ապիրատ իշխանի մասին նշում է նաև Մխիթար Այրիվանեցի, որը հավանաբար օգտվել է Մխիթար Անցեուց, բայց նաև մի լրացուցիչ տվյալ է հայտնում. «Ապիրատ իշխան 12 000 հեծելի (տէր), սա շինեաց զԿեչառուս և եհամ զառում Երեւանայ»¹⁶: Ինչպես տեսնում ենք, Այրիվանեցիմ ավելացնում է Ապիրատի շինարարական հայտնի ձեռնարկների թիվը՝ նշելով նրա կողմից Երևանի ջրանցքի շինարարությունը: Այս վկայությունը միաժամանակ նպաստում է Ապիրատի հիմնական տիրույթների տեղորոշմանը Կոտայք գավառում, քանի որ այստեղ են և՛ Կեչառիսը, և՛ Երևանը:

Այսպիսով, նշված բոլոր մատենագրական աղբյուրներն Ապիրատ անունով են կոչում Հասանի որդի իշխանին, որը կառուցել է Կեչառիսի վանքը, և որը նույն Կեչառիսում իրեն անվանում է Հասանի որդի Գրիգոր Մազիստրոս (նա Գրիգոր Մազիստրոս է անվանվում նաև երկու այլ վիճագրերում): Կասկածից վեր է, որ խոսքը նույն մարդու մասին է: Հայագետները խնդրի լուծման տրամաբանական միջոց են առաջարկել իշխանին վերա-

¹³ Աշխարհարար հրատարակության այս հատվածում Ապիրատի որդիներից մեկն է համարվում «Սարեմ», միջնդեռ գրաքարից երևում է, որ խոսքը Սարի գորավարի մասին է, որին՝ «և Սարե և ամենայն զորացն» թագավորը համապատասխան քաժիմ է տալիս (Ուոհայեցի, 1991, էջ 16-17):

¹⁴ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Բ. 2, Երևան, 1956, էջ 502:

¹⁵ Ուոհայեցի, 1991, էջ 227, 289:

¹⁶ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58:

գրելով: «Գրիգոր Ապիրատ երկամունը: «Պառլամենտների մեջ Գրիգոր-Ապիրատ երկամունը սովորական էր», գրում է Գարեգին Հովսեփյանը¹⁷: «Գրիգոր և Ապիրատ մեկ անձնատրուծեան կրած երկամուններն են», ավելացնում է Ն. Ակիմյանը¹⁸:

Սակայն, մեր կարծիքով, Գրիգոր Ապիրատն իր կենդանության օրոք երկամուն չուներ: Նա իրեն կոչում է «Հասամի որդի Գրիգոր Մագիստրոս» (1003 թ.), Գորգ քահանան նրան անվանում է «Գրիգոր Հայոց Մագիստրոս» (1001 թ.) իշխանի դուստրը, որը Վեստ Սարգսի անվանում է «Գրիգոր Մագիստրոս» (1042 թ.)¹⁹, իսկ թոռնորդին՝ Ներսես Շնորհալին՝ «Մագիստրոս մականունեալ... մեծն Գրիգոր»²⁰: Նրա անունը «Ապիրատ» ձևով հիշատակող առաջին պատմիչները՝ Մատթեոս Ուտիայեցին և Մխիթար Անեցին, իրենց պատմությունը գրել են իշխանի մահից համապատասխանաբար շուրջ 110 և 170 տարի անց: Այդ ժամանակամիջոցում Ապիրատ անունը, որը, մեր կարծիքով, ժամանակին Հասամի որդի Գրիգոր Մագիստրոսի համար հավանաբար մականուն է եղել, արդեն բավական տարածված էր նրա իսկ սերունդների շնորհիվ, և պատմիչները նախընտրել են հենց այդ անունը օգտագործել:

Վիճաբանական և մատենագրական տվյալների «հաշտեցման» համար այսօր նպատակահարմար է իշխանին Գրիգոր Ապիրատ կոչել:

Ինչ վերաբերում է Անիի թագավորության մեջ նրա զբաղեցրած պաշտոնին, ապա, պատմիչների համաձայն, նա կրել է «Հայոց մեծ իշխան» կոչումը:

ԱՊԻՐԱՏՅԱՆ ԻՇԽԱՆԱՏՈՒՄԻ ԾԱԳՈՒՄԸ

Բագրատունյաց ժամանակաշրջանի իշխանական տների պատմությունը դեռևս ամբողջովին չի ուսումնասիրվել: Առավել հայտնին Պառլամենտներն են: Նույն շրջանի մեկ այլ իշխանական տան՝ Ապիրատյանների վերաբերյալ մինչև այժմ կատարված միակ ուսումնասիրությունը պատկանում է Ն. Ակիմյանի գրչին և հրատարակվել է 1956 թ. Վիեննայում, Ներսես Լամբրոնացուն մվիրված մենագրության Գ մասում, որը վերնագրված է «Ազգաբնութիւն Պառլաւունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց և Հեթումեանց»²¹: Վերնագրում Հասանյաններ կոչելով, տեքստում և տոհմաձառում Ն. Ակիմյանը նրանց անվանում է Ապիրատյաններ, որը, կարծում ենք, ավելի նպատակահարմար է՝ նկատի ունենալով մեծ իշխան Գրիգոր Ապիրատի առանձնահատուկ դերը տոհմի հաստատման գործում:

Չմայած ճշված ուսումնասիրության առկայությանը, հետագա շրջանի աշխատություններում Ապիրատյանները, որպես առանձին իշխանատոհմ, գրեթե անտեսվել են: Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ այս տոհմը հիշատակվում է միայն մեկ անգամ. «Աշոտ Գ-ից սկսած հայ թագավորները սկսեցին ազատների (մանր ազնվականության) միջավայրից առաջ քաշել նոր իշխանական տներ: Անցնան դիրք ունեցող որոշ իշխանական տներ, օրինակ, Պառլամենտներն (Աքոտլամբենք) ու մասամբ Ա-

¹⁷ Գ. Հովսեփյան, ԵԶՎ. աշխ., էջ 160:

¹⁸ Ն. Ակիմյան, ԵԶՎ. աշխ., էջ 374:

¹⁹ Ղ. Ալիշան, Ծիրակ, Վենետիկ, 1881, էջ 134:

²⁰ Հայ դասական քնարերգություն, էջ 239:

²¹ Ն. Ակիմյան, ԵԶՎ. աշխ., էջ 327-457:

պիրատույանցները, շուտով բարձր դիրքի տիրացան²²: Հետագա շարադրանքում, սակայն, ոչինչ չկա Ապիրատույանցների գրաված դիրքի մասին, չի հիշատակվում անգամ տոհմապետ մեծ իշխան Գրիգոր Ապիրատի անունը: Իշխանատոհմն անտեսված է մնալ այլ հրատարակություններում, սակայն այստեղ չպետք է դիտարկությունում տեսնել, պարզապես Ապիրատույանցները, որ Պահլավունիների հետ խմամիական կապ են ունեցել, շատ դեպքերում մուլանգվում են մրանց հետ:

Ապիրատույանցները կարևոր դեր են կատարել միջնադարյան Հայաստանի ոչ միայն քաղաքական, այլև եկեղեցական պատմության մեջ՝ տալով կաթողիկոսներ ու եպիսկոպոսներ:

Ապիրատույան տոհմի հիմնադրման մասին ասվում է. «Ջսմանէ ասեմ յանճաանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն միմչև լիներ տէր երկրտասան հազար հեծելոց, որ և շինեաց զսուրբ ուխտն Կեչառու...»²³:

Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության և Կեչառուի արձանագրության մեջ հիշատակվում է մեծ իշխան Գրիգոր Ապիրատի հոր անունը՝ Հասան²⁴, սակայն մրա մասին ուրիշ ոչինչ հայտնի չէ: Ինչպես երևում է վերը բերված վկայությունից, հենց ոչ մշանավորներից՝ «յանճաանից մեծացեալ» Ապիրատին է պատկանում իշխանատոհմի հռչակման դափնին, ուստի տոհմանունը էլ պետք է մրան վերապահել:

Առանձին քննության կարիք ունի «Ապիրատ» անձնանվան ծագումը: Այն դժվար է բացատրել հայերեն մուլանմաստ բառով, որն ակնհայտորեն բացասական իմաստ ունի, և բնականաբար մասնագետների տարակուսանքն է հարուցել: Հ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարանում» գրում է. «ԱՊԻՐԱՏ, արդյոք հայերեն ապիրատ «անարդար» բա՞նն է. և ինչպե՞ս կարող էր այսպիսի մի հոռի ածական մարդու անուն դառնալ: Այս անունը գործածական էր մեր մեջ ԺԱ-ԺԳ դարերում»²⁵: Նշենք, որ առաջին Ապիրատից հետո ունենք մուլան տոհմից սերող այդ անունով իշխաններ, որոնց թվում մնա Գրիգոր Գ Պահլավունի և Ներսես Օճորհալի Կաթողիկոսների հայրը:

Անվան բացատրության մասին Ն. Ակիմյանը հետևյալ ծանոթագրությունն է տալիս. «Անուն կարելի չէ ստուգաբանել հայերեն ապիրատ բառով: Թերևս աղաաղուած ձևն ըլլայ ապիպատ պատուանունին, արտասանուած նախ ապիրպատ, ապա ապիրատ, որուն նպաստած կարող է ըլլալ ապիրատ բառը: Բայց թէ Ապիրատ ընդունա՞ծ էր Բիւզանդիոնի արքունիքէն «ապիպատ» տիտղոսը, չէ վկայուած»²⁶:

Հարկ է մշել, որ հայ իրականության մեջ հիշատակված առաջին Ապիրատը հենց Գրիգոր Ապիրատն է, ուստի անվան (մեր համոզմամբ՝ սկզբնապես մականվան) ծագումը պետք է փնտրել հենց մրա կենսագրության մեջ:

Ուշագրավ է, որ 1001 թվականին մա արդեն ուներ բյուզանդական մագիստրոս պատվաստիճանը, որը մշանակալից իրողություն էր: Մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիների՝ տրվող ամենաբարձր պատվաստիճանն էր, որը ենթադրում

²² Հայ ժողովրդի պատմություն. էջ 267:

²³ Արևելյան, մշվ. աշխ., էջ 103:

²⁴ Ուռհայեցի, մշվ. աշխ., էջ 16, 226, Ն. Ակիմյան, մշվ. աշխ., էջ 374:

²⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ռ. Ա. Երևան, 1942, էջ 193:

²⁶ Ն. Ակիմյան, մշվ. աշխ., էջ 373:

էր նաև ամենամյա շոշափելի դրամական վարձատրություն²⁷: Պատահական չէ, որ Արգականում Գորգ քահանան իր արձանագրության սկզբում նշում է. «...ի ԹԱԼԱԿԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԱՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻ, ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՈՍԻ...»²⁸:

Ն. Ակիմյանը ենթադրել է, որ Գրիգոր Ապիրատը մագիստրոսի կոչումն ստացել է 1001 թ., երբ բյուզանդական Բարսեղ (Վասիլ) Բ կայսրը Հայաստան է եկել²⁹: Սա միանգամայն թավաճական է, քանի որ Դավիթ Կյուրապատի մահից հետո (1000 թ.) նրա տիրույթները ժառանգած կայսրը երբ եկավ Հայաստանի արևմտյան շրջաններ, շրջակայ-քի մեծ ու փոքր իշխանավորները շտապեցին նրա մոտ և զանազան տիտղոսներ ու պատիվներ ստացան: Այս մասին տեղեկություններ է հայտնում Ստեփանոս Տարոնեցի Աստիկոկը՝ անվանապես նշելով առավել կարևորներին: Ըստ պատմիչի, կայսեր մոտ է գալիս Նփրկերտի ամիրան և առանում «զմածիստոտութեան պատիւն», նույնը ստանում է Վրաց Գուրգեն թագավորը, բայց դժգոհ է մնում «անարգանս իր համարեալ զմածիստոտութեան պատիւն»: Գագիկ Ա-ն կայսեր մոտ չի գնում «իբրև փոքրութիւն համարեալ զգնալ իւր առ ճա», բայց նաև արգելք չի հանդիսանում, որ իր հպատակները գնան, ինչպես, օրինակ՝ իր քրոջ որդի Աթուռաբլը³⁰: Օտտ հավանական է, որ հենց այս ժամանակ է մագիստրոսության պատիվ ստացել նաև քաղմամարդ հեծելազոր ունեցող Գրիգոր Ապիրատը: Բայց որպեսզի նա մագիստրոսության պատվին արժանանար, պետք է մինչ այդ արդեն աստիճանակարգային որոշակի դիրք ունենար, մանավանդ եթե նշանավոր ազնվականական ծագում չուներ:

Ահա այստեղ է, որ առաջ է գալիս նրա ապիպատ կամ ապուհպատ տիտղոս ունենալու ենթադրությունը, որոնցից կարող էր առաջանալ Ապիրատ մականունը: Ի տարբերություն հայոց մեջ բավական տարածված Գրիգոր անվան, Ապիպատ-Ապիրատ մականունն ավելի անհատական էր, հետևաբար՝ հիշվող: Նկատենք նաև, որ 1045-1058 թվականներին Հայաստանի նշանակալից մասի իշխանությունը վարում էր ողջ երկրով հռչակված մեկ այլ Գրիգոր Մագիստրոս, Վասակի որդի Պահլավունի իշխանը, և Գրիգոր Ապիրատի անունը մոռացության բաժին կամ շփոթության առարկա կարող էր դառնալ (ինչպես և է այսօր), եթե չունենար Ապիրատ «տարբերակը»:

ԱՊԻՐԱՏԱՆԵՐ ԵՎ ՊԵՂԱՎՈՐՆԵՐ

Ինչո՞ւ են Ապիրատյանները երբեմն նույնացվել Պահլավունիների հետ: Բանն այն է, որ Գրիգոր Ապիրատի սպանությունից հետո երբ նրա երկու որդիները Անի եկան և շերտ ընդունելություն գտան Հովհաննես Սմբատ թագավորի մոտ, սերտորեն կապվեցին Պահլավունիների հետ: Գրիգոր Ապիրատի որդիներ Ապլջահապն ու Վասակն ամուսնացան Գրիգոր Մագիստրոս Պահլավունու երկու դուստրերի հետ (ցավոք նրանց անունները չեն պահպանվել): Փաստորեն տոհմի ճյուղավորումն սկսվեց Ապիրատյան իշխանագույնե-

²⁷ Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երևան, 2002, էջ 669:

²⁸ Գ. Սարգսյան, Ոչվ. աշխ., էջ 111:

²⁹ Ն. Ակիմյան, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, «Ակոս», 9, 1945, էջ 12-13:

³⁰ Ստեփանոս Տարոնեցի Աստիկոկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 276-278:

րից և Պառլամենտի իշխանադատությունից կազմված հենց այդ երկու ընտանիքներից: Նշեցնելով նրանց ժառանգությունից մի քանիսին միայն:

Վասակը մնաց Ամիրում, իսկ Ապրիլիանը՝ անցնելով՝ Գրիգոր Մագիստրոս Պառլամենտում հետ մեկտեղ Միջագետք ու հաստատվեց Մովսես քերդում³¹: Նա ունեցավ չորս որդի՝ Ապիրատ, Գրիգորիս, Վահրամ, Վասակ: Գրիգորիսը հոգևորական դարձավ և իր քեռու՝ Հայոց Կաթողիկոս Գրիգոր Վկայասերի (Գրիգոր Մագիստրոս Պառլամենտում որդու) կողմից կարգվեց Եգիպտոսի հոգևոր առաջնորդ: Մովսեսը մնացած Ապիրատի չորս որդիներից երկուսը՝ Գրիգորիսը և Ներսեսը, հաջորդաբար դարձան Հայոց Կաթողիկոս (Գրիգոր Գ Պառլամենտի՝ 1113-1166, Ներսես Գ Օնորատի՝ 1166-1173): Սրանց Վասիլի եղբորորդին էր Գրիգոր Դ Տղա (1173-1193) Կաթողիկոսը, իսկ Զորավար եղբոր որդին էր Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203) Կաթողիկոսը:

Ամիրում մնացած Վասակի ընտանիքն առաջնակարգ դեր ձեռք բերեց Օնոգադյանների տիրապետության շրջանում: Նրա չորս որդիներից մշահավոր իշխան Գրիգորը փրկեց Մամուչե ամիրայի կյանքը և պատերազմում զոհվեց, որից հետո նրա դին մեծ հանդեսով հողին հաճձմվեց Կեչառիսում: Վասակի մյուս որդին էր Բարսեղ Ա Ամեցի Կաթողիկոսը (1105-1113), որին 1072 թ. Ամիրի եպիսկոպոս ձեռնադրեց իր մորեղբայր Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը³²: Վասակի թոռ և Գրիգորի որդի Հասանի զավակներից մեկը Գրիգոր Ապիրատ իշխանն էր, մյուսը՝ Ամիրի մշահավոր Բարսեղ Բ եպիսկոպոսը³³:

Այս համառոտ թվարկումն իսկ վկայում է, թե ինչպիսի գործիչներ է տվել Պառլամենտի հետ խնամիացած Ապիրատյան տոհմը: Հատկանշական է, որ Ապիրատյանները պահպանել են իրենց տոհմին հատուկ անունները (Հասան, Գրիգոր, Ապիրատ, Ապրիլիան, Վասակ), բայց հատկապես կաթողիկոսության աստիճանի հասած հոգևորականները չեն մոռացել շեշտել իրենց սերունդը Գրիգոր Լուսավորչի տոհմից՝ Գևորգի ունենալով իրենց Վասակ և Ապրիլիան պապերի խնամակալ կապը Պառլամենտի հետ:

Այժմ տեսնենք, թե այս երկու տոհմերն ինչպես են առնչվում Կեչառիսում:

Նշենք, որ այն միայն եկեղեցի չէր, այլ վանք, և պատահական չէ, որ պատմիչները Գրիգոր Ապիրատին կոչում են Կեչառիսի սուրբ ուխտի հիմնադիր: Վարդան Արևելցին գրում է. «Նա շինեց Կեչառիսի սուրբ վանքը, ինչպես որ Վահրամ իշխանը՝ Մարմաշենը», որից հետո բնագրի հիմ օրինակում մշված է՝ «որպեսզի միայն անցավոր բաների մեջ ճոխ չլինեն, այլ մաս՝ անմահների ընակավայրում, ուր հանգչում են իրենց գարմի հետ միասին՝ դամբարանում՝ ակնկալելով վերին կյանքը»³⁴: Հայտնի է, որ գորավար Վահրամ Պառլամենտի (Գրիգոր Մագիստրոս Պառլամենտում հորեղբայրը) 1046 թ. պատերազմում մահատակվելուց հետո թաղվել է Մարմաշենում: Հավանական է, որ Կեչառիսն էլ դարձել է Ապիրատյանների տոհմական հանգստարանը: Ինչպես վերը մշվեց, այստեղ է թաղվել Գրիգոր Ապիրատի թոռը՝ պատերազմում զոհված Գրիգոր իշխանը:

Սակայն Կեչառիսի վանքի պատմությանն անմիջականորեն առնչվում է մաս Գրիգոր Մագիստրոս Պառլամենտում անունը: Գրիգոր Ապիրատի մահից հետո Գրիգոր Պառլամենտում

31 Ն. Ակիմեան, Ներսես Լամբրոնացի, էջ 379-380:

32 Մ. Ուոհայեցի, մշվ. աշխ., էջ 226:

33 Ն. Ակիմեան, Ներսես Լամբրոնացի, էջ 378-400, Կ. Մաթևոսյան, Ամիր, Ս. Էջմիածին, 1997, էջ 48-70:

34 Կ. Մաթևոսյան, Վարդան Արևելցին Ամիրի պատմության մասին, էջ 93:

նիստ իր հովանավորության տակ առավ նրա որդիներին, իսկ 1045 թ. Բագրատունյաց պետության անկումից հետո բյուզանդական կայսրից ստացավ մագիստրոսության պատիվ. «Գրիգոր որդի քաջին վասակայ... զմաց առաջի թագաւորին և... տայ զբանային Բջնոյ զթագաւորն և զամենայն զիր զհայրեցի ժառանգութիւնն և... առնու զպատիւ մագիստրոսութեան և տեղիս քնակութեան ի սահման Միջագետաց...», գրում է պատմիչը³⁵։ Գրիգորը նշանակվեց Տարոնի ու Միջագետքի կուսակալ։

Այդ շրջանում կայսրությունը ընդգծված պայքար էր սկսել Հայոց եկեղեցու դեմ։ Պաթողիկոսական Աթոռը հետագվել էր Անիից, դավաճաքանական հողի վրա հայերի նկատմամբ սկսվել էին բազմաբնույթ հալածանքներ³⁶։ Նման պայմաններում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին փորձեց արքունիքում ունեցած իր կապերն օգտագործելով արտոնություններ ստանալ առանձին վանքերի համար։ Այդ քախտին արժանացան երկու վանք՝ Մարմաշենն ու Կեչառիսը։

Մարմաշենի կայսերական արտոնությունը շնորհելու մասին է վկայում Պահլավունի իշխանի մամակը՝ հասցեագրված Մարմաշենի Սոսթենես վանահորը³⁷։ Ավելի ընդարձակ են Կեչառիսի մասին պահպանված տեղեկությունները։

ԳՐԻԳՈՐ ՄԵԳԻՍՏՐՈՍ ՊԵՏԼԱՎՈՒՆՈՒ ՄԵՉԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՉԱՌԻՍՈՒՄ

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ամուսինք մի մեծ արձանագրություն է գրված Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու հարավային պատին։ Սակայն պահպանվել է մեկ այս արձանագրության հետ առնչություն ունեցող, ժամանակին իտալերեն թարգմանված և Հռոմի դիվաններից մեկում պահված մի փաստաթուղթ, որ հրատարակել է Սեն Մարտենը, և որից քաղելով՝ այն գրաբարի է վերածել Ալիշանը։ Գրությունը հետևյալն է.

«Ի Օ (1051) թուականին, ի ժամանակս Կոստանդնու Մոնոմախի թագաւորի Հայոց (Յունաց), դուքսս Վասպուրականի, գաւառիս Ծաղկնոց եւ Գրիգոր Մագիստրոս որդի Վասակայ, հորվարտակաւ և հրամանաւ վերոյաւագեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղտջս որ կոչի Կեչառոս, ի մախատացեալ գաւառիս Ծաղկնոց, հանդերձ մատրանք. և նուիրեցի գաւառարս և զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ. և զարդարեցի զսա սպասուք արծաթեղիմօք և ոսկեղիմօք, գրովք և այլովք պիտոյիք, որպէս վայել էր տաճարիս։ Դարձեալ ետու եկեղեցոյս զեօղս երկուս և այգի մի։

(Եւ) մեք շնորհին Աստուծոյ եպիսկոպոսունքս Բջնոյ՝ Վանական և Համաւար, սահմանեցաք և հաստատեցաք ի թեմ և կալուած վերոյցրեալ եկեղեցոյս՝ զեօղս քսան և հինգ և քաղաք մի, որք են Բուժան, Շուկաթն, և այլն...»

Եւ հաստատեցաք զվճիռս մերով ձեռնագրովս և կնքովս։ Արդ, եթէ ոք յետ մեր կամ յեկեղեցականաց կամ յաշխարհականաց իշխեսցէ հակառակ կալ վճռոյս մերոյ, մգովս առ-

³⁵ Արիստակիսի Լատիվերոյոյ Պատմութիւն (աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի), Երևան, 1963, էջ 62;

³⁶ Կ. Մաթևոսյան, ԱՅԻ, էջ 36-47, 193;

³⁷ Գրիգոր Մագիստրոսի թղթերը (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանյանի), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 103-104, 304:

ց է Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ և ՅԺԸ հայրապետացն Նիկիոյ ժողովոյն, և մասն և բաժին ճորա ընդ Յուդայի մատնչի և ընդ խաչհանուացն Բրիստոսի եղիցի, իսկ որ հաստատուն պահէ՝ օրհնեալ եղիցի ի Տեառնէ Աստուծոյ»³⁸:

Ինչպէս տեսնում ենք, փաստաթուղթը թվակիր է՝ 1051 թ., նրա առաջին մասը գրված է Գրիգոր Մագիստրոս Պաթլավունու, երկրորդ մասը՝ Բջնիի եպիսկոպոսներ Վանականի և Համավարի (*) ամուսին, որոնք ճշում են Կեչառիսի նորպես թեմ հատկացված 25 գյուղի և մեկ քաղաքի մասին: Ցավոք բնակավայրերի անուններն աղավաղված են, և ուսումնասիրողները միայն Բուժանը Բուժականի հետ մույնացնելու հնարավորությունն են ունեցել:

Փաստաթղթում Գրիգոր Մագիստրոս Պաթլավունին ճշում է իր կառուցած եկեղեցու մասին՝ «հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղոջս որ կոչի Կեչառոս», որն ուսումնասիրողները մույնացնում են Ա. Գրիգոր եկեղեցու հարևանությամբ կառուցված Ա. Նշան եկեղեցու հետ³⁹:

Մեր կարծիքով, փաստաթղթում որոշ չափով մեծացվել է Գրիգոր Մագիստրոս Պաթլավունու դերը Կեչառիսում՝ նպատակ ունենալով բյուզանդական արքունիքին ցույց տալ, որ վանքը պատկանում է Պաթլավունիներին (նրանց հիմնածն է, ինչպես Մարտիաշենը):

Այժմ ծանոթանա՞նք Կեչառիսի վեցտողյա մեծ արձանագրությանը, որի բովանդակության մեջ առկա հակասությունները հայագիտությունը դեռևս չի պարզել:

«1. Ի հիմնդհարիրերորդի ամի թուականութեանս Թորգոմեան, ի թագաւորութեանս (ուր)ք և ինքնակալ թագաւորին Կոստանդէա Մարտինիսին, բերաւ ոսկի մատանիս զոր հզարին և առաքինոյն բարե

2. պաշտին Գրիգորո Մագիստրոսին, կիտանտին և դուկին Վասպուրականի և Տարաւնո, Արշակունոյն և Հայկազն(ոյ)ն մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ և զհրդակաւոր եկեղէ

3. ցիքս իւր և ոչ այլ ինչ հայցէ, բայց միայն աղաթս առնել ս(ուր)ք և ինքնակալ թագաւորին Կոստանդէայ ընդ միին և ծառաին Բ(րիստոս)ի Գրիգորոյ և որդոց իւրոց և յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կ

4. ևչառուաց ցուր Մագիստրոսն Կենդանի է ամեանայն շաբաթ աւր զժամն Հասանա արասցեն անխափան և յետ ելիցն Մագիստրոսին արասցեն անխափան, արդ (որ) ոք այսմ վճռի հաստատոն խափանել ջանա թ

5. ե յառաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանայից այնպիսի Յ և ԺԸ հայրապետացն ճգովեալ եղիցի և բաժինն ընդ Յուդայի եղիցի և ընդ տիրասպան քահանայիցն և այս գիր մեր է Յովանիսի շնորհուն Աստուծոյ Աջ

6. նո էպիսկոպոսիս և ս(ուր)ք և մեծի հարս Բարսղիս, էթե ոք այս գրոյս խափանել ջանա այնպիսին ճգովս չ(ար)աչարս ընկալցի ի սրբո Լուսաւորչէն Գրիգորո և յամենայն սրբոց և ի մեջ, կատարիչք գրոյս արհմեալ եղ...»⁴⁰:

Արձանագրությունն ունեցել է մի քանի հրատարակություն, բայց ամենամաքողջականը Գ. Հովսեփյանի մոտ է: Արձանագրության թվականը Հ. Ծախաթունյանը, Ղ. Ալիշանը, Կ. Կոստանյանը և սկզբում նաև Գ. Հովսեփյանը կադդացել են «Ի հիմնդհարիրերորդի

³⁸ Ղ. Ալիշան, Այդարատ, էջ 260, Գ. Հովսեփյան, ճշվ. աշխ., էջ 158:

³⁹ Գ. Սարգսյան, ճշվ. աշխ., էջ 112:

⁴⁰ Գ. Հովսեփյան, ճշվ. աշխ., էջ 312:

ամի», այսինքն $500+551=1051$, որը նաև Հռոմի դիվանական փաստաթղթի թվականն է: Սակայն Գ. Հովսեփյանը նկատելով, որ վերոհիշյալ փաստաթղթում նշվում են Բջնիի վանական և Համավար եպիսկոպոսները, իսկ արձանագրության մեջ նույն Բջնիի Հովհաննես եպիսկոպոսը փորձել է խնդիրը լուծել արձանագրության թվականը «ի հինգհարիս երրորդի ամի» կարդալով, որով ստացվում է $500+3+551=1054$ ⁴¹: Քայքայ անգամ թվականի երրորդի ամի» կարդալով, ոչ այնքան համոզիչ վերընթերցմամբ արձանագրության մեջ առկա այս, մեր կարծիքով, ոչ այնքան համար պարզ չէ միայն, թե ի՞նչ Հասան է, որից հակասությունները չեն վերանում: «Մեզ համար պարզ չէ միայն, թե ի՞նչ Հասան է, որից հակասությունները չեն վերանում: Մեր արձանագրության մեջ կամենում է, որ յիշեն, քանի ինքը կենդանի է», գրում է Գ. Հովսեփյանը⁴²:

Այս հարցն էլ յուրովի փորձել է լուծել Ն. Ակիմյանը՝ կարծելով, որ արձանագրության առաջին մասը Պաթարկունի Մազիստրոսին է, իսկ երկրորդը («քնն միմ» բառերից սկսած)՝ բոլորգիտ՝ Գրիգոր Ապիրատինը, այդ պատճառով էլ հիշվում է վերջինիս հայր Հասանը: Նա նաև նկատում է, որ Գրիգոր Մազիստրոս Պաթարկունու ՄԸ և ԿԷ թղթերից դատելով «1051, կամ ասկե քիչ յառաջ կամ ետքը Բջնոյ եպիսկոպոս էր եփրեմ... Ուստի Յովհ. եպիսկոպոս և Բարսեղ մեծ հայր կը պատկանին 1003 շրջանին, երբ կառուցուեցաւ եկեղեցին»⁴³:

Գրիգոր Մազիստրոս Պաթարկունու սան Եփրեմի 1050-ական թվականներին Բջնիի եպիսկոպոս լինելու մասին դիտարկումը կարեւոր է, սակայն Հովհաննեսը չէր կարող 1003-ին Բջնիի եպիսկոպոս լինել, քանի որ այդ եպիսկոպոսությունը հաստատվել է Պետրոս Գետադարձ կաթողիկոսի և Հովհաննես Սմբատ թագավորի հրամանով 1031 թ.: Անդրեյունելի է նաև Ակիմյանի կարծիքը Կեչառիսի մեծ արձանագրության երկու տարբեր մասերից կազմված լինելու մասին, քանի որ արձանագրությունը մեկ ամբողջություն է և միատեսակ գրչություն ունի:

Գ. Հովսեփյանը նշում է արձանագրության բարբառային և հնագրական որոշ առանձնահատկությունները, որոնցից մի քանիսը կապվում են ուշ շրջանի՝ 13-րդ դարի հետ⁴⁴:

Կարծում ենք, ուշադրության է արժանի նաև Մոնոմախի անվան «Մանուկախ» գրությունը:

Արձանագրությունն ունի ևս մի հետաքրքրական մամրամասն, որին ցայժմ ուշադրություն չեն դարձրել: 3-րդ տողից հետո տողասկզբում փոքրիկ խաչաքանդակ կա (քառակուսի փորվածքի մեջ հավասարաթև խաչ), որի պատճառով 4-րդ և 5-րդ տողերը մի փոքր խորքից են սկսվում: Դժվար թե խաչը քանդակված լինելու նախապես (արձանագրության փորագրությունից առաջ), որպես ձևավորման տարր, քանի որ եկեղեցու այլ մասերում նման զարդաքանդակներ չկան, և բացի այդ խաչն այնքան փոքր է, որ չէր կարող դիտվել որպես առանձին զարդ: Հետևաբար մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ այն քանդակվել է արձանագրության գրության ժամանակ: Խաչաքանդակը, փաստորեն, երկու մասի է բաժանում վեց տողյա արձանագրությունը:

⁴¹ Նշվ. աշխ., էջ 161, 312:

⁴² Նշվ. աշխ., էջ 161:

⁴³ Ն. Ակիմյան, Ներսես Լամբրոնացի, էջ 377:

⁴⁴ Գ. Հովսեփյան, Ոջվ. աշխ., էջ 312-313:

Նկատենք, որ սովորաբար երբ արձանագրությունների մեջ մասն մշաններ (Ռիմնակա-
նում խաչեր) են դրվում, ապա դա արվում է արձանագրության սկզբում: Հենց այդպես է
արված նույն պատի ստորին մասում մուտքի բարավորի վրա Գրիգոր Ապիրատի արձա-
նագրության մեջ: Մինչդեռ մեր քննած «մագիստրոսյան» արձանագրության մեջ խաչա-
քանդակը տեղադրված է 3-րդ տողից հետո, մեր կարծիքով բովանդակային կապ ունենա-
լով հաջորդող տողերում արտահայտված մտքի հետ: Իսկ Ռիշյալ հատվածը պարունա-
կում է եպիսկոպոսական որոշումն ու ամենքի բանաձևը: «Բառակուսու մեջ առնված խա-
չաքանդակն այստեղ, մեր կարծիքով, արձանագրված խոսքերը հաստատող «կնքող» մշա-
նակություն ունի:

Այժմ փորձենք համեմատական վերլուծության միջոցով պարզել դիվանական փաս-
տաթղթի և Կեչառիսի արձանագրության մասնություններն ու տարբերությունները:

Նախ տեսնենք, թե ինչ ընդհանրություններ կան:

Ա. Երկու վկայագիրն էլ կառուցվածքով մասն են, ունեն առաջին մաս՝ գրված Գրիգոր
Մագիստրոս Պահլավունու, և երկրորդ մաս՝ գրված «շնորհին Աստուծոյ Բջնոյ եպիսկո-
պոս» անվանված հոգևորականների կողմից:

Բ. Երկուսի առաջին մասում էլ մշվում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու նախա-
ձեռնությամբ Կեչառիսի՝ բյուզանդական Մոնոմախ կայսրից ստացած առանձնաշնորհ-
ման մասին. «բերառ ոսկի մատանին»,– ասվում է արձանագրության մեջ, լորով՝ «մեծաւ աշ-
խատութեամբ ազատեալ էր զմեծ և զհոչակաւոր եկեղեցիքս»), իսկ փաստաթղթում
մշվում է՝ «Իրովարտակաւ և հրամանաւ... թագաւորիս»: Սա համեմատելի է Մագիստրոսի՝
Մարմաշենի Սոսթենես վանահորը գրած մամակի հետ, ուր նախ մշվում է «կարմրակերտ
մելանաւն զիծ թագաւորակաւն... զոր առաքեալ... Կոստանդիանոս արքայ Մաւնաւմախն...
յոյժ զօրաւոր բանս՝ համդերձ կնքովն ոսկեղինաւ», ապա ասվում է, որ վանահայրը զա և
տանի ոսկե մատանին՝ «եկեսցես դու և տարցիս զոսկի մատանին»⁴⁵ (կայսեր իրովարտա-
կը՝ ոսկե կնիքով):

Գ. Երկուսն էլ նույն թվագրումն ունեն:

Դ. Երկու գրությունները եզրափակող անենքի բանաձևերն ունեն նույն բաղադրիչները,
որը թեև Ռիմնականում ընդունված կադապարով է, բայց մաս ինքնատիպ է հատկապես
Ա. Գրիգորի նշանի մշման առումով:

Այսպիսով՝ երկու վկայագրերի միջև առկա կապն ակնհայտ է, և բնական է ենթադրել, որ
նախ եղել է գրությունը, որը ստորագրությամբ ու կնիքով հաստատել են Բջնի եպիսկո-
պոսները («հաստատեցաք զվճիոս մերով ձեռնագրովս և կնքովս»), ապա՝ արձանագրու-
թյունը:

Այժմ տեսնենք, թե որոնք են երկու վկայագրերի Ռիմնական տարբերությունները:

⁴⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 104:

Դիվանական փաստաթուղթ

Արձանագրություն

1. Նշվում է Գրիգոր Պափյավուցու տիտղոսը և Ռոր անունը. «դուքսս վասպուրականի, զասառիս Մաղկնուց ես Գրիգոր Մագիստրոս որդի վասակայ»:

Պափյավուցու տիտղոսաշարն ավելի մեծ է, քայք չկա նրա Ռոր անունը. «Գրիգորո Մագիստրոսին, կիտանտին և դուկին վասպուրականի և Տարանո. Արշակունյոյն և Հայկազնոյն»։ Հետագա շարադրանքում Ռիշվում է Հասանը, արձանագրային մի ձևակերպան մեջ, ուր սովորաբար Ռիշատակվում է արձանագրողի Ռայրանունը:

2. Մագիստրոսը ճշում է եկեղեցու և մատուցների կառուցման և դրանց տրված առատ նվիրատվությունների մասին. «Հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղոջս որ կոչի կեչառուս... Բանդերձ մատրանք, և նուիրեցի զտաճարս և զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, և զարդարեցի զսա սպասութ... Դարձեալ ետու եկեղեցոյս զեօղս երկուս և այգի մի»:

Որևէ շինարարության կամ նվիրատվության մասին չկա ոչ մի վկայություն կամ ակնարկ, քայք կեչառիսի եկեղեցիները Ռամարվում են Մագիստրոսինը՝ «մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ և զհոչակաւոր եկեղեցիքս իւր»:

3. Մագիստրոսը պահանջում է աղոթել կայսեր, նաև իր ու զավակների համար, միաժամանակ՝ ամեն շաբաթ օր պատարագել, քանի դեռ ինքը ողջ է՝ Հասանի համար, իսկ մահից հետո՝ իր համար:

Բջնիի եպիսկոպոս Հովհաննեսը և Ռայր Բարսեղը հաստատում են Մագիստրոսի՝ իր Ռիշատակը պահպանելու և ամենշաբաթյա պատարագի մասին պահանջը՝ «այս գիր մեր է Յովանիսի շնորհիւն Աստուծոյ Բջնո եպիսկոպոսիս և սուրբ և մեծի Ռարս Բարսղիս, էրեռ ոք այս գրոյս խափանել ջանա...» (հետևում է ամենքի բանաձևը): Ոչինչ չի ասվում կեչառիսի թեմի, գյուղերի ու կալվածքների մասին:

4. Բջնիի եպիսկոպոսներ վանականն ու Համավարը եկեղեցուն (վանքին) հատկացրել են թեմ և կալվածք՝ 25 գյուղ և մի քաղաք, «...սահմանեցաք և հաստատեցաք ի թեմ և կալուած վերոյգրեալ եկեղեցոյս՝ զեօղս քսան և Ռինգ և քաղաք մի, որք են Բուժան, Եոկաթն...»:

Ինչպես տեսնում ենք, երկու վկայագրերն ունեն էական նմանություններ և քավական մեծ տարբերություններ: Ուսումնասիրողներին դեռևս չի հաջողվել վերջնականապես պարզել իրականությունը, քանի որ փաստերն իրոք քավականցին խճողված են:

Մեր ենթադրությունը հետևյալն է: Հնարավոր է, որ արձանագրությունը գրվել է ավելի ուշ (այս մասին են խոսում Գ. Հովսեփյանի հնագրական դիտողությունները, ինչպես նաև

Ն. Ադոնցի որոշ դիտարկումները⁴⁶: Այն գրողները՝ Բջմիի եպիսկոպոս Հովհաննեսը և հայր Բարսեղը, ձեռքի տակ ունեցել են վերը նշված փաստաթղթի պատճենը կամ տարբերակը և հիմնականում օգտվել նրանից, բայց բաց են թողել այն կետերը, որոնց արձանագրության ստեղծման ժամանակ արդեն անհրաժեշտ էին: Մասնավորապես, անհնար էր, որ նրանք փաստաթղթում նշված ցուցանիշները դնեին Կեչառիսից պատկանեին, դրանք չնշվեին: Արձանագրության գրության ժամանակ անուշադրության կամ մոռացության է մատնված եղել Գրիգոր Մագիստրոս Պափյավուցու տոհմաբանությունը, և տեքստը կազմողները Կեչառիսի մեկ այլ, բայց, փաստորեն, նույն պատի վրա գտնվող (1003 թ.) արձանագրության մեջ առկա Գրիգոր Մագիստրոսի (Գրիգոր Ապիրատի) հայրանունը՝ Հասան, նույնությամբ փոխադրել են 1051 թվականը կրող արձանագրության մեջ: Արձանագրության հեղինակներն անբարեխիղճ են եղել անգամ կայսեր անունը նշելիս («Մանուսխ»)։ որը նույնպես խոսում է գրության ուշ շրջանի պատկանելու մասին: Մեր կարծիքով, արձանագրողների հիմնական նպատակը Կեչառիսի՝ կայսերական առանձնաշնորհում ունեցած վանք լինելը ցույց տալն է եղել:

Հովհաննես անուցով Բջմիի եպիսկոպոս հիշատակվում է 1298-99 թթ., որը Ստեփանոս Օրբելյանի՝ Կաթողիկոս Գրիգոր է Անավարզեցուն հասցեագրված թուղթը ստորագրողներից մեկն է եղել⁴⁷: 1298 թ. մի հիշատակարանում նա բնութագրվում է որպես «այր... երկայնամիտ և զուարթ դիմաւ»⁴⁸:

Ինչպես, Կեչառիսի մագիստրոսյան մեծ արձանագրությունը դնես կարոտում է իր վերջնական բացահայտմանը:

Ամփոփենք: Մեր հիմնական նպատակը Կեչառիսը կառուցողի անձի խնդրի հստակեցումն էր, վանքի հիմնադիր Գրիգոր Ապիրատի և նրա տոհմի սկզբնավորման մասին պահպանված տեղեկությունների ամբողջացումը, ինչպես նաև Կեչառիսում Գրիգոր Մագիստրոս Պափյավուցու խաղացած դերի պարզաբանումը: Ելնելով սկզբնաղբյուրների տվյալներից, կարող ենք եզրակացնել, որ Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին 1003 թ. կառուցել է Հայոց մեծ իշխան Գրիգոր Ապիրատը (1001-ից՝ մագիստրոս): Սիմեոն Երևանցու հաղորդած 995 թվականը կարելի է համարել եկեղեցու շինարարության սկզբի՝ հիմնարկների թվականը:

Գրիգոր Ապիրատը մահացել է 1021 թ., որից հետո նրա երկու որդիները դարձել են Գրիգոր Պափյավուցու (1045-ից՝ մագիստրոս) փեսաները, որի շնորհիվ Ապիրատյան տոհմի շտապիղները բարձր դիրք են զբաղել՝ աշխարհիկ և հոգևոր մի շարք նշանավոր գործիչներ տալով:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայ եկեղեցու նկատմամբ բյուզանդացիների սկսած հալածանքների շրջանում Գրիգոր Մագիստրոս Պափյավուցին արքունիքում ունեցած դիրքն օգտագործելով կարողացել է արտոնություններ ձեռք բերել իր տոհմին պատկանող Մարմաշենի, ինչպես և Կեչառիսի վանքի համար, որի վերաբերյալ պահպանվել է 1051 թվակիր դիվանական փաստաթուղթ և համապատասխան փմագիր արձանագրություն:

⁴⁶ Գ. Հովսեփյան, Ողջ. աշխ., էջ. 312, 464:

⁴⁷ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ.՝ Ա. Արքայանյանի, Երևան, 1986, էջ 362:

⁴⁸ Ժ. Գ. Պարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Ա. Մաթևոսյան), Երևան, 1984, էջ 824:

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

1848-1849 ԹԹ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ԵՎՐՈՊԱ» ՇԱՐՔԱԹԱԹԵՐԹՈՒՄ

Արևմտահայ Ռասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ «Եվրոպա» շաբաթաթերթը իր ուրույն տեղն ունի: Նա հայ իրականության մեջ այն եզակի պարբերականն է, որն ամենայն մանրամասնությամբ երկու տարի շարունակ թերթի լուրաքանչյուր համարում չափազանց հետաքրքիր և ուշագրավ նյութեր է տպագրում 1848 թ. Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Չեխիայում և ավստրիական կայսրության կազմում ապրող սլավոնական մյուս ժողովուրդների հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների մասին: Թերթը տպագրում է ֆրանսիական և ավստրիական սահմանադրությունները, պետական և հեղափոխական գործիչների ելույթները խորհրդարաններում, ցարացիական ընդհանրական խնդիրները, հեղափոխական և ազգային կառավարությունների կազմերը և շատ այլ հարցեր:

«Եվրոպան» ձգտում է իր լրատվությունում հավատարիմ մնալ կատարվող դեպքերին և դրանց լուսաբանել հանգամանորեն ու անկողմնակա դիրքերից: Թեպետ դա միշտ չէ, որ հաջողվում է, այնուամենայնիվ թերթի հրապարակումներն արժեքավոր են հայ պարբերական մամուլի պատմության համար: Դրանք այնքան հավաստի են, որ ժամանակի արևմտահայ պարբերականները օգտվում էին թերթի տեղեկատվությունից, մանավանդ որ Վիեննայում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացվում էին ականատեսի աչքերով: «Եվրոպան» արևմտահայ միակ պարբերականն էր, որը հանգամանորեն պատմում էր ոչ միայն եվրոպական ժողովուրդների հեղափոխական և ազգային շարժումների մասին, այլև լուսաբանում դրանց հետ կապված կրոնական հարցերը:

«Եվրոպայի» 1848 թ. առաջին լրատվություններից մեկը վերաբերվում է Օվեյցարիային, որը Վիեննայի 1815 թ. դաշնագրությամբ ճանաչվել էր անկախ ու չեզոք պետություն: Օվեյցարիան բաղկացած էր 22 ինքնուրույն կանտոններից, որոնցից լեռնային 7 կանտոնները խոչընդոտում էին միասնական կենտրոնացված իշխանության ստեղծմանը: Նրանք ստեղծեցին ռազմա-քաղաքական «Չոնդերբունդ» միությունը, որն ուղղված էր երկրի լիբերալ-բուրժուական կառավարության և դեմոկրատական թարեփոխումների դեմ: «Չոնդերբունդը» 1847 թ. երկրում քաղաքացիական պատերազմ սկսեց ու պարտություն կրեց:

«Եվրոպան» լուսաբանում է այս իրադարձությունները, սակայն անտեսում է այն հանգամանքը, որ այս պայքարն անջատողական էր և թույլ չէր տալիս ունենալ միասնական պետություն: Նա այս պայքարը դիտարկում է ամենից առաջ կրոնական խնդիրների տեսանկյունից, որովհետև միայն քանակապես կանտոնների միջև կային ոչ միայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական հակասություններ, այլև դավանական տարբերություններ:

Թերթի լրատվությունից երևում է լեռնային կանտոնների նկատմամբ նրա դիրքորոշումը: Նա կողմնակից է պարտություն կրած կանտոնների նկատմամբ կրոնական հանդուրժողականության պահպանմանը:

«Եվրոպան» գրում է, որ արմատականներն այս յոթ մահացներում հաղթելուց հետո՝ նրանց վրա 5 մլն. շվեյցարական ֆրանկ տուգանք դրեցին: Լյուցեռնի, Ֆրայբուրգի և Վալ-լիսի կանտոնների արմատական կառավարություններն իրենց վրա դրված տուգանքը վճարելու համար «եկեղեցականաց դեմ սաստիկ բռնություն կընեն ու այս ստակին մեծ մասն վաճեքերեն, եպիսկոպոսներեն ու քահանաներեն հանել կուզեն»:

Կառավարությունը յուրաքանչյուր վանքի, եպիսկոպոսի ու քահանայի վրա տուրք դրեց: Առանձնապես ծանր կացության մեջ հայտնվեց Սուրբ Բեռնարդոսի վանքը, որի վրա 80 հազար ֆրանկ տուրք սահմանվեց: Սրանով 900 տարվա պատմությունը ունեցող այս վանքն այնպիսի վիճակի հասցվեց, որ այդուհետև չէր կարող իր գործունեությունը շարունակել: «Խեղճ կրոնավորները» տեսնելով, որ վանքի ամբողջ ունեցվածքը պիտի հափշտակեն արմատականները, և իրենց ի վիճակի չեն պահանջված գումարը վճարել, վանքի բոլոր արժեքավոր իրերը վերցրեցին ու փախան Պիեմոնտ: Իմանալով այս մասին՝ իշխանությունները դեկտեմբերի 17-ին զորք ուղարկեցին, որը շրջապատեց վանատունը: Չորս պաշտոնյաներ հայտարարելով, որ վանքի ունեցվածքը պետության սեփականությունում է, փորձեցին եղած գույքը հաշվառել: Վանքում մնացած երիտասարդ կրոնավորները «քաջությամբ հաստատուն կեցան ու չհնազանդեցին»: Այնժամ զինվորները տեսնելով, որ այս «կրոնավորները հավանքեցնել անկարելի է», վանքի դարպասները շարդեցին, մերս մտան և եղած ամբողջ գույքը հաշվառեցին:

Այս բռնության դեմ կանտոնի ղեկավարությանը բողոք ներկայացրեցին Հռոմի Պապի նվիրակը և Ֆրայբուրգի եպիսկոպոսը¹:

Նույնպիսի բռնություն կատարվեց նաև Ֆրայբուրգի կանտոնում, որտեղ մի ամբողջ վանք վերացվեց, և նրա ամբողջ գույքը իշխանությունները բռնագրավեցին: «Եվրոպան» չափազանց վրդովված էր Սուրբ Բեռնարդոսի վանքում պատահածի կապակցությամբ, որը մարդկանց «սիրտը ցավով կլցնեք»: Այս կապակցությամբ Հռոմի Պապի նվիրակը շվեյցարական խորհրդարանին բողոք ներկայացրեց, բայց պատգամավորներն «այնչափ անմոթացան», որ նույնիսկ չցանկացան պատասխանել: Նրանք նույնիսկ խնդիր էին դնում Շվեյցարիայում վերացնել Հռոմի Պապի նվիրակությունը²:

Սուրբ Բեռնարդոսի վանքի փորձությունը, սակայն, սրանով չավարտվեց: Թերթն այնուհետև գրում է, որ 1848 թ. հունվարի 12-ին կանտոնի իշխանությունները զինվորներ ուղարկեցին վանք, որոնք վանականներին 10 օր բանտարկված վիճակում պահեցին իրենց խցերում, իսկ այնուհետև բռնի ուժով բոլորին դուրս վճռեցին: Սրանով Սուրբ Բեռնարդոսի վանքը փակվեց: «Այն է ահավասիկ վարձքը, - գրում է թերթը, - որն որ արմատականները մարդկության համար աշխատողներուն կուտան»³:

¹ «Եվրոպա», 1848, 25 հունվարի, թիվ 4, էջ 13:

² Նույն տեղում, 1848, 1 փետրվարի, թիվ 5, էջ 19:

³ Նույն տեղում, 1848, 22 փետրվարի, թիվ 8, էջ 30-31:

«Եվրոպան» դատապարտում է կատարվածն ու արմատականների գործողությունները, որոնք հպարտանում են, թե «ամենում ազատություն կուտան, բայց իրենցմե տարբեր կարծիք ունեցողներուց ձայնը ամեն կերպով խեղդելու կշահան»:

Թերթը լեռնային կանտոններում կրոնավորների նկատմամբ իրականացվող բռնությունների կապակցությամբ տպագրում է Հոռնի Պապի մվիրակի թողոքը, շարադրում Ռուսաստանի հուլիսի 18-ի ճոտայի բովանդակությունը, ներկայացնում ֆրանսիական խորհրդարանում կայացած ընթերցումները: Թերթն անդրադառնում է խորհրդարանում թիերի և Գիզոյի ելույթներին, որոնցից առաջինը փորձում էր արդարացնել արմատականներին, իսկ երկրորդը՝ դատապարտում էր շվեյցարացիների բռնությունները, «կրոնի և քաղաքական ընկերությունների դեմ արած անիրավությունները»: Գիզոն խնդիր էր դնում Եվրոպան ազատել այն «մեծ խռովությունից», որ պատճառել են Օվեյցարիայի արմատականները:

Պատմելով այս մասին՝ «Եվրոպան» ցանկանում է ընդգծել, որ կատարվածը զուտ շվեյցարական խնդիր չէ, և այն պիտի զգաստացնի եվրոպական բոլոր երկրներին:

Ուշագրավն այն է, որ թերթը տպագրում է Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի ուղերձը շվեյցարական կառավարությանը, որտեղ դատապարտվում էր ամբաստանությունը և խնդիր էր դրվում պահպանել Օվեյցարիայի ինքնուրույնությունը, անկախությունը ու չեզոքությունը: Այս մոտեցումը թերթի համար կարող էր ուրիշ լինել, սակայն այդպես չէ: Նա իր դիրքորոշումն ուներ, որը պարտություն կրած կանտոնների հոգևորականության նկատմամբ կիրառված բռնությունների դատապարտումն էր: Իր տեսակետը թիմավորելու նպատակով թերթը հայտնում է, որ արմատականների բռնությունները տեսնելով՝ կանտոնների նկատմամբ հաղթանակ տարած զինվորականներն իրենց պաշտոններից հրաժարվել են⁴:

Եվրոպական հեղափոխական շարժումներում կրոնական հարցերն իսկապես կարևոր տեղ ունեին, քանի որ խղճի և դավանանքի ազատության խնդիրները հրատապ էին մի շարք ժողովուրդների համար:

1848 թ. փետրվարյան հեղափոխությունը Ֆրանսիայում լայն արձագանք գտավ Եվրոպայում, որի ազդեցության տակ մարտին հեղափոխություններ բռնկվեցին նաև գերմանական պետություններում և ավստրիական կայսրությունում:

Ամենուրեք, թեպետ, առաջնայինը պայքարի եղած ժողովուրդների համար սահմանադրական բարեփոխումներ անցկացնելն էր և ազգային ինքնավարություն ձեռք բերելը, այնուհանդերձ դրանք թվում կարևորվում էր նաև կրոնական ազատության խնդիրը: Այն առավել սրությամբ էր դրված հատկապես ավստրիական բազմազգ կայսրությունում, որը խիստ կարևոր էր սլավոնական ժողովուրդների համար: Պատահական չէ, որ վիեննայի արքունիքին ներկայացված սոցիալական և քաղաքական պահանջներից բացի դավա-

⁴ Նույն տեղում, 1848, 8 փետրվարի, թիվ 6, էջ 22:

ճանաչել կատարյալ ազատության խնդիր էին դնում չեխները⁵, լեհները⁶, խորվաթները⁷, սերբերը⁸ և այլ ժողովուրդներ:

«Եվրոպան» քաջատեղյակ էր այս ամենին և մեկ անգամ չէ, որ անդրադառնում է հեղափոխության մեջ կրոնական խնդիրներին: Միևիկեպարյան միաբանության Վիեննայի կրոնական գործիչներն ու պարբերականը խմբագրողները ոչ միայն քաջատեղյակ էին այս խնդրին, այլև շատ իրադարձությունների ականատեսն էին:

Պարբերականը պատմելով 1848 թ. մարտին Վիեննայում բռնկված հեղափոխության հետևանքով կատարված իշխանափոխության մասին, մշտն է, որ կառավարության նոր դեկավար կոմս Կոլովրատի կարգադրությամբ տեղեկվել է բարենորոգումներ նախապատրաստող մի հանձնաժողով: Բազում հարցերից բացի, այս հանձնաժողովը պիտի մտածեր նաև «այնչափ հաճախ ունեցող անձանց իրավունքը կարգ դնելու» խնդրով⁹:

«Եվրոպան» միաժամանակ անդրադառնում է Վիեննայում լիկուորյան կրոնավորներին, որոնք հեղափոխության առաջին օրերին դուրս մղվեցին մայրաքաղաքից: Թերթի պատմելով, Վիեննացիներից ոմանք մասնակով դիմեցին ներքին գործերի նախարարին՝ խնդրելով ապահովել այս կրոնավորների «պաշտպանությունն ու ապահովությունը»:

Վիեննայի արքեպիսկոպոսն էլ մախարարին խնդրեց հոգալ նրանց մասին, քանի որ լիկուորյաններն ապրուստ ու հանգիստ չունեն: Նախարարն ընդառաջ գնաց այս խնդրանքին և կառավարությանը տեղյակ պահելով՝ համապատասխան կարգադրություն արեց, որպեսզի լիկուորյան քահանաներին ու կուսանողներին ապահովեն ապրուստի միջոցներով: Նա միաժամանակ հաշվի առնելով այս քահանաների Ավստրիայի քաղաքացի լինելը ազգային պահապանների հրամանատարներից զգուշացրեց դադարեցնել նրանց փնտրելն ու հալածելը:

Ըստ «Եվրոպայի»՝ այս որոշումից դժգոհ մնաց Վիեննայի ուսանողությունը, որը հավաքվեց համալսարանում, ժողով արեց և լուր տարածեց մայրաքաղաքում, թե լիկուորյանները վերադարձել են: Գիշերն ուսանողները հոծ բազմությամբ հավաքվեցին Վիեննայի արքեպիսկոպոսի և արտգործնախարար Ֆիկելմոնի տան մոտ և, որպես բողոքի մշան, «խառնաձայն գոչումներով կատվային երաժշտություն կատարեցին»¹⁰:

Մայիսին ավստրիական կառավարությունը կայսրի անուհից Լիկուորյանների և Հիսուսյանների գործունեությունն արգելեց՝ պատճառաբանելով, թե նրանք ժողովրդի մեջ «խռովության առիթ» են ծառայում: Բայց հայտնի է, գրում է թերթը, որ սրանով մախարարներն «իրենց տկարությունը կցուցաբերեն, որ չեն կարողանում ժողովրդի մեջ չարագործներն ու խռովությունները զսպել»¹¹: Այս որոշումը բացահայտորեն թերթի սրտովն է, որն իր համերաշխությունն է արտահայտում այդ կրոնավորների հետ: Սա այն եզակի դեպքն

⁵ См. Удильдов. Очерки из истории национально-политической борьбы в Чехии в 1848. М., 1951, стр. 72.

⁶ См. История Польши. Под ред. И. С. Михлера и И. А. Хренова, том II, М., 1955, стр. 150.

⁷ См. История Югославии. Под ред. Ю. В. Бромлея и др., том I, М., 1963, стр. 420.

⁸ Там же, стр. 426.

⁹ Նույն տեղում, 1848, 28 մարտի, թիվ 13, էջ 53:

¹⁰ Նույն տեղում, 1848, 9 մայիսի, թիվ 19, էջ 79:

¹¹ Նույն տեղում, 1848, 16 մայիսի, թիվ 20, էջ 83:

րից է, երբ «Եվրոպամ» հակադրվում է ավստրիական կառավարությանը և իրեն թույլ է տալիս չհամաձայնվել նրա որոշման հետ:

Թերթը նշում է 1848 թ. ապրիլի 25-ին հրատարակված սահմանադրությամբ «կրոնիկատարյալ ազատություն» տալու մասին, որը վիեննայի արքեպիսկոպոսությունն օգտագործեց և երկու անգամ ժողով հրավիրելուց հետո, արքեպիսկոպոսի հավանությամբ խնդրանքով դիմեց ներքին գործերի մախարարին: Եկեղեցին խնդրում էր պաշտպանություն և (սահմանադրությամբ դրա իրավունքն ուներ ամեն մարդ և ընկերություն) իրական սպառնալիք, այսինքն՝ եկեղեցու անկախությունն աշխարհիկ իշխանություններից, իր միջոցներն ինքնուրույն գործածելու հնարավորություն, եկեղեցիներից աշխարհիկ այնպիսի պաշտոններ չվստահել, որի պատճառով մինչև օրս նրանք թե՛ իրենց եկեղեցական սպասավորություններից ետ կանայից և թե՛ ժողովրդի առջև կասկածելի կերևալի: Նախարարը եկեղեցու պատգամավորներին սիրով ընդունեց, լսեց նրանց խնդրանքն ու հավանություն տվեց դրանց, իսկ պատգամավորները «պատվական պաշտոնյայի սահմանադրական ու քրիստոնեական մտքի ազմվության և անկեղծության վրա լի վստահությամբ» հրաժեշտ տվեցին¹²:

Միևնույն ժամանակ 1848 թ. հուլիսի 4-ի համարում թարգմանաբար տպագրեցին «Տերությանը ինչ է հարկավոր» վերնագրով հոդվածը, որը նրանց կարծիքով օգտակար է ամեն մի ազգի: Բարոյախոսական այս հոդվածում նշվում էր, որ ավստրիական տերությանն ամենից առաջ անհրաժեշտ է խաղաղություն և համդարտություն, քաղաքական բարեփոխումների իրականացման հարցում համբերություն, կայսրի նկատմամբ վստահություն, հայրենիքի շահին ծառայելու, կառավարվել ցանկանալու պատրաստակամություն և բազում այլ բաներ: Այս ամենի հետ մեկտեղ, հարկավոր է, որ եկեղեցին իր իրավունքների մեջ ազատ մնա և նրա իշխանությանը ոչ ոք չդիպչի: Ընդհանուր պատմության մեջ, նշվում էր հոդվածում, հնարավոր չէ գտնել թեկուզ մի դեպք, երբ «Եկեղեցվո իրավանք դաչիլը կամ անոր իշխանությունը չափավորելու քանց թափելը որևէ ազգի օրհնություն բերած լինի»:

Հոդվածում այն միտքն է առաջ քաշվում, որ ինչպես աշխարհիկ իշխանությունն է ցանկանում ազատ լինել, այնպես էլ եկեղեցական իշխանությունը պիտի ազատ լինի, որպեսզի միասին հնարավոր լինի «տերության բարիքը հոգալ և առաջացնել, ասոր հակառակը, անշուշտ խռովություններու պատճառ կլինի»:

Եկեղեցու դերի մասին այս դատողությունները խիստ համահունչ են «Եվրոպայի» դիրքորոշմանը, ուստի մա կարևորում է այս հոդվածի թարգմանելն ու տպագրելը:

Եվրոպական հեղափոխական շարժումների մասին պատմելիս թերթը, հավատարիմ մնալով պատմաբանի մոտեցմանը իր ընթերցողներին ամեն ինչ անկողմնակա դիրքերից ներկայացնելու որդեգրած սկզբունքին, անդրադառնում է վիեննայում 1849 թ. մարտի 13-ին ուսանողության և կայսրական զորքերի միջև աղյուծալի ընդհարմանը, որի ժամանակ սպանվեցին տասնյակ ուսանողներ:

«Եվրոպամ» ուսանողության հակակայսրական ելույթները չէր խրախուսում և քննադատում էր նրանց՝ մայրաքաղաքի վիճակն ապակայունացնելու համար: Բայց դա բնավ

¹² Գույն տեղում, 1848, 16 մայիսի, թիվ 20, էջ 83:

չի խանցարում թերթին պատմելու իշխանությունների կողմից ուսանողության Պատարագը խանցարելու և արգելելու մասին: Թերթի պատմելով՝ Վիեննայի ուսանողները 1849 թ. մարտի 13-ին ցանկանում էին Սուրբ Ստեֆանի եկեղեցում Պատարագ մատուցել տալ մեկ տարի առաջ զոհված ուսանողների հոգու հանգստության համար: Առավոտյան ժամը 10-ին սգավոր երիտասարդությունը հետաքրքրասեր բազմության ուղեկցությամբ մոտեցավ եկեղեցում, բայց Պատարագ չմատուցվեց: Կառավարությունը վախենալով ժողովրդի «խռովությունից»՝ զորքի օգնությամբ բազմությունը ցրեց¹³:

«Եվրոպան» ավստրիական պարբերական էր և այսպիսի լուր տպագրելն ուղղված էր ավստրիական իշխանությունների դեմ: Բայց տեղի ունեցածը պարբերականի համար քաղաքական հարց չէր, այլ՝ կրոնական: Իշխանությունների այս քայլը հավատացյալ ուսանողությանը զրկում էր հանգուցյալների հոգու հանգստության համար աղոթելուց: Միևնույն ժամանակ համոզմամբ՝ պետությունը պիտի կրոնի ազատություն և հանդուրժողականություն ապահովեր և քանի որ այս դեպքը դրան անհարկ էր, ուստի պատմվում է հավատացյալների ցկատմամբ կատարված բռնության մասին:

«Եվրոպան» ընդգծված ուշադրություն է դարձնում Կրեմզիում գործող ավստրիական խորհրդարանի 1849 թ. փետրվարի 12-ի նիստի քննարկմանը ներկայացված «ծանր մյուլթին», որը վերաբերվում էր մշակվող սահմանադրության 14-16-րդ հոդվածներին: Նրանցից հոդված 14-ը նախատեսում էր Ավստրիայի լուրաքաճչուր քաղաքացու «կրոնի ազատությունը» և «կրոնական գործերի հրապարակական կատարումը», որի ցկատմամբ կատարված հանցանքները ենթակա են օրենքով պատմվելու: Հոդված 15-ը վերաբերվում էր պետության մեջ մեկ եկեղեցու (կաթոլիկ) «արտոնություն» ունենալուն և հոդված 16-ը կարգավորում էր պետության և եկեղեցու փոխհարաբերությունները:

Վերջինս կարգավորում էր եկեղեցու ունեցվածքի տնօրինման, եկեղեցու առաջնորդների ընտրության, վաճառքի և հոգևոր միաբանությունների սնալ-չմնալու հարցերը: Թերթը բառացիորեն տպագրում է այս հոդվածները և ներկայացնում դրանց վերաբերյալ օրեր շարունակված քննարկումները: Հոդված 14-ի վերաբերյալ ելույթ են ունենում մոտ 25 պատգամավորներ և «ծանր ու խորունկ մտածողությամբ» մի շարք առաջարկություններ անում, որպեսզի «Եկեղեցում ազատություն տրվի»:

Պարբերականը պատմում է այս հարցի կապակցությամբ խորհրդարանում կայացած հետագա քննարկումների մասին, որոնք շարունակվեցին մինչև մարտի 5-ը և երկար վիճաբանություններից հետո հոդված 14-ը փոքր փոփոխություններով և լրացումներով ընդունվեց: Մնացած հոդվածները քվեարկության չդրվեցին, որովհետև կայսրը մարտի 6-ին խորհրդարանը ցրեց: Նրա հռչակած սահմանադրության մեջ կրոնի և եկեղեցու հարցերը տեղ չգտան: Այդ բացը լրացնելու նպատակով Վիեննա հրավիրվեցին ավստրիական կայսրության բոլոր մահացների, բացառությամբ Հունգարիայի և Իտալիայի, կաթոլիկ եպիսկոպոսները, որպեսզի «ուղղափառ եկեղեցվո վերաբերած բաները սահմանադրության տված ազատություններում համաձայն կարգադրեն»¹⁴:

¹³ Նույն տեղում, 1848, 20 մարտի, թիվ 12, էջ 45:

¹⁴ Նույն տեղում, 1848, 10 ապրիլի, թիվ 15, էջ 57:

Մայիսի 1-ին կայացած եկեղեցական այս ժողովին մասնակցեցին 5 արքեպիսկոպոսներ և 25 եպիսկոպոսներ: Ժողովի նախագահ ընտրվեց Զայցբուրգի կարդինալ արքեպիսկոպոս Ծվարցեքերցը՝ ավստրիական կառավարության դեկավարի եղբայրը:

«Այս պատկառելի» ժողովը նպատակ էր հետապնդում ուղղափառ Եկեղեցու Ավստրիայում մինչ այդ ունեցած «չհոգացված վիճակը ազնվացնել, գորացնել ու բարձրացնել և երկրորդ՝ Եկեղեցու և տերության մեջ եղած բնական սահմանը գտնել ու կարգավորել»¹⁵:

Եկեղեցու ազատության հարցին եմ վերաբերվում թերթի գերմանական պետություններում հետապնդվող կրոնական բնույթի մասին հրապարակումները: Մասնավորապես Նասսաուի դուքսը մարտյան հեղափոխության ընթացքում ժողովրդին խոստավորապես Նասսաուի դուքսը մարտյան հեղափոխության ընթացքում ժողովրդին խոստավորապես ազատությունների թվում պարտավորվում էր տալ մաս «կրոնի ազատություն»¹⁶:

«Եվրոպան» անդրադառնում է մաս Բավարիայի վարչապետ Զադլաքում 1848 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած եպիսկոպոսների «գեղեցիկ ու պատկառելի ժողովին»: Այն հրավիրվել էր «այումհոդոս կազմելու ու հիմնական ատենա Եկեղեցվո ազատություններում վրա մտածելու» նպատակով, որին նախատեսվում էր Հռոմի Պապի և Լևոտրիայի շատ եպիսկոպոսների մասնակցությունը: Ժողովի քննարկման նյութը զադլաքի պիտի մնար և հրապարակվելու էր միայն կայացրած որոշումը¹⁷:

Թերթը անդրադառնում է այս ժողովի ընդունած երկու փաստաթղթերին, որոնցից մեկն ուղղված էր Գերմանիայի կաթոլիկներին, իսկ երկրորդը՝ հիշատակագիր էր և առաջվեց գերմանական թուր պետություններին: Նրանցում հստակեցվում էր գերմանական Եկեղեցու «թոցելու ճամբան», որը 18 դար շարունակ «խաղաղության և ազգերու բարոյական կրթությանը համար աշխատած է», իշխանության և ժողովրդի միջև «իբրև միջնորդ մտած է» և չի ցանկանում ամենևին, որ Եկեղեցին պետությունից զատվի: Սակայն եթե պետությունը ցանկանա Եկեղեցուց բաժանվել, ապա Եկեղեցին առանց դրան հավանություն տալու կրի, բայց ինքն իր ձեռքով այդ կապը չի կտրի:

Եկեղեցին առաջելական լինելով, շարունակում է մեկնաբանել թերթը, «իր առաջելության վերաբերյալ բաներուն մեջ կատարյալ ազատություն ու անկախություն կպահանջե»¹⁸:

Թերթի լրատվության մի զգալի մասը վերաբերվում էր վատիկանին, որտեղ Հռոմի Պապը ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանության դեկավարն էր: Պարբերական ամենայն մանրամասնությամբ պատմում է Հռոմի Պապի գործունեության մասին, տպագրում է նրա կոնդակները, ելույթները, անդրադառնում է Պիեմոնտի գլխավորությամբ իտալական ժողովրդի մղած ազատագրական պայքարին նրա դիրքորոշման, եվրոպական պետությունների և իտալական իշխանությունների հետ ունեցած հարաբերություններին ու շատ այլ հարցերի:

«Եվրոպան» պատմում է Նոր տարվա նախօրյակին Հռոմում տարածված «հիմարական լուրի» մասին, ըստ որի ժողովուրդը Նոր տարվա գիշերը պիտի հարձակվեր Հիսուսյան դպրոցի վրա ու արգելքը այնտեղ Հռոմի Պապի մուտքը: Սակայն ամեն ինչ բարեհաջող

¹⁵ Նույն տեղում, 1849, 8 մայիսի, թիվ 19, էջ 73:

¹⁶ Նույն տեղում, 1848, 21 մարտի, թիվ 12, էջ 51:

¹⁷ Նույն տեղում, 1848, 21 մոյսմբերի, թիվ 47, էջ 197:

¹⁸ Նույն տեղում, 1849, 2 հունվարի, թիվ 1, էջ 3:

անցավ, ուստի կանոնադրությունը մախապես կարգ ու կանոն հաստատեց և ապահովության միջոցներ ձեռնարկեց, որից ժողովուրդը շատ «զարմացավ ու բարկացավ»¹⁹:

Փետրվարին թերթը գրում է, որ Հոռմեական պետության Ֆանեցա, Ֆանո և մի շարք այլ քաղաքներում «խոռվարարները նորեմ կրոնավորներու դեմ ելան ու զխավորաբար Հիսուսյանների դեմ մեծ աղմուկ հանեցին»: Նրանց նկատմամբ արած «չարագործությունների» կապակցությամբ վատիկանի կառավարության դեկավար Կարդինալ Պոֆոնտին հրովարտակ հրապարակեց, որը «Եվրոպան» արտատպում է Հոռմի լրագրից: Կարդինալը կատարվածը համարում էր «ծանր հանցանք», որը Սրբազան Քահանայապետին (Հոռմի Պապին - Ֆ. Մ.) «սաստիկ ցավ» է պատճառել²⁰:

Նեապոլի թագավորությունում ժողովուրդը պայքարի սկզբում Հիսուսականներից դուրս քշեց, սակայն ապրիլին «լացցարոնի կոչված ցած ռամիկները խոռվություն կհանեն ու հիսուսականները կուզեն»²¹:

Անդրադառնալով վեներիկի հաճանքում ընթացող հեղափոխական և ազգային պայքարին, թերթն «ուրախությամբ» մշում է, որ Սուրբ Ղազար կղզու վանքն ու «մեծարգո» Մխիթարյան միաբանության անդամները «վեներիկի շփոթության մեջ հանգիստ ու հանդարտ են»²²:

Ի տարբերություն «Բազմավեպի», որը եկեղեցագիտական, հայագիտական և բնագիտական բնույթի տարբեր նյութեր էր տպագրում, «Եվրոպան» քաղաքական շաբաթաթերթ էր, որն աչքի էր ընկնում հրապարակումների առատությամբ և բազմազանությամբ: Պարբերականը հետևողականորեն պատմում էր 1848 թ. Հոռմում բռնկված պայքարի մասին, որից ահաբեկված Պիոս IX Պապը մայիսի 24-ին ծածուկ լքեց մայրաքաղաքն ու ապաստան գտավ Նեապոլիտանական Գաետա ամրոցում: Նա 1849 թ. հունվարի 1-ին բանադրամքի ենթարկեց Հոռմի ապստամբներին: «Եվրոպան» ամբողջությամբ տպագրում է Հոռմի Պապի բանադրամքը, որը Հոռմում ամեն տեղ հրապարակվեց ու եկեղեցիներում կարդացվեց: Թերթը ցավով գրում է, որ բանադրամքն ապստամբների վրա տպավորություն ու ազդեցություն չի թողել՝ «հպատակության շարժելու ու խելքերն զլուխն ընկնելու համար մեծ օգուտ չտեսնվեցավ»:

Ավելին, այս բանադրամքի պատճառով հունվարի 11-ին Հոռմում շատ անկարգություններ են տեղի ունենում: «Խոռվարարները» բանադրամքի վրա կատաղած, գոականործի խանութից կարդինալի գլխարկը վերցրել ու թափոռով տարել, գետն էին մետել, որպեսզի կարդինալներից մախատիճ լինի: Այս կապակցությամբ «Եվրոպան» իր զարմանքն է արտահայտում: Թերթը գրում է. «Իրավամբ մեկը կրճա զարմանալ տեսնելով, որ ասոնք այն իտալացիներն են, որոնք միայն իրենք զիրենք քրիստոնեի տեղ դնելով ուրիշները հեթանոս կկանչեին ու մի տարի առաջ կեցցե Պիոս Թ կանչելով՝ խաչակիր գունդ շինեցին, այնչափ կրոնի մախամձով բորբոքած էին և հիմա իրավամբ Պիոս Թ և իրեն հետ մեկտեղ ողջամիտ իտալացիք ալ իրենցմե զզվելով կխորշեն»²³:

¹⁹ Նույն տեղում, 1848, 1 փետրվարի, թիվ 5, էջ 19:

²⁰ Նույն տեղում, 1848, 28 մարտի, թիվ 13, էջ 55:

²¹ Նույն տեղում, 1848, 11 ապրիլի, թիվ 15, էջ 63:

²² Նույն տեղում, 1848, 25 ապրիլի, թիվ 17, էջ 70:

²³ «Եվրոպա», 1848, 30 հունվարի, թիվ 5, էջ 19:

1849 թ. փետրվարից Հոռմը հռչակվեց հանրապետություն, որի նռապետները, հավատարիմ մնալով ավանդողյթին, կազմակերպեցին Զատիկի հանդիսություն: «Եվրոպան» մշում է այդ տարվա հանդիսության «այլ կերպ» կատարվելը: Ավագ ուրբաթ երեկոյան Ա. Պետրոսի խորանի վրայի խոշոր խաչը «փառավորությամբ լուսավորվեց», իսկ եկեղեցին կարդինալների փոխարեն լցվեց պատգամավորներով ու զինվորականներով, որոնք ինքնեց երաժշտությունն էին հնչեցնում: Հոռմի մի քանի լրագրեր հայտնում էին, որ Պատարագը մատուցել է հայազգի քահանա և Պատարագից հետո Սրբությունը սրբոցը թափորով Հոռմի Պապի պալատն է տարել ու ժողովրդին օրհնություն տվել: Թափորի նտևից, ինչ-պես նաև եկեղեցու մեջ, գրում է թերթը. գորքը երգում էր ֆրանսիական «Մարսելյոզը»²⁴:

«Եվրոպան» կատարվածի առնչությամբ խիստ վշտացած էր, որովհետև հավատացած չէր, թե Պատարագ մատուցած քահանան հայ է: Թերթը «պատմաքանական անաչառությամբ պահելու համար» հետաքրքրվել ու պարզել էր քահանայի ազգությունը և «ուրախությամբ» մշում է, որ Հոռմում եղած «հայազգի քահանաները մզոված քաղաքական խոսվարներուն հետ ասանկ քաներուն մեջ ամենևին հաղորդություն չեն ունեցել ու բոլոր խոսվությանց ընթացքին մեջ անանկ վաղելով վարմունք ցուցաբերել են, որ իրենց պատիվ լինելուց զատ՝ ազգերնուս մեծ պարծանք է»²⁵:

Եթե իտալացի եկեղեցականները չէին փորձում ժողովրդին հեռու պահել հեղափոխական, ապստամբական պայքարից, ապա, ըստ «Եվրոպայի», շատ խոհեմ էին վարվում Հունգարիայի հոգևորականները: Թերթի պատմելով՝ Հունգարիայի բոլոր եպիսկոպոսները 1849 թ. հունվարի 20-ից հովվական մի նամակ կազմեցին՝ ուղղված հավատացյալ ժողովրդին, որում իրենց հայրենակիցներին հորդորում էին «իրենց օրհնավոր թագավորին հնազանդին և Հունգարիայի երկիրը պատերազմի ավերեն ազատեն»²⁶:

Թերթի համոզմամբ, հավատացյալ ժողովրդին այլ բան են քարոզում հունգարական կառավարության անդամները, որոնք ավստրո-հունգարական «պատերազմին վրայեն հիմակու հիմա քաղաքական անունը վերցնելու և միայն կրոնական պատերազմ ձևացնելու կջանան, որպեսզի ուսմիկներին հավատացնելով, թե ռուսները մանառներին ուղղափառ կրոնը ջնջելու են, գանոնք ավելի ևս պատերազմի գրգռեն ու կատղեցնեն»:

Իր միտքը հիմնավորելու նպատակով «Եվրոպան» վկայակոչում է Հունգարիայի մշակույթի և կրոնի հարցերով նախարար Միխայի Հորվաթի կարգադրությունը, որը թերթը տպագրում է ամբողջությամբ: Հունգարական բոլոր քահանաներին ուղղված այդ կարգադրությունը ծանուցում էր. ա) 1849 թ. մայիսի 27-ից սկսած, երեք շաբաթ շարունակ, յուրաքանչյուր հինգշաբթի և կիրակի «քարոզ տրվի», հայրենիքի փրկության համար մինչև վերջ հաստատուն մնալու թափոր կազմակերպել և միաժամանակ եկեղեցու զանգերը հնչեցնել, բ) Հորվաթի կազմած «մասնավոր աղոթքը կարդացվի, որում մեջ Աստծո առջև կպատմվի, որ ռուսները եկած են ազատությունը, անկախությունն ու կրոնը ջնջելու, ժողովուրդը գերելու, եկեղեցիներն ու խորանները կործանելու» և այլն, գ) հունիսի 6-ին պահք ու ծոմ պահել, դ) «քահանաները քարոզեն, որ պատերազմը քաղաքական լինելուց դադրած և կրոնի պատերազմ դարձած է», ե) հրոսակների երկիր մտնելուն պես եպիսկոպոսներն ու

²⁴ «Եվրոպա», 1849, 1 մայիսի, թիվ 18, էջ 71:

²⁵ «Եվրոպա», 1849, 19 հունվարի, թիվ 25, էջ 102:

²⁶ Լույս տեղում, 1849, 19 հունիսի, թիվ 25, էջ 99-100:

ժողովրդապետները «իրենց եկեղեցական զգեստովը ձեռքներին խաչ անոնց առջևը երթան, վասնզի ասիկա երկրին խաչակրաց արշավանք է», ուստի յուրաքանչյուր մարդ՝ մեծից փոքր, պետք է եկեղեցականների հետ «ոռուսաց դեմ երթա»²⁷:

«Եվրոպաց» Հորվադի այս կարգադրությունը բառացի է ընկալել, որով պատերազմն այսուհետև «կրոնական պատերազմ» պիտի դիտվեր: Հունգարական կառավարությունն, իհարկե, այդպես չէր մտածում, այլ այս ճանապարհով փորձում էր ազդել հավատացյալ ժողովրդի վրա և նրան նույնպես ոտքի հանել ռուսական զորքերի դեմ, որոնք օգնության էին եկել ավստրիական կայսրությանը՝ հունգարացիների ազգային-ազատագրական պայքարը ճնշելու նպատակով:

Հաբսբուրգների իշխանությանը դեմ ուղղված իտալացիների, հունգարացիների, վալախների և սլավոնական ժողովուրդների պայքարի նպատակը «Եվրոպան» հստակ գիտեր և այդ կապակցությամբ բազմիցս իրատեսական վերլուծություններ էր արել ու գնահատական տվել: Նա լավ էր հասկանում, որ կայսրության կազմում ապրող ժողովուրդները պայքարում են իրենց ազգային իրավունքների ազատության համար, սակայն ավստրիական լինելով այդ պայքարը չէր դրվատնում: Այդ իսկ պատճառով թերթը զոհոնակությամբ է ընդունում եկեղեցականների կողմից Վիեննայի արքունիքին հնազանդվելու յուրաքանչյուր հորդոր կամ առավել ևս կոմկրեմ գործողություն: Բացառություն է կազմում, թերևս, լեհերի ապստամբությանը քառահանգների մասնակցության վերաբերյալ «Եվրոպայի» մոտեցումը: Թերթը նրանց չի համոզիմանում, այլ պարզապես փաստում է քառահանգների ակտիվ մասնակցությունը ազգային պայքարին:

Պատմելով Կրակովում 1848 թ. բռնկված ապստամբության և ավստրիական զորքերի հետ ապրիլի 26-ին լեհերի զինված ընդհարման ու պարտության մասին, պարբերականը «տարակուսական է» համարում նրանց պայքարի դադարեցումը, քանի որ «մեծեն մինչև պատիկ, նույնիսկ եկեղեցականները օտար լուծը վրաններեն նետելու խելջով են ու Ավստրիացվոց դեմ սաստիկ ատելություն ունեն»²⁸:

Թերթն իրավացի էր, լեհ քառահանգներ ոչ միայն բնակչության լայն խավերի հետ մասնակցեցին ազատագրական պայքարին, այլև համոզիմանում էին Կրակովի ապստամբությունը ղեկավարող Ազգային կոմիտեի և ժողովրդական Ռադայի անդամներ²⁹: Լեհ քառահանգները հետագայում ակտիվ մասնակցություն ունեցան նաև ցարական Ռուսաստանի դեմ ուղղված 1863-1864 թթ. ապստամբական պայքարին, որն, ըստ էության, ազգային-ազատագրական շարժում էր:

Համգամանորեն պատմելով եվրոպական ժողովուրդների 1848-1849 թթ. հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների մասին, «Եվրոպան» առանձնահատուկ չի ընդգծում նրանց մեջ կրոնական տարրը: Թերթը պարզապես փաստում է նրա առկայությունը և քանի որ աշխատում էր բազմակողմանի դարձնել իր լրատվությունը, անդրադառնում է նաև իրեն հոգեհարազատ այդ խնդրին:

²⁷ Նույն տեղում, 1849, 19 հունիսի, թիվ 25, էջ 99-100:

²⁸ Նույն տեղում, 1848, 9 մայիսի, թիվ 19, էջ 81:

²⁹ История Польши. том II, стр. 62, 70.

ՎԻԿՏՈՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՎԲՇՄՆ ՏԵՐՅՄՆԻ «ԼՌՈՒԹՅՈՒՆԸ»

«Ֆրանսիական դասական քնարերգության ծաղկաքաղ» գրքում, աշխարհափոխակ բանաստեղծ Պոլ Վերլենի բանաստեղծություններին նախորդող համառոտ ներածականում, գրականագետ Ա. Ալիքյանը գրում է. «Վերլենի քնարերգությունը լուրջան սահմանակից մի վիճակ է, որի դյուրանքը մաս է կազմում այդ նույն լուրջան և ընդարձակում է նրա սահմանները»¹: Վստահաբար, գրականագետի այս խոսքերը իրավամբ կարելի է վերագրել լուրաքանչյուր հիրավի համեմարել բանաստեղծի, որը ստեղծագործել է «մեծության գրականության» սիմվոլիզմի տիրույթում: Հիշենք, որ խորհրդապաշտ բանաստեղծների կողմից առաջ քաշված անխտիր բոլոր դրույթները (իրենց՝ շրջապատող աշխարհի գույների, ձայների թարգմանիչներ կարգելը, ձգտումը չպատմել այն մասին, ինչի մասին պատմում են բառերը, վերլենյան «երաժշտություն նախքան ամեն ինչ» հանրահայտ կարգախոսը, բառերին անսպառ բազմիմաստություն հաղորդելը, վերջապես՝ խոսքը լուրջամբ իմաստավորելու մղումը), գիտակցաբար թե ենթագիտակցաբար՝ ի սկզբանե ուղղված են եղել հենց «լուռ» աշխարհի և մարդու վիճակի, և հետո նոր, որպես դրա պատճառ՝ աշխարհի և մարդու մեծության վիճակի պատկերներն արդարելու, պատկերներ, որ սիմվոլիզմի հենքն ու բնորոշումն են հանդիսանում: Ավելին, այսօր արդեն հարկ է արձանագրել, որ սիմվոլիստների ձայնը համաշխարհային գրականության մեջ ամբողջ ուժով հնչեց միայն այն ժամանակ, երբ նրանք «լուռն», ճիշտ այնպես, ինչպես էդիպ արքան սկսեց տեսնել, երբ կուրացավ (Ս. Ավերինցև): Ստեղծելով գեղեցկագույն երկեր, խորհրդապաշտ բանաստեղծները «լուռ» և խոսում էին լուրջան մասին, պատելով այդ լուրջությունը երաժշտությամբ և բառերի հիրավի անսպառ բազմիմաստությամբ՝ վարպետորեն հյուսելով երաժշտություն - լուրջություն - մոռացություն - մեծություն գուգահեռների ապարանջանը:

Հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանն իր գեղեցկագույն քնարերգությամբ «ավարտել» է սիմվոլիզմի դարաշրջանը համաշխարհային գրականության մեջ՝ պարզելով խորհրդապաշտությանը դրա հիմնարար (մեծության) վիճակը պատկերող մի շարք հանճարեղ բանաստեղծություններ և բանաստեղծական շարքեր, որոնց շնորհիվ մասն՝ սիմվոլիզմն այսօր ընկալվում է որպես «մեծության գրականություն»: Հաշվի առնելով այն փաստը, որ սիմվոլիզմում մեծության վիճակի արտահայտման և պատկերի արարման «սկզբնաղբյուր» է հանդիսացել լուրջությունը, հարկ է առանձնահատուկ կերպով անդրադառնալ Տերյանի «լուրջանը»՝ տերյանական չընդհատվող և բազմաբովանդակ «մեծության» մշտական այդ «ուղեկիցներից» մեկին, իսկ երբեմն նաև՝ դրա արարչին:

¹ Ֆրանսիական դասական քնարերգության ծաղկաքաղ: Թարգմ. Ա. Ալիքյանի: Երևան, 1976. էջ 138:

Նախ և առաջ նշենք, որ փոխակերպվելով XIX-XX դդ. ընթացքում, լուրջապես պատկերը, Քամաշխարհային գրականության վիթխարի այդ թեման և գեղարվեստական միջոցը, նոր վերաիմաստավորում է գտնում: Այն ժամանակահատվածում, երբ ապրում և ստեղծագործում էր Վահան Տերյանը, լուրջապես պատկերը փիլիսոփայության և գրականության, մշակութային ընկալման մեջ արդեն բոլորովին այլ է. այն այլևս Հոմերոսի, Օնեսայիրի և Գյոթեի լուրջություն-հնազանդություն, լուրջություն-դավաճանություն, լուրջություն-հանգամանք, լուրջություն-իրավունքը չէ: Հենց «ոչ-լուրջությունից» ծնունդ առած և համադրական մշակույթի շրջանում «ոչ-այնպիսի-լուրջություն» չափորոշիչով արձակից, երաժշտությունից ու ոչ-մշակույթից տարանջատված պոեզիայում XIX դարում հրապարակ է գալիս դիմակալություն-լուրջապես քարոզը: Հիշենք, օրինակ, մեծացում ռուս բանաստեղծ Ֆյոդոր Տյուտչևի հանրահայտ «Silentium» բանաստեղծությունը, ուր առաջ են գալիս կարծես խոսքը ընդհանրապես բացառող մի շարք դրույթներ:

«Мысль изреченная есть ложь» ասում է բանաստեղծության մեջ Տյուտչևը՝ լուրջություն-իմաստի, լուրջություն-պատկերի հիրավի անպատկերացնելի ու անմախաղեպ գեղարվեստական ու փիլիսոփայական շրջադարձ կատարելով գրականության մեջ: Հայտնի է, որ խորհրդապաշտական քնարերգության մեջ այդ շրջադարձը հիմնարար մշակութային է ստանում: Հիշենք Օսիպ Մանդելշտամի նույնանման «Silentium» վերնագիրը կրող բանաստեղծությունը: Թեև Մանդելշտամը երբևէ սիմվոլիստ չի համարվել և չի համարվում, այնուամենայնիվ խորհրդապաշտության զարգացման կիզակետի ժամանակաշրջանում (1910) գրված այս բանաստեղծությունը փայլուն կերպով արտահայտում է լուրջապես հենց սիմվոլիստական իմաստավորումը:

Ինչպես արդեն նշվել է, խորհրդապաշտական քնարերգության մեջ լուրջությունն անցնում է զարգացման ևս մեկ շրջան. այն փոխակերպվում է երաժշտության և միաձուլվում մոռացության ու մեռության բարդ պատկերների հետ: Տերյանի քնարերգությունն առավել քան հարուստ է այդպիսի փոխակերպման և միաձուլման գեղեցկագույն մոտիվներով: Ըստ էության, այդպիսին է գրեթե «ամբողջ» Տերյանը: Այդպես, «Մթնշաղի անուրջներ» շարքի գրեթե բոլոր բանաստեղծությունները և շարքն ամբողջությամբ պարուրված են երաժշտության փոխակերպված «լսելի» կամ երևակայական, արտահայտված կամ թաքցված ու նույնիսկ ժխտմամբ (երգ, խոսք, ձայն) արարվող լուրջամբ, դրանից ծնունդ առնող մոռացության և մեռության պատկերներով, ուր բազմիմաստ և բազմաբովանդակ լուրջությունը հանդես է գալիս ամենատարբեր կարգավիճակներում. որպես սեր (*Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ...*) և որպես անտարբերություն (*Դու ամենոգ մայեցիր իմ վրա / Ու անցար քո խաղով կանաչի...*), որպես բաժանում (*Դու գնում ես՝ չգիտեմ ուր, / Լուռ ու տխուր...*) և որպես հանդիպում (*Ես տեսա քեզ իմ ճամփի մոտ, / Իմ մտերիմ, իմ անծանոթ...*), որպես կարոտ (*Իմ լքված սրտի կարոտը անծայր / Ամեն ինչի մեջ որոնում է քեզ... Վերջին աղոթքիս խոսքը մի մերժիր...*) և որպես թախիծ (*Ես գնում եմ լուռ-անտրտում, / Բայց իմ սրտում / Թավ է անվերջ, մահու կսկիծ...*), որպես մարդու և աշխարհի վիճակ (*Մոռանալ, մոռանալ ամեն ինչ, Ամենին մոռանալ...*), որպես սկիզբ (*Անջատման ցավոտ / Ձայներ դողացին ու հեզ դալկացան...*) և որպես ավարտ (*Հանկարծ, անկարծ շնքում ես, որ կրգաս, / Հրմայում ես, կանչում, կանչում ու լուռ...*), որպես կյանք (*Մաշում է իմ սիրտը*

անդադար /Հին երգ մի՝ ծանոթ ու տրտում...) և որպես մահ (Դառուկ դաշտեր, մերկ անտառ...) - Մահացողի տրիտուր կյանք...): Նույնը, վստահաբար, կարելի է ասել «Երկիր Նախի» շարքի մասին, ուր լուռությունն ու մեմակությունը, միաձուլվելով, ստեղծում են հայրենիքի մեմակության (Այնպես անխիճ եմ և անան լացին / Երգերն իմ երկրի, այնպես տխրագին...), պանդուխտի մեմակության (Որպես Հայերտի որդի, / Որպես Ուլիս մի...), կյանքի ամայության (Բոլոր մարդոց մեջ, / Պաղ մարդոց մեջ...), տիեզերական և երկրային գոտի (Կանգնած եմ մոռյլ վիհի եզերքին, - / Տրտում է հոգին, հիվանդ ու մեմակ...) և այլ պատկերներ ու մոտիվներ: «Գիշեր և հուշեր» շարքի խորհրդանշական կենտրոնում է կանգնած հանրահայտ «Միայնություն» բանաստեղծությունը, ուր Տերյանը զեղարվեստական մեծ վարպետությամբ միաձուլում է վերը նկարագրված պատկերները:

*Տաղականնչյուն ու միաձայն օրերն իրենց երգն են երգում. -
Միայնություն, դու ես անձայն ցավըս օրրում քո օրերերգում:*

*Էլ ի՞նչ հույսով սիրտըս հուզեմ, ի՞նչ երագով ամոքեմ ինձ
Եվ ո՞ր կողմից բախտ սպասեմ - անվախճան երգ - վիշտ ու
թախիծ:*

*Անցեք, հուշեր իմ ապարդյուն, դարձեք ընդմիշտ մոռացված էջ.
Անհուն փուլիր, սև լուռություն, միայնություն իմ հոգու մեջ:*

Տերյանի քնարերգության մեջ լուռության պատկերը, ինքը՝ չընդհատվող և բազմիմաստ, մեմակության հետ միաձուլվող լուռությունը երբևէ չի ընդհատվում և չի քայքայվում. հետըզհետե զարգանալով, այն մոր երանգներ է ստանում և տարբեր բանաստեղծություններում արարվում է տարբեր արտահայտչամիջոցներով:

*Իմ անվերջ ճամփի տանքանքից հոգնած՝
Ես մեջել էի ոսկեղեն արտում.
Ու ճշած սիրտս վայելքից հանկարծ.
Թվաց, որ մեկը կանչում է արտում...
Եվ ես արթնացա խնդության ցավից.-
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,
Մույթ հեռաստանն էր դժկամ մալում.ինձ,
Մեմակությունն էր քարի պես լուռում...*

Եթե որպես խնդրո առարկա բարդ պատկերի արարման խորհրդանշական սկզբնական ընդունենք, օրինակ, վերը մեջբերված «Կարոտ» բանաստեղծության «Մեմակությունն էր քարի պես լուռում» տողը, ապա կտեսնենք, թե ինչպես է այն իր թեմատիկ շարունակությունը ստանում արդեն այլ բանաստեղծական կտավներում, ինչպես և, ի դեպ, «Միայնություն» բանաստեղծության մեջ:

«Երբ մեռնեմ...» բանաստեղծության մեջ Տերյանը գրում է.

*...Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցամեցեք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանամ.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ ամխոս թաղեցեք.
Լռությու՛մ, լռությու՛մ, լռությու՛մ անսահման...*

Լռության և մեռության, ավելի՛ց՝ ցանկալի լռության և ցանկալի մեռության (ճուլմիսկի՝ որպես մահ) միմյանցից ծնվող ու միմյանցով պայմանավորված միաձուլվող պատկերներն այստեղ պարզ տեսանելի են: Նկատենք, որ բանաստեղծը, փորձելով պատկերել աշխարհից իր հավերժ հեռանալու պահը, կարծես անվերջ կրկնում է *լռությու՛մ* բառը, վերածելով այդ պատկերը մահին հետևող ցանկալի մի վիճակի, եթե կարելի է այդպես ասել՝ դրա ամենակարևոր արդյունքի: Եվ արդեն այլ բանաստեղծություններում հենց այս փոխակերպման համատեքստում է ընկալվում լռության գաղափարը, լռության պատկերը՝ անկախ դրա արտահայտման միջոցից:

*Չարտասանված սիրուն խոսքեր,
Որ դողում եք անպատասխան,
Ես սիրում եմ, տխուր խոսքեր,
Ձեր թրթիռը կախարդական:*

*Խենթ հուզումի անուշ խոսքեր,
Պաղ մարդոցից խորը պահված,
Անջատման պես տխուր խոսքեր,
Հոգուս լույսեր մթնշաղվա՛ծ...*

*Դուք այրում եք, սիրո խոսքեր,
Կարոտի պես սիրտս մորմոռ
Ձեզ չի գգվի, տխուր խոսքեր,
Յուրտ աշխարհում ոչ ոք, ոչ ոք...*

Թվում է, թե նկատելի է, որ որպես այս բանաստեղծության համատեքստ ունենալով նախորդ բանաստեղծություններում ստեղծված պատկերների բուճ-իմաստները, Տերյանը վերստին փոխակերպում ու նոր բովանդակությամբ է լցնում ճուլմիսկ այն բառերը, որոնք բնորոշ չեն նրա քնարերգության համար: Այդպես, *լռությամ* փոխարեն վերը մեջբերված բանաստեղծության մեջ Տերյանն օգտագործում է այդ բառի նկարագրությունը՝ *սիրուն* ածականով է՛լ ավելի գեղեցկացնելով լռություն-գաղափարը: Միևնույն ժամանակ (և իր բանաստեղծական շարքերի ու ամբողջ քնարերգության ընդհանուր համատեքստի ամբողջականության մեջ), Տերյանը շարունակում է արարել իր «քնարական սյուժեի» (Էդ. Ջրբաշյան) հեթանակա՛ն գործողություններից մեկը. այստեղ կրկին հանդիպում ենք այդ

«սյունի» գլխավոր հերոսներից շատերին՝ *պաղ մարդոց (մեջ), անջատման (երգ), մթնշաղկված (անուրջներ):*

Տերյանի խորհրդապաշտական քնարերգության մեջ լոռությունն իր լույսաբանությամբ, եթե կարելի է այդպես ասել՝ կամխորշված արտահայտումն է գտնում նաև բանաստեղծի խիստ սիմվոլիստական վաղ ընդգծված «երաժշտական» ստեղծագործություններում: Նշենք, որ Տերյանի հենց այդ բանաստեղծություններն են դարձել նրա՝ ֆրանսիացի սիմվոլիստներին «կուլտրեն» հետևելու մասին պնդումների հրապարակ գալու պատճառը, թեև գաղտնիք չէ, որ նման ստեղծագործություններով 1910-1914 թթ. համդես էին գալիս նաև այլ մեծանուն հայ բանաստեղծներ, այդ թվում՝ Ավետիք Իսահանյանը: Այս առումով հատկանշական է Վարպետի հատկապես «Աշուն է, քամի...» բանաստեղծությունը:

Իրականում, ինչպես հայտնի է, «...սիմվոլիզմում Տերյանը չունի կուռքեր: Վաճառ Տերյանը անդրադարձավ սիմվոլիզմին՝ իր իսկ գնահատմամբ հասկանալով այն որպես ինքնաարտահայտման ազատություն, ճշմարտացիություն և անկեղծություն, որպես մի բան, որ չկար այդ ժամանակաշրջանի հայ գրականության մեջ»: Ինչպես նշում է Ե. Ալեքսանյանը, Տերյանը և Վերլենը շատ ընդհանրություններ ունեն. բանաստեղծական սիմվոլների թաքցված կամ երկակի իմաստը, միայնակ, հաճախ հուսահատված և հուսալքված քնարական հերոսի խառնվածքը, անիրականացալի երազներով և անցյալի հուշերով լի նրա կյանքը, գեղեցիկ, ամիրական աշխարհի հակադրումը չար և տրտում իրական աշխարհին, գեղեցիկի պաշտամունքը, թագմագույն և թագմաձայն քնարական աշխարհը և այլն²: Ըշմարտացի է նաև, որ թե՛ Վերլենը և թե՛ Տերյանը, արարելով իրենց քնարերգությունը զգացական-ամիրական աշխարհի շրջանակներում, ջանում էին ոչ թե արտաքսել իրականությունը, այլ բարձրացնել քնարական հերոսի դերը: Սակայն որոշ առումներով Տերյանի քնարերգությունը, նրա քնարական հերոսի պատկերը շատ ավելի բաց է և մարդամոտ, «նա իր ամբողջ էությամբ է ուղղված դեպի իր Հոգին, իր մականագիրը և իր Սերը»³:

Ծարուհակելով Տերյանի «երաժշտական լոռության» կամ, ինչպես նաև ընդունված է ասել՝ «աշնանային» բանաստեղծությունների թեման, դիտարկենք նախ «Աշնան երգ»-ը.

*Յրտահար, հողմավար,
Դողացին մեղմաբար
Տերևները դեղին,
Պատեցին իմ ուղին...
Մաճանչները թռչնամ -
Կանաչներս աշնան -
Իմ խոհերը մոլոր՝
Յրտահար, հողմավար...
Կրակներս անցան,*

² Алексанян Е., Ваан Терьян и французский символизм. Армения жжет в душе молуче... Ереван, 2002. с. 296.

³ Կույմ տեղում:

Յուրտ ու մեզ է միայն

Անուրջներս երկրածիմ

Գնացիմ, գնացիմ...

Կարծում ենք, հատուկ վերլուծություն հարկավոր չէ տեսնելու համար, որ նման բանաստեղծությունների ընդհանուր պատկերը՝ հիրավի «աշնանային մի երգ է», մի երաժշտություն, առանց որի, Ալեքսանդր Բլոկի որակմամբ. «այսօր արդեն չես կարող գտնել մարդկանց սրտերի բանալին»⁴:

Վիրավորված սիրտերում կը մոտենա անհկա,

Եվ սիրտերում կարծրացած՝ իշխանաբար կը բախե...

Եվ, ով հրաշք, վերքն անոր անրկալությամբ վարդ կըլլա,

Եվ, ով դյուխանք, կը բխիմ աղբյուրներ քար սիրտերե...

(Վ. Թեքեյան, «Երաժշտությունը»)

Տերյանի «Աշնան մեղեդին» և «Աշնան երգը»՝ սիմֆոնիստական գեղեցիկ մի լուծարան միասնական պատկեր է, որն արժանի է Պոլ Վերլեյի կամ Արթուր Ռեմբոյի գրչին: Վստահաբար, այդ բանաստեղծությունների հենց երաժշտությունն է այն առաջին և խոր տպավորությունը, որ ստանում է ընթերցողը՝ դրանք ընթերցելիս: Հատկապես գեղեցիկ է «Աշնան երգի» երաժշտական տոնայնությունը. *-վար -բար, -դին -դին, -շնան -շնան, -լար -հար -վար, -ան -ալն, -ծին -ցին*: Հիրավի, ինչպես արդարացիորեն մշտն է Ս. Սարիյյանը, «Տերյանի ընկալման մեջ զգացմունքի շարժումը՝ դա այն վիճակն է, որում բառայնությունամբանական արտահայտությունները փոխարինվում են երաժշտությամբ»⁵:

Նկատենք, որ այս երկու բանաստեղծությունների միասնական աշխարհն ամբողջանում է նաև գույնով. դեղինն այստեղ ունի թագում երանգներ (*թռնած, ոսկե, աշուն, կրակ*), և այնչափ է պատում այս ընդհանուր գեղարվեստական պատկերը, որ Տերյանը, ասելով *կանաչներս աշնան* ու կարծես թե մեջբերելով մեկ այլ գույն, իրականում ստեղծում է դեղինի մի մոր բնորոշում՝ աշնան կանաչ:

Բացի այդ, հարկ է մշել, որ դիտարկվող երկու բանաստեղծություններն էլ միաձուլվում են Տերյանի քնարական հերոսի սին, երկրային անուրջներից և հույզերից հիասթափման համատեքստում և արտահայտում հենց այն՝ հույս չտեսնող և հույս բացառող մեծության մեծակությունը, որի գեղարվեստական պատկերն ուժգնացած է լուծարան և մոռացության ծայրահեղ մի դրսևորմամբ. անցյալի համար ամենախոր հիասթափությամբ, որ բերել է այդ անցյալի ու նաև ապագայի գոյություն չունենալու մասին ոչ թե պատկերացման,

⁴ Теория литературы и литературный процесс. М., 2001. т. 4, с. 251.

⁵ Сарьян С., Ваан Терьян. Предисловие к книге "Ваан Терьян. Стихотворения". Ленинград, 1980, с. 50 с.

այլ համոզմունքի (դու կյանքես տեսել - դու կյանքես հիշում - ես ցուրտ մշուշում - չկա արջալույս, կրակներս անցան - ցուրտ ու մեզ է միայն - անուրջներս երկրածին - գնացին):

Անհուսիքով ասեց, որ «Տերյանի բանաստեղծական ավանդույթները շարունակվեցին ման հաջորդ տասնամյակներում, պայմանականորեն ասած՝ «Չարենցի ժամանակաշրջանում»⁶։ Հիրավի, Եղիշե Չարենցի շատ բանաստեղծություններում լուրջությունը և մեմու-
թյունը ևս անբաժանելի են:

*Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արևի մասին:
Շուրջս ոչ մի ձայն ու շշուկ չկար -
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին:*

*Ես երազեցի արևի ոսկին,
Տենյացի մրա հրաշքը խնդում՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն
Արևամասն, արևավառ խոսքի, -*

*Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար -
Խոսքեր չկային ու արև չկար...*

- գրում է Չարենցն իր «Մի լուսն աղջիկ, լուսն մի մեռել» բանաստեղծության մեջ:

Ինչպես նշում է էդ. Զրբաշյանը, «...բանաստեղծական ձևերի բազմազանության, բանաստեղծության մրբազեղության և երաժշտականության առումով սիմվոլիզմը շատ բան է տվել Տերյանին»⁷:

Փաստենք, որ ման Տերյանի հրաշալի քնարերգության շնորհիվ, այսօր իրավամբ բնական թվացող լուրջան ու մեմուրյան միաձուլումը գեղարվեստական երկում իր անջնջելի հետքն է թողել գրականության համաշխարհային անընդհատության մեջ: Հանրահայտ է, որ ամբողջ «հետագա» գրականության ամենահամաճարեղ մեծակությունները (Ալկսեյ Բակունցի «Ալպիական մանուշակ»-ը, Կոբո Աբեի «Կինն անվագների մեջ», Գաբրիել Գարսիա Մարկեսի «Հարյուր տարվա մեմություն»-ը և այլն) մշտապես ուղեկցվում ու արարվում են լուրջամբ:

⁶ Զրբաշյան է. Վահան Տերյանի բանաստեղծական շարքերը: «Չորս զագաթ» գրքում, Երևան, 1982, էջ 188:

⁷ Զրբաշյան է. Վահան Տերյանի տաղաչափական համակարգը: Երևան, 1995, էջ 186:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

**ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ
ԿԻԼԻԿՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ**

Lignages d'Outremer / Introduction, notes et édition critiques par Marie-Adélaïde Nielen, Paris 2003, p. 254 (Documents relatifs à l'Histoire des Croisades publiés par L'Académie des Inscriptions et Belles-Lettres. XVIII).

Անդրծովյան ազգատոհմեր / Առաջաբանը, ծանոթագրությունները և բնագրերի գիտական հրատարակությունները՝ Մարի-Ադելաիդ Նիելինի, Փարիզ 2003, 254 էջ (Խաչակրաց պատմությանն առնչվող վավերագրեր՝ հրապարակված Արժանագրությունների և դասական բանասիրության կաճառի կողմից. ԺԸ):

Մարի-Ադելաիդ Նիելինի կողմից մեկ գրքի մեջ հավաքվել են խաչակրաց պետությունների իշխողների, այսինքն՝ անդրծովյան ազգատոհմերի սերունդների ազգաբանության ցանկերը, որոնց մեկ խմբագրությունը, որպես իրավական ուշադրանքի հատված, մասամբ տպագրվել է դեռևս ԺԺ դարի առաջին կեսին (1843 թ.) «Խաչակրաց պատմիչների հավաքածոյի» (Recueil des historiens des croisades) Իրավունքի (Lois) հատորում: Այն մաս է կազմում Երուսաղեմի Ասիզներում (Assises de la haute cour) հրապարակված Հովհաննես Իբելինի գրքի (Livres de Jean d'Ibelin): Հիշատակված բնագիրը համապատասխան ուշադրության չի արժանացել պատմաբանների և հասարակագետների կողմից, քանի որ հետազոտողները չեն տեսել Ազգաբանական այդ ցանկերի և երուսաղեմյան Ասիզների միջև եղած կապը:

Բնագրագետ-վավերագրագետ Մ.-Ա. Նիելինն իր գրքի սկզբում շնորհակալություն է հայտնում նրանց, ովքեր օգնել և խրախուսել են նրան հրատարակելու ներկա աշխատությունը:

Նախաբանում, որի հեղինակը Իմստիտուտ-կաճառի անդամ Ժան Ռիշարն է, նա պատմական ակնարկով անդրադառնում է խաչակրաց պատմիչների շարքի Իրավունքի երկու հատորների հրատարակության պատրաստման դժվարություններին և հետագայում՝ այդ գրքերի հետազոտության բնագավառում գիտության ձեռքբերումներին, ցույց է տալիս, որ հետազոտողները (Բ. Գերար, Ա. Բոյնո, Մ. Գրանդկլոդ, Ժ. Ռեկուրա, Ժ. Պրավեր, Մ. Գրայսսաներ, Պ. Էդբլուրի), սկսած 1815 թ., բազմիցս անդրադարձել են Երուսաղեմի Ասիզների ձեռագրերին և նրանց խմբագրություններին, սակայն համապատասխան ուշադրություն չեն հատկացրել այդ ժողովածուի մեջ պահպանված խաչակրաց Արևելքի ազգաբանական ցանկերին՝ համարելով այն պակաս ուշադրալի և անհամապատասխան

տարբերակներից տեղեկությունների ծավալով և բովանդակությամբ: Սակայն մի բան ընդհանուր է. այս բոլոր խմբագրություններում տրվում են խաչակրաց Արևելքի թագավորական (Երուսաղեմ, Կիպրոս, Կիլիկյան Հայաստան) և իշխանական (Անտիոք, Եդեսիա, Տրիպոլի, Սիդոն, Պաղեստինյան Կեսարիա) ընտանիքների տոհմածառերը, ընտանիքի անդամների, ցրանց փեսաների ու հարսների գրեթե լիակատար հիշատակումով: Այս հանգամանքն էլ ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող ցանկերը կազմվել են գրավոր (նոտարական վավերագրեր, դատական արձանագրություններ, պատմական երկեր) և բանավոր (ընտանեկան ավանդություններ, հրաշապատում գրույցներ) սկզբնաղբյուրների համակցությամբ: Երկի տարբեր խմբագրությունները շուրջ երեք հարյուր հիսուն տարի ընդգրկող ժամանակամիջոցի համար (1099-1459 թթ.) ճշում են շուրջ 1000 անձնավորություն, որոնց անունները զանազան ձևերով են վկայված յուրաքանչյուր տարբերակում, որոնց տիկին և Նիելինը ծանոթագրություններում և ցանկերում փորձել է միասնական տեսքի բերել: Հեղինակը դժվարությունների առաջ է կանգնել այն դեպքերում, երբ հիշատակվել են մինչ այս վավերագրերում և գրականության մեջ չհիշատակված գործիչներ, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է ոչ հայտնի ընտանիքների (Կելմոն, Բուֆլը, Պեդո, Բուտրվին և այլ) հետ ամուսնական կապերին (էջ 25-30): Հաճախ հարկ է եղել պարզել, թե տվյալ ընտանիքի անդամն ի՞նչ ծագում ունի և ե՞րբ է հայտնվել խաչակրաց Արևելքում:

Իր աշխատանքի հաջորդ մասում տիկին Նիելինը անդրադառնում է իրեն հետաքրքրող բնագրի տարբերակներին, փորձում է պարզել երկի ժանրային պատկանելությունը (էջ 32-40): Երկի առաջին խմբագրության, որի հնագույն՝ վենետիկյան ձեռագիրն ուսումնասիրողը թվագրում է ԺԳ դարի 60-70-ական թթ., և երկրորդ (հնագույններն են Վատիկանի լատիներեն և իտալերեն ու երևանի հայերեն մատյանները) տարբերակի միջև կա շուրջ 50 տարվա ընդմիջում: Ի տարբերություն լատինալեզու տարբերակների, պահպանված հայերեն բնագրի հեղինակը Հեթում Ա թագավորի զարմիկ, Կոռիկոսի իշխան Հեթումն է, որի հորաքույր Մարին Հովհաննես Իրեղիցի կինն է եղել (էջ 35): Այս տարբերակի ստեղծման տարեթիվը ևս հստակ է՝ 1296-1306 թթ. միջև, քանի որ, ըստ տիկին Նիելինի, Հեթումն այն կազմել է իր իսկ շարադրած ժամանակագրությունից² ամբիջապես հետո, հայկական միջավայրի կարիքների համար, և չի հիշատակել ո՛չ Լևոն Գ-ի թագադրումը³, ո՛չ էլ 1307 թ. սպանությունը: Հեղինակն իր երկի մեջ ընդգրկում է Կիլիկյան Հայաստանի, Երուսաղեմի, Կիպրոսի թագավորական ընտանիքների և Անտիոքի իշխանության ազգաբանական ձառերը, որոնցից նրուսաղեմա-կիպրոսյան ցանկերը շատ են մոտենում վատիկանի թ. 4789-ի հին ֆրանսերեն տարբերակին, անտիոքյան հատվածում կան որոշակի

² Այս ժամանակագրության կրճատ տարբերակը և Ազգաբանությունը վերջին անգամ հրապարակել է Վազգեն Հակոբյանը (Լիմոն ժամանակագրություններ XIII-XVIII դդ. / կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Բ. II, Երևան, 1956, էջ 33-93, 94-114): Ժամանակագրության ամբողջական բնագիրը և ազգաբանական ցանկերի հայերեն տարբերակը վերստին հրատարակության ենթա պատրաստում, զուգահեռ ֆրանսերեն թարգմանությամբ: Մեր տրամադրած այս ամսիկ մուրիքն էլ իր զրքում օգտագործել է տիկին Մարի-Ադելին Նիելինը՝ շնորհակալություն հայտնելով Կլոդ Մուրաֆյանին և Մրա Կիլիկիա ընկերությանը (էջ 6) ու ֆրանսերենի թարգմանիչ Համիկ Մկրտչյանին (էջ 131, ծան.):

³ Պետք է ճշտել, որ Լևոն Գ-ը թագադրվել է 1306 թ. հուլիսի 30-ին (տե՛ս W.H.Radt-Colleberg, *The Rupenides, Heliunides and Lusignans: The structure of the Armeno-Cilician Dynasties*, Paris, 1963, p. 74, n.177):

նորոգություններ, իսկ կիլիկյան մասն ամբողջովից ինքնուրույն է և ավելի շատ նմանվում է ժամանակագրության (էջ 37-38): Պակաս հետաքրքրություն է ներկայացնում Ազգաքանակայան ցանկերի երրորդ տարբերակը, որի հնագույն կրողն է մյուսխեցյան ձեռագիրը, որն ընդօրինակված է 1458-1460 թթ. միջև. 1344-1358 թթ. գրված մի մատյանից, որը սերել է ԺԴ դարի սկզբի կիպրական մի ազնվականի իտալերեն կամ ֆրանսերեն ընդօրինակությամբ: Այս հետիմակը ներկայացնում է բնագրի անցած ճանապարհը, Հովհաննուց (էջ 38): Այս հետիմակը (1260-1270-ական թթ.), 1305 թ. ամբողջական ժողովածու, մասնա իբելիմի ժողովածու (1306)⁴, Պոլ կաստրոսիոյի (1344 թ.) տարբերակը, Պիեռ Գալիի (1398 թ.) խմբագրությունը, 1459 թ. Սիմոն Երուսաղեմացու ընդարձակումը:

Աշխատանքի վերջին հատվածում հետիմակը նկարագրել է իրեն հետաքրքրող բնագիրը պարունակող բոլոր ձեռագրերը (էջ 41-51): Հետևելով Մ. Գրանդկլոդի հետազոտությանը⁵, Մ.-Ա. Նիելինը ներկայացնում է Փարիզի Ազգային գրադարանի թ. 19026, Վենետիկի Մարկոսյան գրադարանի ֆր. ֆոնդի հավելված թ. 20/265, Վատիկանի գրադարանի լատ. թ. 4789, Մյունխենի քաղաքային գրադարանի գալիկյան թ. 771, Կարպենտրասի քաղաքային գրադարանի թ. 1789, Փարիզի Ազգային գրադարանի Դուպույի ֆոնդի թ. 652, Փարիզի Ազգային գրադարանի ֆրանսիական ֆոնդի թթ. 1078, 1077 և 12206, Փարիզի Ս. Ժենեվիեի գրադարանի թ. 778, Թրուայի քաղաքային գրադարանի թ. 24, Վատիկանի գրադարանի լատինական ֆոնդի թ. 7806A, Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) թ. 1898 մատյանների բովանդակությունը և հնագրական յուրահատկությունները:

Տիկին Նիելինի հրապարակած առաջին բնագիրը Վենետիկի Մարկոսյան գրադարանի 20(265) ֆրանսերեն ձեռագրում պահպանվող ազգաքանակայան ցանկ (էջ 60-84) է, որ տրվում է իբելիմ ընտանիքի ծննդաբանությունը՝ սկսած ԺԲ դարի երկրորդ կեսից մինչև ԺԳ դարի երրորդ տասնամյակը: Երկրորդ բնագրի հիմքում Վատիկանի 4789 մատյանն է, որ բերվում է Երուսաղեմի, Կիպրոսի և Հայոց թագավորների, Անտիոքի դուքսերի, Տրիպոլիի իշխանների, իբելիմների, Թաբարիայի, Սայեստիայի, Կեսարիայի, Բեյրութի, Սեպտանի, Մեջֆորտի, Թորոնի, Բեսանի, Ռոհայի, Ջիբլի, Մարեշլի, Մարգայի, Բուսորոնի, Աղեղոնի, Մոզաստիոյի, Կալիայի և այլ իշխանությունների ազգատոհմների նկարագրությունները (էջ 85-129): Մաշտոցի անվ. Մատենադարանի թ. 1898 ձեռագրում պահպանված ազգաքանակայան ցանկը վերաբերում է Ռուբինյան ու Հեթումյան թագավորական տների, Երուսաղեմի և Կիպրոսի արքաների, Անտիոքի դքսության ազգաքանակայանը (էջ 131-147): Մյուսխեցի գալիկյան թ. 771 ձեռագրից ընդօրինակված ազգաքանակայան ցանկը պարունակում է Երուսաղեմի արքաների տիտղոսը կրող իշխողների գավազանագիրքը (էջ 149-152)⁶՝ սկսած Գողթֆրուա Բուլոնացուց մինչև Օալուտ թագուհի (ԺԵ դար): Վերջին բնագրի հիմքում ընկած Վատիկանի լատիններեն թ. 7806A մատյանը տալիս է Անդրեոլյան ազգատոհմների ցանկերը՝ սկսելով Երուսաղեմի առաջին թագավորներից, դրանք

⁴ Մեր կարծիքով, Պայերեն բնագիրն ավելի վաղ է ձևավորվել, քանի որ մրա քաղաքային յուրահատկություններ անկա եմ վաճառվում Բարունու «Պատմություն Ռուբինեանց» երկում (տե՛ս Մամր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հտ. 11 / կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Ե. 1956, էջ 96-97):

⁵ Վժժժ. M. Grandclaude, Classement sommaire des manuscrits des principaux livres des Assises de Jerusalem, Revue historique de droit français et étranger 5, 1926, p. 418-475: ՍճՍՄԿ, Étude critique sur les livres des Assises de Jérusalem, Paris, 1923.


Քաղաքներով մինչև Ժե դարի երկրորդ կես (էջ 153-174): Հիշատակված ցանկերում բազմաթիվ վկայություններ կան հայկական իշխանական ընտանիքների և լատին խաչակիրների ամուսնական կապերի մասին:

Կիլիկիայի թագավորական ընտանիքի գավազանագրքի հնագույն լատինական ձեռագիրը (գրության ժամանակը՝ շուրջ 1369 թ.) վատիկանի լատիներեն թ. 4789 մատյանն է, ուր Հայոց թագավորների ցանկը բերվում է Երուսաղեմի և Կիպրոսի թագավորների ազգաբանական ցանկերից հետո: Այդ բնագրական հատակոտորը հիշյալ ձեռագրում ընդօրինակված Երուսաղեմյան Ասիզների 334 հատվածն է, որը անվանված է «Ce dit des rois de Ermenie. CCCXXXIII» (Այստեղ ասվում է Հայաստանի թագավորների մասին, 334): Հիշատակված հատվածում Կիլիկյան Հայաստանի իշխողների ցանկը սկսվում է հիմնադրող իշխան Թորոս Բ Ռուբինյանից (1148-1169): Այս ազգաբանական ցանկում առկա են մի շարք անճշտություններ. օրինակ՝ այստեղ ասվում է, որ Թորոս Բ իշխանը ժառանգ չի ունեցել, կամ որ Ռուբենը և Լևոնը իշխան Մլեհի որդիներն են, չգիտե Հեթում Ա-ի Ռուբեն որդուն և այլն: Հիշատակված անհամաձայնությունների հետ միասին հայերեն և լատիներեն բնագրերը գրեթե զուգահեռ են ընթանում, երբ հիշատակվում են միջպետական բնույթի ամուսնությունները և թվարկվում ժառանգների անունները:

Հայերենով պահպանված բնագրի (ՄՄ-1898) տեղանունները և անունները ներկայացնելիս տիկին Նիելինը հաճախ շեղվում է բնագրային ընթերցումներից, ինչը նվազեցնում է հրատարակված ֆրանսերեն թարգմանության արժեքը (թեպետ բնագրային ընթերցումները հաճախ տրվում է տողատակում): Օրինակ, հրապարակվող բնագրին անհարիր են *Gmrmze* (ճիշտը՝ Կարմալազալ), *Kastaravn* (ճիշտը՝ Կաստաղաւ), *Amazarba* (ճիշտը՝ Անարզաբա կամ Անավարզա), *Trois Arcs* (ճիշտը՝ Դրազարկ), *Edesse* (ճիշտը՝ Ուռհա), *Toron* (ճիշտը՝ Դուրուն), *Manyan* (ճիշտը՝ Մանին) և այլն⁶: Երբեմն էլ տիկին Նիելինը սրբագրում է թարգմանված բնագիրը դրան խորթ անվանաձևերով. օրինակ՝ *Rupin* (ճիշտը՝ Ռուբեն), *Kakig* (ճիշտը՝ Գագիկ), *Adam* (ճիշտը՝ Ատան) և այլն:

Ընդհանուր առմամբ տիկին Նիելինին հիմնականում հաջողվել է գտնել անձնանունների և տեղանունների ֆրանսերեն տառադարձության բանալին, որը մյուս առանց դժվարության թույլ է տվել մույնացնել տարբեր ազգաբանական ցանկերում հիշատակված անձնավորությունների: Հայերենով պահպանված բնագրի ֆրանսերեն թարգմանության ներգրավումով, անկասկած, մեր արժեք են ստացել Երուսաղեմի Ասիզներում պահպանված բնագրերը, թեպետ բերված բնագրերի հետազոտության բնագավառում դեռևս իրենց ասելիքն ունեն հայերենով պահպանված հիշատակարաններն ու հիշատակագրությունները, որոնց հետ համեմատությունը օրախնդիր հարց է: Տիկին Նիելինի աշխատասիրած հատորն արժեքավոր է ոչ միայն Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտության տեսանկյունից, այլ մասն մորույթ է հայ բնագրագիտության ասպարեզում: Հրապարակված բնագրերն անկրկնելի սկզբնաղբյուրներ են հայկական և եվրոպական ազնվականական ընտանիքների ազգակցական կապերի բացահայտման բնագավառում:

⁶ Կիլիկյան տեղանունների ճշգրտման առումով հեղինակիմ ուղեցույց կարող էր լինել Ավստրիայի Գիտությունների Ակադեմիայի հրատարակած *Kilikien und Isaurien von Fr.Hild und H.Hellenkemper, Teil 1-2, Wien 1990 (Tabula Imperii Byzantini 5)* աշխատությունը:



Ամերիկայի Արևելեան թեմէն ներս

ՀԱՆՐԱՊԵՏՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆ ՃԱՆ ՕՐԿՈՒԷՅԻ ՀԵՏ

Երեքշաբթի Յունուար 13, 2004, երեկոյեան ժամը 8.00-ին, Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գալուքեան հանդիսարանին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի դեսպան Ճան Օրփուլի հետ:

Այս հանդիպումին ներկայ գտնուեցան մօտ 200 հոգի:

Յարգելի Դեսպանը իր խօսքին մէջ քանի մը անգամ կրկնեց, որ Սփիւռքի հայերը, մասնաւոր գործարարներ, ներդրումներ պէտք է կատարեն Հայաստանի մէջ: Ըսաւ, որ Հայաստանի անկախութենէն ետք ԱՄՆ-ի դեսպանատունը նպաստած է երկրի տնտեսութեան յառաջդիմութեան, նոյն առիթն օգնած է, որ Հայաստանի արտադրութիւնները արտածուին: Հակառակ ձեռք բերուած կարգ մը յաջողութիւններուն՝ Հայաստանի Հանրապետութիւնը փակալին կարիքը ունի Սփիւռքի օգնութեան:

Ան ըսաւ, որ Հայաստանի առեւտրական օրէնքներուն մէջ կարգ մը փոփոխութիւններ պէտք է կատարուին եւ դրամատուները վստահութիւն ցուցաբերելով փոքր առեւտրական հաստատութիւններուն հանդէպ՝ պէտք է քիչ տոկոսով նիւթական փոխաւորութիւններ կատարեն: Հայաստանի տնտեսական զարգացման նպաստելու համար Սփիւռքէն անհարգործարարներ պարտին ներդրումներ կատարել եւ գործարարները բանալ Հանրապետութեան մէջ: Այս ուղղութեամբ Պոսթոնէն դեսպան Օրփուլի ընկերակցող Երեսնի «Արմենիա Մարիտիմ Հոթել»-ի Հայ բաժնեկիցները պատմեցին իրենց ձեռք-բերած փորձառութենէն:

Տիար դեսպանը ըսաւ, որ այս նպատակաւ Հայաստանի կ'օժանդակեն Միացեալ Նահանգաց Միջազգային Զարգացման Գործակալութիւնը, որուն յաջող քանքերով Հայաստանի արտադրանքը կ'արտածուի աշխարհի զանազան կողմերը:

Միացեալ Նահանգաց կառավարութեան յայտագիրներուն առընթեր Սփիւռքի հայերը կրնան իրենց օժանդակութիւնը բերել Հայաստանի տնտեսական զարգացման ի նպաստ, օրինակ՝ Հայաստանի Օգնութեան Ֆոնդի միջոցաւ, որ Արեւելեան թեմի Առաջնորդարանի մարդասիրական օգնութեան բաժանմունքն է: Տիար դեսպանը մեծապէս գնահատեց Հայաստանի Օգնութեան Ֆոնդի կատարած օժանդակութիւնները:

Ներկաներուն կողմէ ներկայացուած հարցումներուն գոհացուցիչ պատասխաններ տուաւ Դեսպան Օրփուլը:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք՝ հայերս, Ամերիկայի այս ազատ ու պատեհութիւններ ընձեռող երկրին մէջ հասած ենք որոշ դիրքերու, որոնք մեզ կը հրաւիրեն որպէս ազգային պարտականութիւն, օգնութեան ձեռք երկարելու մեր Հայրենիքին: Գործարարներ պարտին օգտագործել Հայաստանի մարդկային ուժը եւ գործարարներ բանան, որպէսզի երկրի տնտեսական կացութիւնը բարելաւուի: Իսկ անհատ հայեր կրնան մասնակցիլ Հայաստանի Օգնութեան Ֆոնդի միջոցաւ կատարուած օգտակար ծառայութիւններուն»:

Նախքան հրապարակային հանդիպումը՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան Առաջնորդարանի դահլիճին մէջ, ի պատիւ դեսպան Օրտուէյի, կազմակերպած էր եփուրասիրութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի, Հայ Օգնութեան Ֆոնդի հոգաբարձութեան եւ Թեմական Պատուիրակի գրասենեակի անդամներ: Ծաշկերոյթի ընթացքին դեսպան Օրտուէյ գլխաւորաբար խօսեցաւ Հայաստանի մէջ Հայ Օգնութեան Ֆոնդի կատարած գնահատելի աշխատանքին մասին:

ԴԻԲՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Ամերիկայի Արևմտյան թեմէն ներս

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԿՈՂՄԷ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԻՐԱՔԱՎԱՅՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոչին ընդառաջելով, թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերտրեան անմիջապես հանգանակութեան ձեռնարկեց՝ իրաքահայ մեր ժողովուրդին նիւթապէս օգնելու եւ նորարական ձեռք երկարելու համար:

Գոհունակութեամբ կը փափաքեմք յայտնել թեմիս համայն հաւատացեալներուն, թէ 2003 թուի Դեկտեմբերի վերջը հաւաքուած գումարէն 20,000 (քսան հազար) ւրուար փոխանցեցինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հաշույն, որպէսզի Վեհափառ Հայրապետը յարմար միջոցներով այդ գումարը հասցնէ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Անսգ արքեպիսկոպոս Ասապուրեանին եւ Թեմական հոգեւորդին, որոնք պիտի գործածուին ժողովուրդի զանազան կարիքներուն համար:

Կ'ուզենք նաեւ յայտնել, թէ Առաջնորդարանէն ներս Իրաքահայերու Օգնութեան հաշիւը փակաւին բաց է: Յոյս ունինք թեմիս հաւատացեալներէն յաւելեալ նուիրաբարոյսներ ստանալ, որպէսզի հաշիւը փակելէ առաջ բոլոր գումարը ամբողջութեամբ փոխանցենք Մայր Աթոռի հաշույն:

Այս առթիւ մեր խորին գնահատութիւնը կը յայտնենք այն բոլոր նուիրաբարոյներուն, որոնք իրենց նպաստը դրկեցին իրաքահայ մեր ժողովուրդին, որոնք քաղաքական ներկայ կացութեան հետեւանքով կարիքը ունին մեր անմիջական նիւթական օժանդակութեան:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՎՈԳԵՒՈՐԱԿԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻ

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերտրեանի միջնորդութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Անագ Զառանանայութեան Պապի» շնորհեց Արեւմտեան թեմի ուր հոգեւորականներուն:

Անագ Զառանաններու կոնդակներու պաշտօնական յանձնման համար, առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմնի աջակցութեամբ յարուկ ճաշկերոյթ կազմակերպեց Դեկտ. 12-ին, 2003, Առաջնորդարանի Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան համալիրի Գալայճեան սրահին մէջ: Այս ձեռնարկին պատասխանատուն էր Թեմական հոգեւորդի փոխատնտեսապետ եւ Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ հոգեւոր հովիւը Արժ. Տ. Շնորհք քեյ. Տեմիքեան:

Բացառիկ այս հանդիսութեան առթիւ Առաջնորդարանի կողմէ փպտած էր յափուկ զըրբոյկ մը, որ կը պարունակէր առաջնորդ Սրբազան Հօր պատգամը, իրաքահայեր Անագ Զա-

հանայի հակիրճ կենսագրությունը հայերենով և անգլերենով իրենց նկարներով եանդերձ, և քարոզ մը խրաբանչիւր Աւագ Քահանայի կողմէ:

Այս ձեռնարկէն գոյացած հասոյթի գումարը գերեզուեցաւ Առաջնորդարանի կողմէ հասարակութեամբ Հոգեւորականաց Պապրաստութեան Ֆոնդին մէջ: Ան ի գիտութիւն, Արեւմտեան թնմէն ներս ունինք ասիլի քան հինգ թեկնածուներ, որոնք կրօնական ուսում ստացած են և պապրաստ ևն Աստուածաբանական և կրօնական իրենց գիտելիքները գարգացնել Հոգեւոր Ընմարանի և կամ համալսարանի մը մէջ: Այս ֆոնդին գումարը պիտի գործածուի այդ ուսանողներու կրթաթոշակներուն համար:

Արեւմտեան թեմը նոր Մոխսեր կը հասարաքէ և անտարակոյս կարիքը ունի նոր հոգեւորականներու:

Վստահ ենք, ձեր նուիրապտութիւններուն շնորհիւ պիտի կարենանք այս ֆոնդը գորացնել և գումարները յարկացնել նոր հոգեւորականներ պապրաստելու առաքելութեան:

ԻՐԱՔԱՏԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՍՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Լոս Անճելըսի Իրաքահայ Միութիւնը ականատես րլլալով Արեւմտեան թեմի հոգեւոր վերագարթօնքի գործունէութիւններուն և աղօթագրքելներու հրապարակութիւններուն, 2,000 (երկու հազար) տուարի նուիրապտութիւն մը կատարեց Առաջնորդարանին՝ ի նպաստ հայերենով և անգլերենով տպուած «Աղօթագիրք»-ի (Prayer Book) տպագրութեան ծախսերուն: Այս աղօթագիրքերը դրկուեցան թեմիս եկեղեցիներուն գրասենեակները և տրամադրելի են Առաջնորդարանէն:

Սուրբ Մենդեան փօնին օրը, առաջնորդ Սրբազան Հօր ընդունելութեան ընթացքին, յայտարարուեցաւ, թէ Իրաքահայ Միութիւնը, առ ի գնահատութիւն առաջնորդ Սրբազան Հօր նախաձեռնած բազմաթիւ ծրագիրներուն, 5,000 (հինգ հազար) տուար կը նուիրէ Առաջնորդարանին: Նոյնպէս յայտարարուեցաւ, թէ Իրաքահայ Միութիւնը պիտի շարունակէ ամէն տարի Սուրբ Մենդեան փօնին առթիւ հինգ հազար տուարի նուիրապտութիւն կատարել Առաջնորդարանին:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպէրեանի անունով կը գնահատենք Իրաքահայ Միութեան ազնիւ կեցուածքը և շնորհակալութիւն կը յայտենք իրենց կատարած նուիրապտութիւններուն համար:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՅԱԿՈԲ ԱՐՔԵՂՍ. ԳԸԼԸՆՃԵԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Մոնթեմիլիթեյի մեջ լոյս տեսաւ Ուրուկուաիայոց առաջնորդ Յակոբ արքեպս. Գըլըն-ճեանի «Նաւարի եւ Բանականութեան հետքերով» գիրքը՝ նուիրուած Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հիմնադրութեան 1700-ամեակին:

Անկի քան 500 էջ ունեցող գիրքը երաւարակուած է բարերար Էփուարդո Սեֆերեանի միջոցներով եւ կ'ամփոփէ Յակոբ արքեպս. Գըլընճեանի յօդուածները կրօնական հարցերու շուրջ, ինչպէս նաեւ որոշ քաղաածներ Սրբազանի վերջին գիրքերէն՝ «Մարտին Լութեր, մի բարեպաշտ վանականի ըմբոստութիւնը», «Մեկնութիւն Արարածոց» եւ «Կոհելէթ կամ Գիրք Ժողովողի»:

Ինչպէս հեղինակը կը նշէ՝ հապտորին մեջ, շարադրուած նիւթերու արծարծումը առիթ կ'ընծայէ խրաքանջիւր հաւաքացեալի առաւել ճոխացնելու գիտելիքները եւ որոշ չափով ալ ապահովելու հոգեւոր ներշնչանք եւ փորձառութիւն:

ՌԱՍԻՑ ԱՐՄԵՆԻԱ
ՈՒՐՈՒԿՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ՂԱԶԱՐՈՍ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմից Մայր Աթոռ սրբազան տեղեկության համաձայն, 2004 թվականի հունվարի 21-ին Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը մերժել է Ղազարոս Կյուրեղյանի (կարգալույծ հռչակված նախկին Տիրան արքեպիսկոպոս) բողոքն ընդդեմ 2003 թվականի հոկտեմբերի 1-ի Մոսկվայի քաղաքային դատարանի որոշման: Գերագույն դատարանի վճռով հաստատվում է, որ Ղազարոս Կյուրեղյանի կողմից «Մոսկվայի Հայ Առաքելական Եկեղեցի» անունով ստեղծված կազմակերպության, որպես անկախ կրոնական կառույցի, գրանցումը խախտում է Հայ Առաքելական Եկեղեցու կանոնադրությունը, ինչպես նաև հակասում էրճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրության պահանջներին: Հետևաբար, այդ կազմակերպության գործունեությունը անօրինական է, իսկ ներկայացրած դատական հայցն ու բողոքը Գերագույն դատարանն անհիմն:

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Էդրաս եպիսկոպոս Ներսիսյանի հավաստմամբ, թեմը, պաշպանելով իր ներքին միասնությունը, արդեն իսկ կարող է լիարժեք իրականացնել իր առաքելությունը:

Այս առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունը և գնահատանքն է հայտնել Ռուսաստանի Դաշնության օրենսդիր և դատական արյանների բոլոր օրինադարձ անդամներին, ովքեր անաչառություն են ցուցաբերել հարցի արդարացի լուծման համար:

Նորին Սրբությունը լիափութ է, որ եկեղեցու թեմը կկարողանա առանց խռչնդուրների շարունակել իր ծառայությունը՝ ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ի գորացումն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳ**

ՊՐՈՖ. ՀԵՐՄԱՆ ԳՈԼՑ

ՅՈՋԱԿՆԵՍ ԼԵՓՄԻՈՒՄԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ
ԲԱՅՈՒՄԸ ՊՈՏՏՐԱՄՈՒՄ

Ավելի քան յոթ տարի առաջ սկիզբ առած տևական միասնական ջանքերից և ամենահին ոչ անակնկալ ուժեղ դիմադրության հաղթահարումից հետո, 2003 թ. նոյեմբերի 21-ին, եկավ այն օրը, երբ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բրանդենբուրգ երկրամասի քաղաքամայր Պոտսդամում, Պֆինգստերբգ բլրի ստորոտին, Գրոսե Վայմաչստերշտրասե փողոցի թիվ 45 շենքում, հնարավոր եղավ հանդիսավոր կերպով կատարել Գերմանա-հայկական ընկերության ռաֆվիրա Յոհաննես Լեփսիուսի տուն-թանգարանի պաշտոնական բացումը: Սույն միջոցառումը համատեղ կազմակերպել էին Stiftung Preußische Schlösser und Gärten Berlin-Brandenburg¹ հիմնադրամը և Förderverein Lepsius-Haus Potsdam e.V.² միությունը, որի միացյալ անդամն է արդեն դարձել Գերմանա-հայկական ընկերությունը: Միության պատվով նախագահներն են՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գաբրիել Բ-ը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ.Տ. Արամ Ա-ը և Լեփսիուսի դուստրներից տիկին Վիոլա Աշկեն:

Հովանավորների միության հուշատախտակը, որը բացվել էր տոնակատարությունից առաջ, ծանուցում է, որ այստեղ 1908-1925 թթ. ապրել և աշխատել է եգիպտացեղ Կարլ Ռիխարդ Լեփսիուսի որդին՝ գերմանացի ավետարանական աստվածաբան դոկտոր Յոհաննես Լեփսիուսը (1858-1926 թթ.), որը Օսմանյան կայսրությունում հայկական բնակչության կոտորածների և ցեղասպանության տարիներին (19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին) միջազգային հայամպաստ գործունեություն էր ծավալել Եվրոպայում և Արևելքում: Տարբեր լեզուներով թարգմանված իր վավերագրերով նա գերմանական և միջազգային հասարակայնության ուշադրությունը հրավիրեց մարդկության դեմ գործված այդ հանցագործության վրա:

Յ. Լեփսիուսի հայամպաստ աշխատանքը հուշատախտակում ներկայացվում է որպես ժնկում Ազգերի լիգայի և ՄԱԿ-ի մարդու իրավունքների և փախստականների պաշտպանության կազմակերպությունների նախակարապետի: Հայ ժողովրդի համար այդ աշխատանքն Առաջին համաշխարհային պատերազմից հետո շարունակեց Ֆրիտյոֆ Նանսենը՝ Ազգերի լիգայի առաջին գլխավոր կոմիսարը փախստականների գործերով: Ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայոց դրացագնավելի միջոցով Յ. Լեփսիուսը դարձավ նաև համաշխարհային գեղարվեստական գրականության հերոս:

¹ Բեռլին-Բրանդենբուրգի պրուսական ամրոցների և զբոսայգիների պահպանության հիմնադրամ:

² Պոտսդամում Լեփսիուսի տուն-թանգարանի հովանավորների միություն (գրանցված միություն):

სამსახურით დაკავშირებული პირების მიერ შეკრებილი ფოტოგრაფიები



**STIFTUNG PREUSSISCHE SCHLÖSSER UND GÄRTEN
BERLIN · BRANDENBURG**

**LEPSIUS-HAUS · Große Weinmeisterstraße 48
Sanierung und Umbau**

Zur Forschungs- und Belegungsstätte mit Archiv und Bibliothek des Historischen Lepsius-Haus e.V., Potsdam



Ehemaliges Weinmeisterhaus des Kammerdieners
Friedrich II., Johann Gottfried Zetelig (1772)

1800 Erweiterung
Nach 1868 zum Park der Villa Henkel gehörig
Von 1907 - 1925 Wohnstätte des Dr. Johannes Lepsius,
„Helfer und Anwalt des armenischen Volkes“

Buchern
Ständige öffentliche Schätze und Garten www.museen-potsdam.de
Potsdam 001462 14414 Potsdam Tel. 0331/96 94-0

Freizeitangebote
Besuch der archaischen Schlösser und Gärten Berlin Brandenburg
Landwehrstraße 9 14471 Potsdam Tel. 0331/96 94-0
Fax 0331/96 94 155

Gefördert durch

- Bundesrepublik Deutschland
- Land Berlin und Land Brandenburg
- Landeskapitalkredit Potsdam
- Deutsche Stiftung Denkmalschutz

ԱԵՓՄԻՈՒՄԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՄԵՆԻ ԱՅԵՂԾՄԱՆ, ՄԱՍԻՆ ԱՐԴԱՐԱՐՈՂ ՀՈՒՇԱՇԱՍՏԱՎԱՐ:



ՄԱՐԿԱՆԻՍԻԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄԻ ՄԱՐԿԱՆԻՍԻԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄԻ ՄԱՐԿԱՆԻՍԻԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄԻ
Տ. ԳԱՐԵԳՈՐԻԱՆ ԵՎ ԱՍԽԱՏԻ ԳԵՐԵՄԵՆՆԵՐՆԵՐԻ ՄԱՐԿԱՆԻՍԻԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄԻ



Հուշատախտակից, ի շարս այլ փաստերի, տեղեկանում ենք նաև, որ տուճ-թանճարանում կազմակերպվելու է Լեփսիոսի կյանքին և գործունեությանը նվիրված ցուցահանդես՝ նրա արխիվի և համապատասխան մասնագիտական գրադարանի հետ միասին: Այս հիմքի վրա նախատեսվում է միջազգային և միջեկեղեցական համագործակցությամբ ստեղծել հայագիտական հետազոտությունների և հանդիպումների կենտրոն, ինչպես նաև՝ վերաբացել Յ. Լեփսիոսի կողմից 1923 թ. հիմնադրված Գերմանա-հայկական ակադեմիան:

Առավոտյան ժամը 10.30-ին հանդիսությունը բացվեց Լեփսիոսի տուճ-թանճարանի հովանավորների միության առաջին նախագահ, Պոտսդամի Ավետարանական Եկեղեցու գլխավոր սուպերինտենդանտ Հանս-Ուլրիխ Օուլցի խոսքով: Ելույթ ունեցան նաև Բեռլին-Բրանդենբուրգի Ավետարանական Եկեղեցու եպիսկոպոս, Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու խորհրդի նախագահ Վոլֆգանգ Հոլբերը, Պոտսդամի քաղաքապետ Յան Յակոբսը և պրոֆ. դոկտոր Մանֆրեդ Աշկեն՝ Յ. Լեփսիոսի թոռը:

Գերմանայից թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը իր ելույթում ուշադրություն հրավիրեց այն անմախաղեպ փաստի վրա, որ 2003 թ. զարմանք թուրքական կառավարությունը թուրքական դպրոցներին մի հրամանագիր է արձակել, որով պարտավորեցնում է բոլոր դպրոցականներին՝ հայերին և հույներին ներառյալ, Թուրքիայում այլազգիների հետապնդման փաստը վիճարկող շարադրություններ գրել: Նման միջոցառումներն ընդգծում են Օսմանյան կայսրության մեջ հայկական բնակչության ճակատագրի և Թուրքիայում հայերի ներկա վիճակի բացահայտման ուղղությամբ Լեփսիոսի տուճ-թանճարանի կողմից տարվելիք բացատրական աշխատանքի կարևորությունը:

Ժամը 11.00-ին Պոտսդամի Պֆինգստկիրխե եկեղեցում սկսվեց բուն հանդիսությունը՝ գլխավոր սուպերինտենդանտ Օուլցի ողջույնի խոսքով և «Առավոտ լուսու» շարականով՝ Անահիտ Աթգարյանի կատարմամբ: Երգին հաջորդում է Գերմանիայում Հայաստանի դեսպան Կարինե Ղազիճյանի ուղերձը, Ամենայն Հայոց երջանկաբխաշատակ Կաթողիկոս Վազգեն Ա-ի՝ Լեփսիոսի մահվան 60-ամյակի առիթով տրված նշանավոր կոմեդակը, որը ժամանակին ուղղվել էր լեփսիոսագիտական առաջին միջազգային համաժողովի մասնակիցներին Հալե-Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանում: Այստեղ իր գործունեությունը է ծավալել գիտնականների մի խումբ՝ Լեփսիոսի ժառանգությունը հետազոտած և հրատարակած պրոֆ. Հերման Գուլցի գլխավորությամբ:

Ֆոլկսվագեն հիմնադրամի հովանավորությամբ Հ. Գուլցը և Ա. Մայսները տասնամյա սերտ համագործակցությամբ լույս ընծայեցին Յ. Լեփսիոսի արխիվի վավերագրերն ու պարբերագրերը³: Սրա հետ մեկտեղ հետազոտողների սույն խումբը, որի մաս են կազմում նաև Եկեղեցու պատմության մասնագետ Խաչիկ Ղազարյանը և բանասեր Արմենուհի Դրոսթ-Աթգարյանը, 1998 թ. հիմնեց Հայագիտական հետազոտությունների «Մեսրոպ» կենտրոնը, որն աջակցում է նաև Լեփսիոսի տուճ-թանճարանի աշխատանքներին:

³ Deutschland, Armenien und die Türkei 1895-1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg. K.G. Saur Verlag München (Teil 1: Katalog, 1998; Teil 2: Mikrofilm-Edition der Dokumente und Zeitschriften, 1999; Teil 3: Thematisches Lexikon – Kommentierter Index, München 2004).

Հանգուցյալ ճարտարապետ Էդուտ Պետեր Բարտմանի նախագծով վերականգնվող Լեփսիուսի տունը պատկանում է Պոտսդամի պատմական հին շինությունների թվին: Նրա սկզբնական ձախ հատվածը կառուցվել է 1772 թ. որպես Ֆրիդրիխ Մեծի սենեկապետ Յոհան Գոտֆրիդ Ցյազինգի գինեգործարան: Այս տան մեջ 1915 թ. աշնանը Լեփսիուսն աշխատել է հայոց ցեղասպանության առ այսօր չգերազանցված փաստաթղթերի ժողովածուի վրա՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի կացության մասին», որը 1916 թ. 20.500 տպաքանակով, հաղթահարելով գերմանական ռազմական գրաքննությունը, տարածվեց Գերմանիայում, ապա և տարբեր թարգմանություններով ամբողջ աշխարհով մեկ՝ դառնալով ցեղասպանության մասին վավերագրերն ամփոփող գլխավոր ժողովածուներից մեկը:

Այս տանը Լեփսիուսն Առաջին համաշխարհային պատերազմից հետո աշխատել է մաև վավերագրերի մյուս մեծ ժողովածուի վրա՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.», որը 1919 թ. լույս տեսավ Պոտսդամում և մույմպես մնայուն մշանակություն ունի ցեղասպանության ուսումնասիրության և ճանաչման համար: Այստեղ այցելուներ էին գալիս ամենատարբեր երկրներից՝ ԱՄՆ-ից, Սկանդինավիայից, Ֆրանսիայից, Ռուսական կայսրությունից, Օսմանյան-թուրքական կայսրությունից և Իրանից, այդ թվում՝ բազում հայեր Սփյուռքից: Աշխարհով մեկ ցրված 10 միլիոն հայերի համար Պոտսդամը եղել է և կա ոչ այնքան Ֆրիդրիխ Մեծի, որքան Յոհաննես Լեփսիուսի քաղաքը, որի ապացույցը հայ անվանի մտավորական Մելքոն Բրիշյանը գտել է 1935 թ. Նիկոսիայում կիպրոսում:

Լեփսիուսի տունը գիտական կենտրոնի և թանգարանի վերածելու գաղափարը Հ. Գոյցը և Ա. Մայսները 1996 թվականի փետրվարի 5-ին, Յ. Լեփսիուսի մահվան 70-ամյակի առթիվ Պոտսդամում հրավիրված համաժողովից հետո, հայտնել էին Պոտսական ամրոցների և զբոսայգիների պահպանության հիմնադրամի գլխավոր տնօրեն Հանս-Յոախիմ Գիրսբերգին, որն իսկույն հավանություն էր տվել այդ մտադրությանը և, հակառակ նրա իրականացման հետ կապված դժվարություններին, հետևողականորեն նպաստել էր Լեփսիուսի տան վերականգնման գործին: Այդ խնդիրը մա փոխանցեց իր հետնորդին՝ պրոֆ. Դորգերյոհին, որն էլ 2003 թ. նոյեմբերի 21-ին Լեփսիուսի գերմանացի և հայ բարեկամների հետ միասին կարողացավ մշել տան վերականգնման աշխատանքների պաշտոնապես սկսվելը:

Այժմ տան վերականգնման գործընթացը թևակոխում է իր վճարական փուլը: Արտաքին ծածկույթի նորոգման համար (մեկ տարի տևողությամբ) կան բավականաչափ դրամական միջոցներ: Ներքին ծածկույթի կառուցման և վերականգնման համար անհրաժեշտ միջոցները դեռ պիտի հայթաթվեն: Այս նպատակով մախ մախատեսվում է ավելացնել ընկերության անդամների թիվը և նրանց անդամավճարները, որի համար անդամների և Գերմանա-հայկական ընկերության թուր անդամներին առաջարկվում է, բացի միացյալ ամրամ լինելուց, անդամագրվել մաև անհատապես (տարեկան վճարը՝ 50 եվրո):

Անդամագրվելու դիմումներն ուղարկել հետևյալ հասցեով.

**Forderverein Lepsius-Haus Potsdam e.V., Herrn Geschäftsführer Peter Leinemann,
Postfach 600649, D-14460 Potsdam.**

Վերականգնումից հետո հետագա գործունեության գլխավոր նպատակը Լեփսիուսի տուն-թանգարանը, Գերմանա-հայկական ակադեմիայով, Լեփսիուսի արխիվով և գրադարանով հանդերձ, մյուս հիմնարկություններից անկախ հիմնադրամի վերածելն է: Այս ճանապարհով մայրաքաղաք Բեռլինի հարևանությամբ կառաջանա գերմանա-հայկական մի կենտրոն, որը սերտորեն կհամագործակցի Գերմանա-հայկական ընկերության հետ: Նման հիմնադրամ հիմնելու համար անհրաժեշտ է ամենաքիչը 2-3 միլիոն եվրո: Սկսած 100 եվրոյից մվիրատվությունները չեն հարկվում: Փոխանցումները պետք է կատարել քանկային հետևյալ հաշվեհամարին՝ ցշելով „Stiftung Lepsius-Haus Potsdam“.

Forderverein Lepsius-Haus Potsdam e.V.,

Konto-Nummer: 1805746005

Bankleitzahl: 100 900 00

Volksbank Potsdam

Օգնե՞ք իրականացնելու Յոհաննես Լեփսիուսի գերմանա-հայկական շրջապատի և Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի առաջին դեսպան Ջեյմս Գրինֆիլդի այս կարևոր ծրագիրը՝ Գերմանա-հայկական ակադեմիան կյանքի կոչելու վերաբերյալ:

Թարգմանությունը՝ Վ. ԱԲԳԱՐՅԱՆԻ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՆԵՅԿԻ ԹԱՎԵԹԻԵՒ ԳԻՒԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հունվարի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ, դեսպան Հեյկի Թավեթիեի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում պրն Թավեթիեն Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Եվրամիության գործունեությունը հարավկովկասյան հանրապետություններում և այս երկրների հետ ունեցած ներկայիս հարաբերությունները: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց հյուրերին՝ հայաստանում ժողովրդավարության ամրապնդման, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրների խաղաղ կարգավորման գործում Եվրամիության ներդրած ջանքերի համար:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու ներկայիս առաքելությանը, կարևորեց հասարակական կյանքում հոգևոր արժեքների հաստատումը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Փառեն Խալիսկոպոս Ավետիքյանը, ՀՀ-ում Գերմանիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հանս Վուլֆ Բարթելը:



ՆԱՆԳԻՍՏ

Տ. ԿՅՈՒՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԹԻԿՅԱՆԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խորը ցավով տեղեկացնում է, որ 2003 թ. դեկտեմբերի 30-ին, երկարատև հիվանդությունից հետո, կյանքի 82-րդ տարում, վախճանվել է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Սրբոց Նակոդյանց վանքի միաբան Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանը:

Երջանկահիշատակ Սրբազանը ծնվել է 1921 թ. Երուսաղեմում: 1956 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1976 թ. ձեռամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի օծվել է եպիսկոպոս:

Սրբազան Հայրն իր ողջ կյանքի ընթացքում ծառայել է Հայ Եկեղեցուն և Երուսաղեմի հայոց Պատրիարքությանը, մեծ ավանդ ունեցել Տերունական սրբավայրերի վերանորոգման գործում: Մասնավորապես նրա անմիջական ջանքերով է 1980 թ. վերանորոգվել Երուսաղեմի Ա. Հարություն տաճարի հայկական մասը: Սրբազան Հայրը երկար տարիներ եղել է Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչը: Նրան ճանաչում էին որպես Երուսաղեմի հնագույն մշակութային արժեքների մեծ գիտակ:

Սրբազան Հոր վերջին օծումը կատարվել է հունվարի 2-ին Երուսաղեմի հայոց Սրբոց Նակոդյանց տաճարում: Հուղարկավորությունը կատարվել է Ա. Փրկիչ վանքի գերեզմանապահը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, ցավակցություն է հայտնել Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին՝ աղոթելով Սրբազան Հոր հոգու հանգստության համար:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ նշիցի»:



ՆԱԶԳԻՍ

Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՄԿՈՂՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից խոր ցավով տեղեկացնում ենք, որ հունվարի 20-ին, վաղ առավոտյան, վախճանվել է Մայր Աթոռի ավագագույն միաբաններից՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանը:

Մայր Աթոռում մշտապես բարձր է գնահատվել Սրբազան Հոր ծառայասիրությունը, ազնվությունն ու անկեղծությունը և Ս. Էջմիածնի հանդեպ անսակարկ հավատարմությունը: Այդ գնահատանքի վկայությունն է Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Զավեն Սրբազանին շնորհված Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանը:

Ամենայն Հայոց Հայրապետը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, պաշտոնեությունը և հավատացելոց դասը խորապես սգում է Սրբազան Հոր անժամանակ մահի և աղոթում հանգուցյալ Սրբազանի հոգու հանգստության համար:

Սրբազան Հոր թաղման և հուղարկավորության արարողությունը տեղի ունեցավ հունվարի 25-ին Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից արարողություններին մասնակցեցին Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը և Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը:

Հունվար 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ Ս. Պատարագի, աղոթք վերադառնալից Սրբազան Հոր հոգու հանգստության համար:

«Յիշարական արդարյուն օրհնութեամբ եղիցի»:

Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանը (ավագանի անունով՝ Գևորգ) ծնվել է 1929 թ. սեպտեմբերի 29-ին Նախնական կրթությունը ստացել է Երուսաղեմի Սղոթոց Թարգմանչաց ազգային վարժարանում: 1945 թ. ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Նաևորյանց վանքի Ժառանգավորաց վարժարան:

1949 թ. ձեռնադրվել է սարկավագ:

1951 թ. մայիսին ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա՝ սրանալով Զավեն անունը:

1951 թ. դասավանդել է Սրբոց Թարգմանչաց վարժարանում միաժամանակ վարելով վանքի տպարանի տեսչի պաշտոնը:

1954 թ. ստացել է վարդապետական աստիճան:

1957 թ. ստացել է ծաղկյա փիլոն և լանջախաչ կրելու իրավունք:

1963 թ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս) Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Սրբազան Հորը շնորհվել է Ծայրագույն վարդապետության աստիճան:

1965 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվել է նախկոպոս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

1953-1957 թթ. եղել է «Միոն» ամսագրի խմբագրի օգնական:

1958 թ. փոխադրվել է Ալեքսանդրիա՝ իբրև առաջնորդական փոխանորդ:

1969 թ. ընտրվել է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ:

1974 թ. ծառայության է մեկնել Հարավային Ամերիկայի թեմեր, ապա սպասավորել Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմում:

1977 թ. ընդառնալով Եգիպտոսի վարդապետության փափագին՝ երջանկափառական Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական Սրբապատ կոնդակով Զավեն Սրբազանին նշանակում է Եգիպտոսի հայոց թեմակալ առաջնորդ:

Ի գնահատումն նվիրյալ ծառայության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ արժանացել է նաև արքեպիսկոպոսի տիտղոսի:

Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանից սկսյալ՝ Զավեն Սրբազանը նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ էր:

Սրբազանը առաջնորդության շրջանում տարիներ շարունակ եղել է Ալեքսանդրիայի քրիստոնեական Եկեղեցիների Էկումենիկ աղոթաժողովների նախագահ:

Նվիրյալ հոգևորական Զավեն Սրբազանին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհել է Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան: 1984 թ. արժանացել է նաև Ռուս Ռողափառ Եկեղեցու Ս. Մերգել Ռոդոնեմսկու Ա կարգի շքանշանի:

Զավեն Սրբազանը բազում հողվածների, ուսումնասիրությունների և բանաստեղծությունների հեղինակ է:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, հինգշաբթի. - Գ. օր Ծննդեան պահոց: Կադանկ, Տարեմուր:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պապարագ մատուցեց Տ. Վարդան արեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Հայր Սուրբը հավուր պապ-շանի քարոզ խոսեց:

Հավարդ Ս. Պապարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հայրապետական մատթանը:

Հունվարի 4-ին, կիրակի. - Է. կիր. Յիսնակաց: Զ. օր Ծննդեան պահոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, իր անդրանիկ Ս. Պապարագը մատուցեց Տ. Հայրիկ արեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Հայր Սուրբը հավուր պապշանի քարոզ խոսեց:

Հունվարի 5-ին, երկուշաբթի. - Երազայոց Ծննդեան և Եսարուածայայրնու-թեան Տեսն մերոյ Յիսուսի Բրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պապարագ մատուցեց Տ. Արշակ վարդապետ խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Հայր Սուրբը հավուր պապշանի քարոզ խոսեց (տես էջ 18):

Ս. Պապարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարդ Սուրբ և Ամմառ Պապարագի Մայրավանքի ողջ միաբանությունը և Գևորգյան Հոգևոր Ծննարանի ուսանողությունը, հանդիսապետությամբ Վեհափառ Հոր, Ս. Ծննդյան շարականների երգեցողությամբ ուղղվեցին դեպի Վեհաբան. որպեղ Տնօրինների արարողություն կատարելուց հետո՝ շարժվեցին սեղանապուրն՝ մեր Տեր Հիսուս Զրիստոսի Ծննդյան ավելիսը խնդությամբ տոնելու:

Հունվարի 6-ին, երեքշաբթի. - ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԲՍՏՈՒԲԾԱՅԱՅՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պապարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան հայրապետական իր պապգամն ուղղեց համայն հայ ժողովուրդին (տես էջ 3):

Հրեթաց Ս. Պապարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Զրօրինների արարողություն:

Հունվարի 7-ին, չորեքշաբթի. - Բ. օր Ծննդեան: Մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պապարագ մատուցեց Տ. Հակոբ քահանա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պապարագիչ Տեր Հայրը «Եթե Զրիստոս հա-

րություն չի առել, ապա իզուր է ձեր հավարդ» (Ա Կորնթ. ԺԵ 17) բնաբանով քարոզ խոսեց (լրեն էջ 26):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ «Վասն համօրեն ննջեցելոց»:

Հունվարի 11-ին, կիրակի. - Զ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրան աբեղա Պեդրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զադօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա, ի գաւիթս տան Տեառն, եւ ի մէջ քո Երոսաղէմ» (Մաղմ. ԺԺԵ 18-19) բնաբանով քարոզ խոսեց (լրեն էջ 21):

Հունվարի 13-ին, Լրնքջարթի. - Ը. օր Ծննդեան: Տոն սևուսանակոչութեան Տեսուն մարոյ Յիսուսի Երիսպոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պապշածի քարոզ խոսեց:

Հունվարի 18-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պապշածի քարոզ խոսեց:

Հունվարի 25-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իզնապիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Որ եաւարայ ի Նա՛ ոչ դարպարարեսցի» (Հովհ. Գ 18) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Երոսաղէմի հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց վանքի միաբան Գերաշնորհ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբրիկյանի եւ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի հոգիների խաղաղության եամար:

“ԷՇՄԻԱԾԻՆ” ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (Январь 2004 г.)

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Святого Рождества и праздника Богоявления, 6 января 2004 г. (с. 3-6).
2. Новогоднее послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 31 декабря 2003 г. (с. 7-8).
3. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами церквей сестер, с иерархами патриарших Престолов Армянской церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Рождества Спасителя (с. 9-12).
4. **Էջմիա Մկրտչի.** Святое Рождество в Первопрестольном Святом Эчмиадзине, 6 января 2004 г. (с. 13-14).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Одику Меграбяну по случаю его награждения орденом “Св. Григория Просветителя”, 8 января 2004 г., № 216 (стр. 15-16).
6. Патриаршие награды (пожалование в январе 2004 г. энциклик, орденов, благословений и чести старшинства Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) – (стр. 17).
7. Повелением Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, лишён духовного сана служитель Иракской армянской епархии иерей Арапат Овсесян (стр. 17).

ПРОПОВЕДИ

8. Проповедь Преподобного архимандрита Артака Хачатряна на Литургии в Рождественский сочельник в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 5 января 2004 г. (стр. 18-20).
9. Первая проповедь Преподобного иеромонаха Тирана Петросяна в Вагаршапатской церкви Св. Гаянэ на Литургию, 4 января 2004 г. (стр. 21-23).
10. Первая проповедь Преподобного иеромонаха Кюреха Варданяна в Вагаршапатской церкви Св. Богоматери на Литургию, 4 января 2004 г. (стр. 24-25).
11. Первая проповедь Преподобного иерея Акопа Акопяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургию, 7 января 2004 г. (стр. 26-27).
12. Проповедь Преподобного иеромонаха Игватикоса Малхасяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 25 января 2004 г. (стр. 28-29).

ЮБИЛЕЙНАЯ

13. Проповедь Католикоса Армян Закария о Крещении нашего Господа Иисуса Христа (перевод с древнеармянского диакона Тиграва Багумяна) – (стр. 30-39).

ТАИНСТВО 1700-ЛЕТИЯ

14. Высокопреосвященный архиепископ Аваг Асатурян. – Ясновидец и видение (стр. 40-41).

РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

15. Преподобный верей Адам Макарян - "Где будет труп, там соберутся орлы" (Исследование слов "орел" и "гриф" по 28 ст. 24 гл. Евангелия от Матфея) – (стр. 42-51).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

16. Саркисян Дмитрий Николаевич - Территория, занимаемая государством Хайаса-Аззи, армянское происхождение и политическая жизнь согласно новейшим фактам (исследование) – (стр. 52-58).

ПОСВЯЩАЕТСЯ СЛАВНОМУ 1600-ЛЕТИЮ СОЗДАНИЯ АРМЯНСКИХ ПИСЬМЕН

17. ДАВИД ГЮРДЖИНЯН - Словообразовательная значимость названий армянских букв (исследование) – (стр. 59-76).
18. КАРЕН МАТЕВОСЯН - Из истории основания тысячелетнего Кечариса (исследование) – (стр. 77-91).
19. ФЕЛИКС МОВСИСЯН - Освещение религиозных вопросов европейских национально-освободительных и революционных движений 1848-1849 гг. в еженедельной газете "Европа" (исследование) – (стр. 92-101).
20. ВИКТОР СОГОМОНЯН - "Безмолвие" Ваяна Терьяна (исследование) – (стр. 102-108).

РЕЦЕНЗИИ

21. АЗАТ БОЗОЯН - Целный первоисточник, посвященный крестовым походам и Киликийской Армении (О книге Мари-Аделаид Нислив "Заморские племена") – (стр. 109-113).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

В армянской восточной епархии США

22. Встреча с послом США в Республике Армения Джоном Ордуэйом, 13 января 2004 г. (стр. 114-115).

В армянской западной епархии США

23. Помощь армянской западной епархии иракским армянам (перевод 20000 американских долларов на счёт Св. Эчмиадзина в конце 2003 г.) – (стр. 116).
24. В епархиате утверждён фонд для подготовки духовнослужителей, 12 декабря 2003 г. (стр. 116-117).
25. Пожертвования армянской общины Ирака армянскому западному епархиату США (стр. 117).
26. Новая книга Высокопреосвященного архиепископа Акопа Геленчяна "По следам веры и разума", посвящённая 1700-летию основания Первопрестольного Св. Эчмиадзина, Монтевидео (Уругвай, 2003 г.) – (стр. 118).
27. Верховный Суд России отклонил жалобу Казароса Кюрегяна, 21 января 2004 г. (стр. 119).
28. Профессор Герман Гольц – Открытие дома-музея Иоганнеса Лепслуса в Потсдаме (Германия), 21 ноября 2003 г. (перевод с немецкого В. Абгаряна) – (стр. 120-123).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

29. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, делегации, возглавляемой Эйком Талветье, 31 января 2004 г. (стр. 124).
30. Кончина Преосвященного епископа Кюреха Габикяна, 30 декабря 2003 г. (стр. 125).
31. Кончина Высокопреосвященного архиепископа Завсая Чипчиняна, 20 января 2004 г. (стр. 126-127).
32. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Св. Эчмиадзине в течение января 2004 г. (стр. 128-129).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(January 2004)

1. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ, January 6, 2004 (p. 3-6).
2. New Year's Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, December 31, 2003 (p. 7-8).
3. Letters of Greeting and telegrams on the occasion of the Holy and Miraculous Nativity of the Savior, exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and the Heads of Sister Churches, the Incumbents of the Hierarchal Sees of the Armenian Church, and State Officials (p. 9-12).
4. **HEGHINE MKRTCHIAN** – The Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ in the Mother See, January 6, 2004 (p. 13-14).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Onnik Mehrabian on the occasion of his decoration with the order of “St. Gregory the Illuminator”, January 8, № 216 (p. 15-16).
6. Pontifical Awards (Letters of Blessing and Elevation to the rank of Senior Priest granted in January 2003 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to clergymen and laymen for their devout service to the Armenian Church) – (p. 17).
7. Upon the Pontifical order of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, Rev. Fr. Ararat Hovsepian, the Spiritual Pastor of the Diocese of Iraq was defrocked. (p. 17)

SERMONS

8. Sermon delivered by Very Rev. Fr. Arshak Khachatryan in the Cathedral of Holy Etchmiadzin during the Divine Liturgy on Christmas Eve, January 5, 2004, (p. 18-20).
9. First Sermon by Rev. Fr. Tiran Petrossian delivered in St. Gayané Church of Vagharshapat, January 4, 2004 (p. 21-23).
10. First Sermon by Rev. Fr. Kyuregh Vardanian delivered in Holy Mother of God Church of Vagharshapat, January 4, 2004 (p. 24-25).
11. First Sermon by Rev. Fr. Hakob Hakobian delivered in the Cathedral of Holy Etchmiadzin during the Divine Liturgy, January 7, 2004, (p. 26-27).

12. Sermon delivered by Rev. Fr. Ignatius Malkhassian in the Cathedral of Holy Etchmiadzin during the Divine Liturgy, January 25, 2004 (p. 28-29).

ON THE OCCASION OF THE FEAST

13. Sermon by Catholicos Zachariah about the Baptism of Our Lord Jesus Christ. (Translated into Modern Armenian by Dn. Tigran Baghumian). (p. 30-39).

ON THE OCCASION OF THE 1700TH ANNIVERSARY

14. **HIS EMINENCE ARCHBISHOP AVAK ASADOURIAN** – "The Viewer and the Vision"

RELIGIOUS STUDY

15. **REV. FR. ADAM MAKARIAN** – "For wherever the carcass is, there the eagles will be gathered", (Matt. 24.28). The analysis of the words "eagle" and "vulture" in the Gospel According to Matthew (24.28), (p. 42-51).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

16. **DMITRY NIKOGHAYOS SARKISSIAN** – The territory conquered by Khayasha Nation, its Armenian origin and political life according to newest facts. (Research work), (p. 52-58).

Devoted to the glorious 1600th anniversary of the discovery of the Armenian Alphabet.

17. **DAVIT GIURJINIAN** – The "word-building" value of the Armenian letter-names (research work) – (p. 59-76).
18. **KAREN MATEVOSSIAN** – From the History of the Foundation of "One thousand year old" Kecharis. (research work) – (p. 77-91).
19. **FELIX MOVSISSIAN** – The Enlightenment of the religious questions of European Revolutionary and National Movements appearing in "Europe" weekly, 1848-1849. (research work) – (p. 92-101).
20. **VIKTOR SOGHOMONIAN** – "Silence" by Vahan Terian. (research work) – (p. 102-108).

CRITICAL REVIEW

21. **AZAT BOZOYAN** – An Important Historical Source Devoted to the Crusades and Cilician Armenia. (About the book "Undersea Tribes" by Mary-Adelaide Nielinnie) (p. 109-113).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

In the Eastern Diocese of the USA

22. Meeting with John Ordway, the Ambassador of the USA to Armenia, January 13, 2004. (p. 114-115).

In the Western Diocese of the USA

23. Financial Aid to the Iraqi Armenians from the Western Diocese (Regarding the transfer of \$20,000 USD to the account of the Mother See of Holy Etchmiadzin at the end of 2003) – (p. 116).
24. Establishment of a Diocesan fund for the training of clergy, December 12, 2003 (p. 116-117)
25. The Donations of the Iraqi Armenian Union to the Western Diocese. (p. 117).
26. New book by Archbishop Hagop Kelendjian ("On the Trail of Faith and Reason" devoted to the 1700th anniversary of the foundation of the Mother Cathedral of Etchmiadzin, Montevideo (Uruguay), 2003) – (p. 118).
27. The Supreme Court of Russia has rejected Ghazaros Kyureghian's appeal, January 21, 2004. (p. 119).
28. **PROF. HERMAN GOLTZ** – The opening of the Johannes Lepsius Museum in Potsdam (Germany), November 21, 2003 (Translated from German by V. Abgarian) – (p. 120-123).

AUDIENCES AT THE MOTHER SEE

29. Audience granted by His Holiness Karekin II to the Delegation headed by Heikki Talvelä, January 31, 2004 (p. 124)
30. His Grace Bishop Gyuregh Kapigian enters his eternal rest, December 30, 2003 (p. 125).
31. His Eminence Archbishop Zaven Chinchinian enters his eternal rest, January 20, 2004 (p. 126-127).
32. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during January 2004 (p. 128-129).